



I-483







ԱՐԱԳՈ


ՊԱՏԿԵՐԱՁԱՐԴ ՀԱՆԴԵՍ

1889

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԳԻՐՔ Ա

ՑՈՒԽՆԻՍ



Ս. ԳԵԶԵՐՔՈՂԻՐԴ
Տպարան և Ն. ՍԿՈՐՈԽՈՎՈՎ
1889.

Дозволено цензурою. С.-Петербургъ, 15 июня 1889 года.

Типографія И. Н. Скородова (Надеждинская, 39).

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Կնցեալ տարուայ մեր հանդիսի գլուքերի շուռափոյթ սպառումը անշուշտ ինքն ըստ ինքեան զրաւական է, որ ընթերցող հասարակութիւնը մեծ համակրանքով վերաբերուեց գէպի «Երաքս»։ Ուստի կարծում ենք, որ սորանից պարզ կարելի է հետևեցնել որ հայ հասարակութիւնը լաւ և ճիշտ ըմբռնեց «Երաքսի» ամբողջութեան մէջ արտայայտուած ուղղութիւնը, որ է հայի անցեալ և ներկայ կեանքի և հայ աշխարհի բազմակողմանի ուսումնասիրութեամբ նպաստել հայ անհատի մոտաւորական զարգացման և ինքնաճանաչութեան, իբրև հայ ազգայնութեան անդամի։ Մենք, որչափ մեր համեստ միջոցներն և ցժերք ներում են, մեզ նպատակ ենք ընտրել խօսել հայ ընթերցողների ստուար մեծամասնութեան սրբութին և հոգուն հետ, փայլուն հայկական գործիչների արարքը պատմել հայ ազգի աւանդութիւններին արձագանք լինել հայ լեզուի ուսումնասիրութեան նիւթեր տալ միջոց տալով ամեն կողմելը բնակող հայերին՝ իրենց բարեկան բարեկան «Երաքսում» երևան հանել իրենց տեղական աղջային կեանքն ու կարիքները։ Եյս տեսակէտով մեր հանդէսը ձգառումէ մատչելի լինել հայ հասարակութեան բոլոր, մանաւանդ միջնակարգ, զասակաթգներին, ոչ միայն Ուսուաստանի սահմաններում, այլ և ամենուրեք ցրուած հայ գերզաստանի անդամներին։

‘Նոյն նպատակին, մեր կարծիքով, ծառայում են և այն պատկերներն ու նկարները, մեծ մասամբ հայկական կեանքից, որ մենք աւանց խնայելու որ և է նիւթական միջոցների և աշխատութեան, զետեղում ենք հետզհետէ «Երաքսի» մէջ։ Առքա, բացի գեղագիտական ճաշակը զարգացնելուց ընթերցողների մէջ՝ լաւագոյն և մնայուն յիշատակարաններ կմնան այն ազգային անցեալ և ներկայ գործիչներին և այն ազգային հնութեանց և հաստատութեանց, որոց մասին խօսվումէ մեր *


Հանդիսում: Աչքի առաջ ունենալով նկարների և պատկերների այս նպատակայարմարութիւնը, որին անհեղեղելի տպացոյց է նոցա գոտած սիրալիքը ընդունելութիւնը մեր ընթերցողների կողմից՝ մենք աշխատելու ենք այսուհետեւ ևս ընդարձակել սոցա շրջանը թէ որակութեան և թէ քանակութեան կողմից:


Մենք դեռ «Արաքսի առաջին տարուայ զրքերի մէջ փափագ էինք յայտնիլ մեր հանդէսը ամսօրեայ գարձնելու: Ավայն մեր այս ցանկութիւնը իրագործելու արդելք եղան ի միջի այլոց և հայերէն գրքեր տպագրելու գժուարութիւնները Պետերբուրգում, զօր. որ այժմ միայն մի տպարանում կան հայերէն տառեր և այն ոչ մեծ քանակութեամբ, և միայն մի գրաշար, որի պատճառով գժուար է կարծ ժամանակամիջոցում լցու ընծայել պարբերական հրատարակութեան համարները, մանաւանդ անկարելի է դառնում, երբ այս տպարանը միենոյն ժամանակ զբաղուած է լինում և ուրիշ հայերէն տպագրութիւններով, ինչպէս այժմ:


Հենց այսպիսի պատճառով «Արաքսը» փոխանակ փետրուարի վերջին դուրս գալու, ինչպէս յայտարարած էինք, հիմնաւուն բաղադրատէցի խոսքան վերայ՝ միայն այսօր յունիս ամսում է լցու ընծայվում, որ մեզ այնուամենայնիւ յաջողուեցաւ մեծամեծ գժուարութիւններով և անբաւականութիւններով:

Յամենայն դէպս, մեր խոստումը ժամանակի վերաբերութեամբ կատարած չ'լինելով՝ խոնարհաբար ներողութիւն ենք խնդրում մեր բարեմիտ բաժանորդներից, ևի փոխարէն այս յապաղման տալիս ենք այս համարում 16 թերթ և 12 պատկեր (փոխանակ խոստացուած 12 թերթին և 8 պատկերին). միենոյն ժամանակ յայտարարում ենք, որ ապագայում նմանօրինակ յապաղումներն անկարելի անելու նպատակով այժմէն մենք ձեռք ենք զարկել համապատասխան միջոցների:

Եյս միջոցների իրագործութիւնը մի քանի ամիս է պահանջում, ուստի և «Արաքս» ներկայ տարուայ երկրորդ զիրքը դուրս կ'գայ միմիայն աշխան վերջերին, հաւանօրէն նոյեմբերին, որի մասին կանխօրէն կ'յայտարարէնք:







ՍՈՒՐԲ ԷԳՍԻԱԶԻՆ

дозвол. ценз. Спб., 29-го мая 1889 г.

Հրատ. «Սուրբ» Հանդիսին.

Тип. Эд. Гоппе, Возн. пр. № 53.



Fig. 1. The cathedral of St. Peter and St. Paul in the city of Olomouc, Czech Republic.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եւյօր Փոքր Ասիոյ մէջ, Տաճկահայաստանում, հայի կեանքը որ աստիճան էլ անյաջող հանգամանկների մէջ զանուի, որքան էլ մուաւորապէս ու բարյապէս հայ մարդը խաւարի մէջ լինի, այնուամենայնիւ այդ բոլորը ոչինչ է համեմատութեամբ այն շարիքն, որը «գաղթականութիւն» անուն է կրում:

Եյսպէս մտածելու համար, մենք ունենք բազմաթիւ անհերքելի փաստեր ու իրողութիւններ, որոնք շատ պարզ ու ճշգրիտ կերպով պատկերացնում են, թէ ի՞նչ թշուառ հետեւանքներ է թողել և թողնում է գաղթականութիւնը հայաբնակ գաւառներում:

Գաղթականութիւնը, գէթ հայ ազգի համար, մի մահացու հարուած է, որի վերայ հաշաւ աչքով նայելը, ինչ կողմից որ ուզում էք, դասապարտելի է: Սակայն այս տիսուր իրողութիւնը մեր օրերում, մեր աչքի առաջ շարունակ և անրնդհատ կատարվում է, ոչ միայն գարերի և տարիների ընթացքում այլ ամեն ամիս, ամեն օր: Մի՞թէ հարկ է յիշել այստեղ որ եթէ անցեալ գարերում հայաստանից տեղի չունենային այն մեծ գաղթականութիւնները, որոնք վերջ և վերջոյ ձուլուելով զօրեղ աղդերի հետ, անհետացան հայութեան շրջանից՝ որքան խաղաղ և կանոնաւոր կեանք կունենար հայ ժողովուրդը իր երկրում, և որպիսի ուժեղ տարր կ'կազմեր նա տեղական վրանաբնակ և աւաղակաբարոյ ժողովուրդների հարստահարութիւնների գէմ:

Եյս տեսակէտով մենք ցաւում ենք ոչ միայն Լեհաստանի կորած ու անհետացած անուանի և նշանաւոր հայ գաղթականների վերայ, այլ նաև բոլոր այն գաղթական ազգակիցների, որոնք թէեւ մի ժամանակ Գանգէսի ափերից մինչև Խտալիս և Ամստերդամ գզըգեցնում էին իրենց անշուն հարստութիւններով, հոչակ հանում ու նշանաւոր գործերի ձեռք զարնում, սակայն այսօր նոցանից ոչինչ չմնաց, բացի պատմա-

կան յիշատակը, ինչպէս որ և շատ բնական էր. այս նոքա վերջի վերջոյ միայն տխուր յիշատակներով յաւելժացրին իրենց անունը: Բայց, ընդհակառակին, այն համբերատար, համակրելի հայր, հայ գիւղացին, որը իր բուն հողին վերայ նստած, արօրը ձեռքին, տարելէ ժամանակակից հալածանքները, բարբարութիւնները, պատերազմի աշուելի հետեւանքները, որը, խօսքի բուն նշանակութեամբ, նոյն իսկ կրակի ու սուրի տակ չէ հանգուրժել, իր բազդախնդիր ազգակիցների նման, թողնելով իր նուրիական ու բազմաչափար ծննդավայրը, օտար աշխարհներում փնտուել հանգիստ և բարեկենցազութիւն, ահա այդ հայ մարդը, հայ գիւղացին է եղել, որ տէր է մնացել իր հողին, նորա մեջ մեծամասնութիւն է կազմել իբր հայ տարր, և որի շնորհիւ է, որ այսօր մենք հայութեան բարոյական և քաղաքիթական իրաւունքներն ենք աշխատում ապահովեն:

Եյսպէս՝ չնայելով որ գաղթականութիւնը հայի համար մի սոսկալի և անհանդուրժելի չարիք է, որի նմանը դժուար թէ ով և իցէ կարող լինէր ցոյց տալ մեր կեանքում, չնայելով որ այդ չարիքը շարունակ ջլատում և ուժասպառ է անում հայ մարդին, ու նորա գյութեան խնդրին վտանգաւոր հաւատած տալիս, չնայելով որ այդ չարիքը փոխանակ նուազելու, օրըստօրէ աւելի է զարգանում և հայի մի նոր գերեզմանատունն էլ ովկիանոսների միւս կողմումն է հաստատում, այնուամենայնիւ այս գաղթականութեան դէմ մենք ոչ միայն զօրաւոր միջոցների չենք զիմում խօսքով ու գործով. այլ ընդհակառակին, ստրուկին և օտարին յատուկ անհոգութեամբ և անտարբերութեամբ, ականատես ենք լինում մեր ազգայինների կենդանւոյն մեռելաթաղութեան հանդիսին, որի մէկ ծայրը, ինչպէս ասացինք, Տաճկահայաստանի հայաբնակ վայրերումն է, իսկ միւսը Միացեալ Նահանդաց հեռաւոր և անծանօթ անկիւններում:

Եւ իբաւ, ցաւ ալի վիճակ է ներկայացնում Տաճկահայաստանը վերջին տարիներում:

Եմբողջ վելայէթներ հազարներով դատարկվում են երիտասարդ աշխոյժ ոյժերից, որոնք թշուառ վիճակի մէջ թողնելով իրենց ընտանիքը, երկիրը, նորա արդիւնաբերութիւնը, զրվում են հեռաւոր վայրեր, ուր նոցա վերջ վերջոյ կորուստ

է սպառնում: Այսօր այդ պանդխտութեան և գաղթականութեան հրանքը տանումէ իր հետ ոչ միայն մի դիւզի, մի աւանի, մի նահանդի երիտասարդական և այրական ցժերը, այլ Ահարիայից սկսած մինչև Բայաղէտի վերջին զիւզի արդիւնաբերող ցժերը:

Տաճկահայտատանում այժմ ամեն մի տուն ունի այսօր իր պանդուխտը, ամեն մէկը իր չափով, մէկ, երկու մինչև հինգ հոգի, օրինակի համար. Մշց Խասդիւղը, հազիւ 250 տանից է բաղկացած, ունի մօտ 400 պանդուխտ, Նորշէնը, 200 տուն, ունի 300 պանդուխտ, Երբակ, 120 տուն, ունի 200 պանդուխտ, ինչպէս Մշց հաղորդումէ «Արևելքի» մէջ մի պարոն, Գեղամ՝ մականուամբ:

Եյս գաղթականութիւնը և պանդխտութիւնը, ինչպէս ամեն ազգերի, այնպէս և հայերի մէջ, ունին, անշուշտ, իրենց պատճառները, որոնց վերայ մեր մամուլը և մեր հասակութիւնը մինչև այժմ հարկ եղած ուշագրութիւնը չեն դարձրել, այն ինչ գէթ մամուլի պարտականութիւնն էր աշխատել օր առաջ ուսումնասիրելու բուն պատճառները այս գաղթականութեան, որով անապատանումէ երկիրը և միանգամայն ժողովրդի տունն է քանդվում: Զէ կարելի պնդել թէ գաղթականութեան և պանդխտութեան պատճառները այնչափ անխուսափելի են դարձած Տաճկահայտատանի մեր ազգակիցների համար, որ նոյա առաջը անկարելի է առնել:

Յայտնի է, որ գաղթականութիւնը թէ հին և թէ նոր ազգերի մէջ գոյութիւն է ունեցել ամենահին ժամանակներից հետէ: Երկրի աննպաստ դիրքը, ժողովրդի տնտեսական յոռի կացութիւնը, ընկերական և վարչական կեանքի բաղմատեսակ անցածող պայմանները միշտ մօտ կապ են ունենում գաղթականութեան հետ. իսկապէս ասած գաղթականութիւնը պարզ հետեանք է այս բարդ պայմանների: Հետեւապէս ամեն ժողովուրդ, որ դիմումէ գաղթականութեան և պանդխտութեան՝ անշուշտ ունի իր մէջ ներքին զօրաւոր պատճառներ, որոնք անտանելի են կացուցանում նորս զրութիւնը իր բուն երկրում: Օրինակի համար. մի երկրում հողի պակասութիւնն է ներկայանում գաղթելու զինաւոր սահպողական պատճառ, մի այլ երկրում կեանքի բաղմաթիւ պայմանների անպատեհու-

թիւնը, կառավարչական ձնշումը և օտար կողմեր գաղթելու ձգտումը. մի այլ տեղ սոսկ տնտեսական պայմանները կամ շուտով հարստանալու տևնչն են մղում մարդկանց՝ թողնել իրենց հայրենիքը և խումբ խումբ նոր երկիրներ գաղթել:

Մեր մէջ ես, գաղթականութիւնները տեղի են ունեցել զանազան պայմանների տակ, զլսաւորապէս կոտորածից, բռնութիւնից աղատուելու համար, և, որչափ պատմութիւնից յայտնի է, սկիզբն են առնում տասներորդ գարից. այնուհետեւ դոքա աւելի մեծ քանակութեամբ շարունակուել են անընդհատ մինչև մեր օրերը: Եյս բոլոր հայ գաղթականութիւնների պատճառը զլսաւորապէս եղել է ձնշումը, որը և ստիպել է հայերին տասնեակ հազարներով թողնել իրենց աւանդական բնակավայրը և գաղթել նոր երկիրներ երազած կեանքի անդորրութիւնը գտնելու:

Մենք կանգ չենք առնում հին ժամանակներում տեղի ունեցած գաղթականութիւններին վերայ, որ մեզ հեռուն կտաներ և միանգամայն ներկայ յօլուածի ծրագրից դուրս է: Մեր նպատակն է այստեղ խօսել տաճկահայերի այն անվերջ գաղթականութեան վերայ, որը տեղի է ունենում մեր աչքի առաջ և որի հոսանքը իր հետ տանում է բալրովին թարմ ոյժեր գէպի հեռաւոր Նմերիկան: Եյժմ հետաքրքրական է պարզել թէ արդեօք ներկայումն ի՞նչն է ստիպում տաճկահային երեսի վերայ ձգել բնութիւնից այնքան առատ օժտուած իր հայրենիքը և գաղթել ովկիանոսների այն կողմը: Եհա՛ այն զլսաւոր և էական կէտը, որի վերայ վաղուց ի վեր պարտաւոր էր հոգալ և ուշագրութիւն դարձնել իւրաքանչիւր անհատ, որի սրտին մօտ է, որպէս մի նուիրական սկզբունք, տաճկահայաստանցու գյուղութեան կենսական խնդիրը, որովհետև նորա լուծելուցն է խսկապէս կախուած և Տաճկահայաստանի ապագայ բաղդը:

Տաճկահայաստանի արդի ախուր վեճակը, կարծում ենք, փոքր ի շատ է ծանօթ պէտք է լինի մեզանից իւրաքանչիւրին գէթ լրագրական տեղեկութիւններից: Ենընդհատ աւարառութիւններ, սպանութիւններ, հարստահարութիւններ, կեանքի և դոքի անապահովութիւն հայերի նկատմամբ զանազան թափառաշջեկ ցեղերի կողմից, զլսաւորապէս քրդերի հրոսակ-

Ներից—ահա որո՞նք են շատերի կողմից առաջ բերվում իբր հայերի գաղթականութեան և պանդխառութեան պատճառներ:

Սակայն գործի էութեան հետ մօտից ծանօթանալուց յետոյ կ'տեսնենք, որ գաղթականութեան խակական պատճառները աւելի խոր են և բազմակողմանի ուսումնասիրութեան կարուտ: Այդ բուն պատճառները այնքան բարդ, չետաքրքրական և հրահանգիչ են, որ նոցա ուսումնասիրութիւնը չէ կարող մի յօդուածում պարփակուել: մենք միայն մատնացոյց կ'լինենք այս անգամ նոցա զլիսաւոլների վերայ, թողնելով յաջորդ անդամներին գառնալ նոցա վերայ, աւելի մանրամասնորէն խօսելու:

Տաճկահայաստանի ամեն կողմերում գտնում ենք ընդարձակ բերրի գաշտեր, աղե, երկաթի, պղնձի, կաւիճի, մարմարի և կրային կաղմութեան վերաբերեալ զանազան հանքեր, ծծումբ քարիւղ, քարածուխի խաւեր, ջրվէժներ, անտառներ և ուրիշ ճոխ երկրաբանական հարստութիւններ: Թողնենք դեռ այն թագուն գանձերը, որոնք ժողովրդի տգիտութեան պատճառով հովիտների, լեռների մէջերին իրենց հազարամեայ կուսութեան մէջ տակաւին մնում են ծածկուած: Այս անձեռնամուխ բաղմատեսակ հարստութիւնները և բերրի հողը աչքի առաջ ունենալով՝ սպասելի եր, որ այդ երկրում բնակող ժողովուրդը արհեստներով, երկրագործութեամբ, հանքային արտաքիրութեամբ և վաճառականութեամբ ծաղկած և նիւթապէս բարգաւած՝ ու բազգաւոր վիճակ ունենար: Վակայն չ'սայելով սորան, մենք տեսնում ենք, որ երկրի այս բնական հարստութեան զլիսաւոր աղբիւրները, չնչին բացառութիւններով, մնում են անմշակ, և հայ գրամատէրները փորձ անդամ չեն անում սոցա շահագործման, որ թէ նոցա համար շահաւէտ կլինէր և թէ երկրի անդրամ աղդաբնակութեան: Բայց երկրի բնական հարստութեան արդիւնաբերութիւնն անտես եղած լինելով՝ անհրաժեշտ է ենթագրել, որ ժողովուրդը պարապէր արդիւնագործութեան ուրիշ ծիւղելով:

Յիբաւի, Ասիական Տաճկաստանում ընդհանրապէս, իսկ Տաճկահայաստանում մասնաւորապէս, հայերի ստուար մեծամասնութիւնը կաղմում են զիւզացիները, որոնց զլիսաւոր պարապմունքը հաղոգործութիւնն է, որ մինչեւ այժմ մնում է ան-

փոփոխ իր նախկին նահապետական դրութեան մէջ, թէ և զիւղացու միակ նիւթական ապահովութիւնը գլխաւորապէս սորանից է կախուած:

Հայ զիւղացին դեռ մինչև այժմ ծանօթ չ'լինելով հողե մշակութեան կատարելագործուած եղանակներին և նորանոր երկրագործական գործիքներին, շարունակում է իր 8—10 լծեան ծանրաշարժ գութանովը և այլ նախնական միջոյներով գործ տեսնել որը իհարկէ ահազին գժուաբութիւններով հանդերձ, խիստ նուազ արդիւնք է բերում: Ձենք յիշում և այն, որ երկրի ամենապտղաբեր արդաւանդ հողերը, հովատուն և խոտաւէտ լեռները քուրդերի և թուրքերի սեփականութիւնն են գարձած, այնպէս որ հայ ազգանակութեան մնում է մշակել սառի, ապաւաժուտ և անջրդի տեղերը, որոնք ինչպէս յայտնի է՝ նուազ արդիւնաւոր են մշակութեան համար: Այսպիսի պայմանների մէջ տափանելը, հնձելը, կալսելը, ամբարելը և այլն խեղճ հայ հողագործին այնպիսի գժուալութիւնների և ծախսերի մէջ են ձգում որ նա յաճախի, մանաւանդ երաշտ տարինեկում, իր աշխատութեան և ծախսերի փոխարէնը չէ կարողանում ստանալ գաշտերից. ուր մնաց, որ նա պէտք է ամբողջ ընտանիք կերակրէ տարուայ ընթացքում, տաւարին պէտքը հողայ, զանազան մասնաւոր ծախսերի և պետական հարկերի համար զբամ պատրաստէ: Բայց ենթալիքներ, թէ տարին առատ է, և զիւղացին տիրած է մեծաքանակ արմատիք: Այժմ նորից ոչ պակաս հոգս է զիւղացու համար դոցա վաճառ հանելը: Նա մօտաւոր քաղաքն է բերում իր վաճառքը որի գինը, առատ բերքի և զբամի սղութեան պատճառով, սաստիկ կոտրուած է:

Չնայելով այն դառն աշխատութիւններին, որ նա գործ է գնում իր ամբողջ ընտանիքով արտը հերկելու, ցանելու և ոռոգելու *), երկրագործ հայ զիւղացին շատ տեղ 50 օխա (մօտաւորապէս 4 փութ) ցորենը ստիպուած է ծախել 15 դու-

*.) Ոչ պակաս գժուարութիւն է կրում հայ հողագործը և ջրի պակասութիւնից կամ մրցումից, օտարը, տաճիկ կալուածատէրը ամառ ժամանակ միշտ ուժով ջուրը հայի ձեռքից խլելով, իր արտերը և այգիներն է ջրում, այն ինչ հայ զիւղացու արտը ու այգին ամիսներով անջուր մնալով չորանում է:

ըուշով (1 ր. 20 կ.): Բայց այս գումարից նա բանուոր քաղուորին տալու է այդ և փութի հաշուով 6 զուբուշ (50 կոպ.): Աւրեմն չորս փութը 90 կոպ. ծախելով (որի մեջ հաշուելու է և սերմը և այլ ծախսերը) նա ի՞նչպէս կարող է հոգալ իր բոլոր տարեկան պիտոյքը, որպէս զի կարողանայ առանց վաշնառուին գիմելու հաւասարակշռել իր ելեմուտքը:

Ճեռաւոր քաղաքներ, մանաւանդ արտասահման հանել իր բերքերը վաճառելու՝ աւելի վեսասկար և մինչեւ անդամ անկարելի է նորան, որովհետև ցորենի արտահանութեան համար չկան կաղմանկերպուած ընկերութիւններ, և ճանապարհային հաղորդակցութիւննք անսասելի դժուարութիւններ ունին և մեծ ծախսեր են պահանջում, որ ցորենի նման աժանագին նիւթի համար անկարելի է անելը ։ Հատ տեղ նոյն իսկ մօտաւոր գաւառների մեջ ճանապարհները լիոների վերայով անցնելով, այնպիսի նեղ ուղիներ են ներկայացնում, որ երթեմն գրաստները ու ոչխարները անդունդն են զլորվում: Օօր, վեր առնենք այն ճանապարհը, որ Վանը միացնումէ Երզումի հետ և համարվումէ Տաճկահայաստանի լաւագյոն ճանապարհներից մէկը: Եյս ուղին տարուայ զանազան եղանակներում այլ և այլ տեսակ գժուարութիւններ է յարուցանում կոնոնաւոր յարաբերութեան դէմ: Գարնանը տեղացող անձրեների և գետերի յօրդելու ժամանակ, ճանապարհը տղմուտ է գառնում, ձմեռները խոր ձիւնի պատճառով մի քանի ամիս արգելքներ են առաջ գալիս, որոնցով և վաճառականական և այլ հաղորդակցութիւննք կատարվում են մեծամեծ նեղութիւններով: Սովորաբար Վանից Երզում գրաստաների կարաւանը հազիւ 13 օրուան մեջ է անում ճանապարհը, իսկ դարնանը 18 օրուան, և այս՝ 400 վերստի չափ ճանապարհը, որ եթէ կանոնաւոր լինէր 8 օր կ'տևէր. մոռանալու չէ և այս հանդամանքը, որ շատ անդամ ապրանքները շարաթներով գարսուած են մնում այս կամ այն քաղաքում ջորեպաններ գտնելու համար:

Ի՞նչ անի գիւղացին այսպիսի պայմաններում, ի՞նչ օգուտ նորա ցորենի լիուլի շտեմարանները, քանի որ նորա վաճառքի հրապարակային զինը այնքան ստոր է, որ բնաւ չէ փոխարինում նորա վերայ գործ գրուած աշխատութիւնը ու ծախսերը. իսկ պահել և սպասել աւելի բարեյաջող պայմանների,

նա չէ կարող որովհետեւ ցորենի օրինաւոր շտեմարանների բացակայութիւնից որդք կարող է փչացնել նորա շեղջերը:

Ասկայն դրամի պէտքը վերոյիշեալ դժուարութիւնները չէ նկատում թէպէտ գիւղացու շտեմարաններում փոռւմէ ցորենը, բայց նա ձեռքում փող չունի վճարելու համար պետական տուրքիրը և վաշխառուից վերցրած փոքրիկ գումարի խոշը տոկոսները, որովհետեւ դրեթէ ամեն հայ գիւղացի ընատնիք, կամ հարսանիքի առիթով, կամ մշակութեան համար հարկաւոր պիտօքներ (Ծկաններ, գործիքներ) գնելու, կամ վերջապէտ հարկեր վճարելու համար վաշխառուին է գիմում, և մէկ անգամ նորա ճանկն ընկնելուց յետոյ տարիներով իւր քրտինքը թափում և մկոնքների ոյժը գործածում է այդ անյագ հարստահարիչ անյատակ քսակը լցնելու:

Եյսպէս ահա մի կողմից պարտքերը, միւս կողմից տուրքերն և ընտաննեկան անհրաժեշտ պէտքեր ստիպում են խեղջ գիւղացուն կամ իր արմտիքը զրեթէ ձրի տալ՝ մի քիչ փող ձեռք բերելու, կամ, աւելի վատ հանգամանքներում, զիմումէ ծայրայեղութեան—իր միակ ապաւէն կալուածներն ևս ծախումէ ամենաշնչին գնով, որ մօտիկ ապագայում սովէ սպառնում, կամ երեսի վերայ թողնումէ իր անդն ու անդաստանը, տունն ու տեղը, և պանդիստումէ օտար երկիր:

Եյսպիսով զիսաւորապէս տաճիկները, անօպնական հայ գիւղացիների վեճակից օգտուելով, վերջնն եօթ, ուժ տարիներում ձեռք են բերած բաղմաթիւ կալուածներ, արտեր ու այգիներ, այնպիսի չնչին գներով որ ծախողների ծայրայեղ կարօտութեամբ միայն կարելի է բացատրել: Ասկայն պէտք է ասել որ հայ գիւղացիներից շատերը իրենց սարսափելի աղքատութեան մէջ անգամ գեռ ամեն կերպ աշխատում են ձեռքից չթողնել իմենց մնունդ մասակարարող միակ կալուածը, ուստի բարւոք են համարում տաճիկի հետ ընկերանալ որոշ պրամական պայմաններով և այնպէս շարունակել գործը, սակայն սորա հետեւանքն նշնչակս այս է լինում, որ վերջ ի վերջ հայի կալուածը ամբողջովին անցնում է տաճիկ ձեռքը:

Եյսպիսի սոսկալի պայմանների մէջ մարդ դժուարանում էլ է մինչև անգամ մեղադրել գիւղացուն նորա ծայրայեղութեան դիմելուն, իր կալուածները վաճառ հանելուն, երբ հա-

կառակ իր արիւն քրտինքով ձեռք բերած արտազրութեանը մայր հողեց, նա այնուամենայնիւ իր և իր ամբողջ ընտանիքի դյութիւնը պաշտպանելու մէջ միանգամայն անկարող վիճակի մէջ է գտնվում:

Այսպէս երկրագործութիւնն ես, չնայելով արտաքուստ բարեյաջող հանգամանքներին—երկրի պաղաքերութեան և ոռողման—չէ տալիս սպասուած արդիւնքը հայ երկրագործին։ Բայց անասնաբուծութիւնը, որ կարող էր, հողագործութեան հետ, նեցուկ լինել հայ զիւղացու տնաեսութեան՝ ներկայ պայմաններում աւելի ես անձեռնտու է նորան, որովհետեւ անասնաբուծութեան բոլոր յարմարաւոր տեղերը, ամսայիները, հեռաւոր ընդարձակ մարդագիտիները, խոտաւէտ լեռները, մասսամբ քուրդերի սեփականութիւնն են կազմում, և մասսամբ թէպէտեւ ազատ են բոլոր ժողովրդի համար՝ սակայն հայերը չեն կարողանում նոցանից օգտուել կատածելով իրենց հօտերը հեռաւոր տեղեր արածելու տանել յափշտակութեան երկիւղից, և նոցա այս կասկածոտութիւնն իրաւացի է նոցա այժմեան լքեալ վիճակում։ Խակ զիւղի շնչակայքի հողը սովորաբար յատկացրած է լինում մշակութեան։ ուստի հայ զիւղացին ճարահատեալ ստիպուած է լինում բաւականանալ միայն համեստ թուով տաւար պահելու կաթնեղէնի համար։ այսպիսով անասնաբուծութեամբ պարապելը քուրդերի մասնաւոր պարապմունքն է զարձել որոնց տրամատրութեան տակ են երկրի ընդուարձակ արօտատեղիները։

Ուրիմն Տաճկահայաստանի հայերի գաղթականութեան և պանդսառութեան պատճառները տնաբեսական կերպարանք ունին։ Հանքային հարստութիւնները մշակելու ոչ փող և ոչ զիտութիւն կայ, երկրագործութիւնը, բայց արդիւնաբերութեան դժուարութիւններից՝ անզիմագրելի արդելքների է հանդիպում վաճառահանութեան ժամանակ, ճանաւարհների վատութեան կամ չգոյութեան պատճառով։ անասնաբուծութիւնը չէ զարդանում արօաների քիւրդերից զրաւուած լինելուն համար։

Այս բոլորի հետևանքն այն է, որ տաճկահայը իր բնիկ հողում սարսափելի տաժանակիր աշխատութիւններով հանգերձ անկարող լինելով հոգալ իր ամենաանհրաժեշտ կարիքը՝ և իր տուրքերը և դիմաւորապէս բազմապատկուած պարտ-

քերը վճարել՝ ստիպուածէ դիմել ծայրայեղ միջոցի — կոտրուած սրտով, աղի արտասունքով նա թողնուամէ իր օջախը երկար տարիներով և պանդիտում հեռաւոր տեղեր, ուր տնտեսական պայմանները աւելի ձեռնտու են աշխատաւոր մշակին, և այնտեղ իր մկունքի ոյժով վաստակել իրեն կարեւոր փողը:

Համառուսապէս բացատրելով տաճկահայի օտար երկիլաներ չուելու իսկական պատճառները, այժմ աւելորդ չենք համարում առաջարկել մի քանի միջոցներ, որոնք մեր կարծիքով կարող են մասամբ գաղթականութեան առաջն առնել:

Աերցիշեալ պատճառները, որոնք խոչընդունակ են լինուած հայ գիւղացուն իր աշխատութեամբ անկարօտ ապրուստ ձարկել իր բնիկ հողին վերայ՝ նոյն ինքն ցոյց են տալիս և այն միջոցները, որոնցով հարկ է մաքառել այդ խոչընդունելի դէմ:

Ներկայ պայմաններում հայ հողագործը, առանց կողմնակի օգնութեան և աջակցութեան, միայնակ միանդամայն անկարող է ոչինչ անել ուստի հայ գրամատէրների օժանդակութիւնը շատ կարեւոր է այստեղ: Հողագործը իր ներքին կեանքի մէջ նախ և առաջ սարսափելի կարօտութիւն է զգուած փոքրիկ գրամադլիս, որով նա գարնան սկզբին պէտք է հոգայ երկրագործութեան անհրաժեշտ պիտոյքները (զօր, եղներ գնել գործիքներ պատրաստել, սերմացու տոնել են), որոց համար սա սովորաբար, կամայ ակամայ, դիմում է այսօր վաշխառուին: Սորանով նա այլ ևս կազառուի վաշխառուի հրէշալի տոկոսներից, որոնց մասին ամեն անգամ գիւղացին մտածելիս իր գոյութիւնն է անիծում և երկրի առաբաղդ պայմանները լալիս:

Հարցը այժմ սորա մէջ է, թէ գրամատէրը ի՞նչպէս կարող է օգնել գիւղացուն:

Սորա համար մեր կարծիքով պէտք է միանան մի քանի գրամատէրներ և հաւաքական ոյժերով աժանագին վարկի գրամատուններ հիմնեն ամեն մի վելայէթի կեղրոնսկան քաղաքներում, իրենց ձիւղերը ունենալով գաւառներում: Դրամատէրներն այսօր մեծ մասամբ իրենց գումարները տոկոսաբեր թղթերի վերայ են գնուած, որոնք առ առաւելն 5% են բեկուած և երբեմն ընկերութիւնների օնանկանալով՝ բոլորովին կորցնուած են իրենց արժեքը: Եթէ նոքա, փոխանակ մեռած թղթերի, իրենց գումարները գործածէին այսպիսի վարկի գրամատուն-

ներ հիմնելու՝ նոքա կարող էին առնուազն՝ $10^0/_{\circ}$ զուտ արդիւնք ունենալ և միենոյն ժամանակ իսկական բարիքարներ կ' գառնային երկարործ ժողովրդի մեջ մասին համար, որ 200-300 և աւելի մեծ, իսկապէս հրէշային տոկոսներ է վճարում վաշխառութին և կարելի է ասել՝ միշտ նորա սարուկին է մնում: Ուրեմն այսպիսի գրամատուններ հիմնելով, թէ իրենք գրամատէրները կօգտութին, թէ զիւղացուն ձեռք կարկառած կլինին նորա անել վիճակին մէջ և թէ այդպիսով հողագործի դրութիւնը բարձրացնելով երկրի արդիւնաբերութեան դարդացման կնպաստին:

Երկրագործութիւնը ներքին կողմից ևս կանոնաւոր վիճակի մէջ գնելու համար, ժողովրդի վիճակով հիտաքրքրուող հարուստ հայ վաճառականները պէտք է գառանիերում, մանաւանդ երկրագործական կենդրոններում կատարելագործուած ամերիկական երկրագործական գործիքների պահեստները ունենան և իրենց գործակալների միջոցով այդ գործիքները գնել ցանկացող զիւղացուն կամ զիւղական համայնքին բացատրեն նոյց գործածութեան եղանակը, որ հէնց իրենց օգտին կծառայէ, որովհետեւ քանի որ զիւղացիք աւելի հասկանան նոր գործիքների առաւելութիւնները հիների վերաբերութեամբ և որչափ որ նոյց գործածելու վարժութին՝ այնչափ շտո կծախուի այդ ապրանքը: Օրինակի համար կարելի է մատնացոյց անել նոյն Տաճկաստանում Պանտրմայի վերայ, ուր հայ վաճառականների նախաձեռնութեամբ երկու տարի է, որ երկրագործական կատարելագործուած պարզ մեքենաների գործարան է հաստատուած: Մինչև այժմ շինած ցաքանները (թրոմը) և զերմանական արօրը որ շինած է գործարանի տեսուչ Պ. Պոլար, այժմ ընդհանուր գործածութիւն են ստայած, որոնցից սեղացի երկրագործները և ագրակատէրերը չափազանց գոհ են և հետզհետէ մացնում են ամեն տեղ: Ենկատի տոնելով որ Պանտրմայի այս մասնաւոր փորձից կառավարութիւնը գոհ մնաց և ամեն կերպով իրախուսում է՝ Տաճկահայաստանի հայ զիւղացիներն էլ իրենց գրամատէրների հետ միանալով կալող էին զիմել կառավարութեան—երկրագործական նախարարութեան, խնդրելով այսպիսի գործարանի բացման դիւրութիւնները հայթայթել իրենց տեղերում:

Դանապարհային հաղորդակցութիւնները գիւրացնել գաւառների մէջ ի հարկ է տէրութեան գործն է, սակայն քանի որ կառավարութիւնը առաջժմայդ չէ անում, իրենք հողագործները քաղաքացիների հետ աշխատելու են բաժին բաժին գէթ փոքր ի շատէ օրինաւոր խճուղիներ բանալու՝ այս դէպքում անշուշան իշխանութիւնն եւ կօգնի, որովհետեւ դա նորան ևս ոչ պակաս օգտակար է:

Մենք գիտենք, որ սորանից 25.—26 տարի առաջ Վանաց կուսակալ Կապտուլլահ փաշան իր նախաձեռնութեամբ ու շժերով շինել է տուել երկրի ոռոգման համար արուեստական Ծներ, կամուրջներ և այլն: Ուստի աչքի առաջ ունենալով ջրի պակասութիւնը, որից հայ գիւղացիների ընդարձակ դաշտերը ու այգիները չորանում և փշանում են, հարկաւոր և միանգամայն իրագործելի է նոյնպիսի արուեստական Ծներ շինել, գետերից հեռաւոր առուներ բանալ են, քան երթալ ու թափառել զանազան քաղաքներում, կամ հեռաւոր Եմերիկայում կեանքը մահի գատապարտել:

Գանք այժմ անասնաբուծութեանը: Եյս ճիւղը, ինչպէս յիշեցինք, բոլորովին քրդերի ձեռքն է անցած և սորանով երկրի կանխիկ զրամը զիսթէ բոլորն ել քրդերի ձեռքումն է գտնվում: Թէ ինչպիսի գումարներ են շահում քուրդերը միայն ոչխարներից, կարելի է հետեւեցնել սորանից: Եմեն գարուն քուրդերը հայ գիւղացիներից զնում են նոցա մի տարեկան ծնած գառները 10—15 զրուշով (80 կոպ.—1 ր. 20 կ.), որոնց մի տարի ճոխ մարդագետիններում արածացնելուց յետոյ, քաղաքներն են տանում և Հալէպից եկող ոչխար զնողներին ծախում են իւրաքանչիւր ոչխարը 80—100 զրուշով, (6—8 ոռութեամբ):

Գանի որ ներկայ պայմաններում, գէթ Վանաց վիւայէթում, հողագործ ժողովուրդը գառն աղքատութեան է գատապարտուած, այս արգիւնաբերութիւնը կարող էր զգալի կերպով բարեռքել նորա տնտեսական վիճակը, մանաւանդ որ երկրագործութիւն և անասնապահութիւն միմեանցից մեծ կախում ունեն և փոխադարձաբար օգնում են միմեանց: Անասնաբուծութիւնը ներկայ պայմաններում, ինչպէս ասացինք, անհամար պայմաններում, նոյնպէս ասացինք, անցնապէս անհամար պայմաններում, ոյժերով գժուար է հայ հողագործին համար: Ուստի այս դէպքում էլ հաւաքական ոյժով գործ

սկսելու է: **Աարող** են մի տասը, տասն հինգ զիւղացիներ միանալ, որոնց մի մասը հողագործութեան կ'հետեւի, իսկ միւս մասը փոխադարձաբար խաշնարածութեան, որով երկու կողմից էլ գործելը յաջող վիճակի մէջ կ'մաննեն:

Եյսպիսով մենք տևսնում ենք, որ հաւաքական ոյժով հայ հողագործը կունենար տնտեսական յաջող վիճակ և չգաղթելով ինքն իրեն ուժապառ չէր անի: **Եթէ** մի զիւղացի անկարող է իր սեփական միջոցներով ձեռք բերել նորանոր երկրագործական գործիքներ՝ կարծում ենք, շատ զիւրութեամբ ամբողջ զիւղի հաշուով կարելի էր գնել մեծագին գործիքները և նոցանով համայնքով օգտուել:

Եշա այն միջոցները որոնց վերայ մենք մատնացցյ եղանք: Յանկալի է, որ տաճկահայաստանի հայ զիւղացու վիճակով հետաքրքրուողները և ցանկացողները ուշադրութիւն դարձնեն մեր առարջակութիւններին վերայ և մշակեին մանրամասնորւն: որովհետեւ, կրկնում ենք, հայ զիւղացու սոսկ տնտեսական վիճակիցն է կախուած գաղթականութեան խնդիրը, ուրեմն և Տաճկահայաստանի ապագան:


Ի վերջոյ աւելորդ չենք համարում յիշել որ տաճկահայերի գաղթականութեան սկիզբը վերաբերումէ յիսնական թուականներին: **Ո**րչափ ստուգել կարողացանք՝ 1864 թուին այդ գաղթական հայերի թիւը յանգում էր 15-ի, այնուհետեւ այս թիւը փոքր առ փոքր սառւարաննալով տարիների ընթացքում, գլխաւորապէս վերջին 10 տարում, այժմ ամերիկայում դանուող բոլոր հայերի թիւը հասնում է մօտաւորապէս 1800 հոգու:

Եյս գաղթականութիւնը որ սպառնում է հետզհետէ ծարակուել իր հետ տաննում է երկրի ամենամթարմ և ընդունակ ոյժերը, որի առաջն առնելու համար տաճիկ կառավարութիւնը գովելի հոգացուզութեամբ դիմումէ այժմ խիստ միջոցների, **Տաճկահայաստանից** այնտեղ գաղթողներին անցաթուղթ չտալով: **Ի**արձագոյն **Գ**րան այս կարգադրութիւնը, նորա արգելումը **Ն**մերիկայ գաղթելու՝ փոխանակ ընդհանուր գոհութիւն պատճառելու՝ հայ մամուլի մի մասին դժգոհութիւն է աղդում: **Զ**ենք հասկանում....

ՍԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ.

Տաճկահայոց այս պատկառելի հաստատութեան նպատակը քաջածանօթ է. կրթութիւն ծաւալել ։ այստանի և Կիլիկիոյ մէջ: Մեր ընթերցողներին ձիշտ գաղափար տալու համար Միացիալ ընկերութեանց կրթական գործունէութեան մասին, մենք տպում ենք 184 երեսում այս Ընկերութեանց գալլոյցների անցեալ 1887/^{ss} և ներկայ 1888/^{ss} ձևարանական տարիների համեմատական ցուցակը՝ որը մասամբ կարող է Տաճկահայաստանի կրթական գործի ձիշտ պատկերը համարուել. նախ այն պատճառով, որ բացի այս ընկերութիւնից, ամբողջ տաճկահայերի մէջ ինչպէս յայտնի է, չկայ մի այլ այսպիսի ընկերութիւն հաստատուն ու որոշ ծրագրով, երկրորդ որ Միացեալ Ընկերութեանց կրթական հաստատութիւնները, բացի մի քանի ուրախալեց բացառութիւններից — օր. Սահասարեան վարժարանը, որ իր տեսակին մէջ եղակի զիրք է բոնում — աւելի քան այլ ազգային — եկեղեցական և ընկերութիւնների վարժարանները, ունին որոշ կաղմակերպութիւն, ժամանակակից մանկավարժական ուղղութիւն և ուսուցիչների համեմատաբար լաւ ընտրութիւն:


Եյս միտքը յայտնելով, մենք բնաւ չենք մոռանում և ուրանում ։ այուհեաց, Խիզանու ընկերութեանց վարժարանները և կարգ մի ընկերութիւնների արդիւնաւոր գործունէութիւնը հայ գալլոյցական գործում, ինչպէս է Եյնթապի Վարդաննեանց Ընկերութիւնը և Տաճկաստանի մի քանի հայաբնակ քաղաքների օրինաւոր վարժարանները, ինչպիսիք են, Օմիւռնայինը Տրապիզոնները, որը այժմ գտնվում է յայտնի մանկավարժ Պ. Դաւիթ Քալանթարեանցի տեսչութեան տակ: Եյլ այս անգամ ուշադրութիւն ենք գարձնում ներկայումս աւելի մեծ նշանակութիւն ունեցող Ընկերութեան վերայ, որ գործունէութեան աւելի ընդարձակ շրջան ունենալով, աւելի կարողանում է իր շյժերը կենդրոնացնել այնպիսի տեղերում, ուր հարկաւոր է համարում միցել Խւրոպայից և Եմերիկայից եկած միախոնարների կրթական հաստատութիւնների հետ և



ԱՇԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՊԵՐ



Վիացեալ Բնկերութեանց օրիորդաց վարժարանի ստորին
դասատան աշակերտուհիները



ուր բացարձակ կարիք է զգացվում ուսման մէջ, տեղացիների չքաւորութեան կամ տղիտութեան պատճառով:

Մեր տպած համեմատական ցուցակից երևում է, որ անցեալ Ճիմարանական տարուայ վերջում փակուած են տեղական պատճառնելով չորս արական վարժարաններ, Օփարէթ (Տուրուբերան), Չմշկածադ (Տաւրոս), Սիս (Ախլիկիա) և Երիդա (Եկեղեց) և նոյա փոխարէն բայցուած են տասը նոր վարժարաններ, որոնք են. 1 Սղիրդ—ծաղկոց (Տուրուբերան), 2 Շալտագան—ար. (Տուրուբերան), 3. Ըլաշկերտ իդ. (Իազ-րեանդ). 4—6. Օչյթուն, ծաղկոց երեք հատ. 7—8. Մերսին, արակ, և իդ. 9—10 Թարսուս ար. և իգական Ախլիկից մէջ):

Փակուած բոլոր չորս վարժարաններն եւ տղայոց էին, իսկ նոր բացուած տասից՝ երեքը արական են, երեքը իգական և չորսը ծաղկոց:

Ցուցակից երևում է, որ այս տարի, անցեալ տարուայ Համեմատութեամբ Շնկերութեան վեց կրթարան են աւելացել սակայն փոխանակ համատասխան քանակութեամբ աշակերտներ աւելանալուն, ցաւօք սրտի նկատում ենք հակառակ երեսյթ, այսինքն որ այս տարի անցեալ տարուանից 298 աշակերտ պակաս են: Անցեալ տարի իւրաքանչիւր կրթարտնում միջին թուով սովորելս են եղել 80 աշակերտ և աշակերտուհի, իսկ այս տարի միայն 61, ուրեմն մի քառորդով պակասել են աշակերտները իւրաքանչիւր կրթարտնում: Մենք գժուարանում ենք բացատրել այս տիտուր երեսյթը, և յոյս ունենք, որ Միացեալ ընկերութիւնք, որոնք արդէն գրաւել են ազգի մեծամասնութեան համակրութիւնը, որից և կախուած է նոյա ապագայ: Գործունէութեան յաջողութիւնը՝ կշտապեն մեխնել այս անբնական երեսյթը:

Առանձին խրախուսանքի արժանի է յարգելի Շնկերութեանց ոյժ տալը Ախլիկից կրթական գործին, ուր այս տարի նոքա վեց նոր կրթարաններ են բացել որոնցից երեքը ծաղկոցներ են: «Երաքսի» այս համարում մեր դրած երեք պատկերները Միացեալ ընկերութեանց 1885 թուի ուսումնարանների աշակերտներն ու աշակերտուհիներն են ներկայացնում:



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ե Ր Գ

Ե՞ս թէ երկինք գէթ մի վայրկեան
Լուէր կրծքիս հառաջանք,
Փայլէր ինձ սուրբ ազատութեան
Վառ, կենսատու արեգակ.

Ե՞ս թէ և ես կարենայի,
Որպէս արծիւ անարգել
Դէթ մի լոռէ աղատ կեանքի
Եզատ օդում սաւառնել.

Որպիսի՞ ջերմ, լի փափազով
Կարօտ պայցծառ երկնքի
Կը թռչէի և ինդալով
Դէս ձայրենիքս անձկալի:

Դէս այն երկիր նուիրական,
Ուր սահեցան անխըռով
Չքնառղ օրերն իմ մանկութեան
Լի գլախտային սուրբ սիրով:


Դէս այն երկիր երջանկալից,
Ուր մայրիկը նազելի
Իւր ջերմ գրկում պարզեց ինձ
Եւ կեանք, և՛ սէր, և՛ հոգի:

Ուր առաջին և զգացի
Եւ սիրոյ վիշտ, և՛, հրճուանք,
Ուր ես անցագ ճաշակեցի
Կեանքի վայելք ու դգուանք...

Ե՞ս ձայրենիք, երկիր չքնաղ,
Մըրբ պէտք է իմ խեղճ հոգին
Ճանդչէ անդորրի, հանդչէ խաղաղ
Քո կենսաբոյր վարդ կրծքին:

Ե՞ս Օմագուշեան





ԵՐԴՈՎԻՑ ՏԵՍԱՐԱՆ

Дозвол. ценз. Слб. 29го мая 1889 г.

Հրատ. «Արար» Հանդիսահ.

Դաշ. Յ. Գ. Խոստակ թ. 22



ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Ե Ի Դ Ո Կ Ի Ա

Ա երջին ժամանակներս լրագրաց մէջ յաճախ կը կարդանք որ
Եւրոպայի զանազան աղգերն գաղթային ընկերութիւններ կը
հաստատեն Ամիրիկէի եզերքներն կամ անմարդաբնակ կղեաց
խմբերու մէջ. ասոցմէ զատ բազմաթիւ օտարազգիք բնակու-
թիւններ կը հաստատեն Ասիոյ այլ և այլ գաւառներուն մէջ
հակառակ տեղական բաղմագիմի անպատեհութեանց և ընկերական
կենաց բացակայութեան։ Այինոյն ժամանակ մերայինք ալ թող-
լով իրենց բազմադարեան հայրենիքն՝ կը դիմեն բազմամարդ-
կեղլունները։ Արդեօք ասոնց երկուքն՝ որին՝ պատճառաբանու-
թիւնը աւելի ուղիղէ, ասիացոյն թէ եւրոպացւոյն։ — Երկուքն
ալ կ'ըսեն թէ իրենց սեպհական երկրին մէջ հաց չ'են կարող
գտնել հետևաբար պարտ են դիմել այլուր. երկուքն ալ ճշմա-
րիտը կը խօսին — մէկ բան կայ միայն որ թէպէտ շատ պարզ, այլ
սակայն հեռի է տակաւին մեր ուշադրութիւնն գրաւելէ — «Պա-
ղաժանիքն աղջտաց բնակալայլերն իորուասնձ ն իշխաց ծոցի բնական
հարաբուիչնեներն շնորհիւ իրենց բնակչաց մտաւոր գործունէու-
թեան։ Այնչ մեր ասիացիք ալ գժգոհ այն մօրմէն որոյ ստինք
լի են մեղրաձաշակ կաթով, «Երթանք, կ'ըսեն, երթանք Եւրոպա»
«Երթանք Պօլիս կամ Ամերիկա, այն տեղուանք թերես աւելի
առատ սնունդ կը գտնենք» և կը վազեն հոն՝ ուր մայր երկիրն
հոգի տալու վրայ է, փոխանակ փոքր ինչ աշխատանօք իրենց մօր
անարատ կաթէն սնունդ առնելու. և հետևանքն այն կը լինի որ
օտար երկրի մէջ հոգեվարքէն դոյզն սնունդ առնելու համար ա-
րիւն քրտինքի մէջ կը թաթախուին և օր մը, օրհասականի թու-

նաւոր սնունդն զիրենք ևս թունաւորելով կը տանի ի գերեզման։ Ասիական երկիրներուն մէջ, բնութիւնն ամենէն աւելի ժպտած լինել կը թուի Տաճկահյաստանի, ուր աշխարհագրական պէսպիտութիւնք առաւել աչքի կը զարնեն քան այլուր։ Ո՞ենք առիթունեցանք անձամբ անձին ուսումնասիրել անոր գաւառներէն մին— Եւդոկիան, որոյ վրայ պիտի ջանանք ըստ կարելոյն մանրամասն տեղեկութիւններ հաղորդել «Արաքս»ի ընթերցողաց, բնական, ընկերական և ազգային երրեակ տեսակէաներով։

Եւդոկիա մի նշանաւոր խառնուրդ ունի կենդանական, բուսական և հանքային ընտանեաց. Վայրի գաղաններուն մէջէն առատօրէն կը գտնուի արջ, գայլ, խող, սկիւռ, վայրի կատու, նապաստակ, աղուէս և խլուրդ. ընտանի կենդանեաց մէջ կդժնուին կով, եղ, ձի, ջորի, եշ, ցուլ ոչխար, այծ, ուղտ, և այլն։ Աողնոց մէջ, մինչեւ մէկ ու կէս մէթր, երկայնութեամբ օձեր կը գըտնուին, նմանապէս մողէսին շատ մեծ տեսակներն, օդն լի է զանազան տեսակի թուչուններով և ճճիներով, իսկ գետերն կը խայտան երիներանդ սիրուն ձուկերով։

Ճուսեղէնք զարմանալի առատութեամբ կաճին յլ՛յադոկիա և շրջակայքն. քաղաքէն գրեթէ երկու ժամ հեռաւորութեամբ կը գտնուին ընդարձակ անտառներ, ուր խիտ առ խիտ կը բարձրանան երկնուղէշ նոճիներ, մայրիներ, բարտի, կնձնի, խոզկաղնի, կաղնի, պիտակենի, գողալ, ուռի, ևն ևն. սոցա մէջ կանայնպիսիք, որ մինչև 50—60 կանդուն բարձրութիւն ունին։ Յոյժ հաճոյական է շրջել այս անտառներուն մէջ, ուր արեւուն ճառագայթներն չ'ունենալով աղատ մուտք, լուսոյ ցնցուղներ միայն կարող են արձակել ծառոց ճիւղերուն մէջէն, որոց մէջտեղի միջոցն մեծաւ մասամբ լցուած է ծառէ ի ծառ փաթաթուած բաղեղանման տունկերով, գետինն կանաչ օմոցին վրայ կը գողայ կապուտագեղ մանուշակն ցողի կաթիլ մը գուրգուրանօք պահելով իւր ծոցին մէջ։ Կղուէսն և նապաստակն մէկ կողմէն, սկիւռն և խլուրդն միւս կողմէն կը ջանան խզել տեղւոյն լուսութիւնն. սոցա հանդէպ, կագաւն. եկքանեկն և ուրիշ մեղրաբառքառ թուչուներ օդը կը լեցնեն իրենց անոյշ դայլայլիկներով։ Աակայն, այս անտառներն, փոխանակ խնամով պահուելու և օր քան զօր ուռածանալու, նշաւակ են անխիղճ և ծոյլ գիւղացւոց տապարի հարուածներուն. կացինին ծայրը չը բժացնելու համար, թողլով չորա-

ցեալ ծառերն, մէկ հարուածով արմատախիլ կ'ընէ պերճահասակ մատղաշ տունկերն: Յշւգոկիա կայ նաև մարդակերպ չքնաղ տունկ մը, զոր հայերէն լեզուաւ լօշդակ կանուանեն. ես տեսայ զյոդ մը այդ տունկէն, մին իդական սեռին և միւսն արականին կատարեալ պատկերը կը կրէր. տեղացիք կը հաւաստեն, թէ այդ տունկ հողէն քաղուած ժամանակ սուր և աղիողորմ Ճիչեր կ'արձակէ: Թէ՛ տունկն ըստ ինքեան և թէ՛ նորա արձակած Ճիչն, որպէս կը պատմեն, արժանի են գիտնոց ուշադրութիւնը գրաւելու: Երկու հարիւրէ աւելի տեսակաւոր ծաղիկներ կ'աճին Եւդոկիոյ բլուրներուն վրայ. թէ՛ վայրի և թէ՛ թերթաւոր վարդն խիստ առատ են քաղաքիս մէջ. յասմիկն, շահուգրամն, արևածաղիկն, պուտն, երիցուկն են ամեն տեղ կը տեսնուին. կայ նաև աֆիօնի տունկն, որոյ վրայ փոքր ինչ առատօրէն խօսիլ կ'արժէ ոչ այնչափ ըստ ինքեան նշանաւոր լինելուն՝ քան որչափ իւր արտադրած նիւթին առեւտուրի մեծ աղբիւր լինելուն համար: Առ ըստ վերջին ծայր աժան է, այնպէս որ մէկ քանի դուրուշի հունտով կարելի է մի ամբողջ արտ սերմանել ընդհանրապէս աշնան վերջերը կը ցանուի. թէպէտ կան ոմանք, որք ձմրան մէջ, կամ գարնան սկիզբն ալ կը ցանեն, երբ բոյսն կէս մատնաչափ հողէն դուրս ցցուած ժամանակ, առաւտոներն եղեամն տեղի ունենայ: լիովին կը գիճանայ, իսկ գիւրահալ Ճիւնը, վաս չը հասցնէլ զատ օգտակար ես է. տունկին վերջնական բարձրութիւնը մէկ մեթրօէ աւելի է. ծաղիկն Ճիշտ պուտին կը նմանի, անոր նման հնգամերթ, բայց համեմատաբար աւելի մեծ, գոյնն՝ սպիտակ, կարմիր և մանուշակագոյն. ծաղկին թերթերն թափելէ վերջ, բաժակն կ'սկսի տակաւ առ տակաւ ուռել որպէս սերկեփելինն, և հասարակ ընկուզէն քիչ մ'աւելի մեծ կ'ըլլայ. հասունցած լինելը հասկանալու համար, կը գիտեն թէ բաժակին ներքեր սև շրջանակ մը գոյացած է և կամ բաժակն կակուղ է. երբ յիշեալ երկու նշանները տեսնուին, յայնժամ գործաւորք և ուհիք մեծաւ մասամբ գեղջուկ թրքուհիք արան կ'երթան աֆիօնն Ճեղքելու. իւրաքանչիւրն ունի փոքրիկ պատառաքաղ մը, որով կը Ճեղքէ տունկի ուռած բաժակն մէկ քանի տեղէ, նոյն հետայն սպիտակ կաթի նման հիւթ մը դուրս կը ժայթքէ. գա է այն աֆիօնն, որ թէպէտ յարտաքուստ խիստ անմեղ կերպարանքի ներքել է ծածկուած և սակայն քանիներ կրնայ փութոյ պնդութեամբ

հանդերձելոյն փոխադրել։ Այս հիւթն նոյն օրը չը հաւաքուիր, կը մնայ միւս օրուան, եթէ այդ պահուն անձրև է՝ ամբողջովին կը սևայ և կը փճանայ. հետեւեալ օրն կաթի գոյնը կը փոխուի սաթի գոյնի, ա՛հա այն ատեն դանակներով կը հաւաքեն յագարածե թիթեղեայ անօթներու մէջ. կիսագունտեր կը շինեն որք տեղական բառով «կիլիկ» կը կոչուին. սոյն կիլիկներն կը պատեն աֆիօնին տերևներովն, յետոյ թխթեղապատ մնդուկներու մէջ 50-ական օիսա շարելով կը ճամբեն Լ օնդրա, սնտուկներուն մէջ կը ցանեն մասնաւոր տունկ մը որ Էլելի կը կոչուի, սա՝ կը ծառայէ աֆիօնն կակուղ պահելու, ամենէն աւելի յարգի կը նկատուի այն աֆիօնն՝ որ կակուղ, գեղին մի օրինակ և հոտաւէտ է, եթէ աֆիօնն հիննայ՝ շատ ստակ չ'արժէր, ըստ որում իւր գլխաւորագոյն հիւթն, մօրֆինն, թռչտուն (volatile) լինելով մեծ մասամբ կը ցնդի։ Վոաջնակարգ աֆիօնի լիպրան (144 տրամ) մինչև 16—17 շիլին կ'արժէ։ Ծառըքիոյ գաւառաց լաւագոյն աֆիօնն կ'ելնէ Մալաթիայէն, անկէ անմիջապէս յետոյ կուգայ Օկիլէ, մին Եւգոկիոյ գաւառակներէն որ մեզ համար ունի նաև պատմական նշանակութիւն, քանի որ հոս տեղի ունեցաւ վճռական պատերազմ՝ մը ընդ մէջ Միհրգատայ որդւոյն Փառնակէսի և Յուլիոս Կեսարի և յորժամ այս վերջինս ծերակոյտին յղեց հոչակաւոր խօսքն veni, vidi, vici, եկայ, տեսայ, յաղթեցի։ Եւգոկիոյ մէջ կ'ածի նաև ճէհինք թուփին. ոչինչ աւելի բանաստեղծական է քան այս տունկի թարմ կանաչն, երբ գարնան սկիզբն կը ծլի, սորա ծաղիկն գեղ նաձերմակ է և կը նմանի զօղալի ծաղկին, ծաղկաթուուի լինելէ վերջ աֆիօնին նման ծաղկին բաժակն կաճի և կուռի, միայն թէ փոխանակ ընկուղի մեծութեան համելու, լույսի հատապտուղէն մի քիչ աւելի մեծ կը լինի միայն. անկիւնաւոր և կանաչ է. սա կը ծառայէ կանաչ ներկ շինելու և մեծ քանակութեամբ կ'արտածուի յԵւրոպա. լաւագոյն Ճէհրին Կեսարիայինն է, յետ որոյ կուգայ Եւգոկիա. միջին գինն է՝ օիսան 6-7 զուրուշ։ Գաւառիս մէջ կը գտնուի նաև մահալէպ, տեսակ մը հատապտուղ Ճիշտ լույսի նման, որոյ իւղն եղիպտացիք դեղի տեղ կը գործածեն, տերեւներն մեծ քանակութեամբ ածխական թթուու ծծելնուն պատճառաւ մթնոլորդի մաքրութեան մեծապէս կը նպաստեն. սալէպն և անիսոնն առատ կ'ածին բլուրներուն վրայ։ Իշարեխառն կլիմայի բուլոր պտուղներն ալ խիստ առատ են յլշուղոկիա. միայն տասնեակ

տեսակներ տանձ և խնձոր կը գտնուին խիստ ընտիր. դեղձն ևս յոյժ գովելի է:

Անցնինք այժմ տեղային հանքերուն. արդէն մի անգամ խօս սեցանք համառօտէն «Արաքսի» առաջին գրքին մէջ հանքերու տեսակներուն վրայ, այսու հանդերձ ներուի մեզ անգամ մ'ևս կը կնել զանոնք. հողն խաղնուրդ մ'է սիլիքոնի, կիրի և ալումինիումի, կան տեղեր ուր կիրն գլխաւոր մասն. կը գրաւէ, իսկ հողեր ալ կան, ուր մեծ բաժինը միւս երկուքին է, երբեմն ասոնց հետ խառն կը գտնուի նաև երկաթն, որ բոլորովին կարմիր գոյն մը կը տայ հողին և սակայն գէթ ցորենի մշակութեան համար այնչափ բարեբեր չէ: Քաղաքին ժայռերու շղթայն, ոյր վրայ հաստատեալ է հինաւուրց պատմական բերդ մը, ամբողջ սիլիքոնէ շինուած է: Պարզ կրոյ բնածխատէն (carbonati de chaux) զատ, կը գտնուի նաև առատօրէն, բիւրեղացեալ տեսակն, զոր պարզ լեզուաւ մարմարին կ'անուանենք. կապոյտ, կանաչ և դեղին մարմարիոններու հանքեր գտնուած են քաղաքէն մէկ երկու ժամու հեռաւորութեամբ, և ասոնցմէ ժամանակաւ մեծաքանակ մարմարիոն փոխադրուած է Պօլսոյ արքունական պալատանց շինութեան համար. այժմ սոյն հանքեր չ'են գործուիր: Ործաքար (granit) ուրեք ուրեք կը տեսնուի. բայց միքան (mica) չափազանց առատ է. երկաթի ոքսիտն և ծծմբախառն երկաթն ու պղինձն ամեն տեղ առատապէս տարածուած են. պղինձի և արսէնիքի կանաչ ոքսիտն ևս տեսնուած է Եւդոկիայէն տասն և հինգ ժամու. հեռաւորութեամբ: Մանկանէզի ու ոքսիտն և ծծմբախառն կապարն աստուանդ քիչ քանակութեամբ կ'երկան. կայ նաև պատուական հանքածուի, (bitumineux)-ի տեսակն:

Երկրագործութեան արդի վիճակն Եւդոկիոյ մէջ քաջալերական չէ. ամեն ինչ Ադամ նախահօրմէն մնացած եղանակներով յառաջ կը տարուի. հողի պտղաբերութեան համար միակ աղբն՝ եղանն է. հոս, հող հանդիշնելու սովորութիւնն հին և ընդհանրական է. տարի մը կամ երկուք թափուր կը թողուն զայն, որպէս զի բնութիւնն կատարէ այս գործ՝ յոյժ գանդաղօրէն: Վարդկանց աղբն, ուր այնչափ նպաստաւոր է հողի արդիւռնաւորութեան՝ գործածութիւն գտած չէ բնիկներէն՝ թէպէտ իւրենք իսկ փորձով տեսած են որ Չաղակէօլ անուն թաղին բան-

Հարեղէններն աղբախառն ջրով ոռոգուելով շատ աւելի համեղ կը լինին քան պարզ ջրով ոռոգուածներն։ Վաղաքին մէջ և շրջակայքն աղաւնիներու և այլ թռչնոց աղբեր գեղադէզ հաւաքեալ են առանց գործածուելու յօգուտ երկրագործութեան։ Որչափ աւելի արդիւնք ձեռք կրնար բերուիլ եթէ տեղոյն առատ հանքերէն մի քանին, որպիսիք են գաճն (sulilat., de calcium), ֆէլտրալթն, սիլիքօնն և ալիումինիւմն փոշիի վերածուելով գործածուէին հողն պարարտացնելու։ Ենասնաբուժութիւնն լիովին անծանօթ է տեղացւոց կովերն և ոչխարներն վտիտ են. նոցա կաթն ոչ այնչափ ոյժով է, և շինուած սերն ու պանիրն հեռի են առաջնակարգ լինելէ։ Առ այժմ կը գտնուի էնկիւրիի պատուական այծն, որ մէկ երկու տարի առաջ յիշեալ քաղաքէն բերուեցաւ տեղոյն մակաղատեղեաց չորանալուն պատճառաւ, սոյն այծն ունի գանգրաւոր, վայյուն և խիստ բարակ պատուական մազ մը, որոյ ֆինին անունը կուտան և զոր խուզելով կը զրկեն Եւրոպա. տեղացի վաճառականք կը հրճուին օխան 15 զուրուշի եւրոպացւոց ծախելով. իսկ եւրոպացիք ալ օխան 100—120 զրուշի մեզ կը վերադարձնեն տարբեր ձեւոց տակ. . . . Տեղոյն երկրագործութիւնն մեծ զարկ կրնայ ստանալ ձանապարհաց հաղորդակցութեան բարեփոխմամբ, բան մը՝ որ տակաւին յուսալի չէ. որպէս սովոր են ասել՝ Փոքր Եսիոյ երկաթուղիք ուղտերն են, այլ ի՞նչ օգուտ կարելի է սպասել այս դանդաղ և միանդամայն յոխորտ անսասուններէն։ Միևնոյն ժամանակ պէտք է գիտնալ որ եթէ գիւղացիք մի փոքր աշխատասէր լինին՝ շատ բարեկեցիկ կրնան լինել։ Եւդոկիոյ շրջակայքը կը գտնուին այնպիսի գիւղացիք՝ որք երկու հարիւրէն մինչեւ երեք հարիւր օսմանեան ոսկոյ կարողութիւն ունին. բան մը՝ որ քաղացւոց քով կը պակսի:

Վաղաքին պարտէզներէն միոյն մէջ կը տեսնուի քառակուսի մարմարեայ շէնք մը, որ ութանկիւնի գմբէթով ծածկուած է։ Այս շէնքն անդութ է էնկիւրի որդւոյն սոկերքն կ'ամփոփէ իւր մէջ թէպէտ տիրազգեցիկ՝ այլ կարեսոր հնութիւն մը։ Վամբէթին գագաթն արդէն կործանած և ծածկուած է ջայլումներու անհեթեթ բոյներով, որք երեկոյեան գէմ հօն հաւաքուելով, լալկան բուերունման անախորժ ու խռպոտ ձայներով կը ճռան։ Պարտէզն, յորում կը գտնուի գերեզմանն՝ մին է հայոց եկեղեցեաց կալուածներէն։ Որպէս ձարտարապետական նշանաւոր հիմնարկութիւն՝ յիշենք

Եւդոկիոյ ստորերկրեայ կոյանոցը, որ ամբողջ քաղաքին մեծութեամբը շինուած է կամարակապ և որոյ միջէն կարելի է ազատ պայուտ ընել ձիու վերայ:

Եւդոկիացիք վերջին ծայր հիւրասէր, ընկերական և զուարձասէր մարդիկներ են. եթէ հարկ լինի իրենց այն բնաւորութեան մի փիլիսոփայական բացատրութիւն տալ՝ մենք խոնարհաբար կը կարծենք գիտնալ թէ պէտք է ուսումնասիրել նոցա ընկերական կաղմակերպութեան ծագումը. յայտնի է թէ ոչ միայն Եւդոկիացիք, այլ Ասիոյ ամբողջ ժողովուրդն ի սկզբան նահապետական դրութեամբ կ'ապրէր, և սոյն դրութիւն տակաւին ամբողջովին անհետացած չէ նորա մէջն: Այսաստանի մէջ սովորական բան մ'է տեսնել 50-60 անձանց մի յարկի ներքեւ ապրելն. արդ այս կերպ կենցաղավարութիւն մը մեծապէս կը նպաստէ ժողովրդի հիւրասիրութեան և ընկերական որդոյն. ուրիշ կարեռը պարագայ մը ևս կայ զոր պէտք չէ զանց ընել:—Արչափ որ մարդուս նիւթական պէտքերն քիչ լինին՝ նա կ'զբաղուի իւր ընկերով կամ նորա գործերով, բայց երբ այդ պէտքերն բաղմանան՝ նա հետզհետէ կը լինի անտարբեր մը դէպի այլոց գործերն: Արդ, որովհետեւ գաւառաց մէջ ապրելն սուղ չէ և աւելորդ ծախքեր չեն պահանչուիր՝ ժողովուրդն աւելի հակամէտ է ընկերական մարդ գառնալու քան այլուր: Իսայց եթէ գաւառացւոց ընկերասիրութիւնն մի գովելի յատկանիշէ իրենց համար, միւս կողմանէ ունին կարեռը թերութիւն մը զոր հաւասարապէս նահապետական դրութեան կը պարտեն:—Լինն իրենց համար ստրուկ արարուած մէ: ՅԵւդոկիա, կինն զուն ուրեք արանց ընկերութեան մէջ կ'երեւայ և երբ փողոց կ'ելնէ՝ թրբուհեաց նման գէմքը կը ծածկէ. երբ մարդ փողոցին մէջ գիշեր ժամանակ հայուհեաց թափօրի մը հանդիպի՝ որոց իւրաքանչիւրն ծածկուած է սպիտակ սաւաններով, կը կարծէ գիտնալ թէ սոքա գիշերային ոգիներ՝ կամ խրտուիլակներ են գերեզմաններէն փախած: Իաղդատմամբ ուրիշ գաւառներու՝ Եւդոկիոյ ընտանեկան սովորութիւնք ըստ բաւականին վայելուչ են, ձեւակերպութիւններն սակայն անվերջ են և հետեւաբար անտանելի: Կանայք ընդհանրապէս մաքուր և աշխատասէր են. բնակչաց փոքր մէկ մասն կը կրէ սեփական տարագ, իսկ մեծամասնութիւնը՝ Եւրոպական: Եւդոկիացիք նորաձեռութեան ընդունակ ժողովուրդ են:

ԱԵՔ պօլսեցիքս նախապաշարուած ենք, որ գաւառացին բթամիտ կ'ըլլայ և շատ անդամ, երբ գաւառացւոյ մը դէմ զայրարանք՝ առաջին խօսքերնիս կը լինի «Խըմպըլ»։ Աակայն իրողութիւնն կ'ապացուցանէ թէ այսօր գաւառացիք մեծաւ մասամբ պօլսեցիներէն շատ աւելի հանձարեղ են։ Ըսածս ապացուցանելու համար դժուարութեանց չ'եմ մասնուիր, այսօր Պօլսոյ ամենէն առաջնակարգ հայոց ծագումն գաւառական է։ ՅՇՆԴՂՈՂԻԽ ես անձամբ աշակերտացս վրայ փորձելով, տեսած եմ որ անոնցմէ շատեր յոյժ խելացի և ընդհանրապէս աւելի բանդէտ են քան իրեցնմէ տարիքու պօլսեցի դպրոցականներ, եօթն տարեկան աշակերտ մ'ունէի որ կրնար ընդարձակօրէն խօսիլ տեղական օրինաց, արտադրութեանց և սովորութեանց վրայ, ասկէ զատ կրնար տեղական բերքերն որոշ կերպով ճանչնալ և զանոնք մաս առ մաս դասակարգերու վերածել են. ես գիտեմ թէ պօլսեցի երիտասարդաց մտքեր որչափ սահմանափակ են և երբ դպրոցէն կ'ելնեն՝ կը շուարին կը մնան թէ ի՞նչ գործի ձեռնարկեն։ — Գործ չ'կայ — այս է ահա ընդհանուր տրտունչն որ ամեն բերնէ կը լսուի։ Լաւագոյն չէ՞ր ըսել — գործ կայ գործող չ'կայ։ Օարմանալի չէ՞ր որ այս ընդարձակ ոստանին մէջ մէք այս աստիճան տգէտ կը մնանք։ Գաւառացի ուսանող մը երբ վարժարանէն կ'ելնէ՝ բնաւչը մտածեր թէ ինչպէս պիտի ապրի, զի նա հողժ հիմք ի մատաղ տիոց։ Եւ պօլսեցի եօթն տարեկան տղան գիտէ՞ք ինչ սորված է — պարել և արևելեան երգեր երգել, ձեռք թոթուել ու սիրաբանել։ Ինչ որ ցանես՝ զայն կը հնձես. գաւառացիք, երբ գիշերները իրարու տան հաւաքուին՝ գործի, օրինաց և արհեստից վրայ կը խօսին. մանուկն երբ կ'սկսի ըմբռնել, այդ բաներն կը սորվի. կը տեսնայ, կը շօշափէ։ Պօլսեցիք ալ երբ տեղ մը համախմբուին՝ լարդի կ'երգէն, մանուկն ալ լարդի կը սորվի. . . .

Եւգոկիոյ գաւառի և շրջակայից գիւղացիներն մեծաւ մասամբ կասկածու և խարեբայ մարդիկներ են, իրենց այս բարցյական անկման պատճառն իսկ և իսկ քաղաքացիներն են. գիւղացւոյն միտքն սահմանափակ լինելով, երբ քաղաքացւոյն հետ յարաբերութեան մէջ եղած միջոցին անկէ խարուի՝ և յետոյ զգայ թէ խարուած է՝ ալ անկէ վերջ կը դառնայ մի կասկածու մարդ, կարծելով թէ ամեն ոք զինքը պիտի խարէ. խեղճը մէկ օրինակէն ընդհանուր հետեւութիւններ կը հանէ, արդարեւ տրամարանական սխալ մը, բայց

կը հասկնա՞յ. Նա անկէ վերջ ալ յաճախ կը ստէ, կը խարդախէ և կը լինի կատարելապէս անբարոյական մարդ, մեղքը քաղաքացւոց վիզը:

Եւդոկիոյ ազգային վիճակ շատ անկերպարան և յաւալի է, պատճառն այն է որ Եւդոկիոյ հայերն մեծաւ մասամբ բարոյապէս անկեալ մարդիկ են: Ազգի մը արժէքն իւր դրական յատկութիւններէն կը ձանցուի, իւր ընտիր բնաւորութենէն կը գնահատուի, որովհետեւ յլ Եւդոկիոս ոչ հաստատուն դաստիարակութիւն, ոչ տիպար մարդիկ և ոչ ընտիր միջավայր կը գտնուի, և հետեւաբար յիշեալ գաւառի հայ ժողովուրդն անբարոյական լինելով կը բերէ ազգին գլխուն այնպիսի բօմեր որոց օրինակներն դժբաղդաբար ցարդ կը տեսնուին այդ գաւառին մէջ, այս տեսակէտով Ուբաստիա աւելի մի թարարական լինել կը թուի, ըստ որում յիշեալ գաւառի ժողովուրդն կուսակցական ոգիէ մղեալ Ազգին երեսն աղտ բերելու գաղափարն մոքէն իսկ անցուցած չէ:

Եւդոկիոյ գլխաւոր զբօսավայրերն են այդիներն. թուով իբր երկու հազար սոքա քաղաքին շուրջը կը պատեն և օժտեալ են բնական հրապուրիչ գեղեցկութիւններով, իւրաքանչիւր այգի ունի մի համեստ Քեզի, որ տեղական բառով ալանուի կը կոչուի: Խաղողն, որ իր բոլոր տեսակներովը կը գտնուի, բաւական ընտիր է և համեղ, ընդհանրապէս կ'աճի կարճ որթատունկերու վրայ, բայց և այնպէս կարելի է զայն տեսնել բարձր կելակարներու^{*}) վրայ ևս: Կան մի քանի մեծամեծ այդիներ, զարդարուած ծառուղիներով, մարմանդներով, աւազաններով, ծաղկանոցներով և շատրուաններով, յաճախ այս զբօսավայրք կեդրոն են խնձոյքներու և երբեմն պատճառ կը լինին զեղիսութեանց և շուայլութեանց: Ուայիսի ամսուն մէջ, այգի ունեցողներն օգափոխութեան կ'երթան, կիւրակէ օրերն, վաղընկուցով (աղաւաղումն «վաղ այգուց»), այսինքն թէ աւագուն կանուն^{*)} արք և կանայք ծերք և տղայք ձիանին և իշանին (սովորաբար պարսկերէնի օրինօք «էշ» բաւին յոդնակին «իշան») և «ձի» բաւինն ալ «ձիան» կը գործածեն) վրայ հեծած կը ձախրեն դէպի այգիներն, ուրախութեանց և երդոց ձայնին կ'ընկերանայ ջաղայներու (ջաղայ, բառ տեղական, կը

*.) Բառ տեղական որ կը նշանակէ ձողաբարձ որթոց:

նշանակէ «մանկիկ») լալիւնն. ամբողջ կիւրակէն կ'զբօսնուն ուրախ զուարժ. մի թեթև ճաշ կ'ընեն խորտիկով կամ «բիլավի» վերայ ձգուած խորոված միսով. վառվուոն աշխուժութեան մէջ բէրդներն (բերոն, բառ տեղական որոյ նշանակութիւնն է «դըրգալ»). արագաբար կը մտնեն իւղապարարտ Էլլավին մէջ բայց ոգելից ըմպելիք պէտք են, քիչ մը գլուխները տաքնալու են. որպիսի՝ ազգասիրական և բարեկամական բարեմաղթութիւններ կ'ընկերանան կարմիր և ճերմակ ջուրին. առաջին անգամ տեսնողը կը խորհի թէ եւդոկիացոցմէ աւելի հայրենասէր և բարեացակամ ժողովուրդ չ'կայ...: Իրիկուն է, իշան և ձիան կը պատրաստուին, զրօսաշրջիկք թեթև մը կը ցատկեն նոցա վրայ և ահա կենդանիներն կարծես իրենց տեարց զուարթութենէն զգածեալ, արագասալց կը թռչին դէպի քաղաք: Այս կարգի ուրախութիւններ կը պատահէն նաև հասարակ օրերն և կը շարունակուին շարաթներ և ամիսներ: Եւդոկիացիք, անձամբ կը խոստովանին թէ այդիներն, հակառակ իրենց առերևոյթ զրօսանաց և վայելքներուն, գլխաւոր պատճառ են երկրին աղքատութեան, զի ամեն տարի այգիի բերքէն աւելի ծախք կ'ընեն ջուրի ճամբայները շտկելու, հողը կակղելու, չորցած ծառերն կտրելու, ալածուխը նորոգելու ևն». յաւել սմա սա պարագայն ևս թէ, այդիներն երբ բեմն սրիկայից մեղապարտ մոլութիւններուն ապաստանարան կը լինին:

Պարտէզներն, որք գրեթէ իրենց ամբողջութեամբ թուրքերու սեպհականութիւն են, բաւական հասոյթ կ'արտադրեն ամեն տարի. զարմանալի է տեսնել թէ թուրքերէն շատ քիչերը այդի ունին, պարտիզին սիրահարեր են և իրաւամբ հայերն այժմ ունին այնպիսի կալուածներ, որք զիրենք կը փացնեն, իսկ ընդհակառակն թուրքերն ունին հողեր՝ որք զիրենք օրքան զօր կը հարստացնեն. սա պարագայ բացայայտ ցոյց կուտայ թէ քաղաքիս թուրքերն դրամական տեսակէտով խորհող և դրական մարդիկ են, իսկ հայերն նոյն տեսակէտով՝ յանդուգն և երեակայական: Թառըքերն իրենց պարտիզին բերքերն, առանց հատ մը վնասելու, խառնութներու մէջ կը վաճառեն. հայերն, այդին հասոյթից մէկ մասը որկորին տալէ վերջ, մնացեալ մասն խնամով կը պահեն ձմեռուան եղանակին մէջ գիշերային խրախճանաց վատնելու համար: Թառըքերն հետեւաբար և բնականաբար հարուստ են, իսկ

Հայերն մեծամասնութեամբ աղքատ են և թշուառ։ Բայց առանց երկարելու անցնինք պարտէզներու նկարագրութեան, ամենէն գեղեցիկ պարտէզներն կը գտնուին քաղաքին հարաւակողմն Պէյ-Պաղը կոչուած վայրն, հոն, հիւղիկի մը մէջ պատօպարուած, թուրք կինը հաւատարմաբար կ'աշխատի իւր ամուսնոյն հետ. նորա բացակայութեան, ինքն է որ սակարկութիւն կ'ընէ յաճախորդաց հետ, պտուղներն կը քաղէ, կը դասակարգէ, պարտէզը կը ջրէ, կովն կը կթէ, մածուն և սեր կը շինէ, պանիր և արգար իւղ կը պատրաստէ։ Հայ կինն ալ ունի իւր աշխատանքներ և թերևս չարչարանքներ, զորս վերջը պիտի տեսնենք, բայց միշտ նոյն տարբերութիւնն, մին՝ աշխատանք վասն հարստութեան, միւսն չարչարանք վասն փառապանծ ստամոքսին։ Պարտէզներն հարթ կամ բլրոտ, ծածկուած են համակ, մարգագետնի գործքերով, որոց մէջէն սուրալով և օճապտոյտ իմն եղանակաւ կ'անցնին արծաթի նման մաքուր և յստակ առուակներ, որոց ի կարկաջ մեղկ այցելուն պիտի սիրէ անշուշտ նիրհել։ «Օառերն, առանց չափական դասաւորութեան, խառն ի խուռն տնկուած են. խնձորենիներն, տանձենիներն, բալենիներն, կեռասենին, գեղձին, թթենին, մամոխն, սալորն, քարանց բալն (մահալէպ), գահըին և կուապոլան (տեսակ մը միջնահասակ ծառ, որոյ կարմիր և կլոր հատապտուղներն ողկողներով կախուած, շատ գեղեցիկ կ'երեխն, տեղացիք այս հատապտուղներն քաղելով կը չորցունեն և կ'ուտեն։ Համն այնչափ ախորժելի չէ) առատ կ'աճին պարտէզներուն մէջ. 15-16 տեսակ տանձ և 10-12 տեսակ ինձոր հաշուած են։ Առեծ խաչի պահքին շարթուն, Ա. Աստուածածնայ ծննդեան տօնին օրը խնձորի կիւրակէ է. այն օրը, հայ կանայք գործ չ'են տեսներ, այլ ընտանեօք կը դիմեն պարտէզներն, խնձոր և տանձ գնելու։ Առեծ կենդանութիւն և զուարթութիւն կը տիրէ ամենուրեք. տղոց ճլուլիւն, սոխակի դայլայլիկ, պտղոց անմահական բուրումն, զեփիւռի քաղցրասիւք շունչերն, այսոքիկ և եթ են պարտիզաց հրապոյրն։

Աեպտեմբերի 15ն է. «Եւ սեաւ 'ի խայծ անկեալ են ողկոյզք» որպէս կ'ասէ Նոմեր. միայն թէ, երբ պատմական Յունաստանի խորհրդաւոր քերթողահայրն սև խաղողն և եթ գովել յարմար կը դատէ, մեք, արգարութեան պարտք կը համարինք յիշեցունել ընթերցողաց թէ Եւդոկիոյ ոսկեգոյն մշկաշոտ խաղողն ոչ նուազ.

արժանի է գովեստից. այդիներն դարձեալ կ'սկսին լեցուիլ խարզակիթի ժամանակ է. ամեն ոք կ'աշխատի, ժիր մշակն կողովներ կը բեռնաւորէ խաղողով, մանկտին կը դինովնայ անոր հոտէն և համեն. Եւգոկիոյ մէջ «Համով հոտով» բան՝ խաղողն է: Երկու շաբաթուան մէջ այգեկութն կ'աւարտի, բնակիչք կը վերադառնան քաղաք:

Հայ կնոջ աշխատութիւններն այժմ կ'սկսին. ամուսինն, հայրն կամ եղբայրն առատ խաղող բերած է, պէտք է շինել դինի և օղի. զօրաւ որ խաղողն յայնժամ կը ճմլուի հայ տիկնոջ ջղուտ ոտից ներքեւ և կ'արտադրէ բնականաբար պատուական գինի: Գինին կը պահուի մեծ կարասներու կամ պղուկներու մէջ տուներու ստորնայրկերը որք ընդհանրապէս շատ զով կը լինին. խաղողին կձեպներէն կը շինրւի օղին. ջուրի զտիչներու նման, ամեն տուն կը գտնուի օղիի պղնձեայ զտիչ մը, զոր խալին կ'անուանեն: Կձեպները կը դրուին խալկինի կաթսային մէջ, օղիի ոգին ջերմութեամբ նախ կը կաղանայ և յետոյ գործիքին վրայի կողմը կամ շուրջը գտնուող պաղ ջուրի միջոցաւ խտանալով՝ միւս ծայրէն կը կաթկթէ սաներու մէջ: (Օղին բարկ (այսինքն կծու, զօրաւոր) ընելու համար, խտացեալ ծորելին մի քանի անգամ կը շոգիացնեն: Ա արդ զով օղի շինելու համար, կաթսային մէջ կձեպին կը խառնեն վարդ. աննոտիով (կրծատումն «անանուլի» բառին, տեսակ մը հոտաւէտ բոյս, զոր թուրքերէն նոնի կը կոչեն). օղին, որ շատ յարդի է, կը շինուի կաթսային մէջ անանուլի խառնելով: Յետոյ օղին ծաղիկներով գոյն զգոյն կը ներկեն, և ահա կը լինի ամենելին կատարեալ և կը շողայ բիւրեղեայ շիշերու մէջ:

Ներվէրն տեսակ մը տեղական քաղցրաւենի է, զոր կը պատրաստեն խաղողի հիւմէն, խառնելով զայն վարդի ուռած բաժակին հիւմովն. սոյն երկու հիւմերն շարունակ իրար խառնուելով և կրակին վրայ տաքնալով կը խտանան և կ'ստանան սև դոյն մը. երբ պէտք եղած խտութիւնը ստանայ բերվերն, յայնժամ կրակարանէն վար տունելով, պնակներու և ասներու մէջ կը պաղեցնեն: Այս քաղցրաւենին դրեթէ ամեն տուն կը շինուի:

Հայուհին վերսիշեալ աշխատութիւններն աւարտելէ վերջ կը պարապի մսացուով: Խւրաքանչիւր ոք, իր նիւթական կարողութեան համեմատ, կը գնէ կէս, մէկ և կամ երկու գոմէշ: Հայուհին գոմշու մսէն կը զատէ ապուխտցուն և պատուական ապուխտ

կը շինէ. կը զատէ երշիկցուն, և ընտիր երշիկ կը պատրաստէ. իսկ մնացեալ մասին իւղն կը հալեցնէ կը պահէ ապագայ գործածութեան համար և միսն կը համբարէ ձմրան պաշարի համար:

Այն անձ, որ կարողութիւն չ'ունի գոմեշ գնելու, կը գնէ մէկ երկու ոչխար և այս կերպ կը հոգայ իր տան պակասն:

Մասցուին իւղն կը գործածուի աճառ և մոմ շինելու. աճառն կը պատրաստուի մոսիրով և խարխնջնով, բայց տեղական աճառն լաւ չէ և աղքատ դասակարգն միայն կը գործածէ զայն. իւղամոմն բաւական լաւ կերպով կրնան պատրաստել ոմանք. ունին թմբիի երկար և բարակ գաւաղաններ, նախ բամպակեայ պատրոյգներն կարգաւ կը կախն դաւաղաններէն. իւղն մեծ կաթսայի մը մէջ կը հալեցնեն և ապա իւրաքանչիւր գաւաղան կը ներմուծեն կաթսային մէջ. հոն 1-2 վայրկեան կենալէն վերջ գուրս կը հանեն մոմի բարակ. բան մը կը պատէ պատրոյգն. նոյն գործողութիւնն կը կրկնեն, մինչև որ պատրոյգն ստանայ մոմի պահանջուած խտութիւնն: Կը պատրաստեն նաև ամեն տեսակ մեղրամոմ: Վելորդէ ըսել թէ աճառն և մոմն հայուհւոյ աշխատութեան արդիւնք են.

Եւդոկիայ մէջ գրեթէ ամեն ունի խմորեղէն բանալ գիտէ իր տեսակներով. շատ մը տեղական խմորեղէններ կան որք այլուր անծանօթ են: Պօլսյ Էակալային շատ լաւ տեսակը կրնան շինել, և եթէ Պօլիս կան մի քանի համբաւաւոր բախլավաճիններ, գրեթէ բոլորն ալ ազգով թուրք եւդոկիացի են. նշանաւոր են հոս Պէրէլին և Պարմէլին. լաւ կը պատրաստեն տեղական մագարօնիա:

Ասոնցմէ զատ հայուհին ունի ուրիշ զբաղումներ. ամեն երկու շաբաթը անգամ մը հաց կը թիւէ և կեփէ. գրեթէ ամեն տուն փուռ կայ: Վեշան մէջ կը պատրաստէ ցորենէն՝ ձաւար, ապուրցու ևն: Գիտէ տան համար պանիր և մածուն շինել. եթէ տանը մէջ կով ունի, կերը կուտայ, կաթը կը կթէ: Տանը լուացքը և սրբուքը (ատաղձները ջրով մաքրեն) իր վրայ են: Գուլպա շիւնելու համար, իրեն պէտք եղածին չափ բուրդ կը մանէ և մնացեալ ժամանակն եթէ հանգիստ գտնէ՝ բարեկամուհեաց այցելելով կամ նոցա այցելութիւնքն ընդունելու կ'անցունէ ժամանակն:

ՀՈՌՄԿԱՅԱՅ ԿԱՄ «ՏԵՐ ՆԵՐՍԻՒՄ»

ԷՇԽԵԾ.—ԺԻՊԻՆ.—ԱՐԱՀ.—ՔԻԹԱԲԻՆ.

(Ուշեռութիւն)

Արեւ մերձ է միջօրէլին երբ մենք կը թողունք հնոյն պալճը
վ աւերակներն ու Եփրատայ արևմտեան ափանց վրայէն կը
յառաջանանք ի հիւսիս: Մեր առաջնորդ քուրդերն կ'երգեն
բարձրաձայն և միակ ուղեկիցս, որ Այնթապի Ա արդանեան սա-
ներէն գեռափթիթ պատանի մ'է, Եփրատը տեսնելով անհուն ու-
րախութեամբ կը համակուի, կը յածէ իր աչքերը պատմական գե-
տի հոսանքին և արևելեան լերանց շղթային վրայ, պահ մը խոր-
հուրդներու ովկէանը կը սուզի, պահ մը ներքին ալիքներով կը
յուզի, մէյ մը գետէն անդին կը նայի, մէյ մը մտազբաղ՝ գետին
կը հայի, մերթ հարցումներ կուղղէ ինձ, ծերունւոյ պէս անխոռով,
մերթ կը մրժնչէ տղու պէս՝ ծանօթ երդ մը յիշելով.

«Մայր Եփրատայ ափերով քայլամոլոր գնում եմ»

«Ճին հին գարուց յիշատակ ալեաց մէջը պտրում եմ»...:

Բայց իրաւ է որ, Եփրատ ըլ լսեր, իր գարեւոր յիշատակները
սպիտակ փրկիներուն մէջ ծրարած կը յառաջանայ...:

Տակաւ առ տակաւ կը կարմրի արևմտեան հորիզոնը, մենք
միշտ Եփրատայ ափը քերելով կը յառաջանանք և կ'օթեանենք
հայ գիւղ մը, ենեւը

ԷՆԵԾ, այս գաւառակին միակ հայ գիւղն, հաստատուած է
Ճիշտ Եփրատայ ափը, բարձր գիրքով և գեղեցիկ տեսարանով:
Կը բաղկանայ 50 ընտանիքէ որք թուրքերէն կը խօսին և հա-
րուստ մշակութեամբ, ընդարձակ պարտէզներով ու պիստակի անս-
պառ բերքով գիւրակեաց վիճակ մ'ունին:

ԵՇԽԵԾ գիւղը կը թուի թէ հին ատենները կարեւոր դիրք
մ'ունեցած է: Գիւղին մօտ հաստատուած Ա. Աարգիս անուն մա-
տուռ մը յոյներէ գրաւեալ է: «Կայնպէս լազմաթիւ վիմափոր ըն-
դարձակ գերեզմաններ և ուրիշ նշաններ՝ քեդացի ազգաբնա-
կութեան հետքերուն կը նմանին, որոնց պատմութիւնը 3000 տա-

բուան հնութիւն ունի: Եշնեշի առատ քարահանքները երբեմն Պերէճիք քաղաքին շինութեան նիւթ մատակարարած են և այս քարահանքներու պատերուն վրայ նշանակուած լատին արձանար գրութիւնները և զանազան նշանները խաչակիրներու այցելութեան հաւանական ապացոյններ կուտան: Ի՞այց վերջապէս հայերու բնակավայր լինելով ժամանակին դժբաղդ վորիսութեանց դէմ կը քած է իր գոյութիւնը պահել մինչեւ ցարդ:

Այժմ գործունեայ քահանայ մը, որ Եգեսիայէն ղրկուած է, կը չանայ ժողովրդին մէջ հաստատել կրօնական զգացումն և 25 աշակերտէ բաղկացեալ դպրոց մը կը կառավարէ: Կաշխատի նաև նոր եկեղեցւոյ մը շինութեան ձեռնարկել, զի այժմ հոգեոր պաշտամունք կը կատարուին վիճափոր եկեղեցւոյ մը մէջ: Օտար կրօնական առաքելութիւնք աստ ևս չեն թերացած իրենց այցելու պաշտօնին մէջ, բայց անյաջող մեկնած են:

Գիշերը անցուցինք ահա այս գիւղին մէջ ասպնջական տան կտուրին վրայ, գիտելով պայծառ աստղերն ու շնչելով արևելեան հովը:

Գիւղին ստորոտը կիսակործան մատուռ մը կայ որ յունական յիշատակը կը թուի. Հոս տարին միանգամ պատարագ կը լլայ երբ Այնթապէն ուխտաւորք կ'ուզան Տէր Վերսէս երթալու համար:

Առաւօտուն՝ Տէր հայրը կառաջնորդէ մեղ դէպի նուիրական կլայն, պահ մը կը թողունք Եփրատը և կը նորիենք կտրուկ ճամբայ մը՝ քարուտ և ժայռուտ լեռներու մէջէն: Ա երստին կը միանանք և մեր դէմ կը տեսնենք խալֆէնի գիւղաքաղաքը, որ 1500 բնակիչներով՝ հաստատուած է արևելեան եղրն և այժմ չոռմլայի դպյամագամութեան կեդրոնն է:

Անհամբեր կը շարունակնք մեր ուղին գէպի կլայն, որոյ բարձաբերձ ժայռերն կը նշարուին արդէն: Վեղ ճանապարհ մը կառաջնորդէ մեղ այժմ, աջ կողմէն գետը կ'ընթանայ, ձախ կողմէն լերան կողն ու ստորոտը գեղագարտող վայրի ծառերէն ու թիւրէն՝ պատուական հովանի և ախորժելի տեսարան մը կը ձեանայ: Ենչ սքանչելի վայրեր, մարդ ակամայ կը բաժնուի: Գլուխիդ վեր կամբառնաս և կը տեսնես որ լերան լերկ կողերէն վճիտ ջուրեր կը մշին, փոքրիկ ջրվէզներ կը թափթին և օճապտոյտ առուակներ կազմելով մարդերուն մէջէն ու թիւրուն ներքեսէն գէպի դետը կը սողոսկեն:

Աստ դադար կառնունք: Կլայէն յառաջ կ'այցելենք Ա. Յա-
կոբ անուանեալ վայր մը: Աղարթախիտ ծառերու մէջէն դար
վեր կելնենք և հին շէնք մը կը մտնենք որ վանքի մը նմանու-
թիւն ունի: Եզիտի ընտանիք մը կը բնակի աստ: Տանտիկինը
իսկոյն տեղ կը պատրաստէ և ծառերու պտուղներով կը մեծարէ
զմեզ: Տէր պատրաստ յարգելի է ասոնց մօտ, քանզի իրենց գլխուն
Եւետարան կը կարդայ երբեմն: Կը մեկնինք: Քառորդ ժամ վերջ
կը մտնենք Հռոմելայի մեծ գոնէն ներս: Համբոյը հողերուն, համ-
բոյը տարբան, համբոյը իշլապահաց իշլերուն:

Ի զուր կը փնդունք շէնք մը զոր ժամանակը պարգևած լինի
մեզ: Կոր տուներ կառուցուած են միայն ուր սակաւաթիւ քուր-
դեր ու թուրքեր կը բնակին ձմեռը: Այժմ ամայի է ամբողջ վայրն:
Երկու եկեղեցեաց աւերակները որոշ են: Ասոնց մին կը կարծուի
լինել բերգին ժողովրդին եկեղեցին: Այս եկեղեցւոյն ներքեւ ըն-
դարձակ սրահ մը կայ, որ կանդուն է տակաւին և համբարանոցի
նմանութիւն ունի: Եկեղեցւոյն տեղ մզկիթ մը այժմ կառուցուած
է որոյ զանդակատան ստորին մասը կանգուն կը մնայ:

Ո՞իւս աւերակը կաթողիկոսարանի եկեղեցին կը թուի լինել,
և բաղդատմամբ փոքր է: Չորս սիւնակները ամբողջապէս կը տես-
նուին յաղթ և պատուական խոյակներով: Այս չորս սիւնակներուն
միջավայրն է ահա ուր իբրև Տէր Կերսէսի ուխտատեղին ամեն
տարի կը դիմեն Ա. Աստուածածնի վերափալման տօնին՝ Այս-
թապէն, Եղեսիայէն, Պերէճիկէն և մերձակայ տեղերէն *):

*.) Ընորհաւոյ ուխտատեղին թէ և աւերակ ու ամպի, դարերէ և վեր չէ կորու-
սած իր սրբազն համբաւը Շրջակայ քուրդ և թուրք ցեղերը երկիւղած պատկառան-
քով կը համակուին Տէր Ներսէսի անունը յիշելով և ցեղակետները աւանդական հարկ
մը կ'զգան պահպանելու անոր ուխտատեղին: Հետաքրքրական պատմութիւններ կան
այս ուխտատեղոյն նկատմամբ որք Տշմարտութեան դրոշմով հաստատուած են տեղաբ-
նակ հայերու և թուրքերու մտաց մէջ: Ասոնցմէ մին ժամանակակից դէպք մ'ըլլալուն
շատ կը յեղյեղուի:

Տէր Կիկողաս անուն քահանայ մը Նփրատի արևելեան եզերքէն նաւակի վրայ
Հռոմելայ կունեորի: Նաւակին վրայ ուրիշ ուղղութերու հետ կը գտնուի նաև ձիուն
վրայ հեծած եիւ զա աշե (հարիւրապես) մը, որ կակսի նախառալից խօսքեր ուղղ-
ուել քահանային և Տէր Ներսէսի ուխտատեղոյն: Եիւ զա աշե այնքան կը չափա-
զանցէ, որ ինեղծ քահանան գլուխը կը բանայ և վշտակից ակնարկ մը կը ձգէ բերդին
վրայ: Հինգ վայրկան յետոյ, երբ նաւակը ընդդիմակաց եգորը կը մօտենայ, զետը կա-
տաղի ալիքներ կը բարձրացնէ անմիջապէս: Նաւակը կը շրջի քանի մը անդամ և վեր-
ջապէս եիւ զա աշեն իր ձիութ մէկ տեղ կը խորասուզի գետին մէջ: Ասոր վրայ
ջուրը կը խաղաղի և միւս ուղիւրուները հանգիտ կելնին ցամաք: Այս օրինակ ուրիշ
շատ դէպքեր աւ կը պատմուին:

Վեր առաջնորդն Տէր Կերսէս, Երբ հոս հասաւ բացաւ իր գլուխը և դարձաւ յարկելը: Հետևեցանք իրեն, Եփրատ Ճիշտ մեր տեսութեան տակ կը հոսի:

Աիրտ կուզէ որ դիմանայ, հոգի կուզէ որ չը յուզուի և աչք կուզէ որ չը հորդէ այս տեսարանին: Դարեր յառաջ հոս էր մեծ մարդը, եկեղեցւոյ արի ախցյեանը, Շնորհալին Կերսէս, հոս կերդէր իր աննման աղօթքները և հոս կարտագրէր իր անգին գոհարները: Այստեղ կարդացինք իր մաղթանքներէն մի քանին և բարձրացուցինք մեր սրտայոյզ ձայները: Լեռները միայն արձագանք կուտային: Անկարելի է նկարագրել ինչ որ անցաւ ու դարձաւ մեր ներքին աշխարհին մէջ, ինչ ալիքներ որ ծփացին և ինչ հրաբուղիներ որ մխացին: Հայ-Քրիստոնեայ ըլլալ և զգալ այս չափ միայն:

Ամեն դի պտտեցանք, իջանք այն լայն և ընդարձակ ջրամբարը, որոյ օձապտոյտ սանդուխին 300 աստիճանը միայն մնացած է հիմայ: Այս ճամբով Եփրատէն ջուր կը բերեն եղեր պաշարման տաեն: Հոռոմկլայի տերակ բերդին 7 դռները կրցանք համբել, մի քանիներու վրայ արաբերէն արձանագրութիւններով: Իերգին ստորոտը կը հոսի Անբնակն անուն վատառողջ ջուր մը որ կը միանայ Եփրատին:

Ենցանք այս ջրէն անգին և լերան կողին վրայ փորուած իր բերահաղորդ սենեակները մտանք: Բատ աւանդութեան ասոնք ոստայնանկի հորեր են, որոց մին կ'որոշուի իբր սրբոյն Շնորհաւոյն հորը՝ ուր թաւիշ կը գործէ եղեր երբեմ. — թաւիշ, միայն արտադրելու արժանի են արդարեւ այն մատունք որք գրական հրաշակերտներ կտակեցին մեզ: Այս քարափիոր սենեակներու ներքեւ մաքոր Ջրոյ աղբերակ մը կայ և հայերէն յիշատակութիւններ, որոնք անընթեռնելի են խսպառ: Ուրիշ արձանագրութիւն մ'ալ կայ բերդին արևմտեան պարսպին վրայ, արտաքին կողմը, որ շատ բարձր ըլլալուն համար կարելի չեղաւ կարդալ: Եւ մինչ լերան յեցած մի քանի ակնարկներ ձգեցի վեր ու վար, գետէն անդին ու աստին՝ ուղեկցիս շրթունքները կը մրմնջէին անգիտակցար: «Ապառաժուտ լերան մի կող, յեցեալ ի քար գերեզմանի, աչք մերթ յերկինս և մերթ ի հող, խարտեշագեղ կայր պատանի...»:

Ա երջապէս հրաժեշտ տուինք այս քարանձաւներուն ու այս լերանց լոռուտ կողերուն, որոնք իրենց թուփերու տերեւներուն

տատանումովն ու ճպուռներուն խօլ երգերովը մեզ պատասխանեցին *):

ԾԻՊԻՆ.—Եփրատ գետի արևելեան կողմը երկու ժամ՝ հեռաւորութեամբ բարձրադիր լեռնադաշտի մը վրայ հաստատուած է այս գիւղն ալ, որ ունի 150 տուն, որոց կէսը հայ է և միւս կէսը հայ—մահմետական:

ՃԻՂՋԻՆ. գուցէ եղական է իր այս հայ—մահմետականներովը, որոնք կը կոչուին և բացորոշ է որ երկար ժամանակ առաջ քրիստոնէութիւնը թողած են **):

Այս գիւղացիք, թէև մահմետական կրօնքը ընդունած են՝ չեն թողած մեր կրօնական արտաքին ձևերը և նշանները։ Օսր օրինակ երախայի ծննդէն յետոյ ինամին ձեռօք թլփատելէ զատ մկրտել կուտան քահանային։ Խաղման կարգի և ամուսնութեան պսակի կատարումն ալ կը լինի նոյնպէս՝ իսլամական՝ արարողութիւններէ յետոյ։ Կանայք կը խոստովանին և պահքի մասին աւելի նախանձախնդիր են քան բուն հայերը։

Ընդհանրապէս Ճիղճին հայ ժողովուրդը ոչինչ կը ներկայէ ազգային, բայց միայն հայկական կրօնը։ Խնձ կը թուի թէ ասոնք արեամբ հայ չեն, այլ թուրք կամ քուրդ։ Ճամ, գարուն մէջ Շնորհալւոյ քարոզութիւններով քրիստոնէութիւն ընդունած են։ Շնորհալւոյ ժամանակակից սևորդիները, ըստ տեղական աւանդութեան ասոնք են ահա, որոնք յետ ժամանակաց մասամբ տաճկացած են։ Այս բանին ապացոյց մ'ալ սաէ թէ, և ոչ մէկ հայերէն բառ կը պարունակէ ասոնց լեզուն, ինչպէս է ուրիշ թրքախօս հայոց մէջ, որոնք տակաւ առ տակաւ մոռնալով մայրենի լեզուն, պահած են սակաւաթիւ բառեր կրօնական։ ընտանեկան են։

Ճիղճին ժողովուրդը թէ և ուրիշ ու է հայկական նշան չըներկայէր, բայց յայտնի է որ երկար ժամանակ է ի վեր Տ. Կերպէսի անունը մոգական ներգործութիւն մը կը գործէ նոցա վրայ,

*.) Նշանակելի հարց մ' է թէ Շնորհալւոյ գերեզմանը Հռոմեացի մէջ է ստուգիւթէ Թովք տղեկակին մէջ, զոր նկարագրած է գեր. Գ. Սրուանցանց՝ իր Թովք Աղաման մէջ։

**) Այսպիսի հայ—մահմետականներ կան տասնի չափ գիւղերում Տրապիզոնի արևելեան և հարաւային կողմ ընկած երկրում ես, որը Լազիստան անունն է կրում։ Այնանել ևս տեղացիք անուանում են սրանց կէսէս հայեր։ Սոցա մասին մանրամամօրէն գրած ենք 1887-ին Պետքբառուրգում հրատարակուած „Մանկավարժանոց“ ամսագրի Մարտ գրքի մէջ, 13 երեսում։

և զգացմամբ որ նուազ յուսալից երևոյթ մը կը ընծայեն քան այլ հայ գիւղացիներ:

Դժբաղդաբար մեր հոգեոր իշխանութեան անտարբերութեան պատճառաւ հոս ալ անխնամ կը թողուին: Այս քաջարի, կատառ, գեղեցկադէմ, գիւղացիները զուրկ են կարևոր բարոյական մնունդէ, թէեւ երկրագործ քահանայ մը կայ, անուամբ միայն կղերական: Ծերունի քահանայ մ'ալ կար որ գիւղացւոց հետ դժտելով վերջերս կամոլիկութեան յարած է Պերէճիկի լատին պատերներու գիմելով, բարեբաղդաբար իր զաւակներէն զատ հետեղող չէ ունեցած:

Ամերիկացի միսիոնարաց երկար աշխատութիւններն և մեծագումար ծախքերն ալ ի գերեւ ելած են, և բողոքական եկեղեցւոյն նորաշէն պատերը կործանելու սկսած են արդէն: Եզեսիայէն եկած վարժապետ մը 25 ի չափ տղայոց կարդալ գրել կը սորվեցնէ եկեղեցւոյ բակը դպրոցի համար հիմնուած մասնաւոր շէնքի մը մէջ:

Ճիպինի եկեղեցին դարաւոր շինութիւն մ'է, հսկայական քարերով: Բայց 80 տարի առաջ բոնաւորի մը ձեռօք հրկիղուելով, չաձի պէջ անուն ուրիշ բոնաւորի մը աշխատութեամբ ի պատիւ Շնորհալւոյն նորէն կը շնուի:

Ճիպին գիւղի օդը հիանալի է և այգիները, որոնք լայնաշաւալ լեռնադաշտին մեծ մասը կը գրաւեն, սքանչելի խաղող կ'արտադրին: Ասկէ զատ ցորեն, գարի, կորեկ, և ուրիշ հացեղեններ կարտադրուին հոս: Տեղւոյն դրից բարձրութեան պատճառաւ, աղքիւրներ չունի Ճիպին և արուեստական լայնափոր ջրամբարներու մէջ ձմեռը հաւաքուած ջուրերով կապրին:

Ճիպինի մօտ տեսնուած աւերակները կը ցուցնեն թէ փառաւոր անցեալ մը ունեցած է այն, բայց յայտնի չէ թէ ի՞նչ ազդի կը վերաբերի, որովհետեւ գրաւոր յիշատակ մը ըը կրցայ տեսնել: Հաւանական է որ հովվմէական տիրապետութեան հետքերն են այս աւերակները:

Եփրատայ արևելեան այս ընդարձակ լեռնադաշտը դարեր յառաջ ծաղկեալ և բազմամարդ բնակութիւն մ'էր անշուշտ: Ճիպին ամեն կողմէ նման օրինակ գիւղերով շրջապատուած է, որոնք թէեւ թուրքերէ և քուրդերէ կը բնակուին այժմ, բայց երբեմն մեծ կեդրոններ եղած լինելու յայտնի նշաններ ունին: Ասոնց մին է *

Ճ' իպինի արևելքան կողմը Արտահ անուն գիւղը: Ճոս տեսայ կործանեալ եկեղեցւոյ մը չորս պատերը, կիսովին հողոյ ներքե թաղուած: Այս պատերէն միայն յատակի հողը կէս կանգունի չափ փորել տալով, քարի մը վրայ գտայ սա միակ արձանագրութիւնը:

Ճ.·	Ո.Ժ.Ե.·	Ա.՝Օ.·	Տ.
Ժ.Բ.·	+	+	
+			

Կոյնպէս պատերուն վրայ զարդարուած բազմաթիւ խաչանաշաններուն միայն վրայ Տ՝ բառը: Սակայն շէնքին հնութենէն և գրերուն տձեռութենէն յայտնի է որ այս հայերէն արձանագրութիւնները չենքին հետ բազմաթամբ նորագոյն թուականներու կը վերաբերին և թէ յոյներու ձեռքէն հայերը գրաւած են զայն:

ԱՐԱ գիւղէն աւելի նշանաւոր է **ՔԻՓԱՐԱՆ**, Ճ' իպինէ Յ ժամ հեռի դէպի հիւսիս: Ճոս, Յ-10 քուրդ ընտանիքներ պարունակող ողորմելի բնակարաններու վրայ կը թագաւորին հնութեան սքանչելի շէնքերու Յ աւերակներ, որոնց մին կիսակործան եկեղեցի մը, արդարե հիացում կ'առթէ: Այս եկեղեցւոյն շէնքը կը յիշեցնէ հին Սուրբիոյ հեթանոսական մէհեաններու ճարտարապետութիւնը: Գիտուն խուզարկուներ կրնան որոշել ասոնց մանրամասնութիւնները:

Այս եկեղեցին ըստ երեսյթին վերջէն հայոց ձեռքը անցած է և սիւնակներէն միջն վրայ անխնամ կերպով գրուած հետեւեալ արձանագրութիւնը մեծ ուրախութիւն պատճառեց ինձ:

ՅԵՄՈՒ-ԴՈՒ	ՀԵՅՈՅ	Թ.Դ.Ի.
ՊԵՉԱ; Բ Օ Գ; Բ Գ		

Եկեղեցւոյն մօտ է կիսաւեր զանգակատունը և ուրիշ մատուռներ և այլն, որոց ներսերը խաչերով և արտաքին պատերը հինասորերէն և յունարէն արձանագրութիւններով և ուրիշ նշանագրերով զարդարուած են:

Ենչնար է այս համառօտ ուրուագծով լուսաւոր գաղափար մը տալ այս պատկառելի մացորդներու մասին, միայն հետաքրքիներու ուշաղրութեան կը ներկայացնենք, յուսալով որ ապագայի համար գէթ գրգիռ մը կը լինի գիտուն ուղեղներու:

ՅԱԻԵՐԱԿՈՒՆՍ ՀՈՌՄԿԼԱՅ

Ողջն, աւելիք յրտասարտուք, ողջն լերինք հովասունք
Ենձկալի վտարանգիս դամ ի համբոյր ձեր փոշեաց,
Եւ քայլերով դոզդոջուն մտամոլար շըջիմ ի ձեզ:
Քամերի վճիս նն ու ջինջ աղբերակունք սառնորակ,
Որք մրդին քաղցրամիմունջ ի ձեր կողեցըն գահավէժ:
Եպալեր ժայռք տխրատեսիլք, իբրև վկոյք անբարբառք,
Բարձրանան ուրեք ուրեք զինչ մահարձանըս անեղծ,
Եւ հողմիկ տխրանուագ, որ ի շշունչ իմն յուսահատ
Օրօրէ անշուկ զձեր ողին մենաւոր,
Ենւագունքըն թռչնիկաց, իբր արձադանք հաւատարիմ
Երինային մեղեղեաց, որք՝ էր երեմն հնչեին աստ,
Եւ Եփրատ խորախորհուրդ անհուն գաղանիօքն ծրարեալ յալիս
Ընթանայ ընդ ուղիս ամայացեալ դարուց ի դարս,—
Յուղին զհոդեակ իմ յաւէս և արտասուք գառնաղէտ
Կաթկրթին բոցակեզ յականողեացն իմ շիթ առ շիթ,
Եւ զիսայած և ձեռնամած իբր արձան ինչ անփենդան
Բեկուիմ ժայռի մ'ի յեց, այրած ճակասս ընդգէմ հողմոց,
Եւ սուղեալ անդնդախոր յովիկանին ի կոհակ
Հայիմ ի պիշ մերթյերիինս և մերթյնիրատ ծիծազախիտ
Եւ յուշ ածեմ... ո աւուրք թիւրիցս քաղցրիկ և ահաւոր...
Թէ այս լերինք սեաւ և մթին, թէ այս ծմակք հովանաւէտք,
Թէ այս վէմք անըզգայք յուղուեին մերթ 'ւ ոգեսորեալ
Օնուագս բարբառէին քընարի ինչ աստուածային,
Թէ այս սիւնք գետնատարածք և խոյակը փառահեղք
Եին վէմք հաստատութեան Խկեղեցւոյն Հայաստանեայց:
Կամարքս այս աշեղաշուք տային թնդիւն խորհրդաւոր:
Եղօթիւք սրտամրմունջ և մեղեղեօք երկնասլաց:
Բեկորքս այս և նշխալք՝ որք ի փոշես արդ առաթուր,
Կանգնեցին ընդ երկար Խորանն սրտից Հայկական:
Թէ նշանակն արքունի, որ քանդակեալ որմին հանգէպ
Եր երբեմն, զի ծալ ի ծալ ռահահորդէր բանակաց...
Թէ երբեմն, ապրէլ երգէր աստ Հանձարն այն աննման
Եւ անդի ի խոր ու անմատոյց յանձաւին խուց,
Երտադրէր ըգթաւիշ իւր սուրբ մատամբքըն քնփոյշ:

— ... Զայն տուք ու քարինք, ձայն տուք լերինք ձայն ալեք,
թէ յօրէ անտի, երբ, լոհաց քընար Ընովնացոյն
Նշեաց ի ձեզ երեք բարբառ այնքան վսեմ և ազդու:
— ... Ո՛չ, ի սարսուռ ևս համակիմ ի լուր լսին ձեր ձայնին
Որ ի խորոց ջուրց ու քարանց ի սոյլ հողմաց և յերդ թռչնոց,
Մշտամռունչ յար մրժնցէք զանմահ նուագն Օապինչ + իւր + իւր

Գառակ



Մ Ա Ր Ա Շ

«Լրաբսի» ազնիւ ընթերցողաց պիտի ջանամ այժմեան Վարաշն իր գուեհիկ բացատրութիւններով ներկայացունել, յոյժ ցաւէ ինձ որ կը պակսին յիս կարեոր պատմական ծանօթութիւններ, որոց պարզութեամբ և յիշատակութեամբ միայն տեղագրութիւնմը կրնայ լինել ընտիր, հետաքրքրական և գիտական: Թէկ տեղ ընթերցողաց տաղտկութիւն պատճառեմ իմ չոր ու ցամաք տեղեկութիւններով, այլ սակայն որչափ որ աստ մեծ քաղաքաց յատուկ պալատներու, ուղիղ գծով հարթ պողոտաներու, հանգստաւէտ հասարակային պարտէզներու, ուսումնական մեծ հաստատութիւններու տեղ կան գիւղական խրճիթներ, ել և էջ ունեցող արահետներ, անշուք պարտէզներ, ուսման անարժան տուներ, ասոնք ալ իրենց մասնաւոր համն ու հոտն ունին, զի աստ օդն ու ջուր, հողն ու քար, վերջապէս ամեն տեսանելի առարկայ կիւիկեան անցեալ փառաց յիշատակովն կը ներկայանայ: Զայնակցելով հայրենեաց հօր այն ոսկեղէն տողին, թէ «Քան զօտարին վարդ քաղցր է հայրենեաց վուշը», կուգամք այդ փուշերն իրենց նոյնութեամբ ցուցնել, պատմագէտներու, հնագէտներու և հայրենագէտներու թողլով որ իրենք ալ այդ փուշերու վարդերն ցուցնեն մեզ:

Սահման: — Վարաշ, այն է Վելմանին, Դերիշ (Վալես) նահանգապետի իշխանութեան տակ գաւառ մ'է այսինքն սահման, արևելքէն (Աերիոյ), հարաւէն և արևմուտքէն Լատանայի և հիւսիսային կողմէն Վերաստիոյ կուսակալութիւններէն (Ալեստէն) շրջապատեալ է: Վարաշի միւթէսարլիքութեան տակ կան գայ-

Հագածութեաննեց, որոց գլխաւորն են Աղջիկան և ժայռոտն Օհյուն:

Քաղաքն և դաշտ: — Վարաշ իւր հիւսիսակողմն գտնուած Եփը կոչուած լերան ստորոտի 7-8 բլուրներու վրայ կայ բարձրացած, որոց ձորերու մէջէն կը հոսեն առուակներ. բլուրներու գագաթմաներէն սկսեալ մինչ ձորերն շինուած տուներն ի հեռուստ ամրիթէատրօնի ձեւն կը յիշեցունեն: Տարիներու բեռանց տակ ընկծուած հոգիք կը հաւաստեն, թէ հին քաղաքն այժմեանին գէպ արևելեան հարաւակողմն գտնուած առ լերանց կողն էր շինուած, որոյ այժմ Պարա — Վարաշ անունն կուտան, ուր չէ կարելի գտնել նոյն իսկ մի աննշան գիւղ կամ մի որ և է բնակութեան տեղի, և թէ այժմեան Վարաշի տեղն անտառ և աւազակներու ապաստանարան է եղեր: Քաղաքին հարաւային կողմը կը տարածի մի լնդարձակ դաշտ, որոյ տարածութիւնն է արևելքէն գէպ արևմուտք 16 մղոն և հիւսիսէն հարաւ 8 մղոն. այս դաշտի հարաւային կողման վրայ գտնուած լեռանց կողերն և ստորոտներն լի են բազմաթիւ գիւղերով: Պաշտն յարմար է մշակութեան և մշակուած ալէ. ցորեան, գարի, բրինձ, բամպակ, բանջարեցէնք ամեն տեսակէ, դաշտիս բերքերն կը կազմեն. աւելի լեռնային տեղեր յոյժ մշակուած է այգեպանութիւն. գրեթէ առ հասարակ ամենն ալ այգի մ'ունին. նշանաւոր է տեղւոյս խաղողն ու գինին: Վարաշի հարաւային կողմէն կերթայ այն ուղղին որ Վտանա կը տանի, արևմտեան կողմէն Վայնթապ և Շներիա: Խոկ այն ուղղին որ կառաջնորդէ ի կիւրին և կամ ի Աներաստիա, լեռնային է և գէպ հիւսիս:

Վարաշի օդն ոչ այնչափ տաք և ոչ այնչափ ցուրտ, այլ միշտ բարեխառն է. ջուրն առատ է: Եփը լերանց ամբարներն կը հայթայթեն այն մշտահոս ջրերն որ քաղաքին հիւսիսակողմը լերան ստորոտէն կը բղխին և այն վայր մի հրապուրիչ տեղի կը ներկայանայ աչաց երբ ի գարնան գիտէ ոք. ամեն կողմէ ջրերու խոսխոչք, ծառոց տերևներու սօսափիւն և զմայլելի երգ թռչնոց կը միանան և ներդաշնակաւոր եղանակ մը կը յօրինեն և մարգագեանի վրայ կեցած գիտող մը կը պրկեն մի դիւթիչ զօրութեամբ, այս վայր կը կոչուի Քարաւանակ (քառասուն ակն):

Եփսու կոչուած զետակն որ դաշտին արևելեան մասէն կը մտնէ և գէպ հարաւ կ'ընթանայ կ'ոռոգէ իւր շրջակայ անդաս-

տաններն, ընդունելով իւր ի ծոց հաղարաւոր վտակներ, կերթայ և ինք խառնիլ Շ'ինունի որ լայնանիստ Ախը լերանց ստորոտն քերելով կ'երթայ դէպ հարաւային արևմտեան կոյս և առանց դաշտին մէջ մտնելու կելլայ մեր սահմաններէն:

Վարաշ կը բաղկանայ մօտաւորապէս 10,000 տունէ որոց բնաշ կիչք են հայ, թուրք և հրէայ: Ա երջինք հազիւ 15-20 տուն կը կազմեն: Հայք կը կազմեն 3,000 տուն որոց 2,000-ը լուսաւորչական, 500-ը բողոքական և 500 ալ պապական են.

Ա. Հայ Լուսաւորչական+ ունին վեց եկեղեցի, որք են Ա. Քառասուն մանկունք, Ա. Սարգիս, Ա. Ստեփանոս, Ա. Գէորգ, Ա. Աստուածածին և Ա. Կարապետ: Այս եկեղեցիներու թուով բաժնուած են մասսանց, այլ յոյժ գովելի է այն ընթացք որ այս թեմերէն և ոչ մին ց'արդ հակառակութիւն մը ունեցած չէ մի այլ թեմի դէմ: որչափ գիտեմք ց'արդ իրաւուցական ո՞չի երբէ՛ ո՞նեցած չէ ճարշացին: Ճողովուրդն կրօնասէր է. ամեն առաւօտ յառաջ քան շուկան իւր գործոյն սկսիլն կը դիմէ եկեղեցի ուր իւր աղօթքն կը կատարէ, յետ որոյ կերթայ իւր զբաղման: Աը պատուէ իւր կղերն, այլ ցաւ ի սիրտ կը յայտնեմք զայս ճշմարտութիւն, թէ այս վերջինք յոյժ անմշակ և իրենց կոչման երբէք չը համապատասխանող անձնաւորութիւնք կը կազմեն. այս ընդհանուր ճշմարտութիւն հազիւ ունի մի, երկու բացառութիւն: Վարաշցի հայն չարքաշէ բնաւորութեամբ. ըլ ինայեր ծանր աշխատութիւններ մի ոչինչ շահի համար. շատ կաշխատի, քիչ կը շահի, այլ սակայն գիտելի է որ այդ ուստի կը բարձրացնալ և պահպան լը դիմէր բնաւ և ոչ ալ պանդիստութեան վրայ լաւ գաղափար ունի, մասամբ իւրիք կղղիացեալ է:

Այնական վիճակի:—Վարաշի կրթական վիճակն գոհացուցիչ չէ, թէև ամեն եկեղեցի իւր գպրոցն ունի, այլ սակայն հին գրութիւնն կը տիրէ. մի կամ երկու վարժապետ 75-100 աշակերտ կ'ունենայ որոց թէ գասաւանդութիւնն, թէ կառավարչութիւնը և թէ ամեն հոգատարութիւն վարժապետաց պարտուց սահմանին մէջ է ամփոփուած: Երբ տակաւ կը վատթարանայ մեր նիւթական վիճակն, ուստի և կարենք մակաբերել թէ շատ գժուար պիտի կարենամք այս գրութիւն փոխել:

Վրանձին հաստատութիւն մը կը սեպուի Վիլիկիչան ժամանակագրաց վարժապանն որ կիլիկիոյ վեհափառ ՈԿրտիչ կաթողիկոսի

Հովանաւորութեան տակն է. իւր ծախիւք կը հոգացուի ամեն պիտոյք, սակայն ըստ մեզ «զուր ջանք, անօգուտ վաստակ»: «Եղարբոցն քաղաքին լիւ ու լուսուած թաղն է, պատուհաններն կը նային խաղաղորդներու (տապախ) կրպակներուն վրայ. դպրոցի և խաղաղորդաց միջոցն քայլ մ'ալ չէ, ահա մի յոռեգոյն տիպար արդի մանկավարժական սկզբանց գլխովին հակառակ, փոխանակ օդասուն սենեակներու մէջ կենալու երթալ խաղաղորդի գարշահոտութեանց մեծաքանակ զանգուածին մէջ շրջիւ ճաշել, ննջել, և ուսանիլ: Վէճթ այդ դժբաղդ արարածներու հարկ եղած մնունդն տրուեր: «Կախկին տնօրէն Պ. Ծերզեանի մահէն յետոյ դպրոցն աղմըկալից մի վայր դարձած է և կը մնայ նոյն վիճակի մէջ: Ա եհափառ կաթողիկոսն այս վարժարանը, որ ժամանակ մը իրեն ապագայ փառքը կը սեպէր և աղգային մեծ վարժարանաց հետ կը ջանար բաղդատել եթէ վերջին աստիճանի նուաստութիւն մը չը սեպուի, թերես այսօր թողու որ ամեն աշակերտ իւր տեղն երթայ:

«Այրին վեհափառութիւնը ի գարնան կուգար իւր ամարանցն որ ի Քէրիսան, Ամարաշէ 2½ ժամ հեռու, աշնան դարձեալ կը դառնար ի Աիս. այս տարի շնորհիւ իւր վաճառականական գործողութեանց մեծ վնասուց Ասոյ յաթուն ի Ամարաշ փոխադրած է. ձմերն աստ պիտի անցունէ.

(Նվերո-Եկեղէթ: — Ամարաշի մէջ այլ և այլ նպատակներ ունեցող ընկերութիւններ կան որոց մէջ նշանաւորներն են 1. Կիէկիւն — Հայոց մասունքայց, որոյ յօգնածան աշխատութեանց շնորհիւ այսօր Ամարաշու հայք քաղաքին ամենէն յարդի մասին մէջ վերջունական անուամբ մի ընդարձակ վարժարան ունին, ունի ընտիր օդ և ջուր նաև պարտէզ շրջագայութեան համար. և ոչ մի թեմի կը պատկանի այս վարժարան, ամեն թաղային դպրոցներու յառաջադէմ և շրջանաւարտ աշակերտներն կը բերուին աստ, ուր կստանան մի հասարակ ուսում: 7-8 տարիներէ աստի, յիշեալ ընկերութիւնն լաւ արդիւնք մ'ունեցած է և կը յուսամք որ իւր աղդեցիկ անդամոց քրտնաթօր ջանիւթ պիտի մնայ միշտ փայլուն և արդիւնաշատ:

2. Ասո-բիէտան ընկ. Ա. Ստեփանոս եկեղեցւոյ թեմի երիտասարդներէն կազմուած, սորա նպատակն է որր և անպաշտպան մանկանց մի գիշերօթիկ վարժարան հիմնել. իւր վարժարանի ապագան ապահովելու համար այժմէն սկսած է կալուածներ ձեռք բերել, այս ընկերութիւնն մի բաղանիս շինել տուաւ: Պ. Կարապետ

Չօրպաճեան երիտասարդ վաճառականն, որոյ ամեն մտածութիւն կեդրոնացած է կրթական գործից վրայ, այս ընկերութեան հոգին կը կազմէ, այս անխոնջ անձի շնորհիւ դեռ յառաջդիմելու շատ հաւանականութիւն ունի յիշեալ ընկերութիւնն:

Յ Առաջիննեան ընկերութիւնն: Ա. Վատուածածին եկեղեցւոյ թեմի երիտասարդներէ կազմուած, օգասուն դպրոց մը չինել տուան ուր կը յաճախեն նոյն թեմի մանկտիք: Ա արժարանի նիւթականն ևս իրենք կը հոգան, այս ընկերութեան անդամոց մէջ իւր աշխատութեամբ նշանաւոր է Պ. Արարտիրոս Գոտորեան:

4. Ընկերոցանիաց ընկերութիւնն: Որոյ նպատակն է քաղաքիս մէջ ընթերցասիրութիւնն տարածել. մի մասնաւոր թանգարան հիմնած է ուր կը գտնուին 200 կտոր ընտիր գրքեր, այս ընկերութեան հիմնադիրն է Պ. Աամուէլեան ազնիւ երիտասարդը որ մի քանի տարի կեդրոնական դպրոցի մէջ իրը տնօրէն-դասանիօս պաշտօնավարելէ յետոյ հրաժարեցաւ, այժմ կը գտնուի յլայնթապ, ուր ամերիկաց գոլլէճի մէջ հայ լեզուի դասախոսութեամբ կ'զբաղի:

5. Հայո-հետաց ընկերութիւնն: Ա. Վտեփանոս թեմի կիներէ կազմուած, այս ընկերութիւններու նշանաւոր գործիչներն՝ տիկնայք Աայրիկ և Լշմաս Չօրպաճեանք գովելի մի օրինակ կրնան լինել Աարաշի և շրջակայի կանանց, սոքա իրենց երիտասարդ հասակի մէջ այրի մնացած, իրենց միսիթարութիւն և միակ գործ ընտրած են աղջկանց դպրոցն, տնէ տուն կը շրջին աշակերտուհի և դրամ հաւաքելու, ոոյն ընկերութիւն բաւական լաւ մի աղջկանց վարժարան ունի:

6. Դարձեալ Հայո-հետաց ընկերութիւնն: Ա. Քառասուն մանուկ թեմի կիներէ կազմուած, սոքա նոր դպրոց մը կառուցին կեդրոնական դպրոցի ընդարձակ բակի մէջ, ուր այժմ կը յաճախեն գրեթէ ամեն մօտակայ թաղերէ աշակերտուհիք:

7. Հայ Շաղականութ: Մի քանի թաղային դպրոցներէ դատ, ամերիկացի միսիոնարներու հովանաւորութեան տակ ունին մի աստուածաբանական վարժարան և աղջկանց մի գոլլէճ: Աայսիոնարական Պօրտ ընկերութիւնն որ յլամերիկայ կը հոգայ այս դպրոցներու ծախսն: Կան նաև մկրտիչեան և եպիսկոպոսական հայեր:

8. Փապական Հայք: — Հայ Լուսաւորչական մը չը կրնար երբէք համակրիլ այս տարրին, զի սոքա կոյր հնազանդութիւն ունենալով իրենց պետին, ինչ որ լսեն անտի բառ առ բառ կը գոր-

ծաղրեն, զի մի գուցէ հանդերձեալ կենաց մէջ կրակն ըլլայ իրենց բաժին։ Վիայն մի թաղային դպրոց ունին, այն ալ միայն մի այցելու վարժապետ ունի, որ կը դասախոսէ թուրքերէն, ուրիշ ոչինչ կ'աւանդուի։

Այս գասուն կը պատկանին դարձեալ Ֆիդո-ինի, որոնց ամեն մեքենայութեանց հազիւ երբեմն կը պատահի մի զոհ։

Գառառաբարբարական։ — Վարաշի գաւառաբարբարոն կրնայ թերես մեր գիտնոց ուշն գրաւել առ այս ճաշակ մը տալու համար մի ուրիշ առթիւ պիտի գրենք վէպեր, առաջներ, օրհնութիւններ և պիտի ջանալք պառաւներու բերնէն քաղել, զի լեզուն միայն ասոնց ի բերան կայ առանց աղաւաղման, նոր սերունդն յաւէտ վարժ թրքերէնի՝ հեղին հնչումներէն զուրկ է։

Վատ ցաւալի է ըսել որ բողոքական և պաղական հասարակութեան մեծ մասն նոյն իսկ Վարաշի գաւառաբարբարով հայ լեզուաւ խօսիլ չը գիտեն. նոցա այս անտարեբութիւն մեծ վիշտ մ'է անշուշտ ամեն հայու. լուսաւորչականք որչափ և անոնց չափ մեղդրելի լինին թուրքերէն խօսելնուն համար ի տուրեառու և յայլում պարագայի, գէթ գիտեն իրենց գաւառաբարբարու։

Վաճառականութիւն։ — Քաղաքիս վաճառականութիւն ըստ մեծի մասին եւրոպական ապրանաց վրայ կեդրոնացած է. երբեմն տաճկաստանի նաւահանգիստներն և կամ մեծ քաղաքներն գործակալ ունենալով անոնց ձեռամք բերել կուտան և երբեմն ալ իրենք կերթան և 1-2 ամիսէն կը դառնան։ Տեղական բերքեր արտածելու տուրեառուն ոչինչ նշանակութիւն չունի. ներմուծումն միշտ առաւելակշութիւն կը պահէ. մանաւանդ արտածման որչափ ալ աշխատուի անօգուտ է, զի փոխագրութեան մեծ մեծ դժուարութիւններ կան։

Արհեստութիւն։ — Վրհեստք որ ի Վարաշ են գլխաւորաբար ալլանաժութիւն այսինքն մանուսա գործել. հիւմնութիւն որ բաղդատամամք այլ արհեստներու շատ յառաջ դացած է. կը շինեն ընտիր աթոռներ, թիկնաթոռներ, մահճակալներ, գանէփէներ ևն, ևն, սակայն շատ քիչ տուներ այս կարասիներն կարելի է դտնել. հարուստներու յատուկ կը սեպուի. արհեստաւորք կը շինեն և կը յղեն յերիա (Հալէպ), ուր կը ծախուի։ Կերձակութիւն, կօշկակարութիւն, դարբնութիւն, պղնձագործութիւն ևն ևն, այս բոլոր արհեստներն նշանակութեան արժան յառաջադիմութիւն մը ու-

նեցած չ'են, այլ սակայն կը գոհացունեն տեղացւոց պիտոյք-ը ներն:

Վարաշու տներ ընդհանրապէս երկյարկեն, ստորին յարկն կը կոչուի ախտա, ուր կամ անասուն կը պահուի, և կամ քիչ կարեւութիւն ունեցող իրեր կը տրուին. վերնայարկն որ 7-9 աստիճան սանդուխ մը կը բաժնէ, բնակարան է և ըստ մեծի մասին խոհանոց, ննջարան, ևն ևն...: Բնակարանն որ քարէ կամ աղիւսէ շինուած է, կրով ձերմկցուած է. բնակարանի մի մասն կը կազմէ ժողով, ուր տանստիկինն կը նստեցունէ մէկ կողմէ իւր պատունէր և միւս կողմէ կեփէ կերակուր: Ուէ և կան շատ կանոնաւոր տներ, այլ ընդհանրապէս այս օրինակ շինուած են: Քահէ կը տեսնուի կղմինտրով շինուած տներ. ընդհանրապէս տանիքներն են հողէ, ոյց վրայ կայ լոպտարան. երբ անձրեն սկսի, տանիք կելուան, եռանկիւնածե շինուած ³ մէթր երկարութեամր՝ ձողերէ շինուած լողիլով. որ կը կոչեն «ցղանի», կը պնդացունեն հողն զի մի գուցէ ջուրն հոսի ի տուն:

Վաղաքիս բնակիչք ընդհանրապէս առողջ են. աստ ընդհանրացած հիւանդութիւն չ'կայ. անցեալ ամառ բայցառութիւն մ'էր. զի սաստկացաւ տենդ և ջերմ այնպէս որ մի համաձարակ հիւանդութեան փոխուցաւ:

Ո՞ի եկեղեցւոյ մկրտութեանց արձանագրութիւն աշաց առջեւ ունենալով կարելի է գիտնալ թէ միշտ առաջ նիւն մի պատկառելի բարձրունիւն ունի իժաման սեւեւն. անշուշտ այս իրողութիւն բնակչաց առողջութեան մի ապացոյց կրնայ համարուիլ:

Որչափ ալ գտնուին եւրոպական տարագով հագուած անձինք, տեղական ընդհանուր տարագն է երկիներանք (ալաձա) կտաւէ պարեգօտ, որոյ վրայէ կը հագնեն նարալապատէ ըսուածը, որն տեղական է և հաստատուն. վրայէն կը կապեն գօտի. ձմեռ եղանակի մէջ սև շաղվարն ընդհանուր է: Այլ գտնուին նաև որ կը հագնին շաղվար շաղվար, որ փանթալօնի նման մէջքէն վար կը տարածի. բայց այնչափ մեծ է որ կրնայ փանթալօն, բաճկոն և վերարկու միանդամայն լինել, եթէ եւրոպական տարագի ձևն տանք. կը կապեն թանկագին շաղեր իբր գօտի և կը հագնին իբր վերարկու ֆերմանէ կոչուածն որ մինչեւ մէջքն կուգայ:

Իժաման աւրան որ տեղացիք կը կոչեն պարանիա, կնոջ մը յատուկ եղած գեղն և շնորհ որչափ ալ ունի, այսու հանդերձ չի

Հաւասարիր Օէյթունի, Հաճնոյ և Աեսարիոյ իդական սեռի գեղեցկութեան: Կանայք կը հագնին տեղական երփներանդ կտաւէ շըլազգեստ, Պոլսոյ տներու մէջ ի կիր առնուած ձեռվ, մէջքի վրայ կը կապեն գօտի. գլուխնին ընդհանրապէս բաց է. միայն մի հինգի (եազմա) ^{1/4} տասնամէթը լայնութեամբ, հաւկթաձե կը կապեն հերաց վերայ: Ծանրերու գլուխ բաց տեսնել չէ կարելի. նոքա պայլեայլ փաթտոցներով տարօրինակ ձեւ մը տուած են իրենց գլուխներուն:

Իդական սեռն տան սպասաւորն է, խոհարարն է, աւելածուն է, պյոր մարդու հրամանակատարն է. ամեն բան է վերջապէս, սակայն ոչինչ ձայն ունի: Յամրան մարաշցին երբ թողու զիւր տուն և երթայ այդի, աշխատողն մեծաւ մասամբ իւր կինն է. նա կը քաղէ ընկոյզն, յորմէ այլ և այլ ձեւեր կը շինէ և երբ կը լրացունէ խաղողի քաղելն, հատերն կը զատէ, կը ձզմէ, կեռացունէ և ընկոյզէ շինուած ձեւերն կը թաթիւէ երկիցս և կը վերցունէ, կը չորցունէ զայն և կ'օսլայէ. այս ընտիր ձեռաց ընտիր արտազրութիւնն կը կոչուի առ-ճո-լի: Կինն կը շինէ անուշեղինաց այլ և այլ տեսակ-ներ պատրեզ պատրեզ ասմաս ևն. ինչպէս նաև բառ-պ (բէքմէզ):

Կիներ որչափ ալ որ կը քաշուին և կը պահուին այրերէ, սա-կայն և այնպէս ոչ բոլորովին գուեհկութեամբ, որպէս Օէյթուն և այլուր. ի բացակայութեան առն, երբ մի մօտաւոր ազգական պյոր մարդ գայ ի տուն, կը հիւրասիրեն զայն. այլ երբ օիչ ան-դամ եկող մի անձ լինի այն և կամ բոլորովին մի ան-անօթ, տան հասակն առած կինն այր մարդու բացակայ լինելն կը ծանու-ցանէ, և հիւրն կը դառնայ:

Հաղիւ կարելի է գտնել մի կին քիչ շատ մտային բարձր կարողու-թիւն ցուցնող. առ հասարակ մշակեալ չեն. յուսալի է սակայն որ իդական սեռի զայդ գարոցներ այդ թերին լրացունելու միջոց լինին:

Երբ մօր երկանց ցաւն սկսի, զպյեակն կը բերուի, և երբ մա-նուկն ծնի. կառնուն զայն և կաղին. աղի մէջ կը մնայ մի քանի ժամ, յետ որոյ կը լուան և կը հագուեցունեն հանդերձանքն. երբ 8 օրեայ լինի, տան ծեր կինն կամ աղջկունք ընկերանալով գայեա-կին կը բերեն եկեղեցի. երբ մկրտութեան խորհուրդն կը կատարի, կը տանին ի տուն: Մանուկը ծնելէ վերջ, բարեկամներ կուգան տուն առ ի լուսէն, կնքահայրն կը նուիրէ մանկան ըստ իւր կա-

բողութեան մի ոսկի գրամ և ծննդաբեր կինն կուտայ կնքահօր մի բանուած թաշկինակ կամ անձեռոց:

Հայունիք: — Երեքշաբթի և չորեքշաբթի գիշերներ կուգան հրաւիրեալք ի տուն տղուն կամ աղջկան և 5-6 ժամ կենալը կը դառնան ի տուն. հինգշաբթի կէս օրուան ատեններ տղուն կողման հրաւիրեալք կերթան ի տուն աղջկան, կառնուն զայն և կը բերեն եկեղեցի, ուր փեսայցեալն իր մի քանի բարեկամներով եկած կը լինի: Պսակիչ քահանայն կօրհնէ փեսայի հանդերձն, որ հայուն կը կոչեն և կ'սկսին երգել «Այսօր երկնայինքն ուրախացան» շարականն, որոյ միջոցին կը մերկացունեն զփեսայն, միայն շապիքն, բաճկոնն և անդրավարտիքը թողլով. յետոյ կ'սկսին հագուեցունել հալաւն. յետ աւարտման, պսակիչ քահանան «Առեալ զձեռն Եւայի և տուեալ ի յաջն Վգամայ» խօսքով կ'սկսի պսակի արարողութիւնն. երբ պսակը լրանայ, հանդիսականք զհետ ունենալով հարսն և փեսան կերթան ի տուն փեսին, ուր խընդակցական ցոյցերն կը շարունակուին մինչ ի լոյս:

Հիւանդանին, մահ և նախունն: — Երբ մէկու մը հիւանդանթիւնը ծանրանայ լսող բարեկամք կ'շտապեն մի անգամ ևս տեսնել զայն գէթ. մօտաւոր ազգականք երբեմն կը մնան ի տուն հիւանդի: Յորժամ կենաց թելն կտրի և երեկոյեան մօտ լինի, կը լուան մեռեալն, կանցունեն ճերմակ պատանն, կը գնեն ի դադաղ (տեղացիք կը կոչեն աֆոռք կեմ դաֆոռ), և կը տանին եկեղեցի, ուր կէմ մնայ ցլոյս, առաւօտ յետ աւարտման եկեղեցական պաշտամանց կառնուն մեռեալն և կը տանին ի գերեզման: Այս և կին կը խոնին անդ. մեռելաթաղ քահանան կ'սկսի թաղման ծիստց, այլ անլսելի կը լինի կանանց աղմկալի և յուզիչ ձայնէն. ողը ու կոծ, լալ և հաւաչանք կը յաջորդեն փոփոխակի. երբ քահանան երիցս «Հող էին և ի հող դարձցիս» կը կրկնէ, կսկսին թափել հողն. ընդհանուր սովորութիւն մ'եղած է գրեթէ դամբանական խօսիլն, երբեմն աշխարհիկ գասու անձինք ևս կը խօսին: Յետ թաղման մեռեալի տուն կը պատրաստուի կերակուր ուր կը ձաշեն ուղարկաւորք: «Այս օր «Գլուխնէրտ ողջ մայ» ի պարտաւորութիւնն կը կատարեն աղդականք և բարեկամք, արք և կանայք:

Ակնէլոցին

the first time in the history of the world, the whole of the human race, from the most ignorant savage to the most learned philosopher, have been brought together in one common society, and have all become members of one great family, the family of man. This is a glorious epoch in the history of the world, and it is to be regretted that it has not been more generally understood and appreciated.

The progress of civilization is now rapid, and it is to be hoped that it will continue to increase. The world is becoming more and more a common home for all men, and the time is not far distant when all men will be brothers. This is a glorious prospect, and it is to be hoped that it will be realized in the course of the next century.

ԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԻՊԵՐ



Միացեալ Բնիկերութեանց դպրոցի աշակերտներ



— — —

ՀԱՃԸՆՈՑ ԼԵԶՈՒԻՆ

Երբ Հաճընոյ Հայուհեաց ընկերութեան վարժարանին մէջ աշխարհաբար լեզուն սկսայ թոթովել, ի սկզբան կարծեցի, թէ ինձ բոլորովին անծանօթ լեզու մը կ'ուսանէի, առանց գիտնալու թէ ևս զայն արդէն զիտէի. սակայն և այնպէս իմ գիտցածս գրաբառով խառն աշխարհաբառ էր, և նա ալ աղաւաղեալ: (Օրինակի համար բերան—բիրօն *), հաց—հօց, ճակատ—ճակօտ, դուրս—դույս, կերթամ—կաշտօմ, կ'ուգամ—կագօմ. կերակուրը եփեցա՞ւ, թէ ոչ—եփելու ու չեփելուն մէջ տեղն է (ուտելիքը եփեցօվ թէ չէ—ընդ իփիցօվ ընդ չ'իփիցօվ), ևն ևն ևն:

Հաճընցւոց լեզուն, թէ և կոշտ ու անկանոն է, սակայն ունի իւր տաղաչափութիւնը, երգն ու առակը, աղօթքը և օրհնեքքը, անէծքը, հանելուկը ու լակոնական ոճը և այնպիսի ասացուածներ՝ որք անտարակյս առնչութիւն ունին մեր նախնեաց վարուց ու բարուց և պաշտամնաց հետ, և որք ի հարկէ ունին իրենց կարեորութիւնը, այնպէս որ թերեւս մեր յաջորդք փափաքին աչքի առջև ունենալ իրենց պապերու աղաւաղեալ լեզուն՝ որոյ վրայ, ինչպէս մենք, նոյնպէս անոնք պէտք է զարմանան, թէ դարերու ազդեցութիւնն, ինչ փոփոխութեանց ենթակայ ըսեր է, մեր վաղեմի լեզուն. և ասոր հետ մէկտեղ մեր ազգին բարի յատկութիւններն:

«Արաքսի» ընթերցողաց, Հաճընոյ լեզուին վրայ քիչ շատ գաղափար մը տալու համար՝ ստորև երևան կը բերեմ մի քանի հանելուկ, մի քանի խօսք լակոնական ոճով, մի քանի օրհնեքներն ու անէծքները, մանկութեանս ատեն մօրս ինձ ուսուցած մի քանի աղօթքերն՝ զորս մեր նախնիք սատանայի փորձութենէն, օձի և կարիճի խայթուածքէն և գաղանաց վտանգէն աղաւ մնալու համար կըսեն եղեր:

Չեմ մոռնար նա ևս յիշեցնելու, թէ հաճընցիք ալ գաղղիացոց պէս, երբեմն բառի մը վերջ գտնուած ՚ յօդին ձայնը ձայնաւորով սկսող յաջորդ բառին վրայ կը զարնեն. օրինակի համար. ցաւն ի տեղը, (ցով նի տեղը), մէծ մէծ քարն ալ վրան (մէնծ

*) Շատ անգամ հաճընցիք ա—ը, օ—ի, ր—ն, յ—ի, ե—ը, ի—ի, ևն կը փոխեն.

մենծ քօր նալ վիյան): Օայս խօսք կը գործածեն երբ փոխանցիկ
հիւանդութեամբ ախտացեալ մը տեսնեն:

ՀԱՆԵՐԻԿՆԵՐ

- | | |
|------------------------------|-----------------------------|
| (Համազար լըդուար) | (Բառապիսն նարդանան-նէ-ն) |
| 1 Բօն մ'ունիմ բօն չէ, | Բան մ'ունիմ բան չէ. |
| Դիպնուս նէ կու ձինչէ: | Եթէ դպիս կը ձչէ: |
| (Գաճապորա) | |
| 2 Կծիկ մը թէռ ունիմ, | Կծիկ մը թէռ ունիմ |
| Կու կծկեմ կու կծկեմ չիպայպէ: | Կը կծկեմ, կը կծկեմ չի լմար: |
| (Տաճբուժ) | |

ԱՍԱՑՈՒԱԺՔՆԵՐ

- 1 Աղքատին իյեսը պօղ կունոյ Աղքատին երեսը պաղ կըլլայ:
- 2 Հարուստին կատուն կիցօծ տեր Հարուստին կատուն կեցած տեր զը, դափլն կու կոի: զը, ինծ կը դառնայ:
- 3 Վեր թքնում պեխերսէ, վար Վեր թքնիմ պեխերսէ, վար թքնում մուրուքսէ:
- 4 Լճուն վըյան կոյը խէթեց: Օձին վըայ կորը խայթեց:
- 5 Պօտը էնկէծ ունի: Պատը ականջ ունի:
- 6 Զի լեղ պըւըչին ծիծ չեն տոյ: Զի լացող մանկան ծիծ չեն տար:
- 7 Կծու սօխին քոյցը չինոյ կծու սոխին քաղցրը չէ լինում:

ԱՂԹՔՆԵՐ

- 1 Վայօմ մայ Վստրծու մայ. Վարիամ Վայր, Վստուծոյ Վայր,
Դուն ինչ գիտես, ընծա ուսուց. Դուինչ գիտես, ինծ ալ ուսուր.
Ալյտիս վէյվէն չօլը կացուց, Արտիս վրայէն չարը վերցուր,
Զօր սատանան անդունդն ան- Զար սատանան անդունդն ան-
ցուց, ցուր.
- 2 Օիս արքայութնոյ դուռը Օիս արքայութեան դուռը մտ-
մեցույ: յուր:
- 3 Առյը սինը սըյտիս, Առյը սինը սրտիս,
Վւիտարօնը գըյկիս, Վւետարանը գրկիս,
Խաչնու ինծոր նիրիսիս, Խաչն ու ինծորը երեսիս,
Խ՞նչ կու վախես սեյտիս, Խ՞նչ կը վախես սիրտս.
Շէքէր դամիշն'ի ձառիս, Շաքարեղէգն ի ձեռս
Խջոյ հոյը, Խջոյ հորը.

- Կապեցի կոյը,
 Եձոնց աւերը,
 Ասոլծու մայ,
 Քշցղը գինի:
 3 Հոնէ կագօյ մեր Հեղնին
 Թօգն'ի գլուխը պիրիսմին
 Խսկի շրջօռը ՞ յիստիսոյ ուսին
 Զառն ունի երկու բիպեռ
 Մէկը՝ սիյալ սատանին,
 Մէկը՝ բիյօնը գաղանին,
 Հօվը խօսուն, մէջ գիշերին:
 4 Մէր տէր նառաւելէ տէր,
 Կուգօյ դատաստօն
 Կու նստի փառքի աթոռը
 Կուտո պատասխոն
 Օմեզ կու խըյատէ
 Սովը աւիտարօն
 Իրանի, այտօրնիրուն
 Վայ, միղաւորնիրուն
 5 Ունիմ ձարօկ, չ'ունիմ,
 Եղեր իմ եէսիր:
 Գլուխիս բօրձ չ'ունիմ
 Ակրքևս խասիր
 Տիյամայ սուրբ Աստվօծածին
 Դուն հասիր
 Իրանի, այտօրնիրուն
 Վայ, միղաւորնիրուն
 6 Իկին, իկին քաղաքին
 Իկին իջօն աղբէյը
 Կապեցին ժեք քուրոկ
 Տնկիցին ժեք խաչ
 Մէկը՝ սըյախս,
 Մէկը՝ սընանիս,
 Մէկը՝ տօնիս,
 Բարի լիս:
- Կապեցի կորը,
 Օձերուն աւերը,
 Աստուածամյը
 Քաղցը գինի:
 Եհա, կուգայ մեր (գշխոյն) Հե-
 ղինէն
 Թօգն ի գլուխը ապրիւշիմէն
 Քսի ոսկիէ շուրջառը յ'ուսին
 Զեռքին մէջ ունի երկու ըեւեռը
 Մէկը սիրու սատանին,
 Մէկը՝ բերանը գաղանին,
 Հաւախօսուն, մէջ գիշերին:
 Մէր Տէրն մեծ տէրէ,
 Կուգայ դատաստօն,
 Կը նստի փառաց աթոռը,
 Կուտոյ պատասխան,
 Օմեզ կը խրատէ,
 Սուրբ աւետարան,
 Երանի, արդարաց,
 Վայ, մեղաւորաց:
 Ունիմ ձարակ, չունիմ
 Եղել եմ գերի,
 Գլխիս բարձ չ'ունիմ,
 Աերքևս խսիր,
 Տիյամայ սուրբ Աստվօծին
 Դուն հասիր
 Իրանի, արդարոց,
 Վայ, մեղաւորաց:
 Եկան, եկան քաղաքէն,
 Եկան, իշան աղբիւրը,
 Կապեցին երեք քուրակ,
 Տնկեցին երեք խաչ
 Մէկը՝ սրտիս,
 Մէկը՝ մարիս,
 Մէկը՝ տունիս,
 Բարի լոյս:

ՕՐՅՆՈՒԹԻՒՆՔ

- 1 Աստվօծ օրհնէ: Աստուած օրհնէ:
 2 Ֆող Ճարկես, ոսկի դառնու: Աղ Ճանկես ոսկի դառնայ:
 3 Լիս իշնու մէրտ ու պապուտ Լոյս իջնէ մօրդ հօրդ հոգւոյն,
 հիգին, խունկ ու մոմ փուսնի: և խունկ ու մոմ բուսնի:
 4 Կանաչ ու կարմիր թագաւոր մը Կանաչ ու կարմիր թագաւոր մը
 նոս ըլլաս (եթէ տղայ է օրհնեալը):
 5 Կանաչ ու կարմիր հօրս մը նոս Կանաչ ու կարմիր հարս մը ըլլաս:
 (եթէ աղջիկ է օրհնեալը):
 6 Կոնօկիդ գիտինը չի գոյ կոնակդ գետին չկայ:
 7 (Օ)ձօխիդ վառի: (Օ)ձախդ վառ մնայ:
 8 Աստվօծ բօնտ ըռոստ բիրէ: Աստուած գործդ յաջողէ:
 9 Աստվօծ բօնիդ, գուրծիտյաշ Աստուած գործիդ յաջողութիւն
 ջողութիւն տցի: տայ:
 10 Եշօթը տղի պօպ նոս: Եշօթը տղու հայր ըլլաս:

ԱՆԷԺՔ

- 1 Եշքիդ կուրնօ, թեհատ թուլնօ, Եշքդ կուրնայ, թեհերդ թուլնայ
 2 Մօտիդ կրծես, Մատդ կրծես,
 3 Հիգիդ խանձի, փոյդ խանձի, Աղոդիդ խանձի, փորդ խանձի
 4 (Օ)ձօխիդ թքնում, իրեսիտ (Օ)ջախդ թքնեմ, երեսդ թքնեմ
 թքնում
 5 Աւ ջույ կոխս, Աւ ջուր կտրիս
 6 Գրեղը տանի, սատանան տոնի Գրողը տանի, սատանան տանի:
 7 Գիմանէ գիտին ասնիս, Գիմանէ գետին անցնիս:
 8 Ուղ'ուկ, սըպըտան չիննես, առտու չեննես*):
 9 Եէք էքմէկի մոհտոճ նոս, Եի հացի կարօտ ըլլաս:
 10 Ի ժամուն դուռը մուրօս, Եկեղեցւոյ դուռը մուրաս:
 11 Կոնակիդ վիյան իշտօս, Կուակիդ վրան երթաս:
 12 Մայդ ու պօպիդ վըյատ խշլշօ, Մայրդ ու հայրդ վրադ լան:
 13 Պապուտ ի գօնկը... Պապիդ գանկը... *)
 Ազնիւ ընթելցող, վերսյգրեալ պարբերութիւններէն ինչպէս

*) Այսպէս ընագրում

**) Օրհնութիւններից և անէֆքներից երկուաը գտնվում են ալ. Ալլահվէրտեանի
 «Ռնիա կամ Զեյթուն» գրքում: Մենք նոյն կոտրները սյստեղ պահեցինք, որովհետեւ
 աւելի լիակատար են և տարբեր արտասանութեալը գրուած:

կը տեսնուի, Հաճընոյ լեզուն, իւր իսկականէն շատ աղուաղեալ
է, բայց իւր ժողովրդեան հայութեան ոգին անարատ պահուած է,
և պիտի պահուի յաւիտեան:

Օր. Հայկակոն-Հ. Ձ. Պ. Պայամեան

10 սեպտ. 1888

ի Հաճըն



ԱՅՆԹԱՊԻ ՀԱՅՈՑ ՀԻՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՆՈՒՆԴ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Երախային ծնելէն անմիջապէս յետոյ դայեակը կ'ըսէ. «Հաց
մի բերէք, որպէս զի մանկան բաղդը առատ լինի», և առած հացը
ինք իր գլուխը դնելով՝ նորածնին պորտը կը կտրէ մկրատով, յու-
րում կը խօսի իր գիտցած աղօթքներէն, յորոց շատը ինքնաբուխ
են, զոր օրինակ, վշտերու դարման, ցաւերու առողջութիւն, հի-
ւանդաց բժշկութիւն, տրտմելոց միմիթարութիւն, վաստակոց լիու-
թիւն, պարտականաց ազատութիւն, փորձանաց անհետացում, ո՞վ
Տէր, չնորհեա չունեցողաց ևս, ևն: Յետ աւարտման աղօթից կ'աղէ
զնորածինն՝ կզմուխով (մահլէպ) խառն աղով, սոյն գործողութեանց
միջոցին տան մեծերը, «տղուն աղը շատ նետէ, կըսեն դայեակին—
որպէս զի չը փոփի երախայն» դայեակն մանկիկը խանձարուրով
պատաժ կը յանձնէ տղացկան կնոջ ու կը հարցնէ «թեթև է մի,
ծանր է մի» որ կը պատասխանէ «թեթև մեղքդ». յետ այսու կը
չնորհաւորեն մանկան ազգականները, այսպէս, ծնունդը բարի ըլ-
լայ, գալը չնորհաւոր, ևն: Դայեակն զերախան կը լուայ առաջին
անգամ կաթով կամ մածունով: «Դայեակը տղացկանին աղդակա-
նաց ականջը կբաշէ, այսինքն աւետիս կ'ուտայ և ի փոխարէն
ընծայ կ'ստանայ, ծննդեան երրորդ օրը կը խարեն մանկան վզին
ետեր, սրտին վրան, կոնակը, կոճղերը, ծունկերը, որպէս զի տո-
կուն ըլլայ: Տղացկանին մայրը օրորոց կը զարդարէ, գեղեցիկ հիւ-
սուածներով վերմակներ, հագուստներ կը պատրաստեն, ամենամեր-
ձաւոր ազգականներն ալ անուշ ապուր, գտակներ, օղեր, ոսկիներ,
և ուրիշ ուտելիքներ կը բերեն ի նուէր:

Հետևեալ կիրակին դայեակըն՝ կնքահօր հետ կերթայ յեկեղեցի, ուր անկիւն մը կ'սպասեն որ դայ երախաները քրիստոնէացնել: Ահա տէր պապան եկաւ, դայեակն զերախան կ'ուտայ կնքահօր գիրկը, որ կը կանդնի քահանային առջելը, ու նորա հրամանաւ երեք ծունկ աղօթք կընէ: Տէր հայրը մկրտութեան արարողութեան առաջին մասը յետ կատարելէ կերթայ յաւագան, ուր աղօթելով կը պատրաստէ ջուրը ու կ'սպասէ մանուկն: «Կայեակն կը մերկացնէ զերախան ու կը յանձնէ կնքահօր որ կը տանի զայն յաւագան: Քահանան կը հարցունէ կնքահօր, «Երախայն զի՞նչ կը ինդրէ» որոյ պատասխանը կնքահայրը շատ անգամ չը գիտեր, և ժամկոչը կամ քահանան ինք իւր հարցմանց կը պատասխանէ, կնքահայրն իւր բեռնակրութեան պաշտօնը վարելէ յետոյ կը վերադարձնէ զերախան առ զայեակն, որ համբուրիւ կ'ընդունի զայն, ու աղօթելով կը հագուեցնէ նորա հագուստը, կը խանձարուրէ և կուտայ ի գիրկ կնքահօր՝ որ մոմ ի ձեռին կը հետեւի արարողութեան մնացեալ մասանց: «Չնօղաց ոմանք, յետ աւարտման եկեղեցւոյ կը հրաւիրեն ի տուն, քահանաներ կամ միայն մկրտիչ քահանայն, լուսարարը, տիրացուները, ժամկոչները: Տէր պապան շուրջառն հագած զերախան կուտայ կնքահօր որ մոմ ի ձեռին կը կանդնի յոտս, կը կենայ տղացկանը ծանր հագուստներով նորա մօտ, կը բուրեն ինկեր, կ'երգուին շարականները, որոց մէջտեղը քահանան կառնու զերախան կնքահօրմէն ու կուտայ մօր գիրկը: Արարողութեան կը յաջորդէ սեղանը, ուր հանդիսականք օղի կը քամեն վասն կենաց նորածնի, բայց մանչ տղու ինջոյքը տարբեր կը լինի քան աղջիկ տղունը, որոյ ծնունդը պաղ ընդունելութիւն կը գտնէ ընդհանրապէս: Մկրտութենէ եօթը օր վերջը դայեակն դարձեալ կերթայ որ մանուկն միւռոնէ հանէ: «Նորածինը եթէ տղայ է խընակեր կը բուրէ, երկու մոմ կը վառէ, պղնձեայ տաշտի մը եղերքը կը փակցնէ, ու իր սովորական աղօթքով գործողութիւնը կը լըրացունէ:

Տղացկանի մայրը կուգայ, կը հրաւիրէ քառասունքէն 4-5 օր առաջ նորա զոքանչը՝ որպէս զի քառասունքէ հանէ տղացկանը. կիրակի առաւաօտուն եկեղեցի կ'երթան տղացկանը, մայրը, զոքանչը ու ոմանք յաղգականաց, պատարագէն վերջը լուսարարը երկու մոմ կը բերէ կը յանձնէ դայեակին որ պէտք եղած արարողութիւնը կը կատարէ հանդերձ քահանայիւ: Այսպէս կը քակուի քառասունքը:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆԱԽԱԳԱՇԱՐՄՈՒԻՆՔ

Տղացկանը առանձին չեն թողուր տան մէջ, վախնալով թէ ոգիներ (ալ) չը պաշարեն զինք:

Տղացկանը՝ երբ դուրս ելնէ՝ աւել մը կը դնէ մանկան գլխուն վերևը, որպէս զի քառսունք չը կոխէ: Վանկան վրայէն ոչ ոք անցնելու է, քանզի կը մեռնի: Եթէ մանկան տունը գիւղացի մը կամ ջաղացքէն եկող մին և կամ կոշիկով (փոսթալ) մէկը մտնէ, մանուկը կտանեն ու նոցա գիրկը կուտան, որք ևս մօրը կը յանձնին: Երբ մանուկը ո և է հիւանդութենէ տկարանայ, քառսունք կոխեց կ'ըսեն ու իբր դարման կը հշուն աղով, երկաթով, արծաթ թելերէ բանուածներով ևն, երեք ուրբաթ իրարու վրայ, կէսօրուան Էպոնի (մահմետական մզկիթին աղօթք) ժամանակ: Ոմանք ևս կեփեն մանուկն հետևեալ կերպիւ:

Երեք քար կը դնեն վառարան մը կը շինին, ուր առանց կրակի փայտեր կը դնեն ու բուքով կը փչեն իբր իրօք վառած ըլլան: Կը դնեն կաթսան վառարանին վրան, կանանց մին կառնու մասնուկն կաթսային մէջն կը նստեցունէ. յայնժամ մի քանի այլ կառայք կը հարցնեն «քա՛, քցյր իմ, ի՞նչ կընես.—մարդու միս կամ մեր տղան կեփեմ կոր—ի՞նչ կըսես, տղան կեփի՞—հապա քառսունք քառսունքը կը կոխէ, կ'ըսեն ու մանուկը կառնան կը փախչեն:

Եթէ քառասունքի մէջ մի մարդ մեռնի մանկուն տունը, առարկելով թէ մեր տղան հանգուցելցյն քառսունքը կոխեց, ուրբաթ օրը կէսօրին մաս մը հող կառնուն մեռելցյն լուացուած տեղէն, եօթը Նորնէնի (մէջտեղը փորած երկայն բարակ մի քար՝ զոր կը զետեղեն տանեաց եղերքը, ուսկից անձրեկ ջուրը կը հոսի) տակէն եօթը քար, եօթը աղբանոցէն եօթը ափ աղք կը ժողովէն, զորս կեփեն մի մաս ջրով. սոյն խաւնուրդի եփածէն դոյլ մը կը տանին ի գերեզման խեղճ հանգուցելցյն, որոյ քարին վերայ կը մերկացնեն մանկիկը ու նոյն աղբեղութեամբ կը լուան:

Երբեմն ևս կտոր մը փերփերը (բանջարեղէն) ջրով կ'եռացնեն, մանկիկը կը նստեցունեն Նորնէնին տակը աւելի մը վերայ, գլուխը քամոց մը կը դնեն, ուսկից ջուրը թափելով կը լուան խեղճ հիւանդը: «Ասե քայլի գլուխ մը կը փնտուեն, զոր կը տանին ի գերեզման, ուր զայն մանկան գլուխը դրած կը լուան զինք:

Եթէ մանկիկ մը հազ ըլլայ, դի՞նք կը լուան չուանով խեղ-
դուողի մը գերեզմանաքարին վերայ, ու ամանով մաս մի կը վե-
րագարձնեն ջրէն, զոր կը խցունեն մանկան, մինչեւ որ մանուկը
իրենց կարծեցեալ առողջութիւնը գտնէ:

Հազ ունեցող մանկիկը երբեմն ևս «մորթել» կուտան մսավա-
ճառի որդի եղող մսավաճառի մը, որ կը դնէ թաշկինակ մի ման-
կան կոկորդին վերայ ու կը քսէ իր դանակին կոնակը երեք ան-
դամ, մորթել ձեւացունելով։ Եթէ մանկիկը շատ լայ՝ շապիկը
տանիքներու լողաքարին կ'անցնեն ուր կը մնայ երեք ուրբաթ,
յետոյ կը հանեն տղուն կը հագնեցնեն։ Եթէ երախան նեղու-
թիւն քաշէ օրորոցը պառկելու, մին կանանց կառնու զայն ու կը
պառկեցնէ տան սեմը, վրան կտաւ մի կը ծածկէ, ուրիշ կին մը
տան աղբերը մանկան վրայ կաւլէ, պառկեցնողը մանուկը կառնու
ու կը փախչի՝ «ալ պիտի քնանայ» լսելով։

Տակաւին կան անթիւ նախապաշարմունք մանկան կենաց մի-
ջոցին, զորս թուելը կ'շարունակենք «Արաքսին» մէջ. վերոյիշեալ
նախապաշարմունք թէւ 50-60 տարի առաջ գործածական էին,
սակայն այսօր ևս մեծաւ մասամբ ուամկական գասուն մէջ կը վարէ
իւր իշխանութիւնը։

Բայց եթէ կայ մի ուրախալի կէտ, եթէ կը փայլի մի յու-
սոյ նշոյլ նոքա են արականաց և իդականաց գպրոցք, որք բուռն
ճգամը. կը մարտնչեն լնդդէմ նախապաշարմանց՝ սպառազինեալ
ուսման զինուք, ու կը զարդարեն զվիտս ազգային մանկտեաց, ազ-
գային ու կրօնական սուրբ զաղափարներով։ Կը յուսամք որ
պիտի յաղթանակը պարզեն ու ի կորուստ պիտի մատնեն զայնս,
որք ի վաղուց հետէ կաշկանդած են զասպարէզ մերազնէից մտաց,
որք յաճախ նսեմացուցեր են կրթական ու բարոյական լոյսը։

ԱՂԱԽՎԱԼԵԱԼ ԱՆԱԽՆԵԲ

ԱՐԱԿԱՆ ՍԵՅ

Գէորգ.	Քէվօ, Կիվիլի, Կիվրիկ, Կիկօ,
Սարգիս.	Սագօ,
Կարապետ.	Կըօպօ, Կարուճ. Կարօ, Կըպըճ:
Յարութիւն.	Կըթին, Կըթօ, Կըթուշ, Կըթուշ:
Յակոբ.	Կպուճ. Կպուճան, Կկոպճան, Կպէ, Օ՛պ
Աբրահամ:	Կպօ, Կպելի, Կքօշ Կքիկ:

Ատեփան,	Տէփան, Բանըս, Բանօ,
Մանուկ,	Մանիկ
Յովհաննէս,	Օհան, Օվանէս. Օհաննէս, Ա անըս,
Վւետիս,	Վւէս, Վւտիք, Վւտիս, Վւէտ,
Կերսէս,	Կերսօ, Կինօ, Կանէ, Կինօձ,
Գետրոս,	Գետիկ, Գետօ,
Մարտիրոս,	Մարտօ.
Վստուածատուր,	Վստուր, Վտուր.
Սողոմոն,	Սօմոն, Սօղմոն,
Գրիգոր,	Կիգօր, Կիրգօր,
Խաչատուր.	Խաչօ, Խէչիկ, Խէչէր,
Դանիէլ,	Տանէլ,
Դաւիթ,	Տաւիտ, Տավօ, Տավուտ,
Թռվմաս,	Թռումաս. Թռումա,
Կիրակօս,	Կիրօս,
Մկրտիչ,	Մրտիչ,
Կազարէթ,	Կազար, Կազիկ,

ԻԳԱԿԱՆ ՍԵՐ

Հռիփսիմե,	Հօրօմ, Հօրօմումու, Հօմօս, Հօրիկ:
Մարիամ,	Մայրամ, Մայրիկ, Մայրօ, Մարենի. Մէննուշ:
Դշեղյն,	Տուշղուն, Տուշուկ:
Զարուհի,	Զարիկ:
Վարդուհի,	Վարդեր, Վարդենի, Վարտէ:
Եղիսաբէթ,	Եղսա, Եղսօ, Եղսափիթ:
Փառանձեմ,	Փարեմ:
Ովսաննա,	Ոննա, Ոննօ. Ոննիկ, Ան, Ան:

Յաւ ի սիրտ կը յայտնեմ, թէ այժմ ոչ թէ միայն վերոյիշեալ աղաւաղեալ ազգային անունք անգործածելի կը մնան, այլ և ուղիղ անուանք ևս, որք տեղի կուտան կարգ մը օտար անուանց, զորս գործածելը նորաձեռութիւն մ'է դարձած. մանաւանդ բողոքական եղբարց մէջ:

Տայց կրկին կը յուսամք որ նաև պիտի աղաւաղմք սոյն երկրորդ զեղծումէ, որ վատթարագոյն աղաւաղում մ'է, ի շնորհս անուանց յուղակին որ զրկուեցաւ ի պատրիարքարանէ Ա. Պոլսոյ:

Պէտք Ա. Մահմէտան

Կիլիկիոյ ժողովրդական Ազօթքներ Եհ Անէծքներ

ՀԱՅ ԳԵՂՉՈՒԿ ՄԱՍԻ ԱՊՕԹՔԸ

Պօղոս, Պէյոս, Ծնտանօս,
Ալի վալի մեռելոց:
Ալի վալի գերեզմանին,
Գևտնին տապանն իջեցուցին:
Գևտնին վըրայ հաստատեցին,
Ելան լեռն Մովսէսին,
Մովսէս գնաց աշակերտին,
Եշտէ եկաւ Յիսուս որդին.
Են խըրէղէն խաչելութիւն,
Են խաչը՝ խաչ է մում եղէր,
Են պատըրագը՝ պատըրագն է լուսեղէն:

Երէք պիակէր մի ափիս,
Մէկը՝ սիրտը սատընին,
Մէկը՝ բերան գազանին,
Զը գայ պահէ եփնիկողին:
Լուսիկ, դուն քուն ես թը արթուն:
— Ու չէ քուն եմ, ու չէ արթուն:
Վրիստոս իջաւ հայրենիք,
Կըյրեց երէք թուփ վարդենիք
Խըրկեց սրբոց առաքելոց:
Մէկը Յիսուս, մէկը Վրիստոս,
Մէկը Օհան Ասկիրերան:
Մէկը դուռս կը պահէ,
Մէկը երդիքս,
Մէկն ալ հոգուս պահապան:
Ոչ որ այս աղօթքը օրն երէք անգամ յիշէ,
Ըսլած իրէն մեղքը չը յիշէ:

ՁՆԱՆԱՈՒ ԱՊՕԹՔ

Լլահ պաշ, մարիամ մայր եօլտաշ,
Առւրբ Աարգիս եօլտաշ:
Գոռւռը գըռան ետին գոց
Ալան երթիկը ծածկոց,

Ով դուռը դայ, կապուի,
Ով երթիքն ելլայ, կարկամի:

ԶՎԱԽՆԱՌԻ ԱՂՋԹՔ

ՍԵՆՔ տուն մը ունինք երկըթէ,
Պատերնա նա՝ պողպըտէ,
Երեք երեք պօղ ձիաւոր,
Երէքն ալ կանաչ դիմաւոր,
Ուր կերթաս ան դուռն ի տան,
Որ չի վախես սիրտը փորդ *):

02 ԿԱՊԵԼՈՒ ԱՂՋԹՔ

Կապիմ ըզ օձը, կապիմ զկարիճը,
Վնդանդային օձը, կըճաւոր կարիճը,
Ութը մատովըս,
Երկու բըդնըկովս,
Վրիստոսի ձիուն ձարովն,
Լուսաւորչայ աղօթքովն,
Մարիամ մօր արդար կաթնովն:
Վռտոնց մանուկը գոտին կապէ,
Ոչիսարը դարն ելլայ:
Մայր ճշմար, մայր ճշմար, մայր ճշմար:

Յ. Զ.

Վահիմ ատիմ ճին ատիմ,
Փէտ խնծորին փուշատիմ.
Կուտ ուտէ, կանկար ձգէ,
Հայու որդին (?) հաւկիթ ածէ:
Վլճին, կուլճին,
Տափլստըկին
Չըր տիկին
Լու ուտէ
Վայ ելնէ:

Գլբժ

1888. Վարդան
Այնիժապ.

*) Ճերկես հասկանալու է. Ուր ես գնում. — (այն տան դուռը,
որպէս զի սիրտը փորումդ չվախենայ):

Յ. Կ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԵՐ

ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ

Ես սիրում եմ անուշ գալուն,
Իւր արեգակ, իւր զեփիւռ
Եւ բնութիւն իւր զարդարուն
Գեղեցկութեամբ համասփիւռ:
Իայց և սրտիս երբէք օտար
Զէ ձմեռը տիրաբեր,
Ո՛չ նրա բուքը սարսափահար,
Ո՛չ երկնքի մութ ամակեր:

Ես սիրում եմ Շպողնի
Քնարի ձայնը անուշիկ
Եւ սիրահար վառ սոխակի
Վաղորդեան մեղմ դայլայլիկ:
Իայց և սրտիս երբէք օտար
Զէ թշուառի լոիկ կոծ,
Ո՛չ ոլոար կայծակնահար,
Ո՛չ ովկիան ալեկոծ:

Ես սիրում եմ արշալուսի
Գեղեցկափայլ ձաճանչներ
Եւ կենաբաշխ սիրուն կուսի
Սիրահամբոյր հեղ աչեր:
Իայց և սրտիս երբէք օտար
Զէ վառ կոռուի դաշտի ահ,
Ո՛չ շառաջը սարսափահար,
Ո՛չ հայրենեաց համար մահ:

“Ասպ-Դաս”



THE HISTORY OF THE
MAGISTERIUM.

BY JAMES HALL.

IN THREE VOLUMES.
LONDON:
PRINTED FOR THE AUTHOR,
AT THE END OF FLEET STREET;
AND SOLD BY J. C. RIBET,
T. C. DUNNE, AND J. J. O'LEARY,
AT THE END OF PEGUERSON'S ROW;
AND BY T. S. COOPER,
IN CHURCH-YARD; AND
BY H. C. COLLIERS,
IN SWEENEY'S COURT;
AND BY G. BELL,
IN PATERNOSTER-ROW;
AND BY T. BOWEN,
IN CHURCH-YARD;
AND BY T. DODS,
IN PATERNOSTER-ROW;

WITH SEVEN ENGRAVINGS
BY J. L. COOK,
AND A PLATE
BY J. W. COOK,

PRICE, THREE SHILLINGS.



ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԱԽՆԱԶԱՐԵԱՆՑ

Հրատ. «Վագար» Հանդիսական.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

Խթէ վեր առնենք ներկայ գարի մեր եկեղեցական գործիչներին, սկսեալ նոյն խակ Յովսէփ Երկայնաբազուկ կաթողիկոսից՝ մենք կհանդիպենք մի անձնաւորութեան, որը իր սաստիկ սերի պատճառով դէպի ազգային շահերը՝ իրենով է զբաղեցնում ամբողջ երեսուն տարի Ոռուսաստանի, Տաճկաստանի և եւրոպաբնակ հայ զարգացած գասակարգը:

Եյս անձնաւորութիւնն, արժանայիշատակ Արագետ վարդապետ Շահնազարեանցը, ծնուել է այն երկրում—Պարսկաստանում—որտեղից երեան են եկել անմահ Մեսրովը Թաղիաթեանցն, Ուաֆֆին և ուրիշ շատ նշանաւոր գործիչներ, որպիսիք են Մկրտչ Լշմին, Ազանուր, Մուրատեան, Ուափայելեան և այլն, որոնք կարծես կորած էին հայութեան համար իսլամական անապատի մէջ, մինչդեռ գործա մոխրի մէջ թագցրած, խարցյիլ գեր կատարեցին ընդհանուր ազգի վերաբերմամբ, որ թէպէտ գանվում էր իր հայրենիքում, սակայն այն ժամանակ գետ ևս խարխափում էր խոր խաւարի մէջ:

Արագետ վարդապետը ծնուած է Պարսկաստանի Համատան քաղաքում 1814 թուականին *), Մայիսի 14-ին աղքատ ընտանիքից: Երեխայ ժամանակ նորան բերում են Եջմիածին և յանցնում վանքը կրթութիւն առնելու: Տարբական

*.) Այսպէս է արձանագրուած նորա տապանաքարին վերայ: Պակայն բարեկրօն Վէորդ քահանայ Վարձրունու մօտ Պոլսում մենք տեսանք Շահնազարեանց վարդապետի մի իւղաներկ պատկերը, որի հակառակ կողմը ոռուսերէն լեզուով գրուած են այս տողերը. «Архимандритъ Карапетъ Шахпазаровъ на 34 году жилъ. Рисованъ генералъ-майоромъ Назымозымъ въ 1844 году», այսինքն «Արագետ վարդապետ Շահնազարեանց 34 տարեկան հասակում: Ակարեց գեներալ մայոր Արագիմով (Արագիմով?) 1844 թուին» որից հե-

ուսումը ստանալուց յետոյ նա մտնումէ ժառանգաւորաց զըպ-
րոցը, որտեղ մինչև աւարտելը ժբաջան աշակերտներից մէին է
լինում: Նորա վարքի և կինսագրութեան մասին Եջմիածնում
և Թիֆլիսում մինչև Պոլիս մեկնելը՝ բաւական պաշտօնական
գրութիւններ կան Ա. Եջմիածնի Սինօդի գործերում, որոն-
ցից արժէ. Սահակ աբեղայ Ամատունին, մեր խնդրով, բա-
րիսիրաբար քաղելէ Հետեւեալ աեղեկութիւնները, որոնք մենք
մէջ ենք բերում բառ առ բառ:

«Ճի՞ն ժամանակ երբ Ա. Եջմիածնի ժառանգաւորաց դպրո-
ցում գտնվում էին այնպիսի աշակերտներ, որոնք գովելի վար-
քի տէր էին լինում, և Հետեւապէս ունենում էին գիտութիւն,
սովորելու բնաձիր շնորհ և տաղանդ, այդպիսիները իր ժամա-
նակին յատուկ որոշվում էին Ա. Սինօդի կամ կաթողիկոսի
կարգադրութեամբ և Ա. Եջմիածնի ծախիքով ուղարկվում էին
զանազան ուսումնավայրեր իրենց ստացած ուսումը աւելի ևս
կատարելագործելու, որպէս զի աստագային իրենց բեղմնաւոր
ուսմամբ աւելի ևս շահաբեր լինին Ա. Եթուին:

Վյա կարգի ընդունակ, յառաջագէմ և բարեբարոյ սաներից
մէկը լինելով և Կարապէտ Շահնազարեանցը, երբ նա 1831-35
թիւը աւարտում է իր ուսումը նոյն ժառանգաւորաց դպրո-
ցում, իր բարեբար և պաշտպան՝ Նրեանցի Յովսէփ արքեպիս-
կոպոս Տէր Մարուքիանցի ինդրանօք և միջնորդութեամբ,
Ա. Եջմիածնու ուղարկում է նրան իր ծախիքով Թիֆլիս Եր-
զանովների զիշերօթիկ վարժարանը ուր 1835-37 թիւը կատա-
րելապէս սովորելով միայն ոռւսաց լեզու և թուաբանութիւն,
դառնում է Եջմիածնի և 1839 թուին սարգաւականալով Սի-
նօդի հրամանաւ նոյն թուի սեպտեմբեր 22 ին կարգվում է
ժառանգաւորաց դպրոցի վերայ թէ տեսուչ և թէ ոռւսերէն
լեզուի, թուաբանութեան, թարգմանութեան և վայելագլու-
թեան դասատու, և շարունակում է սյս ծանր պաշտօնները

տեսումէ, թէ Շահնազարեանց ծնուել է 1810 թուին և ոչ
1814-ին, ինչպէս փորուած է նորա գամբարանի տապանաքարի վե-
րայ: Ա երջին ենթագրութիւնը աւելի հաստատութիւն է գտնում
և նորանով, որ հանգուցեալ վարդապետը մեռնելու օրերը կրկնած է
եղել վերսյիշեալ Գէորգ քահանայի դատեր, թէ ինքը 54 տա-
րեկան է:

մինչև 1842 թ. նոյեմբերի 1-ը որի մէջ Պակար *) Եղիազար, Յովհաննէս և Ստեփան սարկաւագների հետ ձեռնադրովում է արեղաց Ահսարացի Բարսեղ ալքեպիսկոպոսից:

Խոկ երեխի թէ քառասունք պահելու պատճառաւ նա այլ ևս չէ շարունակում իր ուսուցչութիւնը մինչև 1843 թուի մարտի 8-ը, որ Ամենօդի Համամատ նորից ստանձնում է նոյն պաշտօնները և ամենայն արիածանութիւնամբ կատարում մինչև նոյն թուի սեպտեմբեր ամիսը, որի մասին ինքը Տաթև յաջորդ եղած ժամանակի, նոյն տեղի Շէհայր զիւղեց առ Ամենօդն ուղղած մի խնդրագրով խնդրում է նրանից թէ իր այդ վեց ամսեան վարած պաշտօններն ել անցնուի իր ծառայութեան յուցակի մէջ, և թէ գրանց համար տրուի իրեն օրինաւոր վկայագիր:

Երեանի թեմական առաջնորդ՝ Ստեփաննոս ալքեպիսկոպոս Նրգութեանց ի նկատի առնելով Տաթևի վիճակի յաջորդութեամբ միմեանց փոխարինող Ենտօն և Գրիգոր վարդապետների թշր ընթացքը և նրանց անհոգութեան երեսից ժողովրդեան քաշած մեծամեծ վնասները, 1843 թ. նոյեմբերի 17-ին խնդրում է Ա. Ամենօդից, որ Կարապետ արեղաց Շահնազարեանցին կարդէ յաջորդ վերջնիս տեղը, «Ըս. ՚ի ածելոյ ՚ի լաւագօյն գրութիւն զիսանգարեալ յաջորդութիւնն Տաթեւու»:

Սրբազն Ամենօդը յարգելով նոյն եպիսկոպոսի այս արդարացի խնդիրը, նոյն թուի գեկտեմբերի 20-ին կարգում է Շահնազարեանցին Տաթևի յաջորդ. որին և լիակատար Հրաման է տալիս թէ միջամտել տեղւոյն հոգեւոր կառավարութեան քարտուղար Պօղոս Գէորգիանի և ոմն Մկրտիչ և Ենտօն վարդապետների վերաց բացուած քննութեանը, և թէ գործի վերջին հանգամանքը մանրամասն դրով հաղորդել կոնսիստորիային:

*) Վզգիս այժմեան քաջարթուն Հովուապետը: Խոկ միւս երեք սարկաւագները, որոնք եպիսկոպոս ձեռնադրուելով ժամանակին Երեանի թեմական առաջնորդներ եղան, առաջինն՝ էր առնջեցի Եղիազար արքեպիսկոպոսը, երկրորդը՝ վաղարշապատցի Յովհաննէս եպիսկոպոսը, իսկ երրորդը՝ վաղարշապատցի Բագալեան Ստեփան եպիսկոպոսը:

Եւ որովհետև աբեղային ըստ օրինաց իրաւունք չէ արվում յաջորդ գնալու մինչև մասնաւոր վարդապետի իշխանութիւն չունենայ, այս պատճառուաւ Ամիսոդի ատենապետ Բարսեղ արքեպիսկոպոսի բերանացի հրամանաւ, նորա բարերար Յովսէփ արքեպիսկոպոսը՝ նախ քան նրա Տաթե մեկնելը, նոյն թուի գեկտեմբերի 19 Վաղարշապատի եկեղեցում տալիս է Հայնաղարքեանցին մասնաւոր վարդապետութեան աստիճան: Իսկ այս բանը ծանր գալով պրօկուրօրի պաշտօնակատար Ա. Մատինովին, զրաւոր բողոքում է Ամիսոդին, իր ինչու առանց Ամիսոդի պաշտօնական օրադրի վերոյիշեալ եպիսկոպոսը հարկ է համարել իրեն ինքնաղբուխ նրան մասնաւոր վարդապետութեան աստիճան տալու. և թէ ինչու ձեռնադրել է նա Վաղարշապատի եկեղեցում, և ոչ Եջմիածնում: Որին Ա. Ամիսոդը յայտնում է թէ, իր ձեռնադրուող անձը մշտնջենաւոր զաւակ և որդի է համարվում Ա. Եջմիածնի, դա փոյթ չէ թէ նրա ձեռնադրութիւնը կատարուել է կամ բերանացի կամ զրաւոր հրամանի, իսկ թէ ինչու Եջմիածնում չէ ձեռնադրուել այս մասին էլ յայտնում են իրեն, որ Եջմիածնում ձեռնադրութիւն անելու իրաւունքը ունի միայն կաթողիկոսը:

Վերջապէս կր նա հասնում է իր պաշտօնատեղին և արդարապէս հովուում իր հօտը, Տաթեի Առիխ գիւղի հասարակութիւնը տեսնելով նրա օր աւուր կատարած այս միրակ գործերը, որ նա անընդհատ Արաբազի տարիներով անհաշտ և խոռվասէր միլիքներին հաշտեցնում և խաղաղեցնում է, պահում է իրենց եկեղեցիները մաքուր և պայծառ և ինքն էլ վարում է մարդավայել կեանք միշտ հետեւով ուսման և ուսում աւլով ուրիշներին, այս մասին 1844 թուին տասը նշանաւոր մելիքների կնիքներով վաւերացած մի բազմաստուրագիր ինսդրագրով զիմում են Ա. Ամիսոդին, որ աչք ունենայ իրենց սիրելի հովուի վերայ և ի պատիւ իրենց վարձարքէ նրան մի որ և իցէ բանով: Իսկ Ամիսոդը յարգանոք ընդունելով նոցա այս ինդիբը, խոստանում է անյապաղ նրանց ցանկութիւնը կատարելու:

Երեք տարի նա մնալով Տաթե, իր պարապմունքը լինում է ոչ միոյն այնտեղի տղէտ և անկիրթ ժողովրդի մէջ ուսման սէր և սերմունք ցանել, այլ և բարեպատեհ միջոց-

ներում այցելելով Սիւնեաց վիճակի նշանաւոր վանքերը, եթէ գտնում է նա այնտեղ պատմութեան վերաբերեալ հին և նշանաւոր ձեռագրներ, զդուշութեամբ օրինակելով պահում է իր մօտ: Իր ձեռքում ունեցած այսպիսի ձեռագիրներից մինն էր և Դաւիթ բէզի պատմութիւնը, որի ստոյգ օրինակը առնելով Պետքիւզի հարիւրամեայ Ստեփաննոս աւագ քահանայից, երբ վերագառնում է Խջմիածին, Շահիսաթունեան Յովհաննէս հայիսկոպոսի ձեռքով գնում է մատենադարան. բայց ում ձեռքով վերանալով այս անգին մարդարիսոր մատենադարանից, նա ցաւում է հոգւով չափ որ այսպիսի ցաւալի կորուստ ունեցաւ իր գառն աշխատանաց վաստակը. և սորա մասին աշա ցաւ ի սիրո նա ինչ է գրում իր՝ 1859 թուին Փարիզում հրատարակած Օլբելիան պատմութեան մի ընդարձակ յառաջաբանի մէջ. «Երկս այս որ (եթէ մուծեալ էր ի տիպ) կարէր սփոել լցու մեծ ի վերայ նահանգին Սիւնեաց ըստ բազում գլխոց, և ուղղել զվրիպակս բազմաց ի մատենագրաց՝ ողորմելի իմն հանդիպեցաւ օրհասի: Ահազին զերօյ մի եկուլ զայն և անհետ արար առ յաւիտեան.... Յառաջ. եր: 8:

Տաթեկից վերագառնալով Խջմիածին, այստեղ Շահնազարեանց վարդապետի հոգն ու զբաղմոնքը ոչ այլ ինչ են լինում, բայցի զբականական անձնամաշ աշխատութեամբ իր օրերն մժնացնել և պատրաստուել յատկապէս մի ցանկալի նպատակի համար, այն է օր առաջ Ա. Խջմիածնից մի ուսումնավայր գնալ որտեղ հնար լինի իրեն ազատ կերպով իր ծարտար մոքի և գլչի արդիւնքը մատուցանել իր սիրելի ազգին:

Երբ 1846 թուին երջանկայիշատակ Ներսէս Վշտարակեցին ընտրվում է կաթողիկոս, նրա սիրելի և յառաջադէմ մարդկանցից մինն է լինում և Շահնազարեանցը. և այս սիրելութեան կապը նա գնում է նրա հետ այն օրից, երբ նա իր օծման ժամանակ եկեղեցւոյ ահաւոր բեմից՝ ի լուր երևելի ոռւս աստիճանաւորների ոռւս լիզուով կարդում է մի իխստ սրտառուչ ճառ, որի ազգու մոքերից ավիրերան են մնում զրիթէ ամենքը: Բայց ափսոս որ այս սէրը երկարտուել չէ լինում: Հարախօս մարդիկ ձգում են նրան մարդաւէր հայրա-

պետի աչքից և այնուշեան ինքն էլ մնումէ յուսահատ և
անպաշտօն:

Իսկ իրը Ներսիսի առաջին միւռոն օրհնութեան ժա-
մանակ՝ որ կատարվումէ նոյն թուին, ինքը առիթէ ունե-
նում մտերիմ բարեկամ դառնալու ռուս Թերեցով գենե-
րալի հետ, որը կառավարութեան կողմից ուղարկուած է լի-
նում Հանդիսատես գտնուելու եկեղեցական այդ փառաւոր
հանդիսին, նորա խնդրանօք և միջնորդութեամբ մի ճաշկե-
րոյթի ժամանակ կաթողիկոսը ներումէ նրան և սեղանակից
անում իրեն:

Այդ իսկ ժամանակ մի ինչ որ գումար Ա. Եջմիածինը
ստանալիք է ունենում Նոլանդիսիցի բանկից: Ներսէս կաթո-
ղիկոսը, այդտեղ ուղարկելու և այդ պարտքը ստացող ոչ մի
յարմարաւոր և յուսալի անձը զգանելով իր միաբաններից,
իր ինքը 1847 թուին գնումէ Թափլիս, այդ իսկ նպատակի
համար տանումէ իր հետ և Շահնազարեանցին: Բայց Շահ-
նազարեանցին հակառակորդ մարդիկ կաթողիկոսի միտքը
յեղաշրջելով, խափանում են նորա երթը: Խւ կաթողիկոսն էլ
անձարացած կարգումէ նրան Թափլիսի հոգեոր կառավա-
րութեան նախանդամ: Իսկ մեր Ճարտար Շահնազարեանցը
վեճակային արդինքից գոյացած մի նշանաւոր գումար, իրը
8000 ռուբլի գնելով իր գրապանը և հիւանդութիւնը պատ-
րուակ բռնելով՝ ապաքինելու համար հրաման է խնդրում
կաթողիկոսից գնալ Բորժոմ, որտեղից և 1849 թուին լոե-
ռեայն փախչումէ Պոլիս: *)

*) Շահնազարեանցի բազմաթիւ քարոզները, որոնց վերայ
նա սովորութիւն է ունեցել իր ձեռքով մակագրելու նոցա ար-
տասանած տեղն ու ժամանակը՝ տալիս են անհերքելի և հետաքր-
քրական տեղեկութիւններ նորա կենսագրութեան մասին: Այս
քարոզների բնագիրները նոյնպէս և նորա ձեռագիւներից մի քա-
նին պահպան են Պոլիս Պալաթիայի վարժարանի մատենադար-
րանում, 831 թուահամարի տակ, որոնք 900 կտոր գրքերի հետ
վարժարանին նույիրել է Հանդուցեալ Ներսէս Պատրիարքը: Այդ
մակագրութիւններից, որոնք մենք արտադրել ենք բնագիրների
վերայից և որոնք վերաբերում են Շահնազարեանցի գործունէու-
թեան Ուուսաստանում, երեսում է, որ Հանդուցեալ վարդապետը

Թիֆլիսից փախչելուց յետոյ Շահնազարեանցին մենք
գտնում ենք Պոլսում, ուր նու ապրում է Յովհաննէս Պէջ
Դատեանի տան մօտ Եւսկիւտարում և նորա հետ յաճախ
տեսնվում է և լու ընդունելութիւն գտնում նորանից: Յովհաննէս Պէջի
մօտ Շահնազարեանց ծանօթանում է շատ առաջնակարգ անձանց, ի միջի այլոց, Արագետ ամիրայի, Տերոյենցի և այլոց հետ:

Պոլսում զանազան թաղերի շատ եկեղեցիների մէջ քարոզութեան պաշտօն է վարում, ինչպէս Պալաթիս, Կասպիւղ և այլն: Դեռ մինչեւ այժմ ականատեսները յիշում են,
որ հանգուցեալ վարդապետը իբր լուրջ խօսող և քարոզիչ՝
մեծ համբաւ և ընդունելութիւն է ունեցել ժողովրդի մէջ:

Վերջերը Շահնազարեանց նշանակվում է Պալաթիս քարոզիչ և այդտեղ կանանց պատարագին խօսած զրաբաւ խօսած քարոզիչ պատճէնը մինչև այժմ մնում է Պալաթիս աղդային վարժարանի մէջ:

Այս ասկաւաթիւ ուրախալից օրերից յետոյ, սեբազոր նորան վերապահած էր մի սխօլաստիկական պայքար տաճկահայ գործիչների հետ, այս ընտանի պատերազմը աւելի թիւրիմացութիւնց էր առաջ գտլիս, քան թէ էտիւն կետերում տարածայնութիւնից. որովհետեւ մէկ կողմից Շահնազարմեանց վարդապետը աւելի զարգացած լինելով, ուրեմն և աւելի ազատամիտ՝ ազգային—կրօնական գաղափարներից ներձնչուած՝ հակառակում էր ժողովրդականութիւն գտած կեղծ աւանդութիւնների և աւելորդապատշառութիւնների դէմ, գլխաւոր նպատակ ունենալով ազգը կրթել բուն քրիստոնէական բարոյականով և զսրգայնել եւբոպական կրթութեամբ. իսկ միւս կողմից տաճկահայ ամիրայական տգէտ խմբակը, որին

1830 թուեն եղել է Աթնե և այդ թուականի մարտ ամսի 9, 22 և 26 խօսել է զանազան քարոզներ: 1835-ին ի դիմաց Ա. Ղաջմիածնի միաբանութեան արտասանելէ մի ուղերձ կաթողիկոսի անուանակոչութեան առիմով: 1836-ին Մոսկուայում խօսել է մի ճառ Ա. Խաչին նուիրուած: 1850-ին թիֆլիսի հրապարակի մէջ խօսում է քարոզ՝ նոյնպէս նոյն թուականին ապրիլի 2-ին թիֆլիսի վանքի մէջ խօսում է մի ճառ, այս բնարանին վերայ «Բանք յաղթութեանական»:

առաջնորդում էին Մատթեոս եպիսկոպոսը և Տերյենց պատուելին, հայ աւանդութիւնները շփոթելով աւելրզապաշտութեան հետ՝ Հաջնազարեանցի ոգորմանց մէջ ահանում էր բողոքականութեան հոգի:

Եյսպէս Տերյենց պատուելին, որը վերոյիշեալ խմբի պարագլուխն էր, ապրելով աւելի նեղ շքանի մէջ և նիթարկուելով ժողովրդի աւելրզապաշտութիւնց հոսանքին՝ ծուռ մեկնութիւններ էր աւալիս Հաջնազարեանցի քարոզներին և զրուածներին, և չհասկանալով նոցա ոգին՝ մեզագրում էր նրան, իբր թէ նոցանում Հաջնազարեանց մերժումէ հայ եկիղեցական աւանդութիւնները, օր. Դաշանց թղթի աւանդութիւնը, որ Ոռուբէնեանց ժամանակ հաւանօրէն յօրինուած է լատինամոլ կղերականների ձեռքով ուստի և Միիթարեաններից պաշտպանվում է, իբր հարազատ զրուածք Ազանթագեղոսի ժամանակակից, այս թուղթը, Միիթարեանց հետեւելով՝ միամտաբար ընդունում և պաշտպանում էին և Մատթեոս կաթողիկոս, նոյնպէս և Տերյենց պատուելին, որ և թշնամացաւ Հաջնազարեանցի հետ, որովհեաւ սա չէր կարող ընդունել այդ թղթի հարազատութիւնը: “Նոյնպէս տարածայնութեան նիւթեզաւ Հաջնազարեանցի և նորա հակառակորդներին մէջ դաստառալի աւանդութիւնը, որի մասին Հաջնազարեանց կարծիք էր յայտնում, թէ որովհեաւ աւետարանում յիշուած չէ այն, և զանազան երկիրներում այլ և այլ կերպով է պատմվում այդ աւանդութիւնը՝ ուստի ինքը առանձին կարևորութիւն չէ տալիս այս աւանդութեան և կասկածում է նորա ձշուութեան մէջ: Եյս կարծիքը նորա հակառակորդ ամիրանների ձեռքում զէնք դարձաւ նրան մեղաղբելու իբր հակամէտ զէսփի բողոքականութիւնը, ուստի նոքա՝ Տերյենցի նախաճեննութեամբ ժողովներ էին կազմում կրօնամոլներից Հաջնազարեանցին հաւատաքնելու համար: Առկայն այս ժողովների մէջ Հաջնազարեանց քաջապէս պաշտպանեց իրեն մոլեռանդներին դէմ*):

*) Ո՞ի ականատես անձ ի գիր առած է այս վիճաբանութիւնը, որ, եթէ չենք սխալվում՝ սորանից մի քանի տարի առաջ հրատարակուել է «Արեւելեան Մամուլի» մէջ:

Տերոյենց պատուելին այն բանին վերայ է ակնարկում գրելով Յովհաննէս վարդապետ Աթեանին, թէ «Արտապետ վարդապետի բեկնէն հոտ կըուրէ, ուրիմն սրտին մեջ վերք կայ», որով ուղում է ասել թէ նա բողոքականութեան հակամէտ է:

Եյս պատերապմի տաքութեան ժամանակ, Կահնազարեանց թէ և իր զէնքերը գարձնում էր բողոքականներին դէմ ևս, բայց ոչ այնչափ կորովով և զիտակցութեամբ, որշափ կաթոլիկների դէմ գուցէ այս ևս պատճառ եղաւ, որ նա մեղադուէր Տերոյենցի ծայրայեղ խմբից (այս վերջինին կարող էնք նմանեցնել անդրեոնականներին) իբր հակամէտ դէպի բողոքականութիւնը:

Հնամոլ և աւելորդապաշտ ամիրայական այս խմբից գուրս՝ կային բարեբաղդաբար ուրիշ աւելի հասկացող անձննք, որոնք արժանապէս գնահատելով Կահնազարեանցի գաղափարներն ու զիտութիւնը՝ աշխատում էին ամեն բանով օգնել նորան և զիւրացնել նորա գործունէութիւնը: Եյսպէս մօտաւորապէս 1852 թուին նա ծանօթանում է Խասդիւղի ուսումնական աւագ քահանայ Տէր Գէորգ Արծրունու հետ, որը գնահատելով Կահնազարեանցի լուսուոր, օգտաւէր գաղափարները, նորա հմտութիւնը ասաւուածաբանութեան մէջ՝ ամեն կերպով աջակից է լինում Կահնազարեանցին և սերտ բարեկամութիւն հաստատում նրա հետ:

Մրժանապատիւ Գէորգ քահանան, ցանկանալով օգնել վարդապետին՝ նորան ծանօթայնում է անուաննի Շեղայիրցի Մկրտիչ ամիրայի, Խօրասանձեան Պետրոս, բարեկիրթ սեղանաւորի և Նրամեանի հետ, որոնք պէտք է պաշապանէին Կահնազարեանցին նրա զօրաւոր թշնամի Կարապետ խալֆայի, արքունի ծարտարապետի դէմ որը ամեն միջոց գործ էր գնում վարդապետին աքսորելու, սակայն Խօրասանձեանց Պետրոսը դիմագրում է այս բանին:

Եյնու ամենայնիւ անկարող լինելով երկար զիմազրել իր զօրաւոր թշնամիներին, Կահնազարեանց վարդապետը Փարիզ է մեկնում, 1855 թ. ուր նորա հակառակորդները շարունակում են նրան հալածել «Արևմուտքի մէջ. սակայն ինքը այս սարսափելի յարձակումներից բարցապէս չէ ընկճպում և Փարիզում ձեւնարկում է մի աւելի վսեմ գործ, որ նորա անունը

պիտի անմահացներ: 1856 թուին հայ բարերարների, Խառ-
չստուգ Լազարեանցի, Մանուկ Ռէյի, Երբահամ Նպրօյեանի,
Յովսէփ չելեալի Խւսութեանի և Մահտեսի Գրիգոր Առատան-
գեանի սատարութեամբ Թրանսխայի մայրաքաղաքում բացում
է իր սեպհական հայկական տպարանը և սկսում է հայ պատ-
մազիրների տպագրութիւնը: «Նախ քան տպարան հաստատելը
և այս հրատարակութիւնների տպագրութեան ձեռնարկելը՝
Շահնազարեանց 1856 թ. վերջերում վիմագիր յայտարա-
րութիւնով դիմում է ազգիս բանասէրներին և նոցայայտ-
նում իր այս դիտաւորութիւնը: Սորանց յետոյ, 1857 թու-
ին նա սկսում է հայ պատմազիրների տպագրութիւնը «Շար-
հայ պատմազբաց» վերնազրով, որոնք կազմում են հօթն հատոր,
տասներկուսածալ դիրքով և են.

Վեռնդ պատմազիր Երշաւանք Երաբաց ի Հայո 1857.
240 երես: Ստեփաննոս վարդապետ Տարօնեցի 1859. 308 երես:
Ստեփաննոս Օրբելեան, միտրապօլիտ Միւնեաց, հատոր Ա. 1859.
346 երես: Հատոր Բ. 1859. 371 եր: Տարեգիրք Ամբատաց
Սպարապետի. 1859. 180 եր: Վահրամ Քաբունի, պատմու-
թիւն Ուռեբէնեանց, 1859. 68 եր: Մովսէս Կաղանկայառւացի,
պատմիչ Եղուանից, հատոր Ա. 1860. 432 եր: Հատոր Բ.
1860, 118 երես: Ծռվմա Մեծորեցի, 1860. 134 երես:

Եյս պատմազիրները առաջն անդամ լցո ընծայեց Կա-
րսպետ վարդապետը, քնազիրները Ճնշացնելով հայ պատմա-
զիրներից և օտարազգի մատենազիրներից հանած ծանօթու-
թիւններով: Եյս հրատարակութիւններով նո նշանաւոր ծա-
ռայութիւն արեց ազգային զրականութեան, որովհետեւ նոքա
մինչեւ այն ժամանակ ձեռագիրների մէջ գտնուելով մատչելի
չէին հասարակութեան. նոցանից մեծ մասը դեռ մինչեւ այ-
սօր միակ ազբիւրն են՝ նոյն պատմազիրներն ուստումնասի-
րելու:

Եյս հրատարակութիւնների հետ միասին լցո է ընծայ-
ում և «Հերքումն Պաշանց թղթի» հոչակաւոր գրաքայիք, որի
մէջ ես ազգու ճարտարախօսութեամբ մրցում է բազմահ-
մուտ կարծուած հայագէտ միսիթարեանների գէմ, որոնք կրօ-
նական տեսակէտից խեղաթիւրելէին ամբողջ հայոց պատ-
մութիւնը ազգային աւանդութիւնները, աստուածաբանսական

մեկնութիւնները օտարամոլ և փոանկաշունչ վարդապետութիւններով:

Տացի այս հայերէն հրատարակութիւններից և շաբազրութիւններից՝ Շահնազարեանց մինչև 1862 թուականներում գաղղերէն լեզուով ևս տպագրել է մի քանի զիրք, որոնց մէջ յիշատակելու արժանի են «Վեռնդ պատմագրի գաղղերէն թարգմանութիւնը ծանօթութիւններով հանդերձ (Փարիզ 1856 թուին), և մի համառօտ, բայց ընտիր հայոց պատմութիւն «Esquisses sur l'histoire d'Arménie» վերնագրով, որ յետոյ հրատարակեց և հայ թարգմանութեամբ «Օքազիր պատմութեան Հայոց» վերտառութեամբ և ուրիշ շատ պատմական գործեր հայոց պատմութեան վերայ *):

Նյուպէս, 10 տարի ապրելով այնպիսի մի լուսաւոր կենդրոնում ինչպէս է Փարիզը, Շահնազարեանց հասնումէ կեանքի գործունէութեան փայլուն գագաթնակետին: Իբր մատենագիր և հրապարակախօս, նա կարեւոր դեր է կատարում հայ գրականութեան անապատին մէջ, նախ գրաքար շարագրութիւններով և մեկնութիւններով և յետոյ աշխարհաբառ հրատարակութիւններով և լրագրական յօդուածներով: Չենք խօսում նորա գաղղերէն հրատարակութիւնների մասին հայութեան և հայոց պատմութեան վերայ, որոնք արեւելագէտների ուշադրութիւնն են գրաւած:

1862-ին Աւճիոյ ապստամբութեան առիթով՝ Շահնազարեանց «Խապոլչօն Վ-ին մի յիշատակազիր ներկայացրեց Փարիզում, ինչպէս յիշած ենք «Ըրաքսի» առաջին գլուխում: Որպէս առաջնական պատմում են, որ Շահնազարեանց այս յիշատակազիրը ներկայացրել է կայսրին նորա ձիով գնալու ժամանակին:

Փարիզից մօտաւորապէս 1862 թուականի վերջերում Շահնազարեանց գնումէ Մանչեստր, որտեղ հայ գաղթական վաճառականները անդիմական ճաշակով հայ եկեղեցի շինելով նրան կարգում են իրենց առաջնորդ:

*) Շահնազարեանցի առաջին երկասիրութիւնը եղել է «Թուաբանութիւն» գրաբառ լեզուով, որ 1842-ին տպագրուած է Ա. Խ. միածին: «Եղնպէս 1853 թ. Պոլսում տպել է «Ուսումն քրիստոնէական հաւատոյ» գիրքը, որի առաջին մասի ձեռագիրը պահվում է Պալաթիոյ գրատարանի մէջ 54 համարի տակ:

Այստեղ նա փոքր ինչ անզլիերէն է սովորում և իր տպարանը փոխադրելով՝ 1863-ին ձեռնարկում է «Երկրագունդ» գրական—պատմական տասաղբի հրատարակութեան, որը նորա մեռնելուց յիտոյ շարունակուեցաւ ։ Կահնազարեանց վարժարանի սաների ձեռքով։

Փոքր ժամանակից յիտոյ ։ Կահնազարեանց Վանշեստում հիւանդանում է թիրաբիթ սիւքրէ հիւանդութեամբ և Վանշեստրի հայերի և անզլիայիների վերայ լաւ յիշաաակ թողնելով՝ 1864-ին ուղևորում է Փարիզ բժշկուելու համար, այդտեղ գարման չգտնելով՝ մեկնում է դարձեալ Պոլս։ Ճանապարհին նա մնում է Եգիպտոսում և, ասում են, ապրում է ։ Նուբար փաշայի տանը որպէս հիւր։

Եգիպտոսից մեկնելով հանդիպում է Օմիւռնիա ու այնտեղից ուղղակի դալս է Պոլս, բայց կանխաղէս զբում է երջնկացի Տէր Գէորգ Երծրունի ընտար քահանային, որ գայիրն զիմաւորելու։

Պոլս համնելով, Կահնազարեանցը ապրում է վերոյիշեալ քահանայի տանը Խասզիւզում։ Եյս քահանան կրօնական խընդիրների մէջ յայտնած աղատ կարծիքներին պատճառով 1839 թ. ։ Սճեմեան սարկաւազի հետ աքսորուած էր Փոքր Սսիա (Եաքանիշ զիւզը) ։ Ապրապեա Խալֆայի առաջարկութեամբ և Յակոբոս պատրիարքի հրամանով։ Սակայն նորա համար բարեկամներից մինը, կարծեօք, Արձիկեան Յակովը, խնդրում է այն ժամանակուայ Փարիզի տաճկական զեսպան Ուշիդ փաշայից, որ միջնորդէ Պոլսոյ հայոց պատրիարքի առաջ արժ. Գէորգ քահանային աքսորից վերաբարձնելու մասսին։ Յակովը պատրիարքը անսում է Ուշիդ փաշայի խընդիրքին և հրամանագրում է Գէորգ քահանային, որ ինն ամիս քաշած աքսորանքը բաւ համարելով վերադառնայ Պոլս։

Եյս երկրորդ անդամին Պոլսում Կահնազարեանցը համարեա միշտ հիւանդ է լինում։ Երբ նորա հիւանդութիւնը սասականում է՝ Գէորգ քահանան իր ընտանիքի հետ վարդապետին օգափոխութեան համար տեղափոխում է ։ Նիկոմիդիոյ ձանապարհին վերայ գտնուած Խալտալ ծովեղերեայ ոիւղաքաղաքը, որը Պոլսից մի քանի ժամ հեռաւորութիւնունի։ Սակայն երբ հիւանդութիւնը աւելի սաստկանում է, բժշկ-

ների բացակայութիւնից նեղուելով՝ Շահնազարեանցին դարձեալ փոխագուման Խասպիւղ ուր ազգի քրանաջան և տառապեալ մշակը կնքումէ իր բազմարդիւն կեանքը 1865 թուականին օգոստոսի 31-ին:

Մեռնելուց առաջ նա ինքը կարգումէ խորհրդատետը և իր ձեռքով ո հաղորդութիւն ընդունում։ Սորանից յետոյ Տէր Գէորգ քահանայի գուսարերից մէկին առաջարկումէ բանալ իր սնդուկը, հանել այնտեղից նորա կտակը և խնդրումէ քահանայից բարձրաձայն կարգալ։

Խտակը կարգալուց յետոյ մերձ ի մահ հայ վերգապետը պատուիրումէ կտակը յանձնել Ներսէս վարդապետ Վարժապետանանին, որ նրան գործադրէ Խուբար փաշայի հետ գործակցութեամբ։

(Յաղումը կատարվումէ մեծ հանդիսով Խասպիւղի գերեզմանատան մէջ, ուր նորա տապանի վերայ աղբային հանգանակութեամբ մարմարինէ կոթող կանգնեցաւ, որի վերայ փորուած է այս տապանագիրը։

«Ստ հանդի յուսով փառացնյաւիտենից Ապագապետ վարդապետ Շահնազարեանց. ծնեալ ի ծամատան ի 14 մայիսի 1814 թ. և վախճանեալ ի Խասպիւղ Առատանդնուպոլսոյ յամի 1865, օգոստոսի 31-ին։»

Իր կետնքի վերջին օրերում նա յաճախ կրկնելիս է եղել թէ տասը տարի ևս կուզենար ապրել իր խորհուրդների գեթմի քանի զիսաւորնելը իրագործելու համար ազգի նկատմամբ։

Շահնազարեանց իր կտակը հաւանօրէն պատրաստած է Խզիպատում Խուբար փաշայի մօտ եղած ժամանակ։ Այս կտակով՝ նա իր բոլոր զրամն ու գոյքերը նուիրումէ Աիլեկիոյ մէջ ժառանգաւորաց մի վարժարան հաստատելու։ Կտակատար կարգումէ, ինչպէս յիշեցնիք, Խասպիւղի քարոզիչ Ներսէս վարդապետ Վարժապետանանին (յետոյ պատրիարք) և Խուբար փաշային։

Նրանայիշատակ վարդապետը հայի մտաւոր վերածնութեան խնդրին աւելի ազգու զարկ տալու զիսաւոր գործիշներից մինն էր համարում հայ հոգեւորականութեան անիկեալ վիճակն և նորա յարդը բարձրացնելը, ուստի և նա համոզուած էր թէ ազգի առաջին պէտքը ուսեալ եկեղեցականութիւնն է։

այս նպատակով հանգուցեալը իր կտակովը խնդրած էր, որ իր բոլոր գյորերը և հնութիւնները զբամի վերածուին և երբ սոցանից ստացուելիք և պատրաստ գտնուած դրամի գումարն հաղար ոսկու հասնի՝ անմիջապէս բացուի ժառանգաւորաց վարժարանը:

Ներսէս Վարժապետեանը այս կտակը անձամբ Խղիպտոս տալաւ, որ Նուբար փաշայի հետ գործակցելով, կատարեին հանգուցեալի կամքը: Եյդ ժամանակ, Նուբար փաշայի եղբայրն, Եռաքել Պէջ, որ Սուլդանի կուսակալ էր, անապատի վայրենի արաբների դէմ մղուած կռուի մէջ մեռած լինելով՝ Նուբար փաշա ուզում էր նորա յիշատակը յաւերժացներու համար մի բարեգործական գործի ձեռք զարնել և ահա երբ Ներսէս Վարժապետեան Խղիպտոս հասաւ՝ Նուբար փաշան առաջարկեց Հաճնազարեանցի կտակած 1000 ոսկու վերայ իր կողմից ևս աւելացնել 3000 ոսկի իր եղբօր յիշատակին, այս պայմանով, որ բացուելիք վարժարանը «Եռաքել Նուբարեան և Հաճնազարեանց» կոչուէր:

Ներսէս վարդապետ համաձայնեցաւ, ուստի և 4000 ոսկի դրամագլուխ գոյացաւ, որը յետոյ օսմաննեան արժեթղթի վերածուեցաւ: Եյս դրամագլխի տոկոսով պէտք է պահպանուէր բացուելիք վարժարանը:

Ներսէս և Նուբար մտածեցին, որ Կիլիկիոյ մէջ գժուար կլինէր վարժարանը բանալ նոսի քաղաքական հանգամանքների պատճառով, որովհետեւ հազիւ երեք տարի անցած էր Աւլնիոյ ապստամբութեան վերայ, և երկրորդ՝ Տաճկաստանի յայտնի ուսուցիչները Պոլսս լիներով մէծ զումարների կ'կարօտէր նոցա փոխապութիւնը Կիլիկիոյ, մանաւանդ որ շատերը չպէտք է հածէին գաւառները գնալ:

Եյս դիտումներով, 1866-ին վարժարանը բացուեցաւ Խասգիւղի մէջ Հաճնազարեանցի գերեզմանի դիմաց, այն Խասգիւղի, որը բաղմարդիւն հանգուցեալ վարժապետը շատ էր սիրում տեղի ազգայինների ուսումնասէր լինելուն համար:

Եյս վարժարանը հիմնարկելիս՝ Հաճնազարեանցի էական նպատակը զոնէ մասամբ իրագործելու համար որոշուեցաւ, որ վարժարանը պահէր ձիթավարժ տասը ժառանգաւոր աշակերաններ Կիլիկիայից, որոնք պարտաւոր էին հոգեորա-

կան կոչումը ընդունել: Այսպիսով կամենում էին գործադրել Արևից մեջ բանալու վարժարանի ծրագիրը, ինչպէս կատակած էր Հաճնազարեանց, հեռատեսութեամբ նախատեսած լինելով որ այդ փոքրիկ երկիրը ժամանակով կունենայ տւելի փառաւոր և յուսալից ապագայ:

Առաջին տասը ժառանգաւորները սարկաւագի աստիճան ընդունեցին վարժարանի վերատեսուչ Ներսէս վարդապետ Վարժապետեանից և կրումէին կղերական յատուկ համազգեստ, մթագոյն պատմուժան և ու կիսափակեղ:

Ներսէս Վարժապետեան կրօնագիտութեան դասեր էր աւանդում այս ժառանգաւորաց մեծ հմտութեամբ և ոգեսութեամբ:

Այս սկզբնական կազմութիւնից յետոյ Ներսէս և վարժարանի աեսուչ քաջ թուագէտ Սիմեօն Միքայէլեան մոտածեցին զիշերօթիկ և երթեեկ աշխարհական աշակերտներ և սընդունել զիշերօթիկներից տարեկան 40 ոսկի վճար առնելով:

Այս աշակերտների ընդունելութիւնը տեղի ունեցաւ այն հիման վերայ, որ թէ դպրոցն նիւթապէս նալաստ գտնէ և թէ Ներսէս Վարժապետեանի լրօնի դասերը կարողանային լսել և ուրիշ աշխարհական ուսանողներ:

Վարժարանը ընդարձակելու համար գնեցին մի տուն և յետոյ էլ մի պարտէղ որ ննջարանի վերածեցին:

Եւսկիւտարի յացանի զիշերօթիկ ճեմարանը վաղուց փակուած լինելով, այս նոր զիշերօթիկը շատ մեծ ընդունելութիւն դառւ հարուստ դասակարգից և աշակերտների թիւը կարծ ժամանակում հասաւ 150-ի:

Այս միջոցին Վանչևստրից Կարապետ վարդապետի մամուլը և տառերը փոխագրուեցին վարժարանը: Վարժարանի բարձրագոյն դասատունը 1870-ին ձեռնարկեց վերակենդանացնել Հաճնազարեանցի «Երկրագունդը» նոյն անուամբ և նոյն տառերով. սակայն այս ձեռնարկութիւնը երկու տարի իսկ չտեսց, բայց վարժարանի փակումից յետոյ Խասդիւղի մեջ հիմնուած «Սոխական» ընկերութեան միջոցով շարունակվում է մինչեւ այսօր նոյն անուան տակ, բայց անտարակոյս, ոչ նոյն ուղղութեամբ և լրջութեամբ, ինչպէս զծագրած էր հանգուցեալ հիմնադիրը:

Հայնազարեանցի վարժարանի ծաղկեալ վիճակը երկար չունեց: Յիշատակելու է այստեղ որ վարժարանի համար՝ Նուբար փաշան իր ծախսով Փարիզից բերել էր տուել գիտական գործիքների ձոխ հաւաքածու: Վարժարանը ստացած էր նաև հարիւրաւոր օրինակներ՝ Ակտորներու անկյունայից հրատարակուած «Collection des historiens anciens et modernes de l'Arménie» պաքերից, որ տպագրուած է՝ Նուբար փաշայի ծախսով և հռչակաւոր ծովանկար Յովհաննէս Կյալվազովսկուց մի նկար, որը վարժարանի փակումից յետոյ գծագրութեան վարժապետը յտփշտակեց իր պահանջի փոխարէն:

Յետազայ տեսունների, այսինքն Համբարձում Խփէկձեանի, Յովհաննէս Զիգիաննեանի և Յովհաննէս քահանայ Հիւնքեարպէյնստեանի օրերով, Ա. Միքայէլեանի տնտեսական զրութիւնը ցարդուելով, շռայլ ծախքիր եղան և բազմաթիւ ձրի աշակերտներ ընդունուեցին այս կամ այն էֆենտիի յանձնարարութեամբ:

Եհա այս միջոցներին էր, որ օսմաննեան կառավարութիւնը մեծ եպարքոս Մահմետ Նէղիմ փաշայի օրով հանեց այն հռչակաւոր հրովարտակը, որով յանկարծ գալրեցրեց օսմաննեան արժեթղթերի տոկոսը: Կյոսպիսով արժեթղթերի արժեքը 60 գահեկանից 10-ի իջան, որով տուժեց և Հայնազարեան վարժարանը, ըստ որում նորա գրամագլուխը, ինչ պէս յիշեցինք, օսմաննեան արժեթղթերի էր վերածուած:

Կյո վելջին նիւթական մեծ հարուածի տակ՝ Նուբար Հայնազարեան վարժարանը միանգամայն փակուեցաւ 1876 թուին, այսինքն բացումից միշտ 10 տարի յետոյ:

Վարժարանը այս տասնամեւայ շրջանի մեջ 300-ից աւելի աշակերտներ տուեց, որոնք համարեա առանց բացառութեան նպաստաւոր ուսումն և լաւ գաստիարակութիւն են առել: Առցանից շատերը ուսուցիչ եղան Պոլսում և գաւառներում: մանաւանդ Միացեալ ընկերութեանց Ալիլիկից մեջ բացած դրեթէ բոլոր վարժարանաց տեսունները և վարժապետները Հայնազարեանցի սաներն են: Կյո վարժարանից է գուրս եկել և Պ. Մինաս Զերավը Կալաթիոյ կենդրունական վարժարանի տեսուչը:

Գալով ժառանգաւորաց, որոնց վերայ մեծ ծախք է եղել՝ նոցանից միայն երկուսը կղերական կոչում ստացան՝ մէկը՝ Խիկոմի-

գիոյ վիճակի ժրածան տուաջնորդ գերապատիւ Ատեփան եպիս. Յովակիմեանցը, իսկ միւսը Շերայի Ա. Երրորդութեան եկեղեց-
ւոյ Տէր Ներսէսը:

Հաջնազարեանցի վարժաբանից այսօր մնում են կիսափուլ
շենք, անարժեք տոկոսաբեր թղթեր և ուսուցիչներին ցձա-
րած ռոճիկներ:

Ներսէս պատրիարք իր կենաց վերջին տարիներում ջա-
նաց այս մնացորդները զրամի վերածելով նորից զյացնել
Հաջնազարեանցի կտակած 1000 ոսկին և մի ընծայարանի
հիմնարկութեան յատկացնել: Մահը արդելց այս խորհրդի
իրագործումը, որը սակայն կարող է մի օր գործազրկուել և
յաւերժացնել Հաջնազարեանցի նման բազմերախո հայ վար-
դապետի օրհնեալ յիշտատակը:

Աերջացնելով Հաջնազարեանց բազմարդիւն վարդապետի
կենսագրական զրութիւնը, մենք խոստովանում ենք, որ կա-
տարեալ կենսագրութիւն կտզմելու համար շատ բաներ են
պահանջվում: Բացի այն, որ մեզանում չկան ժամանակակից
վկաներ կենսագրուելու անձի գործունեութեան մասին, կամ
եղած անգիր տեղեկութիւնները մեծ մասամբ անձիշտ և ան-
վաւեր են՝ մենք մինչեւ անգտոմ զուրկ ենք և այնպիսի փոքր ի
շատէ օրինաւոր մատենագրարաններից, ուր ամփոփուած լի-
նեին մեր գործիչների զլսաւոր երկասիրութիւնները և զա-
նազան տպուած և անտիպ արձանագրութիւնները *): Ճե-
տեալ ապէս այս կենսագրութեան մէջ թերեւս գտնուին, և կան
թերութիւններ, որոնց լրացումը մենք թողնում ենք մեզանից
աւելի բազուաւոր և ձևնահաս կենսագրողներին:

Եթէ մեղնից մի աւելի նախանձախնդիր անհատ հետաքրր-
քրուի աւելի ծիշտ և մանրամասն տեղեկութիւններ հաւա-
քելու՝ մեծ երախտազիտութեամբ նորան կ'դիմենք մեր աշքից
վրիպած կէտերը սրբագրելու համար:

Ա. Գուլանիշեանց



*.) Հարիւրաւոր օրինակներից մէկը միայն յիշենք այստեղ,
որ Պոլսում մենք ոչ մի աւել կարող չեղանք գտնել 1865 թուի
«Մասիս» լրագիրը, որի մէջ տպուած է հանգուցեալի կտակը:

ԽԵԼՕՔ ԿԱՐԱՊԵՏ

Աեանքը առհասսարտակ երեք ընթացք ունի, որու մէջ մարդիկ կը կատարեն իւրեանց ԴԵՅՄ և ըստ այնմ իրաւունք կ'ըստանան առագայ սերնդոց դատաստանը առնուլ—օրհնութիւն, անէծք և կամ անյիշտակ մոռացութիւն:

Առաջին ընթացքի կը վերաբերին նոքա՝ որք, որ և իցէ մի օգտակար ծառայութեամբ ու հեղինակութեամբ մասամբ կամ ընդհանրապէս ազգի մը, երկրի մը ու ընկերութեան մը զարգացման, հարստութեան և վերջապէս մի բարելաւութեան պատճառ կը հանդիսանան. այսպիսիք՝ տրդարեւ արժանաւորութիւն ունին գրաւելու պատճական կեանքի օրհնութեան էջն: Եւ նոքա՝ որք իւրեանց շահասիրական և վաղանցիկ փառաց համար վնասակար դիր կը կատարին, ազգի մը երկրի մը և ընկերութեան մը կործանման պատճառ կը տան և կամ արգելք կը լինին որևէ օգտակար գործի՝ պատճական կեանքի մէջ նոցա բաժինը կը լինի անէծք ու հայհոյութիւնք, ում՝ յաւիտեան սեւ անուն կ'ստանան: Իսկ նոքա՝ որք ոչ չար կամ բարի, այլ կը ծնին իւրեանց համար միայն ու կը մեռնին իւրեանց իսկ համար, առանց սակայն ծառայութիւն մը մասուցանելու մարդկութեան, ազգի կամ հայրենեաց համար, այնպիսիք կը նմանին խոտերու, ծաղկեներու, որք կը բուննին ու կը թոշնին փշրուելով անյիշտակ կորստեամբ. պատմութիւնը ոչ ինչ չունի նոցա տալիք, նոքա պարզապէս զրաստներ են աշխարհ եկած՝ գարի և յարդ ծամելու, յաջողութեան ծանրութիւններն կամ հարստութեան բեռերն դէս ու դէն կրելու համար:

«Երաժ» հանդիսի խմբագրութիւնը որ գլխաւորաբար զբաղեալ կը տեսնենք Աիլիկեան աշխարհով, անտարակցյանք, որ նորա ընթերցողներն պիտի ներկն մեզ մի մոռացուած կիլիկիցի գործիչ յիշտատակն ընելնուս, որի հեղինակութեան շնորհիւ ամբողջ գտւառներ այսօր ապրուստ և հարստութիւն գտած են, նոյն իսկ Ա. Պոլիսի մէջ հարիւրաւոր գործարաններ հաստատուած կը շահագործուին այդ կիլիկիցի հեղինակի հնարած զիւտերովն:

Առուսահայ ընթերցողաց արդէն ծանօթ է Պ. Գր. Նիկո-
ղոսիանի յօգուածներով Կիլիկիոյ Կիւրին քաղաքի տարազա-
գործութիւնն, նոյնպէս շատերուն յայտնի է, յիշեալ ասպազի
գործող Պ. Ստեփան անուն կիւրինցի երիտասարդին Վահա-
փառ. Սուլթանի չնորհաց արժանանալը և արծաթ միտալով
վարձատրուիլն: Եյս ամենուն սկզբնապատճառ և հեղինակն
եղած է Խելօք Կարապետ, որի լուսանկարն կը զբկեմ «Երաքսի»
խմբազութեան, հանդերձ համառօտ կենազրութեամբն:

Ընդհանրապէս Կիլիկիցիք և Փոքր Հայոց ժողովուրդ-
նեղն ծուլութիւն չեն գիտեր, ճարպիկ ու շահագործ մարդիկ
են, իրենց անդորրութիւնը և հանգիստար ուրիշներէն փնտուե-
լու տվյութիւնը չը լինին, ամէն յաջողութիւնք իրենց բա-
զուիներու ոյժին մէջ տեսնել կը սիրեն, սրաի արիութեամբ
ու տոկուն աշխատութեամբ հետամուռ կը լինին ձեռք բերել
այն բաները՝ զորս իրենց պէտքերը կը պահանջնեն:

Կիւրինը՝ Փոքր Հայոց սահմանին մէջ մեծն Սեբաստիոյ
դահանգին ենթակոյ Չելթունէն հիւսիս արևմուտ երկու օր

հեռաւորութեամբ գեղեցիկ
և վաճառաշահ քաղաք մ'է,
Ոռոքինեանց թագաւորու-
թեան ժամանակ աւելի ծաղ-
կիալ և բազմամարդ, այժմ
գայմագամութիւնէ, 15,000-
էն աւելի բնակիչ ունի, տուատ
բերքերով, նշանաւոր է կարմ-
րակ խնձորն և այնգունակ
կարմիր ու կլորակ թուշերով
տրական և իգական զցդ
սեռն:

Կիւրինի հայերն քաջարի
արտեսաի, վաճառականու-
թեան և զինավարժութեան
մէջ՝ մեծ համբաւ ունին իբ-
րև նրբամիտ վաճառականներ
և արիստիրա ճամբորդներան-



ԽԵԼՕՔ ԿԵՐԱՊԵՏ

վախ ի տուրեառս: Եւրաքանչիւր կիւրինցի գրապանելով գրամագլուխն ի ծոցի՝ զինապատ կը ձիավարէ ուր ուրեք որ շահ կը տեսնէ, գողն ու աւազակն բուռ մը հողէ կիւրինցի ուղևորին առջև: Ունին վաճառականական տներ հաստատուած Աիւրին, Հայէպ, Պոնտոս, Արքին, Պոլիս, Տիգրանակերտ և Լոնդոն—Մանչէսթեր, որոնց մէջ նշանաւոր են. Մարտնեաններն, Երապեաններն, Մինասեաններն, Խօսփալեաններն և Գոզումեաններն: Ունեցած են և ունին բարեպտուղ վարժարաններ, և ոչ ինչ չեն խնայեր կրթութեան և դաստիարակութեան համար:

Եշա այս քաջարի և նրբամիտ տոհմին կը վերաբերի նաև Խելօք Արապետն, հաւ և գտիչ տարագուցն Աիւրինայ, քաշմիր արանելեաց, խայտակերտ շալերու և զանազան փողոններու: Խելօք Արապետի ծնողքն կարի աղքատ լինելով զինքը գրած էին ոստայնանկ կտաւագործ վարժարանին մօտ, ուր՝ վարպետին մասուրան փաթաթելին պարապոյ գտած ժամանակն դաս կառներ նաև այբ, բէն, զիմը, քերականը, որն որ փետուր զրիչով գրած էր կտոր մը հաստ թղթի վերայ իրենց տան երեցը. Խելօք Արապետի առաջին գասն եղաւ ուսանիլ խալ օդիւս ինչ, զոր զոյ ընելով կը կրկներ երեկոյ և տռաւօտ և ամէն հաց ուտելէ կամ զործ մը սկսելէ առաջ: Արապետ հազեւ քերականը, պղտիկ սազմոսը (հետարան) ու մեծ սաղմոսը աւարտած էր և մի քիչ ալ կատ զործել ուսած էր՝ երբ կվախճանին ծնողքն և ինքը կը մնայ որբ, որով և տռարտ կը գանէ իւր ալ վարժարանական ընթացքն: Եյլ ևս Արապետ կը պարտաւորի ինքը հոգալ իւր հացը, Արապետ կ'սկսի զբաղել իւր զիացած կատաւագործութեամբ և օրական 40 կամ 60 փարայ (10-15 կոտէկ) շահելով տպրիլ քիչ ժամանակէն Արապետ յառաջադիմելով սկսու գոյխործին շալվար գործել որն՝ սև կամ ձերմակ ոչխարի բուրդէ կրկնահիւս գործուածք մ'է, զոր Փոքը Հայոց և Ակլիկիոյ ժողովուրդք իբր անդրավարտիք կը գործածէն մինչ ցայսօր: Արապետի հեղինակութիւնը այդ ժամանակէն կը զարթնու իւր մոքին մէջ, այլ ևս Արապետի մշակայ մատածութեան առարկան է, թէ արդեօք կարելի չ այս դործուածքին մի այլ ձև տալ նոհապետական դրութենէն փոխելով զանի աւելի օդտակար և վայելուչ կերպարանի վերածել կոկսի զանազան փորձեր

ընել, ճախարակները փոխել թելերը շատցնել կամ պակսեցնել գյնզգոյն բուրդերով գործել գործածը քակել վերստին հիւսել են. շատ մը զանազան գործուածներ, հին կարպետներ, եւրոպական ու պարսկական կերպասներու կտորներ ու կարկտաններ ժողվել փակել նոցա հիւսուածքն դիտել, նորէն այն տեսակ կամ անոնց նման մի ուրիշ կերպ հիւսել են, են: Կարապետ յաջողած էր. Արապետ իւր վնտուածը գտած էր, Կարապետ գյնզգոյն ծաղկանկար շալերու և եւրոպական քաշմիներու, գործուածքներու գաղանիքը գտած էր, Կարապետ՝ իրմէ ետքը հկողներուն բաղդը այլ ևս ապահոված էր: Կարապետ ուրախ իւր յաջողութեան և գիւտին վերայ, որին գտղունիքը միայն իրէն յայտնի էր, ստկայն մի բան կը նեղեր զինքը, զի աղքատ լինելով և գործնականապէս զայն պատկերացնելու անձեռնշան՝ անհնարին վիշտերով պաշարուած ուր և ուր որ զիմէր օգնութեան ու ձեռնոտուութեան համար՝ բայցասական պատասխան կ'ստանար. «Կարապետը խելագարած է, Կարապետը խենթ է, Կարապետը զժուել է», այս է ամենուն խօսքը, Կարապետի աշխատութեան վարձքը. քաջալերութիւնը: Կարապետի հօրելքայրը, որն որ բաւական կարողութեան տէր մարդ էր և ուրիշ ոչ ոք ժառանդ չունէր, նա ևս կը զլանար Կարապետի ծրագիրը իրագործելու համար մի քիչ օգնութիւն ցոյց տալու, որով Կարապետ ամէն կողմանէ յուսակուր չը զիտէ ինչ ընել անօգնական երկրի մէջ, օժանդակութիւն, կարելցութիւն, ամենան ալ փակուած է Կարապետի համար, այլ ևս հասարակ գործ ալ չեն տար Կարապետին և ոչ ալ իբրեւ մշակ փոքր ինչ օրական վարձով աշխատեցնող կայ. ամենայն մարդ համոզուած է թէ Կարապետը կատարելապէս խելագարեալ է, չեհլու է, գարտակ ման գալոց: Յանկարծ մի օր կը պատահի Կարապետին Նստուրինց մրցուեսի Վարդան աղքարը, որն որ Պոլիսէն վերագարած է, կը պատմէ թէ Պոլիսի մէջ շատ մեծ մեծ էֆէնդիներ, ամիւրաններ և ողբամած աղաններ կան, Քիշմիշենց ամիրան հարիւրաւոր ոսկիններ տալով Ժողովածուն տպել տուած է. Երկաննենց ամիրան 1,000 ոսկի է զրկէ Վանեակի վանքը Յայսմաւուրքը տպելու համար և Տատեան ամիրան ալ չը զիտեմ քանի հաղար ոսկի է տուած մի քարտէղ շինելու: Եյս և տասնց նման

ողատմութիւնները հետաքրլիցին խելօք Ապրապետին Պոլիս երթալ և արդէն իւր միակ օգնական և խնամատար հօրեղ բայրն ալ երես դարձուցած՝ անէծք ու հայհոյանք չեր մնար որ չը թափէր իր զլիխն վերջապէս հաստատ որոշմունքով պատրաստուեցաւ Ապրապետ Պոլիս գաղթել ժողովեց իւր կարասինելին, որոնք կը բաղկանային մի տախտակէ բնակէ հաստ թուղթով փակած և նորա վերան իր սիրելի խառօֆնեա ինչը զրուած, մի մաշուած սազմո՞ որուն ութը կանոններուն մէկը իրեն օրական առաւօտեան աղօթքն կը քաղէր, մի նաև պուշտ որն որ ինքը իւր ճեռքով շնուած իր վիշտելին կ'երգէր, պապենական ժառանգ մնացած պէշնիւրնէ մի նշանած, որին հետ պսակած էր տաներեց հայրն, «առեալ զձեռն Եւայի, տուեալ ի յաջն Եգտմայ» ըսելով և մի բուրդեայ լայն ու երկայն մաշլահ (վերարկու), որ կը ծառայէր մահիմի, անկողնոյ տեղ Ապրապետի և նորա անբաժան տիկնոջ համար:

Ապրապետ մէկ ու կէս ամիսէն ոտքով քալելով Պոլիս կը համնի իւր հաւատարիմ ընկերովն, կը գիմէ ամենայն աեղ պատրիարք, ամիրայ, էֆէնտի, մէծ մէծ աղաներ ոչ ոք կարևորութիւն կամ կարեկցութիւն չի բարեհաճիր ընծայել տարսբազաբար իրեն հետ տեղափոխուած էր նաև իր չենք ու չէժ ածականը, մանաւանգ սահմանադրական վառվուուն թուականի սկիզբները, Ետիրնէգաբույի գերեզմանատան բողոքական մեռելի թաղենք ու չը թաղենքի խնդիրով զբաղող պոլսեցի զիւցազուններէն որի՞ հոգոն էր մաքէ իսկ անցունել մի խընդար կուրծքբաբաց, փաթաթոց ի զըրւս, արեւակէղ զէմքով ցնցոտիներ հագած, աղտոտ մի մէշլահի ներքև ծածկուած գաւառացի, մանաւանգ՝ կիլեկեցի անուս, տղէտ և վայրենի մարդ, որ չէ հագած սկրթուկ, դօլայով շապիկ, բարակ բօթին կօշիկ, զլիսարկ, չունի պասթօն ու ակնոց....:

Ապրապետ երկար տարիներ գեգեկեցաւ Պոլիս, խաբուելով մղախի Վարդան աղքօր փայլուն պատմութիւններէն, ի զուր ի ձայն բարձր աղաղակելով խելք ե՞ն, խելք ե՞ն, ծով ե՞ն, տէրեա ե՞ն, յորմէ մնացած է «Խելօք» Ապրապետի անունն:

Զը մոռնանք յիշատակել, որ Փափազեան աղնիւ գերդաստանը, որուն հարազատ ժառանգն է Երեսում էֆ. Փափազեան՝ բաւական խնամք և հոգածութիւն ցոյց տուած է Խելօք

Արագետին, որոյ լուսանկարն ալ ազնիւ նպատակաւ քաշել տալով պահելնին՝ արդարեւ զնահատելի բարեսրառութեան ապացոյց մ'է, որի համար կը պարտաւորինք մեր շնորհակալութիւնը յայտնել հրապարակաւ առ Մեծ. Խրեում էֆ. Փափաղեան, իբր ազնիւ հայի և ազնիւ գերդաստանի շառաւիդի:

Իւաւական տարիներ Խելօք Արագետ դէս ու դէն դեղիրելէ զինի, վերջապէս կը համոզուի, թէ ուրիշէն բոլորովին լուսան պատրանք մ'է, կ'որոշէ վերադառնաւ իր հայրենիքը Ախրին, Էլքէն ո-ճ, սէնտին պարզն (ուրիշէն յուսա, քեզմով ապրէ) ըսելով, ինքնոգնութեամբ գործն առաջ տանել:

Երդէն այլ ևս ժամանակը հասած էր. Խելօք Արագետի հօրեղբայրը մեռած էր, Խելօք Արագետ ազատ էր, և ինքը իւր գործին տէրը, զաւակներն ալ մեծած, իւր ծրագիրը գործադրելու համար դրամագլխի և հաւատարիմ գործաւորի պէտք ունէր: Եյժմ պակասութիւն չունէր այլ ևս. խելք, զրամ և մարդ, կատարեալ ներդաշնակութեամբ ի կատար հանեց իւր սկսած գործն. երեւակայականը իրականի վերածեց, Ախրնայ գործուածոց ու կերտուածոց մարմնացումն եղաւ, իւր զաւակաց ապագայն ծշտելէն ետքը՝ բիւրաւոր ընտանեաց ապրուստի ձննապարհ բացաւ, ու մենք նուիրական պարտականութեամբ կը գամք հրապարակել և պատմութեան յանձնարարել Խելօք Արագետի, տնտեսագիտութեան, ազնիւ մշակին և հայի դատին արիասիրտ զինուորի անունն:

Խելօք Արագետ ըստ ժամանակին աշո-ի, բանաստեղծ ու էր, և ունի հարիւրաւոր երգիր հայերէն խօսած. որոցմէ միտս եկած երկուսն կը դրկիմ «Արագսի» խմբագլութեան:

Խելօք Արագետի որդիքն Մինասեան վաճառատան հետ ընկեր են, և իրենց գործատանց բուրդեղէն ու մանածէղիններն ուղղակի գնելու համար գործակստար ունին Ճնգղիա:

Խելօք Արագետ ծնած է ի Ախրին քաղաք Ախրիկիոյ:

Ընթերցող երբ կը տեսնես մինը կապոտած կը տանին, մի ըսեր թէ չարագործ մ'է, կամ երբ կը տեսնես մինը՝ որ ցընցոտի հազած ափը կը բանայ ու կը մուրայ, մի լսեր թէ՝ խաբերայ մ'է կամ բաղդախնդիր մը, թերեւս նա շատ ազնիւ մէին կամ հեղինակ մը եղած լինի. վախցիր, որ պատմութիւնը չապտակէ դքեզ:

Յ. 2.

Ընթերցողներին ձաշակ տալու համար գնում ենք այստեղ
Խելօք Ապրապետի երկու «Քանք»:

ԲԱՆՔ ԽԵԼՕՔ ԿԱՐԱՊԵՏԻ

I.

Անարժան զուրցելրւս ես եղայ ֆուլնան,
Ըսէք, ինչուդ պէտք է. գուն ես կրթապետ,
Թէրանձնութեղուիս ձեռացն էլ աճան.
Չըկայ մաքուր բերան, իշխան, այրապետ:

Փիլոննին զանալ է, կապեր են շալը
Հազեր ու հաներ են չուխային կալը,
Խիստ պատուած են փարան, սիրեր են ճալը,
Եանի կռապաշտ են տէրտէր, վարդապետ:


II.


Անարժանութենով պիրեղ մը զուրցեց,
Եճապա մէջը մեղք կէն, այբ, րէ: (կար)
Վախիսիմ թէ ճամբաս ծուռ է քեզ փորձեց,
Տէր իմ ընծի շխտակ տիւն, այբ, րէ: (տար)

Միբայիմ ես շխտակ ճամբաս գացելու չեմ,
Ազօթք աղաջանքի բերան բացեր չեմ,
Մեղաւոր իմ քեզ մեղքս լացեր չեմ,
Եմ սիրաս դարձել է քէ, այբ, րէ: (քար)

Տիրածին սուրբ կոյս, միշտ բարեխօս լեր,
Հյիշտակներ տարին քեզ երկինք նուեր,
Ռարեգործ են քեզ մող սոճուա մը ըներ,
Օր աւուր գործեր ենք չա, այբ, րէ: (չար)

Խելօք Դաւեիթն աշխարհ եկել է Հայութեն,
Եկէր որ ահ քաշէ ծայ ունի նախութեն:
Զարագործութենով ըյնի զլախտէն
Վախիսիմ Ապրապետս վէ, այբ, րէ: (վար):







ՆԻԿՈՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ. ՎԱՆԱՀԱՅՐ ՖՈՒՌԻԳԻ

Հրատ., «Արտկար» հանդիսի.

ՆԻԿՈՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ա անահայր Գրնուզի

Նախքան Գրնուզ գիւղի վանահօր մասին խօսելը, հարկա-
ռոր կը համարիմ Գրնուզը ներկայացնել:

Գրնուզը հարկատու է Օհեյթունի կեդրոնական իշխանու-
թեան, և վեց ժամ հեռաւորութիւն ունի անկէ: Տարձրա-
բերձ լերանց ստորոտը համանուն մի գետակի եղերքն այդի-
ներով և գեղեցիկ պարտէզներով շրջապատուած:

Երկու հարիւր տուն կտրիմ հայեր ունի Գրնուզ որոնց
զբաղմունքն է հողագործութիւն, ատաղձագործութիւն և որ-
սորդութիւն. հոգ չէ թէ որսորդութիւնը երբեմն մարդկանց
վերայ ալ կընեն ...

Գրնուզիք ունին այծեր, տաւարներ: Ամառ ժամանակ
կը խոյանան երկնաբերձ լերանց կատարներն:

Օհեյթունցիք՝ ձիւներու մէջ կը մեծնան, և չեն սիրեր
տօթ ամառը: Ամեն մէկ տան նահապետը կը ժողովէ իր թոռ-
ները, ծոռները, ու չատրը (վան) կը զարնէ իր ուղած տեղը:

Եհա զէյթունցին չատրը չորս շուրջը՝ կողերու վերայ
բեռցուած ամեն անսակ զէնքեր և դանակներ, հին գարամա-
ճար, քիլոզլու, տապան, ֆիղերէ, իւփէկ ևն: Սա է զէյթուն-
ցին շարժական բերդը: Եյս բերդի մէջ կապրին այրերը՝ ինչ
պէս զինուոր, կանայք՝ իբրև պաշար հասցնող: Խիստ պարզ
է զէյթունցոյ պաշարը. պաշտամք գում միտով շա-
զած, նիւնէ տաբանք—սև հաց:

Եհա կըգան, աշա կըգան, կըլսուի. ձայն տուողը՝ դուկար
կանգնող փոքրիկ անառակ Պապիկն է: Նահապետական տան
շարը բնակիչք դուրս կըթուչին:

Եկողներն են Աստուրը և Մացուրը: Մէկը շալկած մեծ
եղջերու, և միւսն կոնակը ահազին մի խող:

Ամեն մի որա՝ լեռներու տուլիքն է, կը դոչէ առւնին նահա-
պետը, որ ընդհանուրի կը պատկանի, ուրիէ պէտք է բաժին
հանել միւս բոլոր պրացի վրաններուն:

Դրախովիլ Փրնուզի վանահօր ամարանոցն է: Օչեյթունցին կը կարծէ թէ բուն դրախտը այս է, որովհետև ասկէ կ'տիսնուին Կապանի ամրոցը, Լեռնի բերդը, Մարամշել գուլսին, Բարդոսը—Դող Վասիլի սիրած վայրը, Աէկին կէտիկը ու կիրճը—Քեօրօղու Ըստուրին, Խըզզըրդինց քէլ Վանէսին և Ճարբօղյու Մնացականին շահատակութեանց բոյնը...

Ուր բերդ ընկայ, ուր կիրճ ըլ կայ, զէյթունցւոյ համար և դրախտ ըլ կայ:

Փրնուզի վանահօր լեռնային հիւրանոցին մէջ ապաստան կը գտնեն հայր, թուրքը և թիւկվմէնը անխտիր:

Փրնուզ գիւղին մօտ բարձրաբլուր կանգնած է Օհաննու Կարապետի վանքը գէմ յանդիմն Օչեյթունի Փրկչայ վանքին:

Վեց ժամ Ճանապարհ լերանց կատարներէն զերար կը դիտէն հայու այս երկու սրբատեղիք:

Օհաննու Կարապետի վանքի վանահայրը՝ Նիկողոս հպիսկոպոսն է, տասնուշորս գիւղեր անոր կը նային, որք են. Փրնուզ, Պարոննենք, Պուղերենք, Խուզուղենք, Կէնչի, Պունտուի, Կապան (*), Կոկիսոն (**), Տէկիլմէն տէրէ, Տաշոլուք, Քիրէճ, Կէօլփունար, Շիվելկի, Ենիհճէ-դալէ:

Եյս տասնեւորս գիւղերու բնակիչք մօտաւորապէս 10,000 կը հաշուին. ամենքն ալզինուոր են որք կարող են զէնք կը ել: Գիւղերու և վանքի հասցյթները վանահայրը կը տնօրինէ, ինչպէս և նոցա կեանքը՝ երբ առիթ ներկայանայ....:

Եյս գիւղերը, որ կը կազմէն Փրնուզի թիմը, հպատակ են Օչեյթունի. սակայն անձնական և գիւղական անհամաձայնութեանց նախնական քննութիւնին կը կատարէ վանահայրը, առաջին վճիռը կը ստանան Փրնուզի վանահօր ձեռօք:

Փրնուզի զինակիր վանահայրը աւելի վազրի կը նմանի, որ կը խօյանայ առաջին հակառակողին դէմ: Միայն եկեղեցւոյ մէջ կարելի կը լինի զանազանելու ուրիշ դուրս առիւծ մ'է նա պատուհասելու համար չարդիկին:

*) Կապանի բերդը նոյնութեամբ կանգուն կը կենայ, ուր եգիպտացւոց անձնատուր եղաւ Լեռն Լուսինեան, Հայոց վերջին թագաւորը:

**) Օհան Ոսկեբերան այս քաղաքը աքսորուած էր: Մեծն կոկիսոն կամ երկիր կոկաց կը կոչուի:

Փրնուղի վանահայրն ալ խաչ ունի ուրիշ եպիսկոպոսներու նման, բայց սա խաչը զէնքերու վերայէն կը կրէ: Երկիւղը, ինչպէս և մահը, երբեք գոյութիւն չունի նորս համար, «մարդ մի անդամ պիտ մեռնի...» ահա այս է վեղարաւոր ասպետին նշանաբանը:

Փրնուղի վանահայրը 55 տարեկան է. ունի ձիւնի նման սպիտակացած երկայն մօրուք, բազէի աչքեր, տիտանական քարձր հասակ. լայն կուրծքը զարդարուած է ամեն տիսակ զէնքերով, գլուխը երկայն փիւսկիւլով կարմիր գտակ. մետաքսեայ վարդագյն ժենիա փաթաթուած, ինչպէս և հագած վարդագյն ճաշանե, հարդանայ ոսկեթել բանուածքով Ճերմակ պարեզօտ մետաքսէ թարապուլուս գոտիով: Պղուա հաստ թեւերը մինչ արմունին, ինչպէս և կուրծքն, մերկ, թաւուտ մաղերու անտառ մը կը ներկայացնեն:

Մէկ կեռ թուր գրապան, մէկ խոլո դանակ, մէկ գարապինա, չորս չախմախլու ատրճանակ—երկուքն ձիու թամրին վերայ, մէկ երկսայրի զանա, երկու շէջուլէր, մէկ հին գարսաճաճար հրացան և մէկ ճիշիք հաստ փայտէ գաւաղան, ամենը տասներկու, ահա զէյթունցի եպիսկոպոսի արգուզարդը:

Նմառ թէ ձմեռ մեր վանահայրը կայցելէ թեմական գիւղերն և անձամբ քաջալերութիւն կը տայ նոցա իր կենդանի օրինակովն:

Փրնուղի վանահայրը ի մանուկ հասակի Օհաննու Աարապետի միաբանը լինելով, իւր գաստիարակութիւնը, աւելի լաւ է առաջ իւր սպարտական բարեմասնութիւնքը ժառանգած է իր մեծ հօրեղբայր՝ Կիրողայսո Ճերունի և պատկառելի եպիսկոպոսէն:

Եշխարհական անունը Եղիա և վարդապետութեանը՝ Ատեփան լինելով, հայք իւր չարդարիք և թուրքերը դէւէ ճահցասա կանուանեն ընդհանրապէս: Դաշնելիքի «կատարեալ մարդու» համբաւ ունի Տաւրոսի լերանց մէջ:

Ռաստ սովորութեան երբ մի օր Փրնուղի վանահայրը Առկիսոնի Ծառ օլուգ գիւղը կը գանուի, և ուր հունձքի ժամանակ լինելով այլ բնակիչք բացակայ կը լինին գիւղէն՝ յանկարծուր կը հասնի թէ թիւրքմէնները գեղին բոլոր նախիրն ու շատարները յափշտակեցին տարին:

Ա շիւնին կը փրթի, ամեն կողմէ ձայն, ամեն տունէ աղաղակ, օգնութիւն, օգնութիւն կը դոշեն: Ժամանակը ուշ և միջոցը կարճ՝ մանաւանդ՝ մեծ ամօթ ու նախատինք վանահօր ներկայութեան, երբ աւազակը յաջողութեամբ և անվնաս տանին իրենց աւարներն:

Վ անահօր քաջութեան համբաւը վտանգի տակ է, ուստի անհրաժեշտ է գործնակալապէս երեւնալ: Օ էնքերը հագուելու պէտք չը կայ, զի սովորութիւն չունի գիշերներն իսկ բաժնուելու այդ նույիրական անօթներէն. ուստի անմիջապէս կը թռչի իր գի-հեյլան ձիին վերայ, եա Փրկն ըսելով կը խոյանայ դէպի աւազակաց ծանսապարհը, ժողովրդեան կաթն ու կարագը փրկելու. խեղճ գիւղացւոց ուրախութիւնը կամ տրտմութիւնը կախում ունի կտրիճ վանահօր վերադարձէն:


Տօռու ձին շուտով կը հասցունէ զվանահայրը իր փափագածին. երկու ժամ չարաչար կը հալածուին աւազակներն. յաղթանակը վանահօր կողմն է. հինգ աւազակներէն երկուքը լեղապատառ հազեւ կաղատին և վանահայրը միւս երկը հատին կողոպուտովն և գիւղացւոց նախիրի ամբողջութեամբն անմիսաս կը վերադառնայ աւելի զուարթերէս ի ցնծութիւն և ի ծիծաղ զիւղականաց:

Գիւղացիք վանահօր այս բարեաց փոխարէն իբրև տասանորդ հարիւր հատ կաթնատու այծ պարզեւ տալ կուղեն. սակայն Ֆրնուզի վանահայրը կը մերժէ, ըսելով թէ պարտականութեանս պահանջը կատարեցի, և թէ ձեր ուրախութիւններն ինձ համար ամենամեծ և թանկագին վարձատրութիւնը կը համարիմ:

Գիւղ չը կայ որ ականատես եղած չը լինի Ֆրնուզի վանահօր այս և այսօրինակ որ և իցէ մի քաջադործութեանը:

Օ էյթունցի հերոսի և իր զինակցաց հրաւերին՝ ի պատեհ առթին արձագանք կրտան լերանց բոլոր խորշերը, ինչպէս մի խումբ առիւծներու մանչիւնին. բայց խիստ կը ցաւինք որ կարող չենք տմեն ինչ գրել... ինչ որ արդէն պատմութեան կըպատկանին:

Վ եպէշան





ՔԵՐՈՎՔԻ ՊԱՏԿԱՆԵԱՆ

Հրատ. «Արմբռ» Հանդիսահ.

ՔԵՐՈՎՅԻ Պ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

† 2 ապրիլի 1889:

Քերովյէ Պատկանեանի մահը ցաւալի կորուստ է ոչ մի-
այն ձայ ազգին համար, որի անունը պատուեց և բարձրա-
ցրեց նա իւր անձով, ոչ միայն հայագիտութեան համար, որի
անխոնջ մշակներից մէն էր նա մօտ 30 տարի ժամանակ, այլ
և Ա. Պետերբուրգի համալսարանին համար, որի պատմու-
թեան մէջ պատուաւոր տեղ բռնեց նա վերջի 30 տարիներում
և լաւագոյն ու օրինակիլի միշատակ թողեց իրանից յետց:

Հանդուցեալ ուսուցապետը ծնաւ Ստաւրոպոլ՝ քաղա-
քում 1833-ին. նորա հայրն էր Պետրոս աւագ քահանայ,
Պատկանեան տաղանդաւոր տոհմից, իսկ մայրը՝ Նննայ, երե-
ւելի Յարութիւն վարդապետ Ելամդարեանի դուսարբ: Իւր
նախնական ուսումն սուացաւ Մոսկուայի Լազարեան Ճեմա-
րանում, որտեղից տեղափոխուեցաւ Ստաւրոպոլի գիմնազիան.
այստեղ 1853-ին դասընթացն աւարտելով յաջորդ թուակա-
նին Պետերբուրգում մոտաւ գլխաւոր Մանկավարժական Ճե-
մարանը, որտեղ ուսումն աւարտեց 1857-ին, և իրեւ այդ Ճե-
մարանի թոշակաւոր՝ յաջորդ տարին (1858, ապրիլ) նշանա-
կուեցաւ ոռուսերէն լիցուի և մատենագրութեան ուսուցիչ
Նորգրովկասեան օրիորդաց Ճեմարանում: Եյս պաշտօնից Վե-
րովյէ Պետրոսեան գուրս եկաւ 1859 օգոստոսին, մնալով
միանգամայն հանրային կրթութեան նախարարութեան մէջ
ծառայողների հաշուու Բ:

Եյս ժամանակ նա ամսւանացաւ Աղաթոն Նքիմեանի
դստեր հետ և մօտ երկու տարի, որոշ պաշտօն չունենալով՝
հանգիստ կեանք էր վարում և իւր համար մասնաւորապէս
պարապում ի միջի այլոց հայերէնագիտութեամբ: Եյս ժա-
մանակին է վերաբերում և նորա Պորպատ գնալը աստուա-
ծաբանութեան դասեր լսելու համար, որին նրան յորդորեց
նորա աներն Աղաթոն Նքիմեան: Եյս բնիկ թիֆլիսեցի հա-
րուստ և զարգացած գաճառականնը, նախանձախնդիր լինելով
Հայոց եկեղեցու բարեկարգութեան՝ անդադար աշխատում էր

ուսեալ և բարեպաշտ հայ եկեղեցականներ պատրաստելու, և որովհետեւ համոզուած էր, որ աստուածաբանական լաւագոյն ուսումը կարելի է ստանալ գերմանական համալսարաններում՝ (նա ամուսնացած էր գերմանուհու հետ) ուստի շատ հայ երիտասարդներ ուղարկում էր “Իորապատ” աստուածաբանութիւն լսելու *). սոցա մեջ էր և Վերովեէ Պատկանեան, որ սակայն երկար չմնաց այնտեղ որովհետեւ հոգեորական կոչումն ստանալու հակամիտութիւն չունէր:

“Նորա Պետեղբուրդ վերադառնալուց քիչ յիսոյ Ա. Պետերբուրգի համալսարանի արևելեան լեզուների բաժնում հայերէն լեզուի դասախոսը, Ինքոյեանց իւր պաշտօնից հրաժարեցաւ, և Վերովեէ Պետրոսեան իւր բարեկամների աշխատութեամբ նոյն պաշտօնում նշանակուեցաւ 1861 թ. սեպտեմբերին ազիւնկտի պաշտօնակատարի կոչումով, որովհետեւ ուսումնական աստիճաններ գեռ չունէր:

Այս նշանակումը, որ Վերովեէ Պետրոսեանի ապագայ կեանքն ու գործունէութիւնը որոշեց՝ նրան խիստ անպատրաստ գտաւ: Հանգուցեալից քանիցս մենք լսել ենք, թէ ի՞նչպէս ի՞նքը, որ առաջ երբէք չէր մտածել հայագէտ դառնալու՝ երբ համալսարանում ընթերցող նշանակուեցաւ՝ մեծ դժուարութեան մեջ ընկաւ: Թէ նա ոչ միայն ծանօթ չէր եւրոպական զրականութեան հայերէն լեզուի և մատենագրութեան մասին, բայց նոյն իսկ հայ նախնի մատենագիրներին ծանօթ չէր և չգիտէր սանսկրիտ և զանդիկ լեզուները: Այս պատճառով նա իւր բոլոր ոյժը լարեց ինքնակրթուելու հայագիտութեան մէջ, և պէտք է խոստովանիլ որ իւր զարմանալի ընդունակութեամբ և տոկունութեամբ համեմատաբար կարծ ժամանակում նա իւրացրեց այդ գիտութիւնը և իւր շարադրութիւններով պատկառելի անուն վաստակեց իբրև հայագէտ: Նորա այս նախկին, այսպէս ասած ինքնակրթական աշխատութեանց արդիւնք են Catalogue de la littérature arménienne depuis le commencement du IV-e siècle jusque vers le milieu du XVII

*.) Այս երիտասարդներից ի միջի այլոց յիշելու է հանգուցեալ Համբարձում վարդապետ Փափազեանին, որ Շուշում մի ժամանակ բարեկարգ գոլոց էր պահում: Պարիգոր արքեպիսկոպոս Աղափիրեանին, պ. Պետրոս Ախմեոնեանցին, ևն:

(1860, Գիտութեանց Շեմարանի օրագրում), Մովսէս Աաղանկատուացու (1861), Սեբէոսի (1862) և Պետոնդի (1862) ռուսէրէն թարգմանութիւնները ծանօթութիւններով հանդերձ:

Մոտ երեք տարի անընդհատ աշխատելով և ի միջի այլց պարապելով արեւելիան հին լիզուններով՝ Ք. Պատկանեան 1863 տուեց մազիսալրոտի քննութիւն և իրեւ շարագրութիւն ներկայացրեց իւր «Օպыտ իсторի դինաստի Սասանիով ու շահնամեացաւ մազիսալրոտ կոչման» (1863, մայիսի 18), որից յետոյ նոյն տարու սեպտեմբերին համալսարանում գոցենտի պաշտօն ստացաւ: Յաջորդ տարիննա տպէց իւր առաջին լեզուագիտական հետազոտութիւնը Առևելուանու ու ստումնական բարձրագոյն աստիճանը (1864, մայիս 11):

Եյս պաշտօնական աշխատութիւններն աւարտելոց յետոյ, որոնք կարեւոր էին ուսումնական աստիճաններ ստանալու և պրոֆէսորի պաշտօնին ընտրուելու համար՝ Պերովէ Պիտուսեան անձնատուր եղաւ իւր միանդամ արդէն ընտրած առարկային, հայագիտութեան, և գրեթէ իւրաքանչեւր տարի լցու էր ընծայում որեւէ աշխատութիւն: Եյս աշխատութիւնները որոց մեծագոյն և հետաքրքրական մասը գրուած է ռուսէրէն լեզուով՝ երեք գլխաւոր կարգի կարելի է բաժանել (ա) հայ մատենագիրների հրատարակութիւն, և նոցա ուսւերէն ամբողջ կամ քաղուածօրէն թարգմանութիւնները ծանօթութիւններով հանդերձ, բ) Պատմական հետազոտութիւններ, զ) լեզուաբանական հետազոտութիւններ:

Առաջին կարգից ուշագրաւթեան արժանի են Միհթար Սյրիվանեցու (1867), Մաղաքիա աբեղայի (1870), Ենանիա Շիրակացու (1877), Սեբէոսի (որի հետ միասին Միհթար Սնեցու պատմութեան սկիզբը, որ ինքը գտաւ—1879), Փաւստոսի (1883), Թովմայ Երծրունու (1887) հրատարակութիւնները հայերէն լեզուով, Միհթար Սյրիվանեցու (1869), Մովսէս Աաղանկատուացու, Սեբէոսի և Պետոնդի պատմութեանց ռուսերէն թարգմանութիւնները ծանօթութիւններով և յաւելուածներով հանդերձ, չայոց աշխարհագրութիւններ և դարի (Մովսէս Խորենացու անուանուած),

ռուսերէն և հայերէն, ընդարձակ յառաջաբանով, բազմաթիւ ծանօթութիւններով և երկու քարտէսով (1877):

“Նորա պատմական հետազոտութեանց մէջ (բոլոր ռուսերէն լեզուով) յիշելու է, բացի Սասանեանց ցեղի պատմութեան Փորձը՝ նաև հետեւեալ աշխատութիւնները. Օրագիր Սպահանի պաշարման Աֆղանների ձեռքով (1870), Մողոլների պատմութիւն հայ աղբիւրներից (Հա. Ա. 1870, Հա. Բ. 1874) Թագղաթ-Փաղասարի կարծեցեալ արշաւանքը գէպի Խոդոսի եղելքը (1879), Վանի արձանագրութիւնները և նոցա նշանակութիւնը առաջաւոր Ասիայի պատմութեան համար, (Յօդուածներ Հանրային կրթութեան նախարարութեան Օրարում (1874—1883), որոց Ի, Գ և Ե գլուխներում նաքննում է Մ. Խորենացու Ա. զրքի աղբիւրը, այսինքն Մար Երսա Կատինան, Հայոց նախկին պատմական աւանդութիւններն — Երարատ, և Վարաց հին Ժամանակագրութիւնը, որ այնքան աղմուկ հանեց Վարաց մամուլին մէջ):

Լեզուաբանական հետազոտութեանց մէջ, բացի վերևու յիշատակուած Հետազոտութիւնը հայերէն լեզուի կազմութեան մասին, նշանակելու է և հետեւեալները (բոլոր ռուսերէն) Հետազոտութիւն հայ լեզուի բարբառներին (1869), Միքանի խօսք հին հայկական ամիսների մասին (1871), Թաէ ի՞նչ տեղ է բռնում հայերէն լեզուն հնդիկ-եւրոպական լեզուների շարքում (1879), Հայերէն բառարանի նիւթեր, (տեսր Ա. 1882, տեսր Բ. 1884), Գնչուներ. մի քանի խօսք Անդրկովկասի Բոշշաների և Դարաշինների բարբառների մասին (1887):

Բացի այս աշխատութիւններից Վերովեէ Պետրոսեան ունի գրած և ուրիշ յօդուածներ Ոռուսաց և արտասահմանի լրագիրներում *) իւր մականունով կամ Restin, Restaing կեղծամսուններով, նոյնպէս և մամնակցելէ Ոռուսաց հանրագիտական (թուցակով.) բառարանում հայերէն լեզուի, պատմութեան և աշխարհագրական բաժիններում:

*) Journal Asiatique, Revue Orientale, Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft, Журналъ Министерства Народнаго Просвещенія և: «Լորա առաջին աշակերտական յօդուածը, «О сатирик и сатирахъ Кантемира» վերնագրով, տպուած է Ատաւրոպոլի նաշանդական Օեկուցմանց մէջ («Ставр. губ. Вѣдом.») 1853 թ. չ. 2:

Թաէ ի՞նչ գիտնական արժանաւորութիւններ ունին այս աշխատութիւնները, և ի՞նչ նշանակութիւն ունեցաւ հանդուցիալ ուսուցչապետն իբրև ուսեալ հայագէտ՝ մեր համառօտ կենսազրական յօդուածի նպատակից գուրա է սոցա պատասխանել: Հանգուցեալի կերպարանքը գեռ մեր աչքի առջեն է, նորա ձայնը հնչում է մեր ականջին, այսպէս տպաւորութեան տակ գժուար է առարկայական (objeetif) տեսակէտից նայել գործին վերայ և զրեթէ անկարելի է լինել բոլորին անաշառ: Եյսպիսի քննադատական մի յօդուած կարելի է զրել ժամանակ անցնելուց յետոյ, երբ հանգուցիալի անձնաւորութեան յիշատակն այլեւս արգելք չի լիներ նորա աշխատութիւններն իբրև որևէ աշխատութիւններ նկատելու: Ներկայումս բաւականնում ենք միայն ասելով, որ այս աշխատութիւններով նա Ոռուսաստանում շարունակեց իւր նախկին վարժապետի, Մկրտիչ Էմինի գործը, ծանօթացնել ուսւ գիտնականներին հայոց մատենագրութեան ու պատմութեան հետ, մատչելի գարձրեց Ոռուսաստանում պարապող հայագէտներին եւրոպական մատենագրութեան մէջ մշակուած պատմական և լեզուաբանական նորութիւնները, գիտնական ոճ մոցնելով հայոց պատմութեան և զրականութեան ուսումնասիրութեան մէջ՝ ցրուեց այն առասպեկտական խաւարը, որ պատում էր մեր նախկին պատմութիւնը և մի քանի պատմագիրներին, իւր շարադրութիւններով նոյնպէս և դատախոսութիւններով կրթեց նոր սերունդ հայագէտների: Նորա զբութեան ոճն այնքան պարզ և գեղեցիկ է, որ Հին-պատմական և լեզուաբանական հետազօտութիւնները կարդալիս մարդ մոռանում է, թէ նոքա մասնագիտական, շատերին ձանձրալի և անհետաքըրքըրքական նիւթերի են, և կարգում է ինչպէս վէպ: Նա իւր որևէ շարադրութիւնը զրելիս՝ աչքի առաջ է ունեցել նոյն նիւթին վերաբերեալ բոլոր գրականութիւնը: Մենք ինքներս լսել ենք նորա բերանից այս խօսքերը, թէ փմ զրուածներիս կարող ննչաւանիլ կամ պախարակել բայց ինձ մեղադրել թէ ևս զրածիս զրականութեանը ծանօթ չեմ՝ ոչ ոք չէ կարող: Որևէ բանի ձեռնալիկելիս՝ ևս ծանօթանութեանը եմ բոլոր գրականութեան, որ նոյն նիւթին վերայ կարելի է գտնելու: Պէտք է ասել ոչ

ոք մեղադրող չկար նորան, ուրեմն նորա այս խօսքն ինքնապաշտպանութիւն չէր, այլ նա բացատրում էր իւր աշխատելու եղանակը, յորդորմելով իւր խօսակցին՝ նոյն կերպով մանրամասնորէն ծանօթանալ գրականութեան հետ որևէ նիւթի վերայ զրելիս:— Նորա երկասիրութեանց արտաքին կողմի մասին եթէ կայ անիկու մի մեղադրանք՝ այն է, որ նորա հայերէն հրատարակութիւնները (Հին մատենագիրների) զուրկ են ծանօթութիւններից և մշակութիւնից, մինչդեռ նոցա ռուսիրէն թարգմանութիւնները նա ճոխացրել է հետաքրիական ծանօթութիւններով, յառաջաբաններով ու յաւելուածներով, նոյնպէս և այս, որ նորա բոլոր գիտական գրուածքները ռուսիրէն լեզուով լինելով՝ մատչելի չեն Հայերի մեծամասնութեան (Տաճկաստանում և Ուստաստանում), նոյնպէս և եւրոպացի գիտնականներից շատերին, որոնք ծանօթ չեն ռուս լեզուին: Եյս պատճառով պէտք կինի նորա գրուածքները, գոնէ քաղուածորէն թարգմանել և Հայերէն տպել որպէս զի ընդհանրանան ընթերցողներին մէջ և սպասուած արդիւնքն արտաքիրէն*):

Իբրև համալսարանի ուսուցչապետ՝ Քերովը Պետրոսի անզուգական ուսուցչապետ էր ուսանողներին համար: Նորա բարձր հասակը, խելացի դէմքը, հանդարտ հայեացքը, շարժմանց բարեձեռութիւնը՝ արդէն գրաւում էին նորա ունինդիրներին: Բայց այս արտաքին բարեկազմութեան լաւ տպաւութիւնը կրկնապատկում էր նորա հոգեկան, աւելի ձիշն ասած բնաւորական առաւելութիւններով. բարեխզդութիւնը եւր պաշտօնը կասարելիս, վեհանձնութիւնը, փոքրոգի եսականութիւնից հեռու լինելը, այն ծանր և վայելուչ զիւքը, որ նա գիտէր տալ իւր շարժման ու խօսակցութեան՝ անսսելի պատկառանք էին ազդում ուսանողներին և նոցա աչքում նորան նմանեցնում էին Ողիմպեան Նրամազգին: Եթէ աւելցնենք և այն, խիստ քիչերին օժտուած ձիլքն, ատենաբանութեան ընդունակութիւնը՝ մենք կարողանանք մակաբերել այն մեծ յարգանքն ու սէրը, որ նա վայելում էր ուսանողների

*) Խիստ օգտակար գործ արած կլինէր Հայ. գրքերի հրատ. Բնկերութիւնն, եթէ այս ձեռնարկութեան գլուխն անցնէր, հեղինակի ժառանգների համաձայնութեամբ:

կողմից, մանաւանդ վերջի ժամանակները, երբ տկարութեան պատճառով սակաւ էր գալիս համալսարան։ Կատարեալ տօն էր ուսանողներին համար, երբ լսում էին, թէ Քերովքէ Պետրոսեան այսօր Պարսից պատմութիւն պիտի կարդայ։ Լսարանում բոլոր տեղերը նախապէս բռնում էին խիտ առ խիտ նստած ուսանողներն և սպասում անհամբեր նորա գալրւստին։ Ճեմարանական ժամից ճիշտ 25 վայրկեան անցած՝ երկար նրբանցքի ծայրից լսում էր նորա քայլերի ձայնը, և մի յաղթական շշուկ «գալիս է, գալիս է» ակամայ դուրս էր պրծնում լսարուած ուսանողների շրթունքից։ Մանում էր Քերովքէ Պետրոսեան, զլիի թիթե շարժումով բարեւում ուսանողներին և ամբիոնը բարձրանում։ Երբ թեկերը ամբիոնի գրակալին վերայ ծալած մի քանի րոպէ ուշաբիրում էր նախկին դասախոսութեան վերջը և նոյն աւուր խօսելիքի սկիզբը՝ խորին լոռութիւն և անհամբեր անձկութիւն տիրում էր ուսանողներին։ Բաց էր անում այնուշետե բերանը Քերովքէ Պետրոսեան, և նորա ծանր խօսուածքի ու յստակ արտասանութեան շնորհիւ ոչ մի բառ, ոչ մի շեշտ չի խուսափում ուսանողներից, որոնք լսում էին նորա խօսքերը նոյն պապակով, ինչպէս խոպան երկիրը ծծում է անձրեւ առաջին կաթիները։ — Նա գիտէր իւր առարկան հետաքրիզական դարձնել իւր լսողներին, և այնպիսի մի ըոր նիւթ, ինչպէս Պարսից նոր պատմութիւնն է, որի արտաքին աշխարհավարութիւնը բովանդակվում է գրեթէ միայն «արշաւել ասպասակել սպանել յաղթել յաղթուիլ» գաղափարներում, իսկ ներքինը՝ «կողոպտել յափշտակել կուրացնել, բանտարկել, սպանել զեղխութիւն անել գաղափարներում» լսում էին ուսանողները մեծ ուշադրութեամբ, զգածվում նորանով և առհասարակ հետաքրիզում Պարսկաստանի անցեալով ու ներկայով։

Նոյն յարգանքն ու պատիւը վայելում էր հանգուցեալը և իւր ընկերների ու բարեկամների շրջանում, շնորհիւ իւր խոհեմութեան, որով գիտէր խօսելու և լոկու ժամանակը, և վայելութեան իւր բոլոր վարք ու բարքին մէջ։ Հայ մնալով հանդիրձ՝ նա կատարեալ եւրոպացի էր իւր վարքով։ Նորա մասին կարելի է ասել համարձակ, թէ նա գիտէր պահել իւր

պատիւր, և պատիւ չեր փնտոռում ուստի և պատիւր գնում
էր նորա ետեից:


‘Նա մեռաւ իւր կեանքի ամենապտղաբեր շրջանում, երբ,
չունենալով ոչ մի նիւթական հոգ և փառքի ձգտումներ, զի-
նաւորուած զիտութեան մատակարարած բոլոր միջոցներով
իւր երկարամեայ աշխատութիւններով փորձառու դարձած՝
նա կարող էր իւր կեանքը նուլիրել միայն զիտութեան և իւր
գլուխ-գործոցներն երկասիրել...

‘Կայց խեցգետնի հիւանդութիւնը լեարդում, որ մօտ երկու
տարի հետզհետէ խզում էր նորա կեանքի թելն՝ անցիալ
տարուան վերջերում սաստկացաւ և անկողին ձգեց նրան,
որ վերջի չորս-հինգ ամիսն իսկապէս ոչ թէ ապրում էր, այլ
տանջվում, կրուելով անքժշկելի ախտին հետ իւր բոլոր կազ-
մութեամբ, բոլոր կենդանական ոյժով։ Հիւանդութիւնն պատ-
ճառով վերջի ամիսներում կերպակուը մարսել չկարողանալով՝
հիւծուեցաւ ֆիզիկապէս, մինչեւ այն աստիճան, որ ապրիլի
2-ին նորա կազմուածքն այլ ևս ոյժ չունեցաւ կռուելու սար-
սափելի խեցգետնին հետ և զինաթափ եղաւ...

Հանդուցեալ ուսուցչապետը անդամ էր հետեւեալ ուսում-
նական հաստատութեանց.

‘Ներգործական անդամ — Ռուսաց Հնագիտական Շնկե-
րութեան (Русск. Археолог. Общество, ընտրուած 1860 թուին).
Գերմանական Արևելեան Շնկերութեան (Deutsche Morgenländi-
սche Gesellschaft, ընտր. 1860 թ.). Կայսերական Եղատ-տըն-
տեսական Շնկերութեան (Импер. Вольно-Экономич. Общ., ընտր.
1870 թ.), Ռուսաց Կայսերական Եշխարհագրական Շնկերու-
թեան (Импер. Русское Географияц. Общ., ընտր. 1873 թ.). Թղթա-
կից-անդամ Փարիզի Ազգագրական Շնկերութեան (Société d'Eth-
nographie, ընտր. 1876 թ.) ներգործական անդամ — Գերմա-
նական ազատ Հաստատութեան գիտութեանց, արուեստ-
ների և հանրային կրթութեան (Freie Deutsche Hochstift für Wis-
сenschaften, Кünste und allgemeine Bildung, ընտր. 1878), Փարիզի
Ասիական Շնկերութեան (Société Asiatique, ընտր. 1880 թ.),
վերջապէս թղթակից-անդամ Ա. Պետերբուրգի Գիտութեանց
Շնկերանին (Академія Наукъ, ընտր. 1884 թ.):

Առ. Ա.





ԳԱՐԻԵԼ ԱԽԱԳ ՔԱՅԱՆԱՅ ՊԱՏԿԱՆԵԱՆ

Հրատ. «Արարու» հանդիսավոր.

ԳԱՅՐԻԻԼ ԱԿԱԴ ՔԱՀԱՆԱՑ ՊԱՏԿԱՆԵԱՆ

† 13 ապրիլ 1889

Ի՞նքնակենսագրութիւն *)

Տէր Գարբիկէլ մագիստրոս աւագ քահանայ Պատկանեան ծնուած է Թիֆլիսում 1802 թուին, փետրուարի 26-ին:

Հայրն էր Աերովը վարժապետ Պատկանեան Պոլսկի, որին մանկութեան ժամանակ ուսում ստանալու համար ծնողները ուղարկել են Վ. Ա. ազարու վանքը և Տրիեստ: Նաւ սովորելով հայերէնը՝ 1792 թ. վերադառնում է Պոլս, որտեղից 1793 թ. մեկնում է Թիֆլիս, այնուհետև 1817 Նոր-Խախիջեան, 1819 Աստրախան գերգաստանով և Գարբիկէլ որդովը հանդերձ, որը այս ժամանակ արդէն եօթը տարեկան էր: Փոքրիկ Գարբիկը այստեղ առաջին անգամ մտաւ Եղաբարեան ուսումնարանը, որտեղ նորա հսյրը դասախոսում էր հայ լեզուն: 1816 թ. ուսումնարանից դուրս դալով՝ Յովհաննէս արքեպիսկոպոսի հրաւիրանով ընդունեց հոգեուրական կոչում, հետեւեալ 1817 թուին ուրար ստացաւ և միենցն ժամանակ հոգեորդ դպրոցի վարժապետ նշանակուեցաւ:

Եյս պաշտօնին մէջ մնալով հանդերձ 1821 թուին նշանակուեցաւ նաև տեղւյն հայոց հոգեորդ կոնսիստորիայի ատենապետ, և առաջնորդի քարտուղար ու թարգման:

1822 թ. հրատարակեց «Արդապետութիւն ուղղափառութեան Հայաստանեայց» Եկեղեցւոյ պիգչը: 1823-ին ըն-

Ե Տէր հանգուցեալ Տ. Գաբրիկէլ աւագ քահանայի կեանքի մասին մի քանի համառօտ տեղեկութիւններ տալ ցանկանալով՝ բաղդաւոր ենք, որ կարող ենք այստեղ տեղաւորել նորա ինքնակենսագրութիւնը, գրաբառից թարգմանելով և տեղ տեղ, ուր հարկն ստիպում էր փոքրիկ կրծատումներ անելով որոնք սակայն լուն կենսագրական նիւթերին չեին վերաբերում:

Եյս ինքնագրութիւնը կարծում ենք, աւելի նպատակայարմար և համապատասխան է, քան ուրիշ որ և է, թէպէտ խիստ ընդարձակ կենսագրութիւններ հանգուցեալի մասին:

գարձակ պատասխան 1824-ին տեղի ունենալու ծռազատիկը ցանկացողներին դէմ:

Հետեւել աարին, 1825 թուականին, լոյս ընծայեց «Սղէքսանդր Մակեդոնացու պատմութիւնը» Դիոդորոս Սիկելիացու հնախօսութիւնից թարգմանած: «Նոյն թուականին սեպտեմբերի 25-ին, Գարբիէլ Պատկանիան ամուսնացաւ Խղիսաբէթ Մելքոնեան Սունդուկեանցի հետ, որից ունեցաւ ինն զաւակ:

1826-ին դէկտ. 15 ծնուեց Աստրախանում Յովհաննէս որդին, այնուհետև՝ «Նոր Նախիջևանում ծնան նորա միւս զաւակները, 1828-ին, օգոստոսի 25-ին Մարիամ գուսարը, 1830-ին հոկտ. 5-ին, Ռափայէլը, 1834, փետր. 2-ին, Վառվառէ, 1835-ին, մարտի 1-ին Վահագն, 1837-ին Կրուսեակ, որ մեռաւ մի տարեկան հասակում, 1839, Հրաշեայ, որ մեռաւ մի տարեկան հասակում, 1841-ին Լուսաբէր 1843-ին Ասպիրա:

1825 թ. տիրացու Գարբիէլը գործակից է լինում Աստրախանայ փոխնահանդապետ Սմիրնովին՝ հայերին երգուեցնելու «Նիկողայոս նորապսակ կայսեր հպատակութեան: 1826 թ. փետրուարի 14-ին ձեռնազրպում է սարկաւագ: 1827 թ. Հրաւիրվում է «Նոր Նախիջևան, ուր գտնվում էին նորա ծնողները, քաղաքային գալրոցում ուսուցչութեան պաշտօնով, որտեղ նա մինչև 1831 թ. աւանդում է հայերէն:

1831-ին յուլիսի 1-ին «Ներսէս արքեպիսկոպոսի հրամանով գնում է Աիշնե տեղւյն հոգեոր կառավարութիւնը թեմական կոնսիստորիա դարձնելու: Հետեւեալ 1832 թ. յունուարի 17-ին, Գրիգորուապոլիս քաղաքում քահանայ ձեռնադրութիւն ուղարկվում է «Նոր-Նախիջևան:

Նկեղեցական հաշիւ պահանջելիս՝ առաջնորդի և հասարակութեան մէջ զժտութիւն է ծագում: և Տէր Գարբիէլը երկու կողմից ևս հրաւիրվում է այդ հաշիւը քննելու: Բայց որովհետեւ այս քննութիւնը նպաստաւոր չէ լինում հասարակութեան համար՝ ուսատի 1845 թ. երբ «Ներսէս արքեպիսկոպոսը ամենայն հայոց կաթողիկոս ընտրուելով գնում էր Խջմիածին՝ «Նոր Նախիջևանում ցանկանալով շահել հասարակութեան սիրող, որի քաղաքազլուխ Յարութիւն Խալիբեանը Տէր Գարբիէլի ոխերիս թշնամին էր՝ նորան Նախիջևանից հեռացնելով գերդաստանով հանդերձ Խախիլիս աեղափոխեց:

Եյտ ժամանակ Տէր Գաբրիէլի Յովհաննէս և Ուափայէլ որդիքը սովորում էին Լազարեանց Ճեմարանում, իսկ Վահագն Պողոսնէժի զինուորական դպրոցում:

Ի՞սկ Ներսէս կաթողիկոս նորա թշնամիների սիրտը շահելու համար Տէր Գաբրիէլի Յովհաննէս և Ուափայէլ որդիներին հանելէ տալիս Լազարեան Ճեմարանից և Ծեսսարաբից ու Թիֆլիսի կոնսիստորիաներին թոյլ չէ տալիս Վահագնին վկայական տալ. այնպէս որ այս երեք որդիքը ստիպուած էին Թիֆլիս վերագաւանալ իրենց հօր մօտ, մինչդեռ սա ինքը ոչ մի պաշտօն չունենալով նեղ վիճակի մէջ էր ապրում:

Ի՞սկ Տէր Գաբրիէլ չվհատեաւ և ջանաց կրօնուսոյցի պաշտօն ստանալ Թիֆլիսի արքունի Ճեմարանում, որի հոգաբարձու զիներալ Ամիրնովը Ներսէս կաթողիկոսի ծանօթն էր և Տէր Գաբրիէլի բարեկամը: Նրբ Հոգաբարձուն 1846-ին Ներսիսի կարծիքը հարցրեց այս մասին, Ներսէս պատասխանեց, թէ ինքը մտադիր է Տէր Գաբրիէլին տեսուչ նշանակել Ներսիսեան դպրոցում:

Յիւրաւի, 1850-ին կաթողիկոսը իր խօստացածը կատարեց, սակայն առանց հարցնելու թէ այն հինգ տարիներում Տէր Գաբրիէլը գերդաստանով ծանրաբեռնուած ի՞նչպէս անցրեց իր օրերը այնպիսի մի քաղաքում, որ ապրուստի դժուարութեան կողմից հաւասարվում է Պետերբուրգին:

Տէր Գաբրիէլ այս ժամանակ բացելէր Թիֆլիսում գիշերօթիկ վարժարան, որտեղ սովորում էին հայերէն, վրացերէն, ռուսերէն, գաղղիերէն և գերմաներէն: Նոյնպէս կարզի էր բերել և իր տպարանը և սկսելէր տպել իր «Արարատ» շաբաթաթերթը:

1851 թ. մայիս ամսում Ներսէս կաթողիկոսը հրամայեց Տէր Գաբրիէլին վերագարձնել Նոր-Նախիջևան, որի նորընտիր առաջնորդը Մատթէոս, տեսնելով որ Խալիբեանը կաթողիկոսի կոնդակի վերայ յցս դրած չէր կամենում եկեղեցական գումարների հաշեւը տալ, բողոքելէր ներքին գործոց նախարարութեան: Նրբ Տէր Գաբրիէլ նոյն մայիս ամսում Նոր Նախիջևան հասու, առաջնորդը նրան ծիրանի խաթէ փիլոն պարզեւեց, հոգեւոր կտուավարութեան նախանդամը կար-

գեց և իրեն փոխանորդը ընտրեց եկեղեցիների մէջ ու հետը Խրիմ տարաւ Վարոնցով կոմսի օրդու հարսանիքին:

Խրիմից վերադառնալիս, Տէր Գաբրիէլը իմացաւ, որ ‘Ներսէս կաթողիկոսը, բարկանալով Մատթէոս արքեպիսկոպոսին վրայ հոգեւոր կառավարութեան նախագահութիւնը և ուրիշ արտօնութիւններ Տէր Գաբրիէլին տուած լինելուն համար, Մարգիս Դալալեանին ուղարկել է վիճակը քննելու և պատուիրել է գաղտնապէս Տէր Գաբրիէլին դէմ զինելու համար հոգեւորականներին, որոնք նորա բացակայութեան ժամանակ բազմաթիւ բողոքներ են դրած եղել Սինօդին և ներքին գործոց նախարարին:

Վահանաների բողոքը նախարարը ուղարկում է ‘Ներսէս կաթողիկոսի քննութեան և սա հրամայում է Սինօդին զըկել Տէր Գաբրիէլին բոլոր քահանայական իրաւունքներից դուրս անել հոգեւոր կառավարութիւնից և բողոքը քննութեան առնել:

Եյսադէս 1852 թուականի սկզբում, Սինօդի հրամանը հասնում է ‘Նախիջևան և Տէր Գաբրիէլը զըկվում է քահանայորդութիւն իրաւունքից և հոգեւոր կառավարութեան նախանդամութիւնից: Բայց թէ քննութիւնը ի՞նչ արդիւնք ունեցաւ, ոչ ոք չիմացաւ, որովհետեւ ժամանակը պահանջում էր ծշմարտութիւնը ոչ թէ երեան հանել այլ ծածկել ըստ որում մի կողմից Խալիբեանը առաջնորդին հաշիւ չէր տալիս, իսկ միւս կողմից Ներսէս կաթողիկոս կոնդակով Խալիբեանին յանձնում է առաջնորդական իշխանութեանց բոլոր իրաւունքները, այնպէս որ Խալիբեան Սոր ‘Նախիջևան քաղաքի թէ հոգեւորական և թէ աշխարհակական տէրը դարձաւ:

Ենցաւ 1852 թուականը, անցաւ և 1853-ի կէսը: Տէր Գաբրիէլ սկսեց բողոքագիր պատրաստել, Սինօդի և կաթողիկոսի ձեռքով նախարարին յանձնելու համար, թէ ևս չ'գիտեմ, ի՞նչու համար Սինօդը գետ քննութիւն չարած պատժել է, ե՞րբ պէտք է լինի քննութիւն, ի՞նչ պէտք է քննուի, ովքեր են քննիչները և ի՞նչու ինձնից ոչինչ չեն հարցնում: միթէ Թիֆլիսում ես քիչ ժամանակ պարապ մնացի, խնդրեմ ինձ դատաստան և իրաւունք անել:

Տէր Գաբրիէլ ինքը նիւթեր ժողովեց և բողոքագիրը խմբագրից, բայց որովհետեւ լաւ գիտէր, թէ այն մի բողոքա-

զրի վերայ պէտք է հիմնուի քննութեան մանրամասն գործը, որի մէջ պէտք է յայտնուեին բաղմաթիւ դադանի թշնամութիւններ ու զրկանքներ, որոնցից այնքան զլուել էր Տէր Գարբիէլը, պէտք է երեան կային այն բոլոր որոգայթները, որոնք 1831 թուականից ի վեր նորա գէմ լարում էր Խալբեան և այն հնարագիտութիւնները, որոնք նա դործ էր զնում զբաւելու համար անաշառ և անկաշառ կոչուած՝ Ներսէս կաթողիկոսի սիրու, քաջ գիտենալով որ այս խնդրագրից յետոյ կամ ինքը Տէր Գարբիէլը պէտք է աքսորուէր՝ Նոր Խախիջեանից կամ Խալբեանը պէտքը կորչէր և Ներսէս կաթողիկոսը մեծ անբաւականութիւնների մէջ ընկնէր, ուստի՝ Տէր Գարբիէլ չհամարձակեցաւ իր ըստ քմաց գրած բողոքադիրը մատուցանելու, այլ մնառեց և գտաւ մի քաջ փաստաբան Գարչիւսկի անունով որի հետ ծանօթանալով Խարապետ Խսմայիլեանցի, իր խոստովանորդու միջնորդութեամբ, ցոյց տուեց նորան իր բողոքագրի նիւթերը և ուրիշ վաւերական թղթեր, որոնք հարկաւոր էին գործի համար:

Եյս ժամանակ Գարչիւսկի փաստաբանը վարում էր Յարութիւն Թակրտեանի գործը որ Տէր Գարբիէլ Տէր Ախմէօնիանցի խորհրդակցութեամբ գիշեր ժամանակ պատուհանից հրացան էր արձակել պոլսեցի Յովհաննէս Թարթիլիքեանի վերայ (մինչդեռ Տէր Գարբիէլ Պատկանեան Թիրթիլսումն էր) և նորա ծնօաը վերաւորելով, խեղաթիւրել է նորա երեսը և մի քանի տարուց հետէ բանդումն էր գտնվում։ Գարչիւսկի զրում էր նորա մասին, իսկ Խսմայիլեանցը միջնորդ էր փաստաբանի և բանդարկեալը մէջ։

Գարչիւսկին Տէր Գարբիէլը բողոքագրի բովանդակութիւնը կարդալով տալիս է այն Խսմայիլեանցին, որ տանի Տէր Գարբիէլին և նորան ասէ, թէ ինքը—Գարչիւսկին — նոյն օրերը Ոստովից պէտք է տեղափոխուի Խովոչերկասկ, ուր մի դործ կայ, որ եթէ նա մինչև օգոստոսի սկիզբը աւարտէ 3,500 ռուբլի կ'ստանայ, իսկ եթէ Տէր Գարբիէլը մինչև այն ժամանակ 1,500 ռուբլի պատրաստի, ինքը խօստանում է զրել նորա բողոքագիրը։ Խսմայիլեանցը հարցնում է Գարչիւսկուց, թէ Տ. Գարբիէլ այս թղթով ի՞նչ է կամենում ձեռք բերել և Գարչիւսկին բոցավառ աչքերով պատասխանում է, թէ

Տ. Գաբրիէլը սորանով կամենում է Խալիբեանին բարոյապէս սպանել և սկսում է մի առ մի թուել թէ աշա Ներսէս կաթողիկոսը յանձաւոր է այս բանում, որ նախարարը քահանաների բողոքագիրը նորան է ուղարկել քննելու և նա պէտք է քննութիւն բացանէր և քննիչների և իր կարծիքը պարզէր, որպէս զի եթէ նախարարը Տէր Գաբրիէլին պատժի արժանի գանէ, կաթողիկոսին յանձնել նորան պատժել բայց եթէ այժմ քննութիւնից դուրս կայ, որ քահանաների բողոքները զրադաշտութիւններ են Տ. Գաբրիէլ վրայ, ինչու համար սա արդէն պատիժ կրեց և գեռ կրում է, ինչպէս յանձաւոր և արդէն դատաստանով դատապարտուած:

Իսկ այս վաւերաթղթերից յայտնի երեւում է թէ Արագիս վարդապետն է լալել այս որոգայթը և Ներսէս կաթողիկոսը հոգեոր կառավարութիւնից հեռացրել է նախարարի հրամանով հաշիւ էր պահանջում, և Խալիբեան կաթողիկոսին շափ յանձաւոր է, որովհետեւ Օմիւնիայի հրկիվալների համար ժողովուած հազար պոլումագիրեալլ տարել և առաջնորդութեան կոնդակ է ստացել, որպէս զի առաջնորդը և հոգեոր կառավարութիւնը չկարողանան նորանից հաշիւ պահանջիւ եկեղեցական 350,000 ռուբլի մեծ գումարի մասին: Եթէ Տ. Գաբրիէլը այս բողոքը հասցնէ ուր հարկն է, յիրաւի, Խալիբեանին սպանած կ'լինի՝ բացի այս մեծ գժգոհութիւն կ'լինի Եթոռին, որից կսկսն հարց ու փորձն անեն, թէ ի՞նչու այնքան վիշտ ու նեղութիւն է կրել Տ. Գաբրիէլը 1830 թուականից մինչև 1845 թ. Նոր Խախիջևանում; 1845 թ. մինչև 1851 թուականը Թօմիֆլիսում և 1851 թուականից մինչև այժմ դարձեալ Նոր Խախիջևանում: և միթէ արդարագատ տէրութիւնը թոյլ կ'տայ հզօրներին այսքան հարստահարել փոքրներին, մանաւանդ երբ ապացուցուի թէ այս ամենը եղած է ի հաջոյս ոմանց:

Մինչև անգամ բաւական է եթէ հաստատուի, թէ Ներսէս կաթողիկոսը հալածել է ոչ միայն Տ. Գաբրիէլին, այլ նաև նորա որդիներին միայն այս պատճառով, որ բարկացած է Տ. Գաբրիէլի հօր, Աերովք վարժապետ Պատկանեանի վերայ:

Տ. Գաբրիէլը ինչ որ գրել է, բոլորին համար հաւտարիմ

վկաներ ունի և նորա վկաները կենդանի են և են. Դսմայէ-լիանցը, որ բարեկամ էր Խաջուկ Թակրզեանին, իսկ Թակրզեանը թշնամի էր Խալիքեանին, որովհետև առ չէր կամենում նորա բանդից գուրս գալուն ուստի Խամայէլեանցը ուրախութեամբ պատմում է Թակրզեանին բոլորը, ինչ որ լսում է Գարչիեռ-կուց, բայց Թակրզեանը առանձին թշնամութիւն ունէր Տ. Գար, Պատկանեանինի հետ, որովհետևսա Թուֆլիքեանիկոնսիստորեայի հոգեոր կառավարութեան ուռւած հրամանի համաձայն քննել էր Տ. Գարբիէլ Տէր Սիմէօնեանցին Թուֆլիքեանի վերաց հրացանաձղութեանց մասին, որովհետև մինչև Թակրզեանը Թուֆլիքեանի պատուհանի տակ թաք կացած է եղել նորան սպանելու համար, Տ. Գարբիէլ Տէր Սիմէօնեանց իր գուանը կանդնած խօսելիս է եղել մեկին հետ և երբ հրացանի որոտագին ձայնը լսում է, Տէր Գարբիէլ Տէր Սիմէօնեանցը ասում է իր խօսակցին թէ երևի պոլսեցի Յովհաննէսին զարկին:

Քիչ ժամանակ անցած, երբ Թուֆլիքեանը իր վէրքից փոքր ինչ առողջանալով լսում է այս բանը, սկսում է հետամուտ լինել Տ. Գարբիէլ Պատկանեանի հոգեոր կառավարութեան նախագահ գառնալիս այնտեղ արգեն գտնվում էր կոնսիստորեայի հրամանը, որ այս բանի մասին քննութիւն լինի Թուֆլիքեանի խնդրի համաձայն:

Բայց Տ. Գարբիէլ Պատկանեան չէր շտապում գործը առաջ տանելու, յուսալով որ թերեւ հաշութիւն կայանայ Թուֆլիքեանի և Թակրզեանի ու Տէր Սիմէօնեանցի մէջ, որովհետև Տ. Գարբիէլ Պատկանեան սիրում էր Տ. Գարբիէլ Տէր Սիմէօնեանցին:

Այս սէրի պատճառը հետեւալն էր. 1832 թ. նոյեմբեր ամսին Տէր Սիմէօնեանցի փոխանորդ եղած ժամանակ կրակ էր ձղուած Տէր Գարբիէլ Պատկանեանի ախոռը, ուր տեղ այրուեցան նորա ձին, կառքը և ձեռնային վառելիքը: Յա-ջորդ օրը Տէր Սիմէօնեանցը Ա. Լուսաւորիչ եկեղեցին եկաւ և Տ. Գարբիէլ Պատկանեանի հետ առանձնանալով իր մեղքը խօստովանեցաւ և Տ. Գարբիէլ Պատկանեանը ետ կացաւ այս հրձգութեան խնդիրը յուղելուց, այնուհետև նա Տէր Սի-մէօնեանցի վրայ գութ ունէր, իբրև ապաշխարողի վերայ, և երբ նա ամուսնացաւ, նրան Կիշինե ուղարկեց Ներսէս արքե-

պիսկոպոսի մօտ, որ քահանայ ձեռնադրուի իր հօր, Տէր Սիմէօնի փոխարքն, թէպէտ և լաւ զիտէր, թէ ինչպէս նորա հրձգութիւնը, նոյնպէս և խոստովանութիւնը. նոյն ինքն Տէր Սիմէօն Տէր Մարտիրոսեանի խորհրդովն էր, որ սորանով թակարտ էր լարել Տէր Գ. Պատկանեանցի դէմ. որովհետեւ եթէ, սա—Պատկանեանը—յանձաւորի խոստովանութիւնից յետոյ հրձգութեան վրէմը պահանջէր, նորան բամբասեն, իբր խոստովանութիւնը հրատարակող, իսկ եթէ լոէ, վնասուի հրկիզութիւնից, որ հասնում է մինչև 500 ռուբլի:

Իսկ այժմ Յովհաննէս Թառլիքեան իր ձեռքում ունենալով կոնսիստորիայի հրամանը և օրէնսդէտ փաստաբանից օգնութիւն գտնելով, գատաստանի ելաւ. ուստի և Տ. Գաբրիէլ Պատկանեան չէր կարող յապաղել որի պատճառով և նրան շատ թշնամացել էր Թերզեան և մանաւանդ Տէր Սիմէօնեանցը Մատթէոս ալքեպիսկոպոսը Տէր Սիմէօնեանցին նշանակել էր որբոց և այրեաց գանձանակի գանձապետ և նորա ձեռքում գտնվում էր այս գանձանակին պատկանեալ վեց հարիւր ռուբլուց աւելի գումար: Երբ Տէր Սիմէօնեանցը հոգեւոր կառավարութեան ատեանում գատապարտուեցաւ, թեմական առաջնորդը հրամայեց գանձապահութեան հաշեւը պահանջել նորանից և այն գումարը ու գանձապետութիւնը ուրիշն յանձնել:

Տ. Գաբրիէլ Պատկանեանց առաջնորդի սյս հրամանը յայտնեց Տէր Սիմէօնեանցին, որ նոյն գիշելն և եթ, Խալիքեանի և իր քրօջ մարզի օգնութեամբ աշխարհականի անցաթղթով Եջմիածին փախաւ. (նա այնտեղ՝ Ներսէս կաթողիկոսից խաչ և փիլոն ստանալով, յաղթանակով՝ Նոր Նախիջևան վերադարձաւ):

Երբ Խաչատուր Թերզեանը Խամայէլեանցից լսեց Գարշիկսկու խօսքերը, նորա մտքում մի նոր միտք ծագեցաւ. կանչեց գատաւորներից մէկին, որի հետ մտերմութիւն ունէր.... և նորան յայտնեց իր գաղափարը, թէ կարելի է այսպիսի մի որոգայթ լարել թէ Տ. Գաբրիէլ Պատկանեանցը սպառնում է Յարութիւն Խալիքեանին ոչ թէ բարոյական, այլ նիւթական մահ:

Եյս մասին խորհրդակցելով՝ Խալիքեանի ականջը հաս-

շրին և Թմերգեանին բանդից ազատեցին, որպէս զի այն որութայթը լարէ. և նա յաջողեցաւ Գարչիեսկու անունով որութայթ լարել և ամեն կողմից օգնութիւն գտնելով՝ խարեւայութեամբ Տ. Գարբիել Պատկանեանցին բանդը ձգեց, ուր Տ. Գարբիել մնաց հօթը տարի, այսինքն 1853 թ. օգոստոսի 13-ից մինչև 1860 թ. մարտի կէսերը:

Իր բանդարկութեան առաջին օրերում Տ. Գարբիել միտք յղացաւ զրիել «Սանդուխտ կուսի մահը», որի մէջ նկարագրեց իր անցքերը, ամփոփելով երկու օրուան անցքերը նեղ շրջանակում:

1854 թ. աւագ ուրբաթ օրը զրից «Մրմունջք Յիսուսի ի Խաչին» (որը յետոյ Խրիմեան Հայրիկի խորհրդով շատ ընդարձակեց, աւեցնելով Քրիստոսի թաղումը, գժոխքը իջնելը և յարութիւնը: «Սանդուխտ կուսի մահը» տպագրուեցաւ Պոլսում, իսկ «Մրմունջքը» Ոռոստովում): Թմէ և բանդում չէր կարելի թուղթ ու զրիչ պահել բայց այսուամենայնիւ նա 1854 թ. զրից «Հայկերդը», որի մէջ Հայկին խօսելէ տալիս իր որդիների վարք ու բարքի մասին, որոնց տակ ծածկվում էին Աստրախանի, Թմիֆլիսի և Նոր Խախիջևանի հայ բնակիչները. յետոյ խօսելէ տալիս Վրելի մահուան մասին, նկարագրելով նորա անմեղ մահը, որով բացատրում է իր պատանի ժամանակ կրած վիշտերը. յետոյ Հայկին խօսելէ տալիս ծրհեղեղի մասին, որտեղ նկարագրում է իր հալածողների վարքը. ոսկի տարիի առաջին օրը նշանակում է նորա Թմիֆլիս տեղափոխուելը: «Նոյի տեսիլը յետոյ աւելացրեց:

1855 թ. նա զրից «Երամերգը», որի մէջ Հայկ անուան տակ ներկայացնում է իր անձը և բոլոր ժամանակ նկարագրում է իր զրած տառապանքները անիրաւ մեծատունների ձեռքից:

1856-ին զրից «Կրայի մահը», որի անմեղ մահուան տակ ներկայացնում էր իր Թմիֆլիս աքսորուելը գերգաստանի հատ. և այն նեղութիւնները, որ այնտեղ կրից «Ներսէս կաթողիկոսի և նորա մտերիմների հալածանեքից»:

1857-ին զրից «Ննուշաւանը»—(Օմիւռնայում տպուած), որ գուշակութիւն էր բանդից շուտով ազատուելուն, որի իրագործութիւնը խափանուեցաւ Գարբիել վարդապետ Եյվագեսնի առաջնորդ նշանակուելով: Երբ Տ. Գարբիել բանդումը

լսեց՝ թէ Այլազեանը Խալիբեանի հետ միացել է իր հակառակ՝ «Հոթիվսիմէն» գրելու միտք յղացաւ, որ յետոյ գրեց և տպագրուեց Ոռոտովում:

1858-ին գրեց «Պարետի մահը», իսկ 1858-ին՝ «Օտաւան» և «Փառնակը», որոնք տպագրուեցան Օմիւռնայում: Այս երեք երգերում ուրախալքը նկարագրում էն նորա կետնքի յաջողութիւնները Խատրախանում, Նոր-Նախիջևանում, Արշինեւում և Թիֆլիսում: իսկ արտօնականները նորա ձախորդութիւնը. սոցա բոլորում նա հետեւել է ճշմարտութեան, որը կ'հասկանան միայն նորա, որոնք ուշագրութեամբ կ'կարդան նորա բազմաշարչար կեանքի դիպուածները:

1858-ին սկսու գրել «Պարոյրը», բայց հիւանդութեան պատճառով չկարողացաւ գրել նոյն ժամանակ ձեռք զարնեց և ուրիշ գրութիւնների, որոնք մինչև այսօր պարզագրուած չեն: Ժամանակ անցնելուց յետոյ, երբ գոկառը Յովսէփ Շիշմանեան մեր եկեղեցու ծոցը դարձաւ, Տէր Պարբիել տւարտեց «Պարոյրը» և տպագրեց Օմիւռնայում: Բոլոր այս երգերում թէ և գիւցազները չայկ և հայկազունք են, բայց նոցա ճիշտ նպատակն է բացատրել ազգային պատմութեան ոգին, որովհետեւ թէ տեղը (բանզը) և թէ ժամանակը (երբ բռնանում էին Ներսէս կաթողիկոս, Սարդիս արքեպիսկոպոս Զալալեան, Պարբիել վարդապետ Այլազեան և Խալիբեան) չեն ներում յայտնապէս գրել որ մի գուցէ նոր փորձութիւն գոյ նորա գլուխը:

1860 թուականին բանդից արձակուեց և սկսու մանկավարժութիւնով պարապել «Նոր-Նախիջևանում» բայց որովհետեւ նորա մանկավարժութիւնը խափանարար համարուեցաւ Խալիբեան դպրոցին համար, որ մեծ ծախսերով շնուռած էր Թէոդոսիոսում՝ ուսանի 1861-ին յուլիս ամսում աքսորուեցաւ Վետակայ և 1862-ի սկիզբը Կոստրոմայ, որտեղից 1863-ին յուլիս ամսին տեղափոխուեցաւ Պետերովուգ, որտեղ իր Ուժիափէլ որդու տպարանում տպեց «Նիկոլ», «Հայոց ազգի պատմութիւն», «Միջնավէպ», և ուրիշ տետրակի, «Ուսումնի, ուսուցիչք և ուսումնարանք» վերնադրով որի մէջ նախատեսում էր թէ Խալիբեան մեծածախս ուսումնարանը չի կարող այնքան պտղաբեր լինել որ նորա արդիւնքը հաւասարէր դրա-

մազլիսի տոկոսին, բայց և ոչ տոկոսի տոկոսին, ինչպէս և եղաւ ու փակուեցաւ այդ ուսումնարանը:

Վաշտալի Գաբրիէլ Պատկանեանի երկասիրութիւններից վերջին տպագրութեամբ հրատարակուեցան «Առիվսիմէ», «Երդադիլ» պատմութիւն Հայոց» և «Սանդուխտ կուսի եղքօր Երտաշէս մանկան փրկութիւնը», իսկ ձեռագիր մնացածները բազմաթիւ են, որովհետեւ S. Գաբրիէլ Պատկանեան ուրիշ գործով պարապեցաւ. այս խղճալի տառապեալ քահանան, որ իր կեանքում երբեք չէր կարուել ուրիշ օգնութեան և չգիտէր թէ, ի՞նչ է նշանակում մէկից նպաստ ինդրել ծանրութիւն եղաւ իր որդիներին. նախ Յովհաննէսին և յիտոյ Վահագնին. բայց դեռ Վահագնից օգնութիւն չ'ստացած վշտակիր ծերունին Հարկից ստիպուած մայրաքաղաքի մի անկիւնում ծխախոտի փոքրիկ խանութի բաց արաւ և այսպէս ձարում էր իր ապրուսոր:

Նիկրեմ վարդապետը*), որ 1833-ին «Նոր-Նախիջևանում տեսել էր S. Գաբրիէլին, երբ ինքը, գիռ արեղայ, տպատարում էր Ասլաննթեանց Միքայէլ արքեպիսկոպոսին, և որի ձեռքից S. Գաբրիէլը, «Ներսէս արքեպիսկոպոսի հրամանով, առաւ Կարբեցի Յովհաննէս կաթողիկոսի կոնդակը և միւռնի՝ փոխանակ սարսափելու մարդկային կեանքի անհաստատ վիճակից՝ սկսաւ հեղնել նորան, ասելով. «վահ, որ քակէիր զտածարն, ևն և ասաց. «ես կասեմ Ղաղարեան Խաչատուր աղային, որ քեզ եկեղեցից օգնէ. քանի վարձկանք են ի տան Եստուծց հացալիցք, և դու աստ սովամահ կորընչիս» և յիշաւի գնում պատմում է Խաչատուր աղային, որ երբ Հարցնում է թէ որչափ պէտք է տալ Նիկրեմ վարդապետը պատասխանում է. «Ահա Հաղնեայ հինգ ոռուրլին աւելի է և նոււազ չէ»: Միւս առաւօտ ժամկոչը ծիծաղելով գալիս է և ասում թէ Զեղ հրաւիրում են, որ երթաք եկեղեցու զրասենեակը և ստանաք ձեր ամսական ոռօժիկը, և պատմում է վարդապետի մարդասիրական քաջութիւնը:

S. Գաբրիէլը լաւ դիմէր, թէ ժամանակ կ'զայ, որ նա կ'կարողանայ պարտահատոյց լինել ոչ միայն Նիկրեմին, այլ և

*) Պետերբուրգի այն ժամանակուայ յաջորդը:

Նազարեան տան՝ գնաց և ստացաւ ամսական 5 ռուբլի նշանակուած ռոճիկը, որպէս զի տեղիք չ'տայ ասելու, թէ նա ամբարտաւանէ:

Քանի որ Եփրեմ վարդապետը Պետերբուրգում խաղում էր Տ. Գաբրիէլի հետ, ինչպէս կատուն մկան հետ, հեռուեց լուսեցաւ առիւծի մոնշեւնը, այն առիւծի, որ պաշտպան էր եղել իր կորիւններին, որոնց որսորդները յափշտակումէին անխղճաբար կամ կոտորում անտառներում: Այս էր Կոստանդնուպոլսոյ սրբազնն՝ Ներսէս պատրիարքը, որ նախախնամութիւնից կոչուեցաւ բալասանով, ձիթով ու զինով պատել այն վերքերը, որ Ներսէս կաթողիկոս իր բոլոր կեանքում պատճառել էր Տ. Գաբրիէլ Պատկանեանին, նորա ծնողներին, որդիներին և բոլոր գերդաստանին: Եյս քաջ և բարի հովիւր, որ միշտ պատրաստ էր իր անձը գնելու ոչխարներին վրայ՝ տեսնելով Տ. Գաբրիէլի անտերունջ վշտահար վիճակը վերան գթաց և 1877 թուին միջնորդեց ոռւսաց ինքնակալ կայսեր՝ Տ. Գաբրիէլ Պատկանեանի վերայից վերցնել նախատական լուծը, և այս նպատակով սյրաբար աշխատեցաւ նորա պատգամաւորը, Խորէն արքեպիսկոպոս Լուսինեան: Խորա միջնորդութիւնը կատարուեցաւ 1878 թ. սեպտ. 8-ի և 1879 թ. յունուար ամսում Տ. Գաբրիէլ Պատկանեան նորից ստացաւ քահանայութիւն, որի վերայ ամենայն հայոց վեհափառ կաթողիկոս Տ. Գէորգ Դ., իր հայրական, տիրական և հայրապետական գթասրտութեամբ աւելացրեց խաչ, ծաղկեայ փիլին և կամելաւկա 1879-ին փետր. 20-ի կոնդակով, համարաւ 145. իսկ 1880 յունիս 3-ի կոնդակով նորան շնորհեց աւագ քահանայութիւն և մագիստրոս պատուանուն:

Վեհափառ հայրապետի տնօրինութեամբ Ա. Էջմիածնի Ախովը Տ. Գաբրիէլին յանձնեց կրօնուսցի պաշտօնը, որ առաջ վարում էր Եփրեմ վարդապետը, և նշանակեց ռոճիկ 350 ռուբլի: Եյսպիսով վերջացան Տ. Գաբրիէլ Պատկանեան մագիստրոսի և աւագ քահանայի չարչարանքի օրերը, կարծես նորա բաշմաչարչար քահանայութեան յիսնամեայ վերադարձին, որ կատարուելու է 1882-ի յունուարի 17-ին: *)

*) Եյս ինքնակենսագնութիւնը գրուած է 1881 թուականին:

Հանգուցեալ Տէր Գաբրիէլ Պատկանեանց քահանայի թաղ-
ման ժամանակ ուսանող Պ. թ. Օհպարեանը կարդաց հե-
տեհալ գամբանականը:

Դեռ ևս երկու շաբաթ չէ անցկացել այն օրից, երբոր այդ
միւնոյն գերեզմանատան մէջ, այստեղից մի քանի քայլ հեռու, հո-
ղին յանձնեցինք Պատկանեան ազգատոհմի փայլուն շառաւիղնե-
րից մէկին—պրօֆեսոր Քերովը Պատկանեանին: Եւ ահա գեռ
այդ անմոռանալի գերեզմանը հազիւ փակուած, գեռ ևս նորա վե-
րայ թափուած արտասուքները չչորացած, այսօր հաւաքուել ենք
միւնոյն տիսուր պարտքը հատուցանելու նոյն ազգատոհմի մի այլ
նշանաւոր անդամին—Ծեր Գաբրիէլին:

«Օանր՝ չափաչանց ծանր է Պատկանեան ազգատոհմի համար
այդքան կարծ միջոցում երկու այդպիսի ծանր կորուստ ունենալ,
բայց այդ կորուստը միայն Պատկանեաններինը չէ, այդ դառնու-
թիւնը միայն նրանց վերայ չէ ծանրանում:—Ամբողջ հայ ազգը
սկսած Կելայի ափերից մինչև Կեղոսի ափերը, և սկսած հեռա-
ւոր արևելքից մինչև հեռաւոր արևմուտքը մասնակից է այդ կո-
րուստին և վշտակից Պատկանեանների պատկառելի ընտանիքին:

Այ ժողովուրդը յաւիտեանս երախտապարտ պէտք է լինի այն
փառաւոր ազգատոհմին, որը կարծ միջոցում այնքան տալանդաւոր
որդիներ է ընծայել նորան, որդիներ՝ որոնք անմահացրել են իրենց
անունը հայկական պատմութեան էջերում և փառաւորել են այդ
ազգի անունը ամբողջ աշխարհի առաջ:

Ահա այդ չնաշխարհիկ որդիներից մէկն էր նաև այն մարդը,
որի գագաղը այս բոպէիս դրած է մեր առաջ, մի քանի բոպէ ևս՝
և մի բուռն հողը կծածկէ նորան և կլիէ մեղանից հողեղէն շին-
ուածքի վերջին մնացորդը: Բայց Տէր Գաբրիէլի անունը կապրի
դեռ շատ և շատ տարիներ, նորա յիշատակը անջինջ կմնայ բո-
լոր երախտապարտ հայերի սրտերում:

Եւ մի՞թէ կարելի է մոռանալ այն մեծամեծ ծառայութիւն-
ները և օգուտները, որ նա իր երկարամեայ կեանքի ընթացքում
տուել է իր ազգին: Ա աթսուն տարուց աւելի նա անխոնջ կեր-
պով աշխատել է հասարակական փշոտ առպարիզի վերայ:

Ա առաջիններիցն է եղել, որ հիմքէ դրել ուսահայերիս մէջ հայ
լըագրութեան, նա տամնեակ տարիներ ոքնել է հայ սերնդի դաս-

տիարակութեան համար, նա ծաղկեցրել և հարստացրել է մեր դրականութիւնը իր սքանչելի բանաստեղծութիւններով. վերջառ պէս նա մաշել է իր կեանքը Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու պաշտօնէութեան մէջ: Եշ այդ բոլոր ասպարէզներում նա փայլել է միշտ իր բուռն եռանդով, իր անկեղծ ազգասիրութեամբ, իր զօրաւոր տաղանդով և անխարդախ առաքինութիւններով:

Դառն և չափազանց գժուարին են եղել նորա գործունէութեան օրերը: Հալածանք, մատնութիւն, բանդ և պանդխտութիւն — այդ ամենը կրել է նա իր կեանքի մէջ. բայց իրու մի անսասան ժայռ, նա դիմացել է բոլոր այդ փոթորիկներին և անասելի հաստատակամութեամբ տարել է կեանքի ալեկոծութիւնները՝ միշտ իրեն առաջնորդ և ղեկավար ունենալով արդարութեան և իր ազգի սէրը:

Ահա այդ բարեմասնութիւններն եին, որոնք պատկանելի և սիրելի են արել Տ. Գաբրիէլի անունը բոլոր հայերի համար. և ահա թէ ի՞նչու նորա մահը, չնայելով ութսուն և ութամեայ զառամեալ հասակին, գարձեալ վիշտ և տիրութիւն է պատճառում ամենքիս:

Դայց միւնոյն ժամանակ ինչքան նախանձելի է այդ մահը: Փոխուելով այս աշխարհից այժմ նա համարձակ կարող է մօտենալ ամենակալ Աստուծոյ գահի առաջ և հանդարտ խղճով ասել զիօղոս առաքեալի խօսքերը. «Տէ՛ր, զբարւոք պատերազմն պատերազմեցայ, զընթացսն կատարեցի՝ զհաւատսն պահեցի, այժմ կայ մեայ ինձ արդարութեան պսակն»: Եշ նա կստանայ այդ պսակը, որով հետեւ իր ամբողջ կեանքով արժանի է եղել նորան:

Ուղղելով մեր վերջին մնաս բարել այդ թանկագին գիտին մեզ մնում է միայն օրհնել մեծ մարդու յիշատակը:

«Օրհնեալ լինի քոյիշատակդ, բազմավաստակ ծերունի. և օրհնեալ լինեն այն բոլոր գործերը, որ դու կատարել ես քո սիրեցեալ ազգիդ համար: Կու թէե մեռար և հեռացար մեզանից, բայց քո անունդ միշտ կենդանի կմնայ հայ ժողովրդի սրտում, որին դու թողնում ես մի այնպիսի ժառանգութիւն, որով պարծենում է և միշտ պէտք է պարծենայ հայկական մատաղ բանաստեղծութիւնը:

Հաւիտեանս յաւիտենից թող օրհնուած լինի քո յիշատակդ, ծերունի Տէ՛ր Գաբրիէլ»:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԵՆԱՍՏԱՆ

Որպէս մի ամուր, կարծր պատուանդան,
Որպէս մի հղօր և անյաղթ պաշտպան,
Լերկ քարաժայոը իւր կուրծքի վերայ
Հանգչեցնումէ մեղմ մի սուրբ մենաստան:


Ենձուկ աշխարհի աղատ հոգսերից,
Եղատ և ունայն վայելչութիւնից,
Հեռու ամենից՝ այնտեղ փակուած են
Մատադ կուսանքը մաքուր և անբիծ:

Ի զո՞ւր է զուարթ գարունը ծաղկում,
Պայծառ արեը ի զո՞ւր է փայլում,—
Խաբուսիկ բնութեան խաբուսիկ գեղը
Օռուարձատեաց կուսանց չնչին է թուում:

Ո՛չ մեղի ոտները սրբապիղձների
Եւ ո՛չ նենգ միաքը չար ոգիների
Երբէք վրդովել չն կարողանում
Ենդորը լըոութիւնն այն սրբավայրի:

Եյնտեղ հանապաղ ծխվում են խունկեր,
Հանապաղ առկայծ վառվում են մոմեր.
Եւ մաղթանքները, որպէս խորակուած
Սրտի հառաջներ, առաքվում են վեր...

“Յար-Դաս”



ԹԻՉՆԱԿՆԵՐ

(Վ. Ի. Վ.ՕՒՕՎ.ՕԶ.ՕՎ.ՒՑ)

Միշտ աշխատութեան և հացի խընդիր,
Միշտ փողի մասին մըտածմունք և հոգ.
Նրկնային ազատ թրաչնոց մէկ նայիր,
Ինչպէս ևս ապրում ուրախ և անհոգ.—


Նոցա քաղցրաձայն մըշտախօս խըմբակն,
Հէնց արշալցամին ելնելով բցնից՝
Փառաբանումէ ոսկի արեգակն
Եւ տարածութիւնը կապոյտ ելկնից:

Երգում են՝ ինչ որ երգումէ բնութիւն
Մէջ անտառների, կանաչ մարգերի.
Եյն երգն հընչումէ սէր, ազատութիւն
Եւ ցընծութիւններն գարնան օրերի:

Երբ մըրըրկալից աշունն անտառի
Դիղնած հին ըզգեստն է մերկացընում՝
Թըրաչնակն էլ իսկցին կարմիր արեկ
Եւ ծաղիկների հտերից զընում:

— Ե՛հ, բարեկամ, դու այս նիւթի մասին
Լոկ քերթողական մի սուտ հիւսեցիր:
Եթէ զիանայիր դու թրաչուններին
Գէթ Ծրէհմի զըրքից՝ այլ բան կասէիր.—
Հաւատա, այդքան ուրախ չեն ապրում
Թըրաչուններն, նոցա ևս բցնից վանում
Են քաղցը և ցուրտն անողոքաբար:
Երբ հարաւային գաւառն են թրաչում
Նոցա կարկաջուն տարմեր շար ի շար՝
Զուտ տընաեսական խընդիր ևն լուծում:

Ս. Ա.



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Պ. Գ. Զմշկեան, մեր ականաւոր թատրոնական գործիչը,
«Փոլճ» ամսագրում 1877 թ. տպել սկսաւ մի շարք հետաքրքր-
քրական յօդուածներ Թիֆլիսի հայ թատրոնի կեանքից «Եմ
թատրոնական յիշողութիւններ» վերնագրով։ Այդ յիշողութեանց
շարունակութիւնը, որ մեզ ուղարկելէ Պ. Գ. Զմշկեան՝ ու-
րախութեամբ տպում ենք Արաքսի էջերում։

ՄԻԿՏՈՐ

ԻՄ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԵՐԻՑ

«Սահմանական առաջնային գործութեան հիմքը Արքայութանց յէլա-
գահին։

«ՊԵՊՕ»

Լ. Է.

«Ելի մէկ զոհ» պիեսան բեմ յանձնելուց յետոյ, նորան
մի քանի անգամ յաջողութեամբ կրինելուց, շատ անգամ
կոռուելուց, խռովելուց և հաշտուելուց յետոյ Սունդուկեանցի
հետ, մի գեղեցիկ երեկոյ, ելք ճաշեց յետոյ, մենք շատ ուրախ
տրամադրուած գնացինք զբոնելու Սօլուակի զառիվայրը և
այնտեղից գարձանք թէյ խմելու Սունդուկեանցի տունը, մեր
խօսակցութեան նիւթ եղաւ «Արքայութիւն», ըստ անցեալի, «աղա-
ժարներու» էութիւնը, նրանց բնաւորութեան մէջ գտնուած
հերոսութեան արտայայտման ցանկութիւնը։

Այդ ժամանակ խօսք բացուեց հանգուցեալ Փուղինեանցի
«Առու տրաքուիս պիտի պսակուիս», Մօլիէրի «Բոնի ամուս-
նութեան» փոխադրութիւնն եղող պիեսայի մասին, որի մէջ
իմ մի նշն դերակատարութիւնն առանձին տպաւորութիւն
էր գործել Սունդուկեանցի վերայ։

Հանգուցեալ Փուղինեանցը, կամենալով անմաշ Մօլիէրի
Լէկաստին վերափոխել մեր պաժարների տիպերի մէկին,
անուանել էր նորան Շամիր, որը Լէկաստի բաղիների փո-

խարէն, հայացլած կարծեցեալ եօթանասունամեայ Օգա-
նարէլին առաջարկումէ իւր ծանրակշիւ բռնունցքնիրը:

Եհա ինչ հանգամանքի առիթով վճռուեց զրել Պէպօն:
«Գիշերուայ սաբրը խէր է», «Խամթաբալայի» և «Ճշի մէկ զոհի»
Հեղինակը, ձգտումէր առաջ գնալ իւր հեղինակութեան աս-
պարիզում, իսկ ես ձգտումէի դուրս կորզել նորա հեղինակու-
թեան այդ ձգտումներից նոր գերերի ստեղծագործութիւն
մեր կենսական կեանքից:

Փուղինեանցը կամեցաւ Շամիրին նմանեցնել Մօլիկի
Լէկաստին, Սունդուկեանցը ստեղծեց Շամիրից—Պէպօն:

Հ Բ

1870-ի սկզբումն էր: Ինաբանը, երկար ու բարակ քննե-
լուց յետոյ, Պ. Սունդուկեանցը սկսեց իր սովորական թելա-
զբութիւնը:

Եյնուշեաւ ամեն օր ես գնում էի Սունդուկեանցի մօա,
առնում էի զրիչը ձեռքս և նստում էի սեղանի մօտ: Նյդ տե-
սակ իմ վարմունքը քաջալերում էր նորան և նա սկսում էր
ոգեսրուել: Պիեսայի առաջին գոլծողութիւնը համարեա վեր-
ջացրել էինք, երբ փետրուարին նորա երեխայի մահը ստիպեց
մեզ գալարեցնել մեր աշխատանքը, մինչև աւելի յարմար միջոց:

Յունիսի սկզբում Սունդուկեանցը տեղափոխուեց Արծա-
նիս, անուանուած այգիստանը և ահա այդտեղ շարունակուեց
Պէպօնի պլութիւնը:

Նյգու մէջ կար երկույարկանի քարաշէն տուն մէզօնինով,
որի փոքրիկ պատշգամբից և պատուհաններից բացվում էր
տեսարան զէպի կանանչաղարդ լեռը և նորա ստորոտում ձորի
մէջ փուտած այգիները:

Ըուաւոնները կանուխ, ժամի եօթին, մենք բարձրանում
էինք այդ մէզօնինը. այնտեղ ես նստում էի սեղանի մօտ բաց
գուան և պատուհանների առաջ և, զրիչը ձեռքս առնելով,
սպասում էի թելադրութեան: Սունդուկեանցը ձեմելով թե-
լադրում էր, ես գրում էի: Պատահում էր, որ երբեմն ամբողջ
ժամերով Սունդուկեանցը կանգ էր առնում և երբ նիւթը
արգէն մշակուած էր համարում, մենք պարապում էինք մինչև
ժամի երկուսը կամ երեքը, և ճաշկուց յետոյ դարձեալ բարձ-
րանում էինք և պարապում մինչև գիշերուայ ժամի 10-11-ը:

Այդ ժամանակամիջոցը թողելէ իմ մէջ մի գեղեցիկ քաղցր յիշատակ, չը նայելով, որ երբեմն շատ դժուար էր լինում ինձ համար անտանելի շք օրերում, ոտքով բարձրանալ այդ ամարանոցը, որը շատ բարձր դիրք ունէր:

Իիրակի օրերը կատարեալ տօնախմբութիւն էր Սունդուկեանցի մօտ, որովհետև այդ օրերը հասաքվում էին նորա մօտ զանազան գասակարդի հիւրեր և ժամի երկուսից սկսվում էր ինչօքը և շարունակվում երբեմն մինչև մթնանալը:

Աերջապէս յուլիս ամսուաց սկզբում Պէտօն պատրաստուեցաւ և այնուհետև, ամսուանոցից իջնելուն պէս, սկսեցինք նորա փորձերը, սկզբում Սովիա Մէլիք Նազարեանցի բնակարանում, յետոյ իրան Սունդուկեանցի տանը:

Որովհետև Պէտօնի խաղի ժամանակ Սաթենիկը ժամանակաւորապէս հեռացած էր մեր խմբից, ուստի մենք ստիպուած եղանք այդ պիեսայի կանայի գերերի համար որոնել երկու ուրիշ գերասանութիներ, այնպէս որ Ծուշանի, Պէտօնի մօր գերը Քէթեան Եղամեանցին յանձնելուց յետոյ, Աէկելիս, սորտ աղջկայ գերը, որը զրուած էր Սաթենիկի համար, տուինք Սովիա Մէլիք Նազարեանցի կրտսեր քրոջը, Նատալիային, իսկ Երութիւնի կողջը գերը—Սմերիկեանցի քըր Ենայիսին:

Համարեա երկու ամիս տեսում էին փորձերը, և վերջապէս զատկից յետոյ մենք իրաւունք ստացանք ներկայացում տալ քաղաքային թաարտնում և տուինք Պէտօն:

Եֆիշան գուրս գալուն պէս, ժողովուրդը յարձակուեց թաարտնի կասսայի վերայ: Միւնոյն օրը ծախուեցին բոլոր տոմսակները:

Վաղուց էր Խաթաբալայից յետոյ ևս այդպիսի ընտիր հասարակութիւն չէի տեսել հայերէն ներկայացումների ժամանակ: Դերասաններս բոլորս էլ առանձին մէկ ոգեւորութիւն էինք զգում:

Տեսմ գուրս գալուս պէս, գահիճում բարձրացաւ մի աղմկալից ծափահարութիւն, այնպէս որ երկար ժամանակ ևս կարողացայ սկսել իմ գերակատարութիւնս. իսկ երբ առաջին արարուածի վարագոյրը իջաւ, գահիճը տղրգաց յափշտակուած բացականցութիւններով, սաստիկ ծափահարու-

թիւններով.... Սունդուկեանցը վազեց բեմ և չնայելով մեր
լարուած յարաբերութիւններին, ընկաւ վզովս և, արտասունքը
աչքերին, զգուեց և համբուրելով ձակատս, գուրս քաշեց բեմ,
միասին շնորհակալութիւն յայտնելու հասարակութեան:

Երկուրդ արարուածը միեւնոյն անսպասելի յաջողութիւնն
ունեցաւ և Նմերիկեանը, որ խաղում էր Օդիմզիմովի գերը,
գերազանցեց Դարասիմ Ետկուլիչ Օամբախովին:

Երրորդ արարուածի վերջը, կէս ժամ համարեա ժողո-
վուրդը միայ դաշլիճի մէջ, միշտ բեմ գուրս կանչելով հե-
ղինակին, որը գեռ գլուխ էր տալիս իւր օրթեակից, բայց յիտոյ
եկաւ բեմ և, բոլոր խմբով շնջապատուած, մի քանի անգամ
բեմից յայտնեց իւր շնորհակալութիւնը:

Ըստ անգամ ևս տեսել էի Սունդուկեանցին յուզուած,
բայց այդ զիշեր նա յուզմունքից ամբողջ մարմնով տողում էր:

1. Թ.

ՌՈՒԲԵՆ ԶԱԽԱՏԵԱՆՑ

Գառւստ օպերետայի*) նոր թատրոնական ոյժ կազմող անձ-
նաւորութիւնները՝ Վահան Մամիկոնեան և ընկերութիւն,
հիւացան սյլիւ թատրոնական գործունեութեան ասպարիզեց,
թողնելով այն տիտոր հետեւանքը, ինչպէս ևս բացարել եմ
առաջ**), որ թատրոնի վարչութիւնը, որը մինչեւ սյդ ժամա-
նակ բաւականանում էր միայն հարիւրական, քիչ բացառու-
թեամբ 150 ր. վարձ ստանալով, հայերէն ներկայացումների
համար բարձրացրեց այդ վճարը մինչեւ երկու և երեմն եր-
կու հարիւր յիտուն բուրլիի:

Եւ ահա մենք, գերասաններս ուրիշ ոչ մի տեղում՝ ըս-
դանելով այն բեմական յարմարութիւնները, որոնք կային քա-
ղաքային թատրոնում, համաձայն մեր բէակէրտուարի կազմա-
կերպութեան, ստիպուեցանք շարունակել մեր ներկայացումները
այդտեղ, այդպիսի զգալի գումար վճարելով ամեն մի ներ-
կայացման համար:

Մեր խմբի զլիսաւոր ոյժերն էին՝ Սաթենիկը, Վէթեան
Կրամեանցը, իսկ երկուրդական գերերի համար ունենիք եր-

*) Տես «Փորձ» № III, թ. 1877:

**) Անդ:

կու քոյր հրէայ ծագումով, Թօն-Բրէնէր ազգանունով՝ որոնք, մի քանի տարի միայն մասնակցելուց յետոյ մեր խաղերին, հեռացան բոլորպին, անգամ հայութեան շըջանից: Դերասաններիս ոյժերն էին՝ Ամերիկեան, Միլաղեան, ևս և ուրիշները, որոնցից, Եւալեանցը բեմ նոր դուրս գալով երկրորդական գերերի մէջ, ապագայում, Միլաղեանցի և Ամերիկեանի մահից յետոյ, բոնից յաջողութեամբ նրանց տեղը:

Զը նոյեելով խմբի այդ տեսակ կազմակերպութեանը, ևս առաջարկեցի ընկերներիս բազմացնել գերակատարների թիւը նոր թարմ ոյժերով և հրաւիրեն մեզ զեկավարելու այնպիսի մի անձնաւորութիւնն, որ վայելելիս լինէր այն ժամանակուայ համալսարանական երիտասարդների համակրութիւնը:

Ամերիկեանցը սկզբում չէր համաձայնում որ խմբի զեկավարութիւնն ևս ուրիշի ձեռքն յանձն էր, թէև իմ զեկավարութեանն ուղղութեան և ապլումբին դէմ հանդուցեալը շատ անգամ, պիտի խոստովանեմ, այնպիսի որոգայթներ էր լարում, որ ևս խիստ յուսահատութիւնից չէր իմանում ինչ անել, բայց և վերջոյ համաձայնից և մենք երկուսով խմբի համաձայնութեամբ զիմեցինք Ոռուբէն Թալալեանցին, որ ազնիւ և վառ հոգով հայ համալսարանական երիտասարդ էր և իմ վաղեմի բարեկամն, նա այդ ժամանակ զանվում էր Թիֆլիսում և պարապում էր փաստաբանութիւնով:

Թալալեանցը ընդունեց մեր աւաջարկութիւնը, պայմանաբանելով, որ ևս աջակցեմ նորան, և մինչև անգամ յայտնեց իւր պատրաստութիւնը, հարկաւոր եղած ժամանակ դերակատարութիւն յանձն առնելու:

Կազմեցինք բէպէրտուար հետեւեալ պիեսաներից. Արշակ Բ., ողբ. Գալֆայեանի, Գօն Սէզար զը Բազան, թարգմանութիւն Բաբայեանցի, Ծէշելիօ, թարգմ. Կարինեանցի, Պէտք և Ելի մէկ զոհ, հեղ. Սունդուկեանցի, Գալիէլի Գատասատանը, իմ թարգմ. և ուրիշ խաղերից, որ չեմ յիշում:

Ակսեցինք փորձերը, Ոռուբէն Թալալեանցի եղբօր Արշակի ձեռքում եղած «Պարիզ» հիւրանոցում:

Ակզբում ամեն բան կարգին էր գնում, բայց յանկարծ մի երեկոյ, երբ ևս փորձին ներկայ չէի, չը զիտիմ ի՞նչ պատճա-

սով, Առուբէն ֆալալեանցի և Ամերիկեանցի մէջ մի սաստիկ անբաւականութիւն է պատահում, որից յետոյ, ֆալալեանցը վճռապէս հրաժարուեց մեր խմբի գործունէութեանը մասնակցելուց:

Հիմայ ես չեմ յիշում այդ անբաւականութեան պատճառը, միայն այսքանը լաւ միտս է, որ միւս օրը, երբ ես եկայ ինդրիլու Ոռուբէնից, որ նա յետ առնի իւր վճիռը, նա ինձ պատասխանեց,—Գէորգ, իզուր, մի խնդրիր, իմ գործս չէ .. Շարունակի՞ր, ինչպէս տարել ես գործը մինչեւ այսօր՝ և ես, կողմնակի, պատրաստ եմ ամեն կերպով աջակցելու քեզ:

Եւ ձշմարիտ, յետագայում Ոռուբէն ֆալալեանցը, համակրելով իմ ձգտումներին, մասնակցեց անդամ խաղալով մեր խմբին մէկ քանի պիեսներում, որի մասին կը խօսիմ յետոյ: Եռ այժմ, առաջ քան թէ շալունակեմ մեր խմբի գործունէութիւնը, պարտք եմ համարում յիշել թէ ի՞նչպէս զրուեցաւ Սունդուկեանցի «Քանդած-Օջախ» պիեսան, և թէ ինչո՞ւ նա այն ժամանակ չը մտաւ մեր բէպէրտուարի մէջ:

«ՔԱՆԴԱԾ-ՕՋԱԽ»

«Պէպօն» մի քանի անդամ ներկայացնելուց յետոյ, թէև մեր յարաբերութիւնները դարձեալ լարուեցին Սունդուկեանցի հետ, բայց որովհետեւ ինձ արդէն յայտնի էր հեղինակի գիտաւոլութիւնը զրել «Քանդած—Օջախ» անունով մի նոր պիեսոյ, որի նիւթը արդէն մշակուած էր և նախագիծը որոշուած և այն, որ նա՝ հեղինակը, միայն թելազրութեամբ կարող էր թղթի անցնել մշակուած նիւթը, ես ուզարկեցի նորա մօտ Արձանիս, իմ ազգական Յովհաննէս Տէր Գրիգորեանցին, որը այդ ժամանակ նոր էր սկսել կրել «Մշակ» լրագրի աշխատակցի տիտղոսը, պատուիրելով որ նա յայտնի Սունդուկեանցին թէ պատրաստ է զրել հեղինակի թելազրութեամբ որ տեղեկացել է ինձանից այդ տեսակ պարապմունքի եղանակի հետ:

Հետեւապէս այդ ամառուայ ժամանակամիջոցում պատրաստուեց «Քանդած-Օջախը» որը և ներկայացուեցաւ տռած ջին անդամ 1873 ապրիլի 19-ին Թարթիլիդի քաղաքային թատրոնում, թատելասէրների խմբով, յօդուա չը դիտեմ ինչ բարեգործական նպատակի:

Թէև ներկայացումը շատ յաջող անցաւ շնորհիւ կանացի գերակատարների բաղմութեան և մի քանիսի գերերի ողին ըմբռնելուց, բայց ևս չփայտ ամբողջ խաղի մէջ այն կոկիկութիւնը, անսամբլի միութիւնը, որը ևս հասկանումէի, թէ և ինքը Առնդուկեանցը շատ գոհ էր:

Եյտ պիեսայի վլխաւոր հերոսի գերը գրուածէր ինձ համար և ես կարծում էի որ առաջին ներկայացման համար հեղինակը չի համաձայնի առանց իմ մասնակցութեան տալ այդ խաղը, բայց իրողութիւնը կատարուեց և ինձ յաջողուեց միայն երկու տարուց յետոյ բեմ զնել այդ պիեսան մեր խմբի ոյժերով։

Խ Ա

ԻՇԽԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԲԵՐՈՒԹԵԱՆՑ

Եյտ միջոցին Երշակ Պալալեանցի հիւլսնոցը դառել էր մի տեսակ ժողովարան, ուր հաւաքվում էինք թէ մենք գերասաններս և թէ բոլոր նորեկ ուսումնաւարտ համալսարանական երիտասարդութիւնը, իսկ ինձ համար այդ հիւլսնոցը փոխարինում էր իմ բնակարանս, որովհետեւ միշտ զբաղուած լինելով թէ թատրոնի և թէ քաղաքային երկրաչափի պաշտօնվու, որի ծառայութեան տեղը կից էր այդ հիւլսնոցին, ինձ շատ սակաւ էր պատահում դառնալ Կուկիս անուանուած թաղը իմ բնակարանս։ Մէկ խօսքով ևս մի տեսակ մշտնջենական հիւլս էի դարձել այդ հիւլսնոցում։

Վի անգամ, երբ Ամերիկեանցն և ես պատրաստվում էինք ճաշելու այդտեղ ներս մտաւ մի երիտասարդ, փայլուն հագուստով, կարճահասակ, ակնոցակիր երկրաչափ, որը մօտեցաւ մեզ և առաջարկելով իւլ ծանօթութիւնը, ինդրեց առանձնանալ մի ուրիշ սենեակ և ճաշել միասին։

Եյս տեսակ տալորինակ ծանօթութիւնը թէև փոքր ինչ խորթ թուեցաւ, այնու ամենայնիւ մենք ընդունեցինք նորա առաջարկութիւնը և մտանք մի առանձին սենեակ, ուր մըտնելու ականք էր, երիտասարդ պարոնը, առանց մի խօսք ասելու հանեց իւլ պաշտօնազգեստը և դիմեց մեղ։

— Եմ ազգանունս է իշխան Բէհրութեան։

Մենք ասինք մերը։

— Ես ձեզ ծանաչում եմ, ընդհատեց իշխանը: Թի, վելօնքէ! բոռաց նա:

Մտաւ ծառան, որին հրամայեց իսկոյն սեղան բանալ և պատուիրեց օղի, մի քանի շեշ զինի և կերակուր բերել:

“Եստեցինք և սկսեցինք ճաշել: Ի՞է՛ հրուժեանցը այնպիսի մի ախորժակով ուտում էր և խմում, որ կարելի էր կարծել թէ հինգ օր բերանը ոչինչ չէ դրած:

— Ես պիտի ասեմ ձեզ, բացուեց մեր իշխանը, շարունակելով ուտել և լցնել մեր բաժաները զինով, որ ես սաստիկ թատրոնամոլ եմ և շատ եմ համակում ձեր գործունեութեանը և իսկոյն գառնալով ինձ, շարունակեց:

— Չեղ պարոն Ամշկեան, շատ անվայել է մօրուք կրելը:

Ես այդ ժամանակ մօրուք էի կրում և թատրոնի առաջին օրից միշտ մօրուքով էի բեմ դուրս եկել:

— Ճշմարիտ է, բայց...

— Խնչ բայց, կարեց խօսքս իշխանը: Վերասանը մօրուքով, դա աններելի յանցանք է:

Եւ մի՞թէ կարելի է, օրինակ, Իշխելի ներկայացնել մօրուքով:

Մենք փորձում էինք այդ ժամանակ Իշխելիօն նորից ներկայացնելու համար:

— Ճշմարիտ է, վստահացայ ես արդարանալ բայց ես մօրուքիս համեմատ և զրիմ եմ շինում, աշխատելով միևնոյն ժամանակ Ճիշտ լինել ներկայացնելի անձնաւորութեան տիպարին:

— Ուզուած տաքացաւ իշխանս և իսկոյն առաջարկելով իմ կենացս, պահանջեց, յանուն թատրոնական գաղափարի վսեմ գործին ածիլել մօրուքս և այնպէս ներկայացնել Իշխելիօն:

Եյդ օրից ընդ միշտ, թողի մօրուք կրելու սովորութիւնս:

Եւ ինչպէս սկսուեց մեր ծանօթութիւնը իշխան Ի՞է՛ բութեանցի հետ, որը այնուշետե դառաւ մեր և հայ թատրոնի ամենամտերիմ բարեկամներից մէկը և որը միշտ համարեա ներկայ էր գտնվում մեր փորձերին և երբեմն շատ խելացի և օգտակար խորհուրդներ էր տալիս մեզ:

Մի քանի անգամ նաև մասնակցեց և մեր ներկայացումներին իւր շնորհալի դերակատարութիւնովը, արհամա-

բելով իւր գասակարդի մարդկանց նախապաշտմունքը ղէպի
բեմական արշեստը:

Մի քանի ժամանակից յետոյ իշխան Ռէհբութեանցը այն-
պիսի մի ծառայութիւն մատուցեց հայ թատրոնական բեմին,
մի շարք պիեսաների հրատարակութիւնով, որ յաւիտենական
յիշտատակ թողեց հայ թատրոնի պատմութեան էջերի մէջ:

Եփսոս, շատ ափսոս, որ իշխան Միքայել Ռէհբութեանցի
պէս լուսաւոր անձնաւորութիւններ, շատ քիչ և պատահում
մեր հասարակական գործերի մէջ:

Խ Բ

Ամերիկեանցի և Ոռոքէն Պալակեանցի հետ անբաւականու-
թիւն ունենալուց յետոյ մէնք տեղափոխեցինք մեր փորձերը
մեր գերատաններից մէկի, Սահակ Սարբէգ-Մէլիքեանցի բնա-
կարանը, որ գանվում էր քաղաքային թատրոնին մօտ:

Ես մոռացայ յիշել այստեղ և մի անձնաւորութիւն, որ
շատ օգտաւէտ անդամ դարձաւ մեր խմբին: Դա էր Նիկո-
ղայոս Նոմիրաղեանց ազգանունով մի շնորհալի ազնիւ երիտա-
սարդ, որը շատ անդամ վաճառականական գործով այցելել
էր արտասահմանի զանազան մեծ քաղաքներ, առաւել ևս Պա-
րիզ և որ տեղ, այցելելով թատրոնական ներկայացումները,
ըմբռնել էր բեմական զանազան կարգադրութիւնների եղանակը:
Եհա այդ երիտասարդին ևս հրաւիրեցի յանձն առնել սցէնա-
րիուսի, բեմական կարգապահի պաշտօնը: Եյնուհետեւ, նախ
իմ լուծս փոքր ինչ թեթեացաւ և յետոյ, նորա եռանդուն
գործունէութեան շնորհիւ, մեր ներկայացումները շատ կանո-
նաւոր և մեծ յաջողութեամբ էին պատկերանում բեմի վերայ:

Ըուաջին փորձը Սահակի տանը սկսեցինք Գալֆայեանի
Ելշակ Բ. ողբերգութիւնից, որի մէջ առաջին անդամ ես
մոցրի կանացի անձնաւորութիւնն, այն է բանդապետի որդու
գերը տալով Աաթենիկին, իսկ միւս գերերից՝ օրինակ Պար-
սից խորասիրթ զօրապես Ելանողանի գերը յանձնելով Եւա-
լեանցին, որի ամպլուան միշտ համարվում էր կօմիկի ամպլուայ,
և մայնելով խաղի մէջ զանազան երգեցիկ խմբեր, կազմուած
հայ երիտասարդներից և իտալական խմբից մնացած խօրիստ-
ներից, այդ ողբերգութիւնը, որը առաջ միշտ մի չոր ու ցա-

մաք բան էր դուրս գալիս, կատարեալ վուրօր արաւ, նամանաւանդ տղայ-կին Սաթենիկի և Աւալեանցի գերերը.

Եյս վերջինի զերակատարութիւնն այնքան բնական, խիստ և աշոելի դուրս եկաւ, որ գալէրէյից յաջախ բարձրաձայն յիշոցներ էին ուղղվում Աւալեանցի հասցէին, որ նա այնքան անգթութեամբ է վարդում իւրեանց արքոյ Երշակի հետ:

Եյս ներկայացման երեկոյ հանդուցեալ քաղաքային ձեռոնային թատրոնի ահազին դաշլեճում մի տեղ ըստ կարտակ:

Եյդպէսյաջողութեամբ սկսելուց յետոյ 1873—74 թուականների սէզնը, մենք տուինք մի շարք փառաւոր ներկայացումներ երկուշաբաթը մէկ տնօամ; մինչեւ վարդանանց պատերազմի յիշատակի օրը, բարեկենդանի հինգշաբթին, որի առաւօտը և մենք հիմք դրինք յետադայում այդ օրը տօնել հայերէն ներկայացումով:

Եյդ օրը ևս հիւանդացայ և անկողին մտայ:

Խ Գ

«ԱԻԱԶԱԿՆԵՐ»

Թատրոնական գործունէութեան մէջ, գեռ իմ նոր մտած ժամանակս, ոռւսաց երևելի կրիտիկոս Ծէլինսկու քառամնական թուականի երևելի զերասան Մաշալովի խաղի քննադատութեան ազգեցութեան առակ, որի (Մաշալովի) Կարլ Մօրի խաղը Վաւազակների մէջ, Ծէլինսկին իւրեան սեպհական բանաստեղծական յափշատակութիւնով է նկարագրում, ևս կամենում էի իմ ոյժս փորձել այդ պիեսայի հերոսների, Ֆրանցի կամ Կարլոսի գերի մէջ, և այդ նպատակով գեռ վաթսունական թուականներին, չեմ յիշում որ տարին, ես խնդրեցի մեր այն ժամանակուայ հայ թատրոնի գործունէութեան վէտերան, հեղինակ և «Թառզթ խաղացողի կեանք» պիեսայի թարգմանիչ—Միքայէլ Պատկանեանցից, թարգմանել ինձ համար մի կտոր այդ պիեսայից, այն տեսարանը, հինգերորդ արարուածում, որտեղ Ֆրանց-Մօրը խղճի տանջանքի ազգեցութեան տակ, խեղտվում է կախուելով բազկաթուից:

Ինչինչ պատճառներից ըստ յաջողուեց ներկայացնել այդ կտորը, մինչեւ որ Վաւազակները ամրողութեամբ թարգմանեց

դարձեալ իմ խնդրանօքս, իմ երիտասարդ բարեկամներիցս մէկը՝ Ն. Լալայեանցը և որի մէջ ևս յետոյ վեր առայ Կարլոս-Մօօրի գերը, յանձնելով Գրանցինը—Ամերիկեանցին:

Իմ հիւանդանալուց յետոյ, մեծ պասին, երբ ևս սկսեցի փոքր խնչ կազմուրուել վերցրի Լալայեանցից նորա թարդմանութիւնը և կրծատելով պիեսան համաձայն մեր խմբի ոյժին, հրաւիրեցի ընկերներիս ինձ մօտ, բացատրեցի ամեն մէկ անձնաւորութեան նշանակութիւնը սորա մէջ և բաժանեցինք գերելով այսպէս։ Ծիրունի Կարլոսինը առւինք Զարտեղեանցին, Ամալեայինը, Կարլոսի նշանածինը, Ալթենիկին, Գրանցինը Ամերիկեանցին, Կարլոսին—ինձ, Շվեյցէրինը—Եւալիանցին, Պատերինը—Սահակ Ռոմիրէկ Վելիքեանցին, ևն։

Վկղըում փորձերը ինձ մօտ էին լինում, իսկ առողջանալուցո յետոյ, մեծ պասի վերջերում, անցանք քաղաքային թատրոնի բեմը։

Եյտեղ ևս չեմ կարող չըիշել մի ծիծաղաշարժ անցք, որ տեղի ունեցաւ փորձերի առաջին իսկ օրից և որը մնաց իրեւ անեկդօտական յիշողութիւն այդ պիեսայում մասնակցողներիս համար։

Պատերի գերը, ինչպէս ասացի վերև, յանձնեցինք Աահակին, իմ Հիմն բարեկամ և թատրոնի անձնանուել աշխատակցներից մէկին, որի համար թատրոնից ստացած վարձատրութիւնը երբէք նշանակութիւն չունէր և որը, մինչեւ օրս ել վաճառականութիւնով հայթահայթելով իւր ընտանիքի հացը, մնումէ միշտ անկեղծ բարեկամ հայ թատրոնին և պատրաստ, հարկաւոր եղած ժամանակի, յանձն տանել ամեն տեսակ գերակատարութիւն։

Եյն տեսաբանում, որտեղ Պատերը, կառավարութեան կողը մից ուղարկուած լինելով Կարլոս աւաղակապեաթի մօտ, սորան համոզումէ անձնատուր լինել՝ Սահակ բարեկամն, յանդիմանալով ինձ, իբրև աւաղակների արիւնաբրու խճառիչքին, արտասանումէր այսպէս։

— Դու արիւնարբու խճառիչք։

Ամեն անգամ, փորձի ժամանակ, ևս ուղղումէի այդ չարաբաղդ խնդապետ բառը խմբապեաթի, բայց միշտ ներկայացման ժամանակի, քանի խաղացել ենք այդ պիեսան, խնդապեաթը

գարձեալ մնում էր խնդապետ։ Միայն վերջին, կարծեմ, անդամ, ապրիլի 29-ին 1873 թուին, երբ կրկնեցինք Թիֆլիսի ամարային թատրոնում, ևս սպառնացայ Աահակին, որ բեմի խոկ վերաց ևս նորա անիծեալ խնդապետը կուղղեամ խմբապետի, բոնելով նորա մօրուքից։

Աահակը մոտածեց և խոստացաւ ներկայացման զիշերը անպատճառ խմբապետ արտասանել։

Հասանք այդ տեսարանին. ևս լարուած սպասումէի, որ Աահակը խսկոյն դուրս կը տրաքացնէ իւր խնդապետը և, ինչքան մեծ եղաւ իմ զարմանքն, երբ նա շփելով իւր փառաւոր մօրուքը, մեծ ապլօմբով հայեացքը ուղղելով աչքերիս մէջ, ճայց։

— «Դու, արիւնարբու խմբապետ»

«Թիժաղը քիչ էր մնում ինձ խեղդէ։

— «Այո, կրկնեց Աահակը, դու կախաղանի կերակուր խմբապետ։ և այնպէս սաստիկ էր շեշտում այդ վերջին «պետ» վանկը, որ ամբողջ խումբը, քիչ էր մնում, ծիծաղի ծիչ բարձրացնէր։

Դառնանք գործին։

Ես շատ ցաւում եմ, որ Աւազակների առաջին ներկայացման աֆիշան չունեմ և ծշտութեամբ չեմ յիշում նորա ներկայացման օրը։

Դահլիճում ահագին բազմութիւն, բաղկացած Թիֆլիսի զանազան ազգութեանց ինտելլիգենտ դասակարգներից, բեմի վերաց կուլիսները խճկուած ոռւս դերասանների խմբով, այդ բոլորը այն աստիճան ոգեւորել էին մեր դերասաններին, որ մեզանից ամեն մի դերակատար իրան այդ զիշերուայ հերոսն էր համարում։

Ամերիկեանցը դերազանցեց իրան, Աաթենիկը իւր փոքրիկ դերով աղմկալի ծափահարութիւն բարձրացրեց և ամբողջ ներկայացումից դուրս եկաւ մի տեսակ յաղթութեան տրօֆեյ մեղ դերասաններիս համար, և այնուհետև «Աւազակները» մնաց մեր բէպէրտուարում ամենանշանաւոր խաղ թէ ներկայացման և թէ մուտքի յաջողութեան կողմից։

Իսկ մեր այն ժամանակուայ լրագրութիւնը, հանգուցեալ «Մեղուն» և բագիկալ «Մշակը», դարձեալ բաւականացան

իւրեանց սովորական քննադատութիւնը տալով այդ ներկայացման մասին, սովորական լակոնական ռձնվ «այս ինչ դերասաննը լու խաղաց, այս ինչ գերասաննը վատ» և պրծտ:

Եյս ներկայացումից յետոյ մենք տուինք Շուշանիկ ողբերգութիւնը յօգուտ Քէթեան Երամեանցի և նա հեռացաւ Քութայիս, որտեղ և ամուսնացաւ Ամբատ Կարինեանցի Հետ:

¶ Դ

ՃԱՆԱՊԱՐՅՈՐԴՈՒԹԻՒՆ ԳՕՐԻ

Փոխանակ ամառուայ շղիքում Թիֆլիսում մնալու անգործ, ես առաջարկեցի խմբին սյցելիլ Գօրի և տալ այնտեղ մի երկու ներկայացում:

Նւ որովհետեւ միակ մէկ գերասանուհի Սաթենիկով զըժուար էր զործ տեսնել, վճռեցինք հեռազրել Քութայիս Երամեանցին որ նա ևս գայ Գօրի մասնակցելու մեր երկու ներկայացումներին:

Վյդպէս աշա հայ թատրոնական խումբը յունիս ամսին, եթէ չեմ սխալվում, բաղկացած մօտաւորապէս տասն և չորս անձերից, ուղերուեց Գօրի, ուր մի քանի օր առաջ զնալով ես պատրաստեցի սննեակներ խմբի համար, Գօրուայ միունար հիւրանոցում:

Գօրուայ հայ հասարակութեան համար այդ ժամանակ անհասկանալի էր հայերէն ներկայացումները, որովհետեւ հազեւ թէ ամբողջ քաղաքի մէջ քսան հոգի գտնուէին իւրեանց մայրենի լիզուով խօսող, այդ պատճառով, մենք ստիպուեցանք Շուշանիկ ողբերգութիւնը, ամբողջ ապէս թէ մի կտոր—չեմ յիշում, կրկնել վրացերէն՝ թարգմանութեամբ հայր Տէր Ստեփանեանցի, որը համալսարանական կրթութեան տէր անձն լինելով, մեզ շատ նպաստեց մեր գործունէութեան մէջ:

Եռհասարակ Գօրուայ ճանապարհորդութիւնը անօգուտ եղաւ խմբի համար որը և գառաւ Թիֆլիս, բացի Սաթենիկից, Քէթեան Երամեանցից և Նմերիկեանցից, որոնք վըճռեցին զնալ Քութայիս և այնտեղ ևս յաջողացնել մի երկու ներկայացում:

Եւ որովհետեւ և ծառայութեանս պատճառով անկարող էի հետեւել ընկերներիս, ուստի մնացած խմբին հետ գարձայ Թափիլս: Քութայիսում յաջողուել էր նորանց երկու թէ երեք ներկայացում տալ հայերէն և վրացերէն լեզուով խառն և Աաթենիկը Շուշանիկի վրացերէն դերակատարութեամբ և Քեթեամբ զօդէվեների մջ, մեծ յաջողութիւն էին ունեցել և այդպիսով թարանին անձնանուեր այդ երկու վերասանութիներն, վրաց առաջնին կանացի դերակատարներն եղան Քութայիսում:

Օգոստոս ամսին Քութայիսից վերադարձան Աաթենիկը և Նմերիկեանցը, և մենք վճռեցինք, պատրաստութիւն տեսնել ձմեռուայ սէզօնի համար:

Խ Ե

ԱՊԱԳԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԵՐ ԴԱՇԻՆՔԸ

Խնչպէս ինձ, այնպէս և Նմերիկեանցի համար, Պոլիսը հայ մոքի գործունէութեան երեակայական կենդրոն էր թուում դեռ, և այդ պատճառով մենք վճռեցինք այդ տարի մի քանի կանոնաւոր և յաջողակ ներկայացումներ տալուց յետոյ, կազմել մի փոքրիկ կոկիկ խումբ և գնալ Պոլիս այնտեղ շարունակելու մեր գործունէութիւնը:

Խումբը, կամ աւելի լաւ է ասել ընկերութիւնը, պիտի կազմուած լինէր՝ Աաթենիկից, Նրամեանցից, Նմերիկեանցից, Աւալեանցից և ինձանից, մնացած հարկաւոր եղած անձնաւորութիւնները վարձով պիտի լինէին:

Եյս նպատակով մենք կազմեցինք մի շարք ներկայացումների ծրագիր և սկսեցինք փորձերը սկզբում Աաթենիկի բնակարանում, յետոյ ուրիշների մօտ:

Եյդ սէզօնի տրուած նշանաւոր ներկայացումներից էին «Թուղթ խաղացողի կեանքը», որի մջ Ամալիայի, թուղթ խաղացող ժօրմի կնոջ դերում, Աաթենիկը այնպիսի մեծ յաջողութիւն ունեցաւ, որ նորանից առաջ այդ դերը կատարող ներից ոչ մէկը չէր ունեցել:

Յետոյ նմանապէս մեծ յաջողութեամբ նա կատարեց Կւ-

լիայի, մեծ քաղաքագէտ և հայրենասէր Ռէշիլիօի հոգիզաւակի դերը:

Առհասարսակ այդ սէզօնում տրուած ներկայացումներին մի առանձին կենդանութիւն և աշխայժ տուողը Ասթենիկն էր, թէ իւր զգայուն խաղովը և թէ իւր երգեցողութեամբ ինչպէս Տրօվատօրից Եղուցնայի «Ո՞հ այդ խարոյիի բոցը», միւնոյն օպերայից մի ուրիշ կտոր, կօնտրալոյի մասից, ծիծոնակ ևն, որը նա կատարեց թատրոնի օրկէստրի ներդաշնակութեամբ:

Ելրորդ թէ չորրորդ խաղից յետոյ, Ամերիկեանը յանկարծ պահանջեց տալ նորա օգտին մի ներկայացումն, պատճառաբանելով որ նա, փոխելէ իւր զիտաւորութիւնը մեզ հետ միասին այցելելու Պոլիս և որ առաւել օգտաւէտ է համարում ընկերութեան համար որ նախ ինքը միայնակ գնայ ծանօթանայ սյնտեղի հանդամնակներին և ապա մեզ մանրամասն տեղեկութիւն տայ, որ յետոյ մենք կարողանանք վճռել գնալ թէ ոչ:

Եյս բանը ինձ սաստիկ վրագովից, և ես խորհրդակցելուց յետոյ ընկերներիս հետ, վճռեցինք տալ նորան իւր ուզած ներկայացումն և այնուհետեւ շարունակել մեր դործը. մինչեւ սէզօնի վերջը:

Ամերիկեանցը խնդրեց իւր ներկայացման համար «Այ քեզ զին» հանդուցեալ Երեցփոխեանի, Մոսկվայի հայ վաճառականների կեանքից զրած մէկ ծաղրաշարժ վոդէվելը, որի մէջ լուացարար Եկուլինայի գերը կատարեց Փօն Բ'րէնէրը, նոյնպէս և «Եւաղակներից» Փրանց-Մօրի կախուելու տեսարանը, և վերջը զանազան երգերից և արտասանութիւններից կազմուած զաւեշտ:

Եյդ ներկայացումից Ամերիկեանցը վերցրեց մօտ 900 լուբլ, որով և ձանապարհ ընկաւ դէպի Պոլիս:

Գ. Զէկէտան

ՀԱՅՈՅ ՄԵծ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԺԲ ԴԱՐՈՒՄ ԵՒ ՆՈՐԱ ՎԻՃԱԿԸ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ

Հայտստանից հայերի գաղթականութիւնը սկսվում է ԺԱ դարից, բայց աւելի մեծ գաղթականութիւնը դրւու եկաւ արքայանիստ Անիից ու նորա շրջակայքից և ուղղեց իր ճանապարհը գէպի հիւսիս Խրիմի սահմանները և յետոյ Դնեստր գետի ուղղութեամբ Մողիլեվ, Կամենեց Պոդոլ'սկ, լեհական քաղաքները և այնտեղից արդէն բաւական ուշ Գալիցիա, Հունգարիա և Մողովիա: Այս գէպքը տեղի ունեցաւ ԺԱ գարում Անիի և ուրիշ նշանաւոր քաղաքների կործանումից յետոյ մոնղուեան վայրենի հրոսակների ձեռքից:

Հայ գաղթականութեան ճանապարհի մասին պատմական որոշ տեղեկութիւններ չկան: Չանազան պատմական յիշատակարաններում ցրուոծ տեղեկութիւնների հիման վերայ, պէտք է ենթադրել, որ գաղթականների սառւարագրյն մասը անցել է Կովկասի վերայով գէպի Պողասի բերանը, բայց նեղուելով Պաֆալի թագաւորութիւնից, նա ճանապարհը թեքել է գէպի Կաֆֆա, այժմեան Թէ՛կողոսիան, որտեղ Գէնովացինների թոյլտփութեամբ, որոնք աիրում էին այս քաղաքին, բնակութիւնն հաստատում մեծ բազմութեամբ: Թէ՛ որքան խիտ էին ապրում հայերը Կաֆֆայում, երեսում է նորանից, որ Թէ՛ողոսիայի այժմեան մաքաստան տեղում, այն հրապարակին վերայ, որ հազեւ 150 քառակուսի սաժէն լինի՝ մինչեւ այժմ մնացել են կանգուն հինդ փոքր եկեղեցներ, որոնցից մեկը ներկայացնում է հին հայ քանդակագործութեան օրինակելի յիշատակատանների առաքեալների խորագանգակ պատկերներով կաթողիկէի վերայ, թերեւս սա մայր եկեղեցին եղած լինի, սակայն այժմ գարձրած է ոռւսաց եկեղեցի: մնացեալ չորս եկեղեցները ծառայում են, որպէս մժերանոցներ:

Բայց սորանից Թէ՛ողոսիայում կային և ուրիշ շատ հայ եկեղեցներ, որոնց թիւը հասնում էր 30-ի, սակայն այս եկեղեցներից այժմ մնում են Ա. Հրեշտակապետաց Ա. Սարգիս,

Ա. Գէորգ Օռորավար (գերեզմանատասն) և 20 տարի առաջ վերանորագած Ա. Յննայի եկեղեցիները:

Եյս եկեղեցիներից Ա. Հրեշտակապետացը և Ա. Սարգիսը նշանաւոր են իրենց փառաւոր շնչքով և հին հայկական ճարտարապետութեամբ խիստ ճաշակով շնուած: Ա. Սարգիսը ունի բազմաթիւ արձանագրութիւններ և քանդակներ, որոնք փորուած են տաճարի ներսի կողմի պատերի քարերին վրայ, այս եկեղեցին յիսունական թուականներից ի վեր աւերակ էր. սակայն 1888 թ. արժ. Խորէն վարդ. Ստեփանէի ջանքով նորոգուած է և արդէն ժամանացութիւն է կատարվում նորա մէջ:

Եյս երկու եկեղեցիները հաւանօրէն. շնուած են ԺԻ դարում Յնիի առաջին գաղթականների ձեռքով, որովհետեւ նոցա մէջ կան սքանչելի փորագրութեամբ և գեղեցիկ քանդակներով գոնեներ հայկական ճաշակով և արձանագրութիւններով, որոնցից երեսում է, որ այս գոնեները բերուած են Յնիից *):

Ըւանդութիւնը պատճում է, թէ բարեպաշտ հայերը այս գոնեները բերել են իրենց վրայ, որպէս սրբութիւն, որի հետ կապուած է նոցա հայրենի տաճարների մեծութեան յիշատակը:

Ծառ հասկանալի է այն պատճառը, որով աւանդութեանը նայած 300,000 հայեր հիւրտսիրութեամբ ընդունուեցին Դենովացիներից:

Ծըսպատուած Խրիմի բուն տիրապետ թաթարներից, որոնցից նոքա գնել էին մի աննշան հող իրենց Կաֆֆայի գաղթականութեան համար, Դենովացիները հայերին, որպէս քրիստոնեաններ, նկատում էին իրեւ նեցուկ իրենց շարունակ մաքառման մէջ Խրիմի խաների գէմ: Դայց այսպիսի մի նշանաւոր բազմութիւն չէր կարող աեղաւորուել այն սահմանափառագրում: Միզբում բնակութիւնն հաստատելով Կաֆֆայի շրջակայ գիւղերում՝ հայերը թերես ԺԵ գարում, երբ Դենովացիների իշխանութիւնը Կաֆֆայում ոչնչացաւ և թուրքերը Խրիմ նուաճեցին՝ գիմել են արևմուտք, մի մասը Մոլտավիա և Վալախիա, Հունգարիա և Տրանսիլվանիա, միւս մասը Մողիլեկ Դենեսորի վրայ, Ժվանէց աւանը, Կամենեց-Պոդոլ'սկ, Դալբիցիա և Լեհաստան

*) Հայտնի չէ, թէ ինչպէս Ա. Սարգիսի գոներից մէկը գտնվում է Ոռոկուայի թանգարաններից մինում:

Սակայն կան պատմական տեղեկութիւններ, թէ հայերը դեռ սց ժամանակից առաջ ցրուած բնակվում էին Գալիցիայում և այժմէան Պոգրիայում։ Այսպէս հայ զօրապեսները, ինչպէս հաստատում են լեհաց պատմագիրները՝ դալիս էին իրենց խմբերով Գալիցիայի և Արևի իշխանների ու Լեհացոց թագաւորների մօտ և նոցա օգնում էին թշնամիներին գէմ պատերազմ մղելու։

Կամենից Պոգոլ'սկ հայոց ամենահին եկեղեցին, որ մատուռի ձեւ ունի շինած է ՃՎ գարում հայ մեծատուն Ախնան Խոսալուբան, որ թերեւս նոյնպէս այն գաղթականներիցն էր, որոնք փոքր թուով հնուց բնակութիւն էին հաստատել այստեղ, որ և ապացուցվում է եկեղեցու չափից. Այս եկեղեցին քառանկիւնի ձեւ ունի. զուրկ է ճարտարապետական գեղեց-

կութիւններից և ներկայումն դարձրած է ոռւսական եկեղեցի յանուն Ա. Նիկողայոս Աքանչեղագործի։

Այս եկեղեցումը գտնվում է ՃՎ գարում Լշմիածնից փախած Մելքիսեդեկ կաթողիկոսի գերեզմանը, որի տապանաքարին վերսոյ դեռ բաւականին պարզ պահպանուած է նորախորաց առաջարկութիւնը պատկերը կաթո-



Հայոց առաջին եկեղեցին Կամենից Պոգոլ'սկում։ Այժմ դարձրած է ոռւսաց եկեղեցի յանուն Նիկողայոս Աքանչեղագործի։

Հայոց կաթողիկէ եկեղեցին յոնուն Ա. Սատուածածնի հաւանորէն, ԺԵ գարու գործ, մէջ և ընդարձակ շինութիւն է խտալական ոձով: Նորա պատերը ներսի կողմից ծածկուած են մարմարեայ սալաքարելով, որոնց վերայ փորսագրուած արձանագրութիւնները եկեղեցու բարերարների և բարեգործ անձանց յիշատակին նուիրուած, գեռ մինչև այժմ բաւական լաւ պահպանուած են:


Մեզանում գրուած Մայր Սատուածածնի պատերը մասնուկ Յիսուսը զրկին՝ համարվումէ հրաշագործ, աւանդութիւն կայ, թէ այս պատկերը նկարելէ Պուկաս աւետարանից: Եյս նուիրական պատկերը որ հայերը իրենց հետ բերել են Ծնիից, նշանաւոր է Մայր Սատուածածնի կերպարանքի բուն աստուածային արասցայտութիւնով: Խոկ արուեստի և գոյների թարմութեան կողմից, նորան համարձակ կարելի է զասել եկեղեցական գեղարուեստի լաւագոյն յիշատակարանների կարգը:

Զարմանալի է, որ Ա. Սատուածածնի երեսը հայկական տիպ ունի և այս պատճառով այս պատկերը հայ ժողովովի անհամեմատ թանկագին աւանդը պէտք է կազմի: Պատկերը ծածկուած է ոսկէզօծած արծաթեայ թիթեզով, որի վերայից կախուած են բազմաթիւ արծաթեայ նուիրատուութիւններ ինչպէս ձեռք, աչք, սիրտ ևայլն. ոսկէզօծած շրջանակի վերեկի կողմը զրուած է «ապաւէն մեղաւորաց»:

Եյս պատկերը խիստ յարգվումէ ոչ միայն Պողոլի, այլ նաև ամբողջ Լեհաստանի կաթոլիկներից, որոնք գալիս են երկրպագելու այս հրաշագործ պատկերին զանազան հիւանդութիւններից փրկուելու համար:

Պատկերների մէջ աւելի ուշագրութեան արժանի են Ա. Ղուսաւորչի երկու պատկերները, որոնց շուրջը նկարուած են նորա տասներկու չարչարանքները: Խորանում պահպանվում են մի քանի եկեղեցական անօթներ հայկական գրերով. սոցանից շատերը գեռ վերջին ժամանակները կաթոլիկ շահասէր քահանաները վաճառել են հրէաներին, որոնք իրենց շահաւէտ առետրի առարկայ են գարձրել:

Եկեղեցին ունի ընդարձակ զրատուն հայկական եկեղեցական ձեռագիր զբքերից. սակայն սոցա մէջ պատմական նշա-



Վասնավոյ հայկական պատրիեր Ա. Սուրբ-ածագին (Պահապահ
ըմբշն վերաբերեա):

Նակութիւն ունեցող ձեռագիրներ կամ որ և է եկեղեցական յիշատակարաններ հայոց լեզուով չկան Պատմումնեն, որ մի ժամանակ հետաքրքրական ձեռագիրներ շատ կային, որոնք այժմ մասնաւոր անձանց սեպհականութիւնն են դարձել: Խորանի պատերի վերայ կախուած են Աամենեց Պոդոլ'սկի հայկական հին եկեղեցու շինող Սինան Խոռալուբայի և ուրիշ պատուաւոր հայկաղանց, ինչպէս նաև մի քանի հայ եպիսկոպոսների պատկերները որոնք հաւանօրէն մի որ և է դիտական ծառայութիւնն են մատուցել եկեղեցուն կամ իրենց հասարակութեանը:

Դեռ ՓԲ. գարու սկզբում Աամենեց Պոդոլ'սկի և բոլոր Եւհաստանի հայերը դաւանում էին հայաստանեայց եկեղեցու ուղղափառ կրօնը և լեզուով ու կրօնով մի առանձին ազգութիւնն էին կազմում, որ տեղւոյն ազգաբնակութեան մէջ վայելում էր մեծ յարգանք իր աշխատասիրութեան և շիտակութեան համար:

Եյս բանը միաձայն հաստատում են լեհացի պատմագիրները: Քաղաքներում նոքա զբաղվում են առևտրով և արհեստներով, իսկ զիւղերում հողագործութեամբ, սոցա մէջ շատերը մեծամեծ կալուածներ ունեն: Նոքա կառավարվում էին համայնական խորհրդարանով, որ հաւաքվում էր առանձին յարկում Աամենեց Պոդոլ'սկում, որ մինչև այժմ դեռ պահպանուած է: Նոքա վայելում էին լեհացի թագանուններից արտօնութիւններ՝ ինքնակառավարութեան իրաւունք և կրօնի գաւանութեան աղանութիւն:

Հայերի մշտական յարաբերութիւնները իրենց զրջապատող ուուս և լեհացի ազգաբնակութիւնների հետ շատ բարեկամական էին, որոնցից ծագում էին ընդհանուր շահեր:

Հայերը, պինդ մնալով հանդերձ իրենց եկեղեցուն և լեզուին մէջ, անտարակոյս, շատ բան իրենց առօրեայ կեանքին մէջ, ընդունած էին լեհացիներից, բայց և սոքա էլ մի քանի բան իւրացրել էին հայերից, օր. լեհական կունդուշը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հայկական ազգային հագուստ, չուխան. թէ մինչև որ աստիճան պինդ էին հայերը իրենց լեզուին մէջ, երեսում է սորանից է, որ մինչև այժմ Աամենեց Պոդոլ'սկում շատ հին տների գոների վերայ պահպանուած են հայկական զրութիւններ, սալաքարների վերայ փորուած:

ԺԵ գարու կիսում կաթոլիկութիւնը, որ նորագարձ աղդերի մէջ սպանում է նոցա լեզուն ու ազգային զգացմունքը՝ իր մարդուսական քարոզութիւնը ուղղեց և Պոդոլ'սկի հայերի դէմ: Վալեցիայի հայերի մի մասը արգէն դարձած էր դէպի կաթոլիկութիւն և նոցա համար արգէն հիմնարկուած էր մի մասնաւոր բարձրագոյն դպրանոց հայ կաթոլիկ քահանաներ պատրաստելու համար: Այս ուսումնարանի տաղանդաւոր աշակերտներից մէկը, եռանդուն և կրթու ուրացեալ Նիկոլը, կաթոլիկների ձեռքին լաւ դործիք դարձաւ Պոդոլ'սկի հայերին կաթոլիկութեան դարձնելու: Բայց պնդահաւատ Պոդոլ'եան հայերը չէին խաբվում և ոչ մի խոստումից: Ուստի կաթոլիկ հոգեորականութիւնը որ ոչ մի միջոց չէ արհամարտ հում վճռեց զիմել խորամանկութեան: Նա շատ նշանաւոր դումարով համողեց Մելքիսեդեկ կաթողիկոսին, որ այդ ժամանակ Ամաենեց Պոդոլ'սկում էր ապրում Պոդոլ'սկի հայերի եպիսկոպոս ձեռնազրել ելիթասարդ Նիկոլին: Ժամանակ չկորցնելով, ձոռվմի ստրուկ ծառան սկսեց մուծանել հայ ժամերգութեան մէջ կաթոլիկական եկեղեցական ծէսեր: Այս բանից յուզուելով, հայերը իրենց արտօնութիւնների վերայ յենուելով բողոքում էին եպիսկոպոսի այս նորամուծութեան դէմ և վճռողապէս մերժեցին կրօնական միաբանութիւնը, որը նոցա ստիպմամբ ընդունել հարկադրում էր Նիկոլը:

Հայերի ընդդիմութեան վրայ չարանալով՝ Նիկոլը փակ եկեղեցիները: Հայ պատուաւոր աւագները, մեծատունները, ժողովուեցին հասարակական տան մէջ իրենց վիճակի մասին խորհրդակցելու: Աւելի թոյերը, Նիկոլի ճարտարախօսութեամբ զբաւուած, սկսան տարուբերել բայց այս ժամանակի դահլիճն է մանում հոգով արի հաւատով պինդ ձուիփսիմ: Բալասանովիչ կոյսը և ոգեորուած ձտով առաւել ամրապնդում է ժողովի վճռուր, որ էր կաթոլիկութեան ոտնձգութեան դէմ արիաբար պաշտպանել սեփական ազգային եկեղեցին:

Հայերը կրօնասէր ժողովուրդ լինելով, զրկուած էին հոգեկան միմիթարութիւնից, իրենց եկեղեցիները յաճախելու, ուրոնք մնում էին փակուած, և այս պատճառով չէին կատարվում պսակներ, ննջեցեալները թաղվում էին առանց քահա-

Նայի և եկեղեցական արարողութիւնների, երեխանները մնում
էին առանց մկրտութեան։ Ծատ տարիները հայերը ի սէր
իրենց եկեղեցուն տարան շատ թշուառութիւններ։ Նոցա
գանդատները և բողոքները, որ տալիս էին կաթոլիկ Ահա-
կան կառավարութիւնից պաշտպանութիւն գտնող հոգեորա-
կանութեան վերայ, մնում էին ձայն բարբառոյ յանապատի։
Աներջապէս նոքա անկարող եղան այս բոլորը տանել։ Կաթո-
լիկութիւնը ընդունեցին նոքա. սակայն ժամերգութեան մէջ
պահպանեցին հայկական լիքուն և հայ եկեղեցու ծէսեր։
Քահանաներ նշանակվում էին ինչպէս Կամենեց Պոգոլսկում,
այնպէս և Մոգիլեվի (Վնեստրի վերայ) և Ճվանեցկի եկեղե-
ցիներում ։ Վոզիկ և Վնեստրիի ուսումնարանների հայ կա-
թոլիկ սաներից։ Եյսպէս շարունակուեց մինչև ներկայ դարու-
վաթսնական թուականների սկիզբը։

Իացի այս հանդամնքից ճիշ գարում թուրքերի ար-
շաւանքը Ահասատանի վերայ և Կամենեց Պոգոլսկի առնուելը
խիստ զգալի մնաս հասցրին այնտեղի հայերի բարեկեցութեան,
որոնք այնտեղից գուրս գալով ցրուեցին զանազան կողմեր։
Թէ նոցա մի մասը, թուրքերի հալածուելուց յետոյ, յետ
դարձաւ, բայց թուով նուազելով նոքա բոլորովին կորցրին ի-
րենց առանց այն էլ թոյլ խախուտ ազգային լիքուն. այս ե-
րևոյթին ոչ պակաս նպաստեց և նոցա նորամուտ սովորու-
թիւնը լեհացոց հետ պասկուելու, որոնց հետ դաւանում էին
մի կրօնք։ Եյսպէս, վաթսնական թուականներից ի վեր լեհացի
քահանաները սկսեցին նշանակուել հայ եկեղեցիների աւագ
երեխներ, ժամասացութեան մէջ լիքուն տեղի տուեց լատի-
նէրէնին։ Մնաց միայն հայկական եկեղեցին անունը, հայկական
արձանագրութիւնները և մի քանի տասնեակ հայ ընտանիք,
որոնք հազիւ յիշում են մի քանի հայերէն բառեր և որոնք
կրում են հայ ազգանուններ և վերջաւորութեամբ։ Իալասա-
նովիչ, Օվանտովիչ, Թէկոդորովիչ, Տարասովիչ և այլն. բայց ինչ-
պէս երեւում է, հայերը զիս երկար պահպանել են իրենց սէրը
գէպի ազգային լիքուն, զոնէ ժամասացութեան մէջ, գէպի
ազգային սովորութիւններն և եկեղեցական աւանդութիւնները։
Դեռ մինչև այժմ հայ պառաւ կանայք, որոնց գիւրին է
զանազաննել լեհուհիներից, աչքի զարնող հայկական տիտարով,

զլիները կապում են և շալ են կրում Խրիմի հայուհիների
նման:

Երբ 1859 թ. Գաբրիէլ արք. Այլվաղեան Գամենեց-Մո-
գիլեվից անցնելով մի քանի օր միաց այս քաղաքում, նորա
մօտ եկան տեղական հայ կաթոլիկները և ինդրեցին նոցա եկե-
ղեցումը պատարագ անել հայաստանեայց եկեղեցու արարողու-
թիւնով, բայց տեղական իշխանութեան ներկայացուցիչը եր-
կիւղ կրելով տեղական կաթոլիկ աղքաքնակութեան զրգու-
մից խորհուրդ տուեց Այլվաղեանին մերժել հայերի խնդիրը:
1864 թ. երբ հարաւարեւմտեան կողմի կաթոլիկ հողատեր-
ները լեհական ապստամբութեան առիթով զրկուեցին զանա-
զան արտօնութիւներից, Պողոլսկի հայերը, յիշելով իրենց
ծագումը՝ պատրաստ էին վերագառնալ իրենց ազգային եկե-
ղեցու ծոցը, բայց այդ ժամանակուայ Արշնեի թեմական
առաջնորդ Եղիազար եպիսկոպոսի թուլութիւնով ու անհո-
գութիւնով այդ բարի դորձը խափանուեցաւ:

Կամենեց Պողոլսկից 20 վերստ հետու գէպի առստրիա-
կան սահմանը, Վնեստրի եղերքում ընկած է Ճվանեց, որտեղ
այժմ ոչ մի հայչկայ, գոնէ չկայ մէկը, որ իրեն այս ազգութեան
վերագրէ: Ատկայն ինչպէս երեսում է տեղական եկեղեցու ծննդա-
կան մատեանից մինչև ներկայ դարու քանակական թուական-
ների վերջերը, այս աւանը համարեա լի էր հայերով: Այս մա-
տեանը սկսվում է անցեալ դարու կիսից մասնաւորապէս հայ
լեզուով, այնտեղ նշանակուած են ծնուածների ու սոցա, ծնող-
ների անունները, նոցա բնակութեան փողոցը, իսկ նորեկ հայերի
մասին ցոյց է տուած որտեղից են նոքա գաղթած, և այս ե-
րեսում է, որ Ճվանեցում շատ գաղթականներ եղել են Փոքր-
Ասիայից: Այս մատեանը առաջ գրվում էր հայ լեզուով բայց
արդէն ներկայ դարու սկզբից նա յաջախ խառն է լեհերէնով
իսկ վերջումը բոլորը զրուած է միմիայն լեհերէն: Առանից
երեսում է, որ արդէն ներկայ դարու տասնական թուականնե-
րից սկսած հայ կաթոլիկ քահանաների փոխարէն Ճվանեցի
եկեղեցում նշանակուել են մասնաւորապէս լեհացի քահանա-
ներ, որը և շարունակվում է մինչև այժմ:

Ճվանեցի եկեղեցու երեմն հայկական լինելու միակ յի-
շատակը Ա. Գրիգոր Լուսաւորչ պատկերն է նորա տասներկու-

շարչապահքներով և վիրոյիշեալ ծննդական մատեանը հայերէն գրութիւնով:

Կամենեց Պողոլ' սկից յետոյ Պոդոլիայում հայերի բազմամարդութեան կողմից երկրորդ տեղն է բռնում Մոդիլեվ Դնեստրի վերայ: Եյս քաղաքում, որ այժմ համարեա հրէաբնակ է, մի ժամանակ հայերի մեծ բազմութիւն կար, որի պատճառով և գլխաւորը փողոցը անուանվում է հայկական:

Եյս փողոցում կանգնած է հին մեծ հայկական եկեղեցի ընդարձակ գաւիթում, որի սալայատակը կազմում են հայ արձանագրութիւններ կրող գերեզմանաքարեր: Խկեղեցում գտընվում են Ա. Նուսաւորչի երկու պատկերները, իսկ սեղանի պատկերի վերայ գլուած է «ապաւէն մեղաւորաց»:

Խկեղեցումը և փողոցներումը կարելի է հանդիսավոր շատ անձանց բուն հայկական կերպարանքով որից անսխալ կարելի է մակաբերել նոցա հայկական ծագումը, նոցանից շատերը գիտեն մի քանի հայերէն խօսք և իրենք պատմում են, որ նոցա հայրերը լաւ գիտեին մայրենի լեզուն: Սորանից կարելի է եղանակացնել, որ Մոդիլեվի հայերի բոլրոտին լեհանալը և կաթոլիկանալը տեղի է ունեցել համեմատաբար վերջին ժամանակներում: Եյժմ Մոդիլեվի հայերը բազմաթիւ չեն, նոցա բնակած տեղը և նոցա համեստ բնակարանները, որոնք զանազանվում են հայերին յատուկ մաքրութեամբ հրէանների անմաքրութեան մէջ նմանում են անապատի մէջ ովասիա:

Մոդիլեվի հայերը, նայելով որ կորցրել են իրենց լեզուն և կրօնը՝ իրենց հպարտութեամբ են հայ անուանում, երեխանցը մլրտութեան ժամանակ հայկական անուններ են տալիս. Տըրդատ, Տիգրան, Եշոտ, Հորիփսիմէ և այլն: Նոքա մամաւորապէս պարապում են գոյնզգոյն կաշի պատրաստելով, բայց այս արտադրութիւնը, որ սկիզբը շատ էր տարածուած փոքր ոռուսիացիների գունաւոր կոշիկ գործածելուն պատճառով, այժմ ընկած գրութեան մէջ է, որովհետեւ սև գոյնով կոշիկը հետզհետէ ընդհանրանում է՝ ուստի և Մոդիլեվի հայերը աղքատացել են:

Եշա այսպէս կաթոլիկութիւնը կուլ տուեց և լիչ ազգութեան հետ ձուլեց հարիւր հավարաւոր հայեր, որոնց յիշատակը պահպատի միայն մի քանի եկեղեցիներում և ա-

րեւելեան տիպում, որը հայկական աղաւաղած աղգանունի հետ՝ կրում են շատ լիհացիներ: Եյսպէս կործանիչ է կաթոլիկութիւնը, որը չէ ճանաչում ազգութիւն, ժխտումէ ժողովուրդների անհատական յատկանիշները, նոցա լեզուն և սովորութիւնները, որոնք նա փոխարինում է լոկ կաթոլիկ ընդհանուր բառով:

Եյսպէս է Տաճկաստանի և ուրիշ տեղերի այն հայերի վիճակը, որոնք անբաղկութիւն են ունեցել ընդունել կաթոլիկութիւնը: Որ կաթոլիկ-հայից ուզում էք, հարցրէք, թէ ի՞նչ ազգից է նա, և նա ձեզ կ'պատասխանի «կաթոլիկ»:

1. Մաղրեանց.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

* *

Ես կը ցանկայի, որ լինէք գարուն,
Լինէք պարզ երիննք և պայծառ լուսին,
Եւ անթիւ աստղեր պապղուն, կայտուուն
Խաւար գիշերին կեանք և լոյս տային:

Եւ առանձնացած կանաչ պարափղում՝
Քո կողքին մենակ լինէի նստած
Եւ քո խանդակաթ, սիրավառ գրկում,
Խնդէս եղեմում, լինէի հանդշած:

Եւ գիշերային զեփիւոը միայն
Յուշ ածէր սիրոյ մեր շնչիւնին,
Եւ այն երկնային զարգերը անձայն
Երկուսիս սիրոյն վկայ լինէին:

Եյն, քո գրկում, միայն քո գրկում
Եմ այս ծանրը խաչ կը թեթևանար,
Եւ հոգով մանուկի, մոքով անտրտում՝
Ո՞հ, կը մոռնայի այս դաժան աշխարհ....

«Եաբ-Շաս»

ՄԱՏԵՆԱԻՕՍԱԿԱՆ

Русско-армянский словарь, составленный Абисоломомъ Іоан-
нисяицъ. Томъ I. А — Н. — Բառզիլք ոռւսերէնից-հայերէն.
Եշխատասիրութիւն Եբիսողոմ Յովհաննիսեանցի: Հատոր Ե.

Եյս վերնազրով հերու Թափլիսում դուրս եկաւ նոր ռուս-
հայերէն բառարանի Ա. հատորը երկիջեան ութածալ դիրքով,
591 երեսից բաղկացած: Խնթագրելով որ երկրորդ հատորն էլ
նոյնչափ ստուար կլինի՝ մենք կունենանք մօտ 1200 երեսից
կազմուած նոր ռուս-հայերէն մեծաղիր բառարան, որ ծա-
ւալին նայելով՝ լիովին կարող էր բաւականութիւն տալ ռու-
սերէնով պարապող և ռուսերէնից թարգմանող անձերին, ո-
րոց թիւն օրըստօրէ աճում է մեզանում, և որոց, իսկապէս
ասած, անհրաժեշտ պէտքն ու պահանջը զարկ տուած են
այս ձեռնարկութեան:

Ոռւսերէն լեզուի գործածութիւնը այժմ մեր մէջ հետըզ-
հեաէ ծաւալլումէ: Հայոց գալրոցներում այս լեզուն պար-
տաւորիչ է. մենք ռուսերէն լեզուով ենք խօսում ու սովորում
պետական ստորին, միջնակարգ և բարձրագոյն գալրոցներում:
ռուսերէն խօսելը մեզ ունակութիւն է գտնում, և հայերէն
խօսելիս էլ մենք նախազաստութիւնները կազմում ենք ռուս
լեզուի ոգով — մենք մտածում ենք ռուսերէն և մեր միտքը
թարգմանում ենք հայերէն խօսքերով: Ոռւսերէն լեզուն մուտ
է գործել մեր ընտանիքներում, ուր արդէն շատ հարիւրաւոր
բառեր (անօթների, հահկարասիքի, հանդերձի, ձևի, սովորու-
թեանց, իրաւաբանութեան վերաբերեալ) գործածումն առհա-
սարակ մեծն ու փոքրը: Մարգարէ պէտք չէ լինել գուշակե-
լու համար, որ մէկ գար զեռ չանցած՝ Ենդրկովկասի հայե-
րէն խօսակցութեան լեզուն բոլորովին կշաղախուի ռուսերէն
բառերով ու ոճերով, այնպէս որ մի լեզուախառնուրդ կկազ-
մուի հայերէն քերականութիւնից և ռուսերէն բառերից, նման
այժմեան Եժդէրխանի բարբառին, որի վերան ծիծազելու
համար յօրինուած է «պահէկան ծառին վրայ սիդիտ է արել»

կատակական խօսքը: Այս երեսյթը պատահական չէ, և երկու զօրաւոր պատմառներ ունի: Մէկը, որի վերայ սովորաբար աւելի ուշագրութիւն է գարձգում՝ քաղաքական պատման է. մենք, իբրև հպատակ և իբրև Ոռուսաց պետութեան մաս կազմող ժողովուրդ՝ կարեորութիւն և պէտք ենք զգում սովորելու և զիտնալու պետական պաշտօնական լեզուն, որով զրուած են օրէնքները, լինում են գատաստանները և ուրիշ իրաւական գործառնութիւնները, որով մենք կարող ենք հաղորդակցութիւն ունենալ պետութեան վարչական անձերի և հաստատութեանց հետ: Ոչ միայն պետական միութեան շահերը, այլև մեր սեփական օգուտը պահանջում են, որ մենք զիտնանք այս լեզուն: Բայց պետական լեզուն զիտնալը զիտնակում մայրէնի լեզուն մոռանալ կամ գործածութիւնից զուրս մերժել կարելի է շատ լաւ զիտնալ երկու և աւելի լեզուներ և նրանց գործածել առանց միմեանց վնասելու: Այս տեսակէտից՝ եթէ ուռւսերէն լեզուն, միայն լոկ իբրև պետական լեզու սովորէնիք՝ նա մեր մայրէնի—հայերէն լեզուի գոյութեանը և մաքրութեան չէր սպառնայ. առ առաւելն միքանի հարիւր բառ կմանէին այս լեզուից հայերէն հարիւր հազար բառերի շարքը և իբրև կաթիւններ ծովի մէջ կանչետանային:

Հատ աւելի նշանաւոր է երկրորդ պատմառը, որ վտանգ է սպառնում մեր լեզուին և կարող է բոլըրովին նրան ջնջել անհետացնել. — սա է քաղաքակրթական պատմառը: Մէնք այժմ գտնվում ենք զարգացման աստիճանին վերայ. զարգացումը մեզ կարեոր է միցել կարողանալու համար ուրիշ հասարակութեանց հետ մտաւորական ու անտեսական գաւառներում. առանց զարգացման, յարաբերութեան մտնելով զարգացած օտար հասարակութեանց հետ՝ մենք անշուշտ խիստ շուտով կմեռնէնք իբրև հայ հասարակութիւն: Բայց մեր զարգացման համար մենք գիտում ենք օտար լեզուների, անդիկովկասցի հայերս մասնաւորապէս ուռւսերէնին: Հայերէն լեզուով հազեւ հազ միջնակարգ, տարրական ուսում ու զիտութիւն կարելի է ստանալ. իսկ բարձրագոյն և մասնազիտական ուսման համար, զիտութեան բոլոր շրջաններում չկան հայերէն զբքեր (կամ եղածները շատ հեռու են գոհացուցիչ լինելուց). իսկ մեր զեղցիկ դպրութիւնը ոչ միայն չափազանց աղքատէ, ոչ միայն

զուրկ է համամարդկային խնդիրներ շօշափելուց, բայց և իւր նեղազգային խնդիրները մշակելիս այնքան տգեղ, այնքան պահասաւոր և անմշակ է, որ ի հարկէ չէ կարող զարդացած մարդի ոչ մաքին և ոչ ճաշակին յագուրդ տալ: Առաջ կողքին կայ մի ուրիշ լեզու, հարուստ ինքնուրոյն և թարգմանական մատենագրութեամբ գիտութեան բոլոր ծիւղերին վերայ, հարուստ հատընտիր գեղեցիկ դպրութեամբ, որով սքանչանում են եւրոպացիք, այս լեզուն, ոռւսերէնը մեզ մատչիլի է. և քանի որ մենք պահանջ ունինք կարգալու, զարգանալու, և քանի որ հայերէն լեզուով մեր պահանջին լրում տալ կարող չենք՝ մենք կամայ ակամայ գիմում ենք ոռւսերէնին: Առանով ոչ միայն մենք ոռւսերէն կարգալու ենք վարժվում, բայց և զարգանալով և շարունակ գտնուելով ոռւս լեզուի մթնոլորտում մեր մոտածելու եղանակն ու ճաշակն ևս անզգալապէս փոխում ենք ոռւսերէնի: — Հայերէն լեզուն իբրև անմշակ և անբաւական մեր բոլոր մաքերը մեր ցանկացած ձշութեամբ արտայայտելու՝ մենք սկսում ենք բարձիթողի անել և խօսակցութեան (մանաւանդ գիտական նիւթերի վերայ) ժամանակ նախլնտրում ենք ոռւսերէնը, այս կերպով առանց այն էլ աղքատ լեզուն գործածութիւնից հետզհետէ դուրս է դալիս, և չգործածուելով չէ կարող ուրեմն և զարգանալ: Իսկ եթէ մենք արուեստական ջանք անելով կամենանք անպատճառ հայերէն խօսել կամ զրել (ենթադրելով խակ, թէ կարելի է ամեն նիւթի մասին հայերէն լեզուով խօսել ու զրել) մենք ոռւսաբանութիւն ենք անում և մեր զրական լեզուն աղջատում: Այսուեղ է մեծազոյն վտանգը մեր լեզուին համար, երկու լեզուի և մատենագրութեան մէջ, որոնցից մեկը մշակուած և հարուստ է, խակ միւսը անմշակ և աղքատ՝ գոյութեան մըրցում է ծագում: և ի հարկէ վերջնվերջ կյաղթէ զօրաւորը, եթէ մենք տկարին, մեր լեզուին ու մատենագրութեան, ոյժ տալու հոգ չտանինք:

Կէ և իցէ՝ ոռւսերէն լեզուն մեր կեանքում այժմ կարեոր գեր է կատարում, որի շքանը հետզհետէ ընդարձակուելու վերայ է: Ուստի թէ այդ լեզուի ուսման օդնելու, և թէ անուղղապէս հայերէնի զարգացման նպաստելու համար՝ անհրաժեշտ կարիք է զգացվում ոռւս լեզուի ձեռնարկների, մա-

Նաւանդ բառարանների: Խթէ մինչեւ այժմ գոհացուցիչ ոռւս-
հայերէն բառարաններ չենք ունեցել՝ դորա պատճառը այդպիսի
բառարանի անկարևորութիւնը չէ: այլ զինաւորաբար՝ լեզուա-
դէտ, գործին հմուտ անձերի պակասութիւնը, որոնք միենցն
ժամանակ մասնագէտ լինէին այդ երկու լեզուներին, ծանօթ
եւրոպական նոր և գասական լեզուներին, և ընդհանրապէս
բառարանագրութեան վերայ փոքր ի շատէ գաղափար ունե-
նային: Մինչդեռ գաղղերէնից, գերմաններէնից, նոյնպէս և անդ-
զիերէնից, խտալերէնից, պարսկերէնից, յունարէնից ևն հայե-
րէն գոհացուցիչ բառարաններ ունինք, որոնցից ոմանցով կա-
րող ենք պարծենալ իսկ՝ ոռւսերէն-հայերէն մի բառարան չու-
նինք, որ այս անուան արժանաւոր լինէր. պատճառը պարզէ.
վերոյիշեալ բառարանները մեծ մասամբ կազմել են Մխիթա-
րնանները, որոնք դասական կրթութիւն և հայերէն լեզուի կա-
տարգեալ գիտութիւն ունեցել են, մինչդեռ ոռւս-հայերէն բառա-
րանների հեղինակները զուրկ են եղել այս երկու անհրաժեշտ
պայմանների մէկից կամ միւսից, երբեմն երկուսից ևս միան-
գամայն:

Պ. Ա. Յովհաննիսեանի բառարանն ևս, դժբաղդաբար,
բացառութիւն չէ կազմում միւս ոռւս-հայերէն բառարաններից:
Բառական է մի երես կարգալ այս գրքից՝ համոզուելու հա-
մար, որ հեղինակը չէ ունեցել հարկաւոր պատրաստութիւն
պայմանի աշխատութեան ձեռնարկելու համար. բանիքուն կար-
դացողն իսկոյն համոզվում է, որ հեղինակը հարկ եղածին
պէս չղիտեր ոչ ոռւսերէն և ոչ հայերէն լեզուները, ոչ պատ-
րաստութիւն ունի զասական լեզուներին մէջ, ոչ ծանօթ է լե-
զուաբանութեան արեգներին և ոչ վերջապէս բառարանա-
գրութեան օրէնքներին: Երկու լեզուով գործնականապէս խօ-
սել զիտցողը կեռ չէ կարող այդ երկու լեզուներին լաւ բառա-
րան կազմել, ինչպէս զաշնամուրի վերայ նուագել զիտցողը չէ
կարող երաժշտական կանոնաւոր շարադրութիւններ գրել. և
ընդհակառակն, մարդ կարող է երկլեզուեան լաւ բառարան
կազմել առանց գործնականապէս վարժ խօսել զիտցալու, ինչ-
պէս և երաժշտական կանոն աւոր շարադրութիւն գրել բայց
նուագել չկարողանալ: Երկու գէպքում էլ հարկաւոր է օքնե-
ները ուսումնասիրել և զիտնալ (լեզուի և երաժշտութեան) և

ոչ լոկ գործածութիւնը: Բառարանի հեղինակը, լեզուի օրէնք-ներին անծանօթ լինելով՝ այնպիսի մի շարադրութիւն է արտազլել որի մասին իսկապէս լուրջ քննադատութիւն գրելը ծիծաղելի է, որովհետեւ նա շատ ստոր է, որ գոնէ համեստ քննադատութեան դիմոնայ. բայց քանի որ մեր մամուլը չգնա-հատեց այդ գիրքն, ինչպէս որ արժանն էր, այլ մեր կարծիքով, ծուռ տեսակէտի վերայ յենուած՝ մինչեւ անգամ գովասանեց՝ մենք հարկաւոր ենք համարում, թէակէտ և ուշ՝ մի քանի խօսքով գնահատել այն, ինչպէս որ համանում ենք:

Եյս բառարանի մասին գրուած երկու քննադատութիւններն, (Երձադանք 1888, չ. 39, 41, 42, Վ., Նոր—Դար 1888, չ. 170, 172, Ա.) ցոյց տալով հանդերձ նորա մէջ սպրոււած սխալներն, իբրև պատահական սխալներ՝ այնուամենայնիւ խոսանվանում են նորա անհամեմատ հարստութիւնը (?) և միւս արժանաւորութիւնները (?) համեմատելով այն Երեցփոխեանի բառարանին հետ, որին արհամարհելով չափազանց վար են զարնում: Մենք կարծում ենք, որ այս նոր բառարանը գնահատելու համար՝ պէտք չէ նրան համեմատել Երեցփոխեանին հետ, որ 35 տարի առաջ կազմուածէ, ոռւսերէն լեզուի նուազ տարածուած և անհամեմատ քիչ գործածական ժամանակ, ոռւսերէն և հայերէն օժանդակ լաւ բառարաններ գոյութիւն չունենալիս, լեզուադիտութեան ուսման անծանօթութեան ատեն հայերիս մէջ: Եզրի առաջ ունինալով այն հանդամանները, որոց մէջ Երեցփոխեանի բառարանն յօրինուած է՝ պէտք է խոստովաննեք, որ նա իւր ժամանակից յառաջել էր. այնտեղ արուած է այն ամենը, ինչ որ կարելի էր անել այն ժամանակ: Ուրիշ բան է ներկայումս. այժմ հրատարակուած բառարանից մենք իրաւունք ունինք պահանջելու այն, ինչ որ այժմ կարելի է անել. և եթէ անպատճառ պէտք է համեմատել այս նոր բառարանը ուրիշ բառարանների հետ՝ պէտք է ուրիշն համեմատել ։ Նորայր Բիւզանդացու գաղղիերէն-հայերէն Բառարանին հետ, որ 4 տարի առաջ (1884) հրատարակուեցաւ Պոլսում, կամ Կոյլաւեանի գերմանիկու-հայերէն Բառարանին հետ*) (1884—9

*) Եյս ամենապատուական բառարանի մասին մի ուրիշ անգամ թերեւս առիթ ունենանք խօսելու:

Վահենայ), որ ժամանակակից է պ. Յովհաննեսեանի բառարանին: Եթէ պ. Նորայր և Հ. Այլաւեան կարողացան հայերէնի համար այդպիսի բառարաններ կազմել՝ մենք իրաւունք ունիք պահանջելու, և նոր բառարան կազմողը բարոյական պարտք ունի աշխատելու, որ իւր երկասիրութիւնը նոցանից վատ չլինի, բայց և աւելի լաւ լինի, որովհետեւ նա կարողանում էր օգտուել Նորայրով, մինչդեռ սա չունէր այսպիսի օժանդակ աղբիւր: Եհա այս, մեր կարծիքով միմիայն ձիշտ տեսակէտից նայելով՝ մենք այս նոր բառարանը գտնում ենք խիստ պակասաւոր, ժամանակի պահանջներին չհամապատասխանող, վատ, ուրիմն և նաև այսպիսի մի շարադրութիւն, որի երեան գալը ամօթ պէտք է համարուի լինչպէս մեր զրականութեան, նոյնպէս և հասարակութեան համար, որ կարող է այսպիսի գրուածք իւր մէջ հանգուրժել: Եյս խիստ զատաստանը նորա համար չէ, որ այդ զբքում բազմաթիւ սխալներ կան: Եթէ գիրքը իւր ամբողջութեան մէջ ունենար կատարելութիւն, բայց գտնուեին նորանում պատահական սխալներ, (թէպէտ և բազմաթիւ), սրանք կարելի էր ուզզել բայց երբ զբքի ամբողջութիւնը մի պարզ սխալ է՝ նրան ուզզելու համար պէտք է նրան կործանել բոլորովին: Եյս պատճառով մենք կարծում ենք, որ ամենևեին խորհուրդ չունի, որ, ինչպէս վերոյիշեալ երկու քննադաաներն առաջարկում են՝ այդ բառարանին դիմողներն իրանց նկատած պակասութիւններն ուզզեին և հազորդէին հեղենակին, որպէս զի երկրորդ տպագլութիւնն աւելի գոհայուցիչ լինէր: Եյսպիսի ուղղագրութիւնները կնմանեին հին կտորի վերայ ձգուած նոր կարկատանների, խսկ պ. Յովհաննիսեանի բառարանը կարկատան չև վերցնում:

Նախ այս ասենք, որ Պ. Յովհաննիսեանի բառարանը թէպէտ ըստ երեսյթին, նորա ընդարձակ ծաւալին նայելով, պէտք էր որ առջեւոն բառարան լինէր՝ սակայն նորա բովանդակութիւնը ցոյց է տալիս, որ այս անունը կրելու արժանի չէ: Լաւ առձեռն բառարանը պէտք է ունենայ ոճաբանական և բառապննական (քերականական) մասերը, որոնք պակասում են այս մեր բառարանում: Ի՞ոլոր լիզուները, մանաւանդ կենդանի լեզուներն ունին ոճեր, այսինքն այնպիսի համառօտ ասացուածքներ, որոց մէջ մի կամ մի քանի բառ, գործա-

ծուելով առանձին, միայն այդ խօսքում յատուկ առումով՝ խօսքին տալիս են ուրիշ նշանակութիւն, քան նորա իւրաքանչիւր բառը իրանց սովորական նշանակութիւններով կարող են տալ:

Եյսպիսի ասացուածքներն օտարազգիները, ոչ միայն համբակները բայց նաև լեզուին բաւական հմուտ եղողները, շատ անգամ գժուարանում են հասկանալ առանց բառարանի օդնութեան: Առնենք մի օրինակ ոռուսերէնից. նոքա ասում են, եւ օճառու պատասխան կամ առաջանակութիւնը առաջանակութիւն է՝ մի գեղեցիկ առաւօտ, մի գեղեցիկ օր, (ինչպէս շատ անգամ և թարգմանում են մեզանում): Սակայն այս ոճը գործածելիս ոռուսը այն է հասկանում, ինչ որ մենք հասկանում ենք ասկելով. «Հատուծոյ տուած մի առաւօտ», կամ «օրեւրից մէկը»: Պրեկանական առաջանակութիւնը չէ տալիս իւր բուն նշանակութիւնը, այլ այս, թէ այդ առաւօտը կամ օրը ուրիշ առաւօտից կամ օրից ոչինչ տարրերութիւն չընի: Եսկ ի՞նչ պիտի անէ համբակը, եթէ ոռուսերէն զբարում կարդայ «Եւ օճառու պատասխան կամ առաջանակութիւնը առաջանակութիւն է մեր քննած բառարանում. «զլուխ, գլխի» զլուխի մազերը?» հասր, հածի (մարդկանց? կամ վենդանեաց) կլոր իւր? Թաղնենք, որ այստեղ բայցի առաջին բառից (զլուխ)՝ մնացած բոլոր նշանակութիւնները կամ սխալ են (հարցական նշանով նշանակուածները) կամ աւելորդ (նօտրագրուածները). դառնանք ոճերին: Մակարովի բառարանում մի ամբողջ սիւնակ (73 տող) է բռնում այս բառն իւր օրինակներով ու ոճերով, որոնցից մի քանին բերում ենք այստեղ՝ терять голову (զլուխը կորցնել, — նշանակում է՝ շուարել մնալ մոլորուիլ). ломать голову вадъ չեմъ (զլուխը կոարել մի բանի վերայ, — շատ աշխատել չարչարուիլ մի բանի վերայ), памылить кому голову (մէկի զլուխն օճառել, — մէկի զլուխը իւղ քսել). взять, забрать себѣ что въ голову (մի բան զլուխն տանել, հաւաքել — մի բան խելքը դնել խելքը միտքը մի բանի տալ). у него умная голова (նա խելացի զլուխ ունի, — նա խելացի մարդ է). очертя голову (զլուխը շուրջը գծելով, — յախուռն, արիւնն աչքն առած). сломя голову (զլուխը կոտ-

բելով, ջախջախելով, — իսկադարի պէս). ևакъ снѣгъ на голову (ինչպէս ձիւնը գլխին, — անսպասելի կերպով, գետնից բռւսածի պէս), въ головы, въ головахъ (գլխներում, — սնարքում) жить одной головою (մի գլխով ապրիլ — մինումնար ապրիլ ամուրի լենել). гладить по голове (գլուխը շոյել — փաղաքշել երես տալ). выдать кого головою (մէկին գլխով յանձնել մատնել — մէկին ձեռքն ու ոտքը կապած տալ, մատնել). снявши голову, по волосамъ не плачутъ (գլուխը վերցնելով, բառնալով մաղերին վերայ չեն լալիս, — ջրաղացքը տուրը տալ ջրաղացքարը լալ). ему на голове хоть колъ тещи (նորա գլխին թէկուզցից, գաւազան տաշիր, — թէ որ պատն իմանայ՝ նա էլ կիմանայ, կամ՝ նա իւր էջն է քշում). съ больной головы на здоровую (հիւանդ գլխից առողջ գլուխը (նետել), — ուրիշն ջուրը բաշել մեղքն ուրիշն վիզը բառնալ), և այն և այն: Մինք դիտմամբ այսքան օրինակներ բերինք, որպէս զի ակնյայտնի ցոյց տանք, թէ որչափ կարեւոր է (մանաւանդ համբակներին համար) ոճերի բացատրութիւնը բառարանում: Վերցիշեալ ոճերից և ոչ մինը չկայ Պ. Յովկաննիսեանի բառարանում: և առհասարակ ոճեր չկան ամբողջ զրքում: Ուստի այդ բառարանը գործածողը ուռսերէն կարգալիս՝ ամեն մի երեսի վերայ պիտի կանդ առնէ և չհասկացած նախադասութիւններ բաց թողնէ, կամ, որ աւելի վասն է՝ «իտլ հասկանայ: Մինչդեռ հայերէն լեզուն ևս հարուստ է ոճերով և ասացուածքներով, որոնք բառարան կազմողի պարտաւորութիւնն է փնտուել և զետեղել օտար լեզուի համապատասխան ոճերի կամ ասացուածքների հանդէպ:

Եյս բառարանում, ինչպէս ասայինք, պակասում է և բառազնական (քերականական) մասը, որ առձեռն բառարաններում միշտ գտնվում է: Կացի մասն-բանիներից և գյուկանների սեռերից, (որոնք մեր կարծիքով, իբրև խիստ պարզ այնքան կարեւոր չեն), չկայ ոչ մի քերականական ցուցում: մինչդեռ հոլովմունքի, խոնտրհմունքի աղիւսակները գնել և իւրաքանչեւր բառի առջև համապատասխան թուանշաններով ցոյց տալ նորա հոլովումն ու խոնտրհումը, մանաւանդ անկանոն բայերի կատարեալ ժամանակները նշանակել անհրաժեշտ էր, առանց որոց համբակը մեծամեծ դժուարութեանց

կհանդիպի: Օսօր. եթէ համբակը պատահի այսպիսի սովորական մի խօսքի—«մы зашли къ вамъ», սոցանից ոչ մի բառ, բացի եւ մասնիկից, բառարանում նա չի գտնի. և եթէ նա որեւ է հնարքով մակաբերէ իսկ, թէ զաшли բառը զաходить բայից պէտք է լինի, վամъ— въ գերանունից՝ սակայն զаходить բայում իւր մակաբերութեան հաստատութիւն չի գտնի, իսկ վъ բառն ամենեւին չի գտնի:

Այս կարեւոր թերութիւններն ունենալով հանդերձ բառարանը զուր աւելորդներ ունի, որ նոյնչափ պարաւելի է: Մակարովը, որ իւր բառարանում քերանական մասը կազմել է բարեխսղջութեամբ՝ իւրաքանչիւր բայի վերջը, նոյն իսկ բառի շարունակութեան մեջ, առանց բացատրութեանց, գնում է և նորա անցեալ գերբայր, եթէ նա սովորական կանոնից փոքրի շատէ խոտորվում է իւր կազմութեամբ: Օսօր. զաдавать, զадавать (fréer, выдаю, fut. выдамъ) ... Part. p. զадаваный. — Видѣть. II 7*) ... Part. p. զадаваный ևայլն: Հասկանալի է, որ երբ բայի նշանակութիւնը լիապէս բացատրուած է՝ այլ ևս կարեւորութիւն չի մնայ նորա անցեալ գերբայր իւրեւ առանձին բառ գնելու և կրկնելու միենացն բացատրութիւնները: Իսկ ուուս-հայերէն բառարանի հեղինակը ուրիշ տեսակ է վարդում, նա իւրագույն իւրագույն անցեալ դերբայն գնում է իւրեւ առանձին բառ, նրան կոչում է աժական և հանդէպը կրկնում է այն բառերը, որոնք մի անդամ գրուած են բայի աներեցիթ եղանակին հանդէպ: Վերոյիշեալ երկու բառերը, զոր օրինակ, մեր բառարանում կազմուած են այսպէս.

Задавать, звать (բ. Ն. տալ, վճարել, հատուցանել) բաշխել, մատակարարել (յանձնել, մատանել, դաւաճնել) ամուսնոցնել, մարդու տալ (անձը ներկայացնել, իրան ցոյց տալ (5 տող բառարանում)):

Задаваный աժ. տուած, վճարած (ամուսնացրած, մարդու տուած) մատնած, հակառակ կամքի յանձնած (3 տող):

Видѣть բ. Ն. տեսնել, նշմարել, ճանաչել (2 տող):

*) Այս թուանշանները բացատրում են այդ բայի իրնարհումը, համաձայն գրքի սկզբում գրուած աղիւսակներին:

Виденныи (կարդա Վաճառնы) աժ. տեսնուած, նշմարուած,
նկատուած (2 տող):

Այս երկու օրինակները բաւական էին բառարանի բոլոր
արժեքը ցոյց տարու, որովհետեւ, կարելի է ասել՝ նոյս մէջ
որչափ բառ՝ այնքան սխալ կան. բայց մենք այստեղ զուր ա-
ւելազրութեան վերայ ենք խօսում: Բնչ հարկաւոր էին վաճ-
առնակ բառական վերայ ենք խօսում: Տող են բռնում; և ոչ միայն
օգուտ չեն բերում, այլ լրկ վեաս, որովհետեւ բառարան նայողը
տարակոյսի մէջ կընի դոցա աներեւոյթների նշանակութեանց
մէջ տարբերութիւններ նկատելով (որոնք պ. հեղինակի կամ
անփութութեան կամ անզիտութեան արդիւնք են). օրինակ
վաճառնակարգ բաշխել մատակարարել անձը ներկայացնել,
իրան ցոյց տալ (ուզում է ասել ինքն իրան ձեւացնել) նշա-
նակութիւնների համապատասխան ձեւերը չգտնելով՝ նա կկարծէ;
թէ այս նշանակութիւնները չունի վաճառնակարգ կամ անփութութիւնները չունի վաճառնակարգ (?), իսկ վաճառնակարգ կամ անփութութիւնները չունի վաճառնակարգ (այս տարբերութիւնները, — բառարան
նայողը չգիտեր որ հեղինակի անպատրաստութիւնից, և ան-
շուշտ գայթակղութեան մէջ կընի: — Այս դասակարգից մի
օրինակ ևս մուտիւ և մուտիւ բառերի մէջ մոլորուած
ընկած է մուշեան բառը (մի սիւնակից միւս սիւնակն է ընկել), որ
բացատրուած է այսպէս. աժ. չարչարուած, տանջուած|| պրզ-
տորուած: Համբակներից ով կարող է երևակայել թէ ի՞նչպէս
այդ բառն ստացել է երկու գծիկներով բաժանուած հեռա-
ւոր, միմեանց աննման նշանակութիւններն, մանաւանդ որ մեր
բառարանում գծիկները ոչ մի ուղղութիւն, ոչ մի հիմ չու-
նին, ինչպէս պիտի ցոյց տանք: Լաւ չը լինի. եթէ մուտիւ
բայի տակ նշանակուած լինէր «գերբ. մուշեան», նշնապէս և
մուշեան բային տակ «գերբ. մուշեան», որով թէ առեղծուածը
կպարզուէր և թէ երկու տողի խնայողութիւն կլինէր:

Այս գերբայններն, ինչպէս ասացինք, ոչ մի օգուտ և կարեւո-
րութիւն չունին, բայցի շփոթութիւն ծաղեցնելուց, բայց
զգալի վեաս ունին, զբքի ծաւալը մեծացնելով: Բացի այն,
որ մեծածաւալ զբքի տպազրութիւնն աւելի ծախս պահան-
ջելով՝ աւելի թանկ գնով պիտի վաճառուի՝ յատկապէս բա-
ռարանին համար հարկաւոր է կարելի եղածին չափ տեղի

ինսայողութիւն ամփոփութիւն, զուր տեղը ոչ մի բառ պէտք չէ գտնուի նորանում, կարելի եղած կրթատումներն ու համառօտագլութիւնները պիտի լինին, որպէս զի գիրքը որչափ կարելի է փոքր ծաւալ ունենայ. որովհետեւ բառարանն այնպիսի գիրք չէ, որ մարդ ծայրից սկսէ և շարունակ կարդայ, այլ միշտ երեսներ շուռ տալով նորա այլ և այլ տեղերում փնտումէ հարկաւոր բառը, և յայտնի է, որ մեծածաւալ գրքում տեղի գժուար և երկար ժամանակի կարօտ է մի որեւէ բառ մինտուել քանի համառօտ և ամփոփ զբքում: Այս անսակետից, որ բոլոր բառարաններին համար պարտաւորիչ են բացի մեր քննած բառարանից՝ վերցյիշեալ բարդութիւնները գործնական մեծ վնաս ունին: Մենք համբերութիւն ունեցանք համբելու միայն Յ գրին տակ պարունակուած գիրբայները, և ահա հետեանքը: Յ գրին տակ 475 աւելորդ նշանակուած կրաւորական անցեալ գիրբայներ կան, որոնք բռնում են 809 տող կամ, հաշուելով մի երեսում (երկու սիւնակներում) 84 տող՝ 9 երեսից աւելի զուր բառեր շարուած: Որովհետեւ Յ գիրը 100 երես է բռնում, իսկ ամբողջ հատորը 600՝ ուստի այս համեմատութեամբ, բոլոր գրքում 54 երես, գրեթէ ամբողջի մի տասներորդ մասն աւելորդ տեղ են բռնում, զրքի զինը թանկացնում և նորա գործածութիւնը գժուարացնում: Եթէ այս քանակութիւնը զգալի կերպով նու ազեցնենք իսկ, առաջ ունենալով, որ Յ գիրն համեմատաբար աւելի բայ է պարունակում, քան մի քանի ուրիշ զրել՝ սակայն և այնպէս մենք առնուազն կունենանք երկու տպազլամիան թերթ զուր և վեսասակար աւելորդաբանութիւն, որ առաջ է եկել պ. հեղինակի բառարանագրութեան տեխնիկայի անհմտութիւնից:

Բայց մենք մեր խօսքից շեղեցանք. մենք կամենում եինք ասլացուցանել որ ներկայ բառարանը չունենալով բառազնական և ոճական մասեր՝ չէ կարող առձեռն բառարան համարուել այլ է գրաբանի բառարան կոչուած համառօտ բառզպքյիներից (Еарманнъи словарь, Taschenwörterbuch): Եթէ պ. հեղինակը խոշոր տառելով լայն տողերով, աւելորդ նշանակութիւններով, կրկնութիւններով, աւելորդ բառելով և ուրիշ՝ բառաբաններում դատապարտելի միջոց-

Ներով հնարել է 1,200 երեսանոց մի գրապանի բառարան կազմակերպութիւնը:

Տեսնենք այժմ, ի՞նչպէս է կազմուած այս գրապանի բառարանը և որչափ օգտակար կարող է լինել գործածութեան համար:

Վմենանուազ պահանջը, որին պէտք է լրում տայ ամենահամառօտ երկլեզուեան բառարանը՝ այս է, որ մի լեզուի բառին դէմ դնէ նորա համապատասխան բուն նշանակութիւնը, յետոյ երկրորդական նշանակութիւնը, եթէ ունի, յետոյ երրորդականը. և այս իւրաքանչիւր աստիճանի նշանակութիւնոց յարէ և նոյն բառի փոխարերական նշանակութիւնը, եթէ կայ: Սորանով համառօտ բառարանը իւր պաշտօնը կատարած կլինի լիովին:

Վյա պարզ և համեստ, բայց իսկապէս շատ գժուար պահանջին մեր քննած բառարանն ամենեին չէ համապատասխանում: Վոաջին, երկրորդական... նշանակութիւններ, փոխարերական ասումներ բոլորովին անձանօթ են հեղինակին:

Հայերէն նշանակութեանց մէջ յիրաւի մէծ մասամբ պատահում են ուղղահայեաց գծիկներ ||, բայց սոքա որևէ հաստատուն և որոշ գործածութիւն չունին, և բառերի այլեւայլ աստիճանի նշանակութիւններն և փոխարերական ասումները առանց որևէ կարգի խառն ի խուռն շարուած են: Պատիկներն երբեմն միմեանցից անջատում են միենայն նշանակութիւնները, իսկ երբեմն տարբեր նշանակութիւններն և փոխարերական առումները առանց գծիկների դրուած են բուն նշանակութեանց հետ: Օրինակներն այնքան հոծ և բազմաթիւ են, որ թարգմանական բառերի դասաւորութեան մէջ այս խառնակութիւնը բառարանի սովորական եղանակը պէտք է համարել, իսկ որևէ կարգաւորութիւնը՝ բացառական գէպք:

Հազարաւորներից մի երկու օրինակ մէջ բերելով բաւականանք:

Ժալո գ. և ծայր (ասեղի և այլն) || շեղք, բերան (ածելիի և այլն) || խայթիչ խայթոց || մնասելու զօրութիւն:

Ժալո բառը դյականն է յալը բայի, որ հէնց պ. Յովհաննիսեանի բառարանում նշանակումէ խայթել ուրիմն յալո

Նախ և յառաջ պէտք է նշանակէ խայթոց (մեղուի, օձի), և սա կլինի նորա առաջին բուն նշանակութիւնը, որը երբ մարդ գիտէ՝ այնուշիտե կարող է մասկարելելով հասկանալ նորա երկրորդական... և փոխարերական նշանակութիւնները. այսինքն. երկրորդապէս յալո պէտք է նշանակէ այն առարկաները, որոնք խայթոցի նման խայթ են պատճառում; օրինակ տակ տեղի ծայրը, ածելիի սայրը, փուշը և այլն. երկրորդ՝ գոխաբերաբար յալո կարող է նշանակել բարդապիտ խայթող (խօսք): Եյս բնական, բառի բուն նշանակութիւնից բղխող կարդին հետեւելով՝ մենք պէտք է ունենայինք մօտաւորապէս.

Յալո ժ. և խայթոց || սուր ծայր, սայր, || *խայթող (խօսք, բամբասանք):

Համեմատելով յալո բառի այս երկու կազմութիւնները, որոց երկրորդը, մերը, տրամաբանորէն կազմուած է, բառի նախնական նշանակութեան արծարծումով, և նման է Մակարովի կազմածին՝ տեսնում ենք, որ պ. Յովհաննիսեանի բառարանում յալո բառի բուն նշանակութիւնը երկրորդ տեղն է բոնում. երկրորդ նշանակութիւնը իրբու երկու առանձին նշանակութիւններ՝ բոնում են առաջին և երկրորդ տեղը. վերջի նշանակութիւնը ցոյց չէ տրուած իբրև փոխարերական, և բացի այս՝ տրամաբանորէն մի քանի անգամ սիրալ է, որովհետեւ առնուած է հետեւանքը պատճառի և ընդհանուրը մասնաւորի տեղ. զօր. թոյնը, հրացանը, կարկուտը և այլն ֆասելովոր-նի-ունին, բայց ոչ ուուսերէն և ոչ հայերէն կարելի է ասել յա, րյա, գրա, թոյնի, հրացանի, կարկուտի խայթոց:— Եյս յոռի կազմութեան հետեւանքն այն է, որ յալո բառը մեր քննած բառարանում նայողը՝ իսկապէս չև հասկանայ, թէ ի՞նչ ասել է յալո, խառն և շփոթ գաղափար կկազմէ այդ բառի մասին, այս շփոթութեան պատճառով իդուարանայ միտքը պահել այդ բառի նշանակութիւն, որ այդ բառը չունի:

Завѣтъ рառը Մակարովի բառարանում բացատրուած է այսպէս.

Завѣтъ sm. Théol. alliance f; le testament. Ветхий и Новый,—, l'ancien et le nouveau Testament,—որ եթէ միայն լոկ թարգմանէինք՝ կունենայինք.

Յառուո, գ. ա. ածքնի ուխտ|| կտակարան. Ետքի և Խօսայ—
Հիմա Նոր Կտակարան:—Որ կտարկելապէս կտարդէր այս բառը:
Իսկ պ. Յովհաննիսկանի բառարանում կտարդում ենք. Զաքետ
գ. ա. օքէնե, ուխտ, պաշ|| կտակարան, պատուիրան (կարդա
պատուիրան)|| կտակ: կտակութէր:—Ետքի (կարդա Ետքի) և Խօ-
սայն զառուո շ. Կոսան:—Հիմա կտակարան: Եօթն ա-
ւելորդ, նոցանից մեծ մասը սիսալ բառեր. իսկ ամենակարեռը
մի ցուցում, թէ զաքետ բառը ասուուածանական առումով է
գործածվում՝ պակասում է. ուստի և ստացվում է խառնա-
շփոթ կուտակութիւն թարգմանական սիսալ բառերի, ինչպէս
օրէնք (закон), ուխտ (օճռուծ; ածքնի զաքետ), դաշն (ծօրօօրք),
պատուիրան (заповед), կտակ (զառուպահie), կտակպիր (տասցայի՛
զառուպահie; ուսկոյ զառուպահie), որոնք երբէք զաքետ չեն նշանա-
կում, և որոնք բառարանը գործածողի մոքում խառնվում, շփոթ-
վումն եւ յամենայն դէպս սիսալ հասկացողութիւն են կազմում:

Ազերգայ պ. Յովհաննիսկանի բառովքոյկում նշանակում է
Յ. ն. վանել վանաել գուրս անել գուրս ձգել զգայուել փրս-
խել ործկալ վիժել|| կարգընկեց (կարդա կարգընկեց) անել
պաշտօնից զրկել:—ը Յ. ա. գուրս ձգուել վանաուել:

Վյս բառի նշանակութիւնը զդիացողը վերցիշեալ բացա-
տրութիւնը կարդալիս՝ նորա վերայ բոլրտվին ծուռ գաղա-
փար կկազմէ, հասկանալով թէ ազերգայ ուշամին, նշանակում է այն,
ինչ որ հայերէն նշանակումն վանել (թշնամին), վանել (մօ-
տից), դուռ անել (տանից մէկին), դուռ յէտել (մի բան), ուստի
և բնականաբար ազերգայ բառը կշփոթէ բացատքապահան-
ձելու նշանակում է դուռ յէտել վանամին: Վյս թիւր կարծիքին մէջ ու կհաս-
տատուի և այն հանդամանքով որ ազերգայ անդրագարձ
ձեւ նշանակում է դուռ յէտել վանամին: Տէնք խօսում այն
անքնական կարդին վերայ, որ «վանել», «իսխել» հեռաւոր իմաստ-
նելը միմեանց յաջորդումն առանց գծիկներով բաժանուած
լինելու. իսկ «կարդընկեց անել» իմաստը, որ շատ աւելի մօտ է
«վանել» իմաստին՝ գծիկներով բաժանուած է և «փսխել» իմաս-
տից յետոյ է դրուած: Եթէ բառարանազգութեան և ոռուս-
րէն ու հայերէն լեզուներին աւելի հմուտ լինէր պ. հեղինակը՝
մօտաւորապէս այսպէս կկազմէր այդ բառը.

Извергать բ. ն. փախել, ործալ || ժայթքել || *տարագրել, արտաքսել || «Համարեցին» պաշտօնից մերժել,—որ աւելի կարճ, աւելի բնական, ուրիմն և աւելի դիւրահասկանալի, և որ դլաւորն է՝ ուղիղ կլինէր:

Եյսպիսի օրինակներ կարելի էր բերել հարիւներով և հազարներով, որովհետեւ զրեթէ ամբողջ գիրքը այսպէս է կազմուած: Մենք վերցրինք առաջին անգամ մեր աչքին ընկած բառերը, և ով զիաէ դեռ ի՞նչ հրէշային բառեր և կազմութիւններ գտնուին:

Պերոյիշեալ օրինակներից ընթերցողը թերեւս նկատեց, որ բառարանի հեղինակը սովորութիւն ունի որեւէ ոռւսերէն բառի դիմաց դնել հայերէն բաղմաթիւ (հեղինակի կարծիքով) հոմանիշ բառեր, որչափ որ զիտէ (զօր. տալ վճարել հատուցանել յանձնել մատնել դաւաճանել տեսնել նշանակել, ծանաչել վանել վանտել, դուրս անել դուրս ձգել զգայուել փախել ործկալ վեժել ևայն). այս յախուռն կուտակութիւնները ոչ միայն չեն պարզում բառի իմաստը (մանաւանդ եթէ անյաջող գործածուած են, ինչպէս սովորաբար պատահում է այս բառարանում), այլ ընդհակառակը շփոթում են: Բառարան նայողը կարծում է, թէ հայերէն լեզուն չափազնց հարուստ է, որ ոռւսերէն մի բառին տեղ 8—10 բառեր ունի, կամ ոռւսերէնը սաստիկ աղքատ է, որ հայերէն բաղմաթիւ բառերին դէմ հազեւ մի բառ ունի: Բայց այս այսպէս չէ. այդ կուտակուած հայերէն բառերի իւրաքանչիւրին դէմ առւսերէնն ունի բուն համապատասխան մի, երկու և աւելի բառեր: Եյս կերպով, երբ մի բառի մէ նշանակութեան դէմ հեղինակը գնում է, համարենք, չորս թարգմանական բառ, այս չորս բառի բուն համապատասխան ոռւսերէն բառերին դէմ նա հարկադրուած պիտի կրկնէ նոյն բառերը: Որով դուրս է գալիս, որ չորս միմեանցից տարրեր ոռւսերէն բառերի դէմ հայերէն կրկնվում է միևնույն բառը: Առա հետեամքը լինում է այն, որ այս բառարանը գործածողը ոռւսերէն տարբեր նշանակութիւնները կշփոթէ միմեանց հետ, որ հարկաւ լեզուի ուսումնասիրութեան և հասկանալուն մեծ վեաս է: Կոնկնք հարիւրաւորներից մի քանի օրինակ.

Ենք գ. ա. կշեռ, ծանրութիւն, || յարդանտ, պատի-, նշանակութիւն, կշեռ:

Կոտրագրուած բառերն աւելորդ են, նոքա ունին իրանց սեփական նշանակութիւնները — տայք; սահմանական պատիւթեան պատիւթեան վոքր իշտէ համապատասխանումէ հայերէն կշեռ բառի փոխաբերական նշանակութիւնը, ուրեմն զծիկներից յետոյ պէտք էր դնել—*կշեռ, նշանակութիւն:

Եթե գ. ի. հաւատ, համապատասխանում || իշտ, դաստիառութիւն || հասպատուն յոյ:

Եթե բառի բոլոր նշանակութիւնց համապատասխանումէ հայերէն հաւատ բառը, որ և այս պատճառով բաւական էր մենակ գործածուելու: Խակ համոզմունք (սեպական), կրօն (քուլութիւն) (ասպետութեան, վերօնութեան), դաստիառութիւն (ասպետութեան, վերօնութեան). Համապատասխանութիւն (տայք) բառերին համապատասխան ուրիշ ուուսերէն բառեր կան, որոց հանդէս և պէտք է դրուած լինէին:

Նեղենութեան աժ. անփուտ, անփական, անփական, անփական, անփական || յառ-եց-տական, հշտնջնական, անխառամ, անխառամ, անխառամ: Պէտք էր դնել—անփուտ, անփական || *անեղծ, անանց:

Երբայ աժ. շառապ, շառապայն, վիճակայն, խարբեալ բուխ կարձ, աշխէպ, երաշի: Խօթը բառ, որոնք չորս տարբեր գոյներ են նշանակում նոցա ստորաբաժնմամբ, բայց և ոչ մէկը իսկապէս երբայ չէ նշանակում:

Օրինակներն անհամար են. միայն 212 երեսում ի միջեայլոց տեսէք գրութիւն (6 բառ), գրութիւն (5 բառ), գրութիւն (8 բառ), գրութիւն (6 բառ), գրութիւն (8 բառ), գրութիւն (11 բառ), որոնցից երկու երրորդն աւելորդ գործածուելով միայն շփոթութիւն են պատճառում և զիկքն ստուարանում:

Բառերի այս յախուռն կուտակութիւնը մանաւանդ վկասակար է զիտական անուններին մէջ, որոց մասին մեր լեզուն խիստ աղքատ է, ուստի և հարկաւոր է մեծ զգուշութեամբ և խնայողութեամբ գործածել:

Անտլոպա բառին դէմ պ. Յովհաննիսեան զրել է. քարայծ, յամշըր, վիթ, ալպից այծ, լեռնայծ, այծեամ:

Կնկարելի է ենթադրել որ անտլոպա բառը հայերէն վեց

տեսակ անուն ունենայ, ամենասովորական, ընտանի կանդենիներն իսկ այսքան բազմաթիւ կոչումներ չունին: Առողութ որովհետև իսկապէս կենդանու մի տեսակ չէ, այլ ցեղ որ պարունակումէ այլեայլ տեսակներ՝ պէտք էր թարգմանական բառ ունենար ցեղ նշանակող (զօր, այծեամ), իսկ առողութ այլեայլ բէստիւր կարելի էր իրեն միւս համապատասխան անուններով: Աս միւնցն է, եթէ մարդ canis (շուն) բառին հանդէպ դնէ գայլ աղուէս, շուն ևայլն, որովհետև գայլ աղուէս, շուն տեսակները շուն ցեղին են պատկանում:

Վայտ նշանակումէ կնձնի, թէղօշ (կարգա թէղօշ) նշդարենի, ճշդարենի, պտղի, մոծակի ծառ: «Նոյնպէս և

Ալեմ նշանակումէ. կնձնի, թէղի, պտղի, նշդարենի, ճշդարենի, մոծակի ծառ:

(Եթէ ալեմ և վայտ միւնցն են, ինչպէս երեսումէ թարգմանական բառերից՝ պէտք էր նոցանից մեկի առջեւ համապատասխան նշանակութիւնները դնել իսկ միւսի՝ օր ալեմի առջեւ դնել տես վայտ: Բայց այս թողնենք): Մի բառին դէմ վեց բառ դնեն ինքն ըստ ինքեան ցցյց է տալիս, որ կամ թարգմանելի բառի կամ թարգմանական բառերի նշանակութիւնները պարզ չեն հեղինակին: «Նոյն պակասութիւնն երեսումէ և Պ. «Նորայրի բառարանում» օրեւ բառին տակ: Մինչ գեռ Հ. Կոյլաւեանի բառարանը Ալմե (վայտ) բառին հանդէպ դնումէ. (almus) կնձնի, ինչպէս և Աննենկովի բուսաբանական բառարանում Almus effusa տեսակին հանդէպ դրուած է «հայերէն՝ կնձնի» (երես 368):

Եարքանութ գ. ա. անթառամ ծաղիկ, թաւրնջակ, ծիմել հաւատար. բ: — Յայտնի է որ անթառամ ծաղիկ որևէ ծաղկի կամ բոյսի անուն չէ, այլ այն ամեն ծաղիկներին, որոնք չեն թառամում, ուստի չէ կարելի բարքանութ բառին դէմ իբրև թարգմանական բառ դնել՝ անթառամ ծաղիկ: «Նորայրի բառարանում» amarante (բարքանութ) բառին հանդէպ դրուած է «ծաղիկ ինչ աշնանային, թաւրնջակ»:

Наждакն բառին դէմ դրուած է. գայլախազ, զմոնիտ, զմոնիտեան քար, կարծրաչեց սմիարա, սմպատիչ—վեց բառ որոց վերջի հինգը աւելորդ են և նոցանից չորսը (բացի կարծրաչեց բառից, որ մեղ յայտնի չէ) սխալ:

Թէ որպիսի շփոթութիւն և բարելոնեան խառնակութիւն կծագի գիտական բառերի որոշմանց և նշանակութեանց մէջ վերցիշեալ և ուրիշ բազմաթիւ նմանօրինակ կուտակութիւններով՝ բացատրելու կարօտ չէ:

Պ. Նեղինակը իրան նպատակ է արել որեւէ ոռւսերէն բառի դէմ զնել անպատճառ գոնէ մի թարգմանական հայերէն բառ: Նպատակը շատ գովելի է, եթէ նորա իրագործութիւնը գոհացուցիչ լինի. բայց բառարանում բազմաթիւ օրինակներ դժբաղդաբար շատ հետու են գոհացուցիչ լինելուց: Ըստ գիտական բառերի դէմ պատահում են այնպիսի հայերէն բառեր, որոնք ոչ ոքին յայտնի չեն, ուրեմն և չեն կարող բացատրել ոռւսերէն բառի նշանակութիւնը, որքա մեծ մասամբ յօրինել է պ. Հեղինակը, ոռւսերէն բառը կամ նորա մի ուրիշ կոչումը բառացի հայերէնի վերածելով: Մի երկու օրինակ մեր խոսքը կպարզեն:

ԱԵՐԿՈՒԼ բառին դէմ գրուած է արջնականջ (արջականջ բառազննօրէն աւելի ուղեղ կլինէր), որ բառացի թարգմանութիւն է oreille d'ours բառին, ինչպէս գաղղիացիք կոչում են այս բոյսը և ինչպէս գրուած է Մակարովի բառարանում աԵՐԿՈՒԼ դէմ: Նշն բոյսն ոռւսներն ևս կոչում են մեծեցիք յաշկո (տես Սննենկովի բառարանում եր. 18): Բայց արգեօք հայը արջականջ բառը տեսնելով կհասկանայ թէ ի՞նչ բոյս է այդ—շատ տարակուսելի է, որովհետև այդ բառը հայերէն չկայ և նոր հնարաւած է Պ. Նորայրից, որ իւր բառարանում օրեille d'ours-ին դէմ զնում է, «տունկ ինչ գարնանային». որ ունի ծաղիկ միաթիրթի.* արջականջ»: Պ. Նորայրին մենք կարող ենք շնորհակալ լինել, (մանաւանդ եթէ նա այս բոյսին դէմ գրած լինէր և նորա լատինական, տեխնիկական կոչումը). իսկ պ. Յովհաննիսինի արածին վերայ պիտի զարմանանք, որ անձանօթ բառը անձանօթ բառով է բացատրում: Նթէ նա նայած լինէր Սննենկովի բուսաբանական բառարանը՝ նա կտեսնէր, որ հայ ժողովուպտն այդ բոյսը կոչում է քնարբուկ (բարբուկ—երես 272): Բայց մեր զարմանքն աւելի է աճում, երբ պ. Յովհաննիսինի բառարանում գտնում ենք և մեծեցիք յահանիշ և աԵՐԿՈՒԼ թարգմանութիւն և համանիշ է աԵՐԿՈՒԼ բառը, որ թարգմանուած է խոնդատ:

Թաէ որչափ համապատասխանումէ խռնդատ խոտը մեծայի քաղաքներում և որոշել մասնագէտներին. բայց հեղինակից մենք պէտք է պահանջնենք, որ նա գիտնայ իւր զրածը, գիտնայ որ ավրիկուա և մեծայի քառը գնէ, կամ միայն արջականջ (բացատրելով սորա ինչ բոյս լինելը), կամ միայն խռնդատ (եթէ այս բառը Ճիշտ համարելու վստահութիւն ունի): Խսկ եթէ անշուշտ երկու բառն էլ ուղրումէ գործածել՝ խելքի մօտ կինքը մեծայի քաղաքներու մասնականջ, և ոչ ընդ հակառակն: — Յիշենք ի գէպ, որ խռնդատ բառը պ. հեղինակը գործածելէ և կօրական բառին գէմ: Ուրիմն, նորա կարծիքով կօրական բառը ու մեծայի բոյսն է...

‘Խոյն զիտողութիւնները կարելի է անել և մեծայի լապա (արջաթաթ), մեծօսօչ (մեղրածուծ, մեղրասուն), մոլոտք (ուռաձուկ), քրեմորք (ծառաքրոս), այլութեանուկ (փողամաղեկ) և ուրիշ հարիւրաւոր բառերի մասին, որոնք ինչպէս ոռուսերէնում՝ նոյնպէս և հայկենում անծանօթ կմնան հայ ընթելցողին: Եւելի լաւ չէր արգեօք Երեցփոխեանի քոյս ինչ, «տունկ ինչը, մի համեստ խոստովանութիւն նորա չգիտութեան, որ ձեռնհաս մարդերին կարող էր զբգում տալ մինտուելու կամ յօրինելու յարմարաւոր բառերը: Մինչդեռ պ. Յովհաննիսեանի վերցիշեալ ամենազիտութիւնը հազարաւորներին կարող է խարել ու գայթակղեցնել:

Բայց այս ամենը, որչափ և ցաւալի պակասութիւններ և բառարանում աններելի զանցառութիւններ՝ փոքրիկ բաներ են թուում այն խսկապէս սարսափելի սխալերին մօտ, որոնք մենք եթէ մեր աչքով տեսած չլինենք բառարանում՝ չպիտի հաւատայինք, թէ նոքա կարելի են. սխալներ, որոնցից մէկ հասը միայն բառական էր բոլոր բառարանը անուանարկելու:

Եցդյան բառին հանդէպ կարդում ենք. ուղենչ ճանապարհութանից, սպասառոց, ժառանք || ապաւնի, ապագայ, եկող, սպասող:

Թռողնենք վերջի երկու բառը, որոնք համապատասխան ոռուսերէն բառերին հանդէպ պիտի զանուեին (որիքայի առաջնական առաջնական բառը բոլորովին սխալ են. բայց առաջնական բառը պերբայը, նշանակում է,

վնելիք. և կարող է թարգմանուել «ապադայ» բառով. ուրիշ ոչինչ չէ նշանակում: Իսկ թէ ուսկից է առել պ. հեղինակը ուղեկից, ճանապարհորդակից, սպասաւոր, ծառայ նշանակութիւնները՝ մի ցաւալի առեղծուած է, որը մեկնելու համար գուցէ պէտք է ենթադրել թէ պ. հեղինակը աչքի առաջ է ունեցել ուղեթուղթների (ուժորոյա) մէջ պատահած խօսքը «વыдать» (такому) չէ բայց այս (столько) լոտածե: Եթէ մեր այս մակարերութիւնը Ճիշտ է՝ աւելի վատ պ. հեղինակին համար:

Гвоздика, ցազակա բառի առաջին նշանակութիւնը դրուած է Ֆի, որ լինելու բան չէ. ցազակա նշանակում է նախ՝ Ֆիակ կոչուած համեմանքը, և երկրորդ՝ շահոքրամ ծաղիկը. իսկ մեխ՝ երբէք չէ նշանակում: Երեւ պ. հեղինակը շփոթելէ այս բառերը ցազակա և ցազածեք բառերին հիտ:

Маринистո բառին դէմ կարդում ենք. պողոնի ներկով նկարող մինչդեռ mariniste բառը (marin—mare—ծով արմատից և 'iste ածանցականից) ուրիշ որեւէ նշանակութիւն ունենալ կարող չէ, քան մամնագէտ ծովային դիտութեանց և տեսարանների, որ ոռուսերէն լիզուում մասնաւորապէս յատկացրած է ծովային տեսարաններ նկարողին, որին հայերէն կոկիկ թարգմանական բառ ունինք—ծովանկար կամ ծովանկարիչ (գաղղ. peintre de marines): — Զլինի՞ թէ պ. հեղինակը մարիստո բառը ծաղեցրելէ ոռուսերէն մարենա (տորոն) բառից, որից և ծնելէ վերցիշեալ յուշկապարիկը, մարիստո—պողոնի ներկով նկարող:

Եдинօբրագի բառին դէմ դրուած է մահուն-Շին, միապսակ լինելը. իսկ մոնոգամիա բառին դէմ նոյնպէս դրուած է մահուն-Շին: Որից հետեւում է, որ պ. հեղինակը տարբերութիւն չէ զնում единօբրագի մահուն հասկացողութեանց մէջ, և նորա սխալով կսխալուին հարկաւ և նորա բառարանը գործածող ները: Մեր մէջ, օրինակ, օճափօբրագի (մի անգամ միայն ամուսնալը) պարտաւորիչ է քահանաներին. իսկ մոնոգամիա միակնութիւն, հակառակ բազմակնութեան) պարտաւորիչ է բոլոր ժողովրդին, ինչպէս և բոլոր եւրոպական ազգերին, որոնք սակայն, իսի մեռնելուց յիտոյ, կարող են երկրորդ, երրորդ ... անգամ ամուսնանալ:

Եյրեակո—հոգեւոր դաշտոցի աշակերտ (ռուսաց): Եյս բառարանի օգնութեամբ ընթերցողը լաւ գտղափար կստանայ առա-

ասց հոգեւոր դպրոցի (բյու) և նորա աշխերդների (բյուսակ) մասին: Պիտարեկ երեւելիք քննադատը, համեմատելով Պոմեալովսկու Եյրա վեպը՝ Դոստոեվսկու Յանիկ այսու մերտեաց տակ շարադրութեան հետ՝ գտնումէ որ Եյրան (որ ըստ պ. Յովհաննիսիսանի նշանակումէ հոգեւոր դպրոց ռուսաց) շատ աւելի վատ և վասակար է, քան քրէական պատժարանը (կատօրգ): Սեմինարի և բյու, սեմինարի և բյուսակի շփոթութիւնը մեկնութեան կարու չէ:

Եдинությունը—կամացից || օրդոնութու (կարդա օրթոդոկս) համարեն.—Մակարով այս բառին գէմդրելէ dissident, որ Նորայրի բառարանում՝ նշանակումէ. որոյ օրու են կրօնք ի մեծագոյն մասնէն կամ ի բուն Ակեղեցւոյն. այլարեն, այլազնո՞ր, օրույնունո՞ւն...» Դուրս է գալիս, որ եճությունը բոլորովին հակառակն է նշանակում: Քան պ. Յովհաննիսիսանի գտածը: Հեղինակը պէտք էր փոքր ինչ ծանօթ լինէր Ոռուսաց եկեղեցական պատմութեան և այս բառի ծագման հետ, որ այսպիսի խոշոր սխալ չանէր:

Կօրոնա—թագ, պատկ || զամբալ Քշմէլ || արտահայրապ: Այստեղ որեւէ բացարարութիւն, որեւէ զիտողութիւն աւելորդ է. յիշնք միայն կօրոնա—չամիչ քիշմիշ!

Եւ այլն, և այլն, և այլն:

Այս բառերից մեկ հասը միայն բաւական էր, որ բոլոր բառարաններ կասկածելիք գարձնէր գործածողի համար, մեկ հատը բաւական էր որ մենք ամօթ զգայինք՝ հայերէն լիզուով նմանօրինակ բառարանի գցութիւն ունենալուն համար: Ի՞այց այսպիսի բառեր հարիւրներով կարելի էր բերել որտնք բառարանի բազմաթիւ աններելիք պակասութեանց լոկ մի տեսակն են կտղմում:

Մենք այս պակասութեանց տեսակները միայն թուելով չկարողացնք և, խոստովանում ենք, չենք կարող վերջն հասնել: Պէտք էր բացարել թէ որչափ անհետեղական է պ. հեղինակը, միւնոյն բառարամատից կազմուած ուուսերէն զանազան բառերին հանդէպ դնելով տարբեր արմատներից և տարբեր նշանակութեամբ հայերէն բառեր*), թէ որչափ անըզ-

*) Համեմատեցէք Արիզու—պերճութիւն բանաստեղծական ոճի || աւելին, զգայնութիւն.—և Արիք—քնարերգու, քնարեր-

գուշաբար գործածումէ հայերէն որոշ նշանակութիւն (զիցաբանական, իրաւաբանական) ունեցող բառերը ոռուսերէն բառերին դէմ, որոնք չունին այդ նշանակութիւնները *), թէ ի՞նչպէս անխտրաբար գործ է ածում այնպիսի թարգմանական բառեր, որոնք ոռուսերէնի չափ անծանօթ են հայ ընթերցողների մեծամանութեան **), թէ ի՞նչպէս ի չարն է գործ զնում օտարազգի (թուրքերէն պարսկերէն ևն) բառերը, որոց շատ անգամ նախընտրութիւն է տալիս հայերէնին առջև ***), ի՞նչպէս ոռուսերէն բառը և հայերէն թարգմանականը բառաղըննապէս չեն համաձայնում, տարբեր մասն-բանիներ լինելով ****). ի՞նչպէս հարիւրաւոր ոռուսերէն բառեր է գրել ու բացատրել որոնք եթէ Վակալովի ընդարձակ բառարանում իմաստ ունենան՝ սակայն սորտ նման փոքրիկ բառարանում աւելորդ էին, իբրև գործածութիւնից գուրս ընկած, հնացած բառեր *****), ի՞նչպէս սորտ հակառակ բառական թուով կարեւոր և գործածական բառեր պակասում են *****) և այլն, և այլն: Այս ամենը

գակ, քնարաշար, Եհидна—իժ. և Եհիճո—օձապէս, օձի նման. և Եհիճնիւթեան—ոխալ, ոխակալել և այլն և այլն: Վայտ—քանդակել դրուագել. և Իզվայնայ—կոփածոյ, և Իզվայնի—արձան, անդրի || քանդակ: Allegro, աճայօ և այլն բառերը կան, իսկ largo, moderato և այլն չկան: A, b, в գրերի բացատրութիւնները կան (վայ այն բացատրութեանց), իսկ այնուհետեւ չկան:

*) Համեմատեցէք Լետյագա—վամպիր, յարակեղ թուով մուկ: Բարոնъ — բարոն, ապահովի, աւագուհ: Անդամանութարդարտական հայութայլ և այլն:

**) Տեսէք Ենլյումուք — մաշցոյզ գժատ: Բուրմետ — զատաք Կօրնայ — բարոն, ապահովի: Անդրյունութարդարտական:

***) Տեսէք Եսրյուք — մաշցոյզ տիկ, տկչոր: Խվակա — ե, կեր և այլն:

****) Տեսէք յալկո (մակրայ և բայ) — ցաւալի, ավսոսալի (Վական): Ժարկո (մակրայ և բայ) — ջերմագին, սաստիկ ջերմ (ածականներ) Ժելեզօձելատելինայ (ածական) — երկաթագործ (գոյական): Ենուք (գոյական) — ծաղկապսակ, տերևապսակ (ածականներ): Կրիվլյան (գոյական) — կոտրտուկ (ածական) և այլն:

*****) Տեսէք ճօխուենք, իզվիլայտ, կօրուենք, կօրուենք, կօրուենք, կօրուենք:

******) Օօր, վենтиляція, интеллигентъ, интэллигентія, интеллекъ, контингентъ, кустарь և:

և ուրիշ դեռ շատ տեսակ պակասութիւնները ցոյց տալու համար՝ պէտք կլինէր մի ընդարձակ շարադրութիւն գրել ծաւալով բառարանից մեծ, որ ի հարկէ անկարելի է թէ տեղի և թէ ժամանակի նկատմամբ:

Վի բան միայն չենք կարող լռութեամբ անցնել, այն է բազմաթիւ տառասխանները, որոնք վխոտում են բառարտնում: Բառարանում տառասխանները մահացու մեղք է. շատ անգամ մարդ բառարան նայում է միայն տեսնելու համար, թէ ի՞նչ պէս է զրվում այս ինչ բառը, կամ ի՞նչպէս է արտաստնվում: Բառարանը շեշտադրութեան և բառի ուղղագրութեան միակ աղբիւրն է, ուրեմն և ամեննեին զերծ պիտի լինի տառասխալներից: Խսկ պ. Յովհաննիսեանի զրքում տառասխալ որչափ կամենաք՝ կան. վրիսակների ցանկում ուղղուած են 13 տառասխաններ. սոցանից զատ «Երձադանքի» և «Կոր-Դարի» պագնատաները ցոյց են տուել և ուրիշ մի քանի տառասխաններ. սոցանից դուրս մենք նկատեցինք—

Ըսանց շեշտի բառեր. волочь, монадъ

Շեշտի սխալներ. біоваръ (պէտք է бюваръ), волосность (волосность), млеко (млеко), молебень (молебень), выкрахмалывать (выкрахмалывать), воинъ (войнъ), заблеваный (заблеванный) և այլն:

Գրերի սխալներ. животростеніе (պէտք է животорастеніе), карова (корова), вѣтхій (завѣтъ բառում—ветхій), дифирамбъ, дириаблический (диорамбъ, диорамбический), выкушенній (кушать բայից—выкушанный), виденный (видѣнныи), выспрашенній (выспрошенный), вымѣненый (вымѣненныи), кадычный (кандычныи), велоципедъ (велосипедъ).

Հայերէն բամենում տառասխալներն աւելի շատ են. օրինակ արշայոյս (заря բառում), պաշտօնընկեց, կարգընկեց (изверженецъ), անսուրանալ անսուրութիւն (жидѣть, жидкость), հավել, հալոց (гавкалье), ուղեցոյց (ուղեցոյց—инструкція), բաճեր (вѣстникъ), գաղաքար (мысль), հոսանք-ն (հոսանուտ—жидкость) այսմաւուրք (Յայսմաւուրք—минер). օրֆօնքս կարնոֆիլ ևայլն, ևայլն: Եյս տառասխալներից շատերը, ինչպէս զիւրին է վերահսուլլինել ոչ տպարանի և ոչ անուշադրութեան հետևանք են, ոյլ լեզուի անհմտութեան, որին կողմնակի կերպով ապացոյց կարող են լինել և այն անսովոր հայերէն բառերը և բացարու-

թիւնները, որոնք մեծ քանակութեամբ պատահում են բառարանում, ինչպէս պատյառելով ծակել թռնել սիրով գաղափար (որ կարող է նշանակել այն մարդը, որի փորը ցաւում է, իսկ դործածուած է յալօտլիան բառին դէմ, իբր թէ աղեգալար բառի նշանակութեամբ), ընթագագութել (փոխանակ երախակալ) տրամադրի (օտար և բնիկ հակառակիմաստ բառերից կազմուած, իմաստից զուրկ բառ), ընթացարան (վելօսուե բառին դէմ. ընթացարան կարող է միայն նշանակել ընթանալու գեղ բայց ոչ երբէք գործիւ. բացի այս՝ կառքն էլ երկաթուղին էլ իբրև ընթանալու գործիքներ՝ պէտք է ուրեմն կոչուէին ընթացարան), մասնաւունի ընթացով յէ (սիօհօդը), գնասապատեալ (դոմոչածը) ևն:

Ըմիոնիելով մեր ասածները՝ մենք մեզ թոյլ ենք տալիս յայտնել հետևեալ գաառողութիւնը, որ եթէ պ. Յովկաննիսեանի հրատարակած գիրքը կամենանք բարարան կամ բառզբքոյկ կոչել այս բառարանը ամօթ և նախաաինք կլինի ոչ միայն պ. հեղինակի անուան, այլ և բոլոր այն ժողովրդին, որի մէջ և համար որ տպագրուել է. այս բառարանը բազմատեսակ թերութիւններով և աններելի սիսաններով լի լինելով մեծամեծ վնասներ կարող է բերել անհմուաններին (համբակներին և աշակերաններին), ուստի և խստիւ պէտք է արգելուի նորա գործածութիւնն ուսումնարաններում:

Ուրիշ բան է, եթէ այս զերայ նայելու լինինք իբրև բառարանի անմշակ նիւնի, բառերի մթերանոցի վերայ. այս պէտքումնա կարող է օգտակար լինել բանիբուն մարդոց՝ ռուսհայերէն բառարան կազմելու համար, նոյնպէս և նոցա, որոնք թէ ռուսերէն և թէ հայերէն լեզունները բառականաշափ գիտեն, և եթէ որեւէ ռուսերէն բառ հայերէն թարգմանելու դժուարութեան հանդիպին՝ բաց անելով այս զիրքը՝ կգտնեն մի շալք հայերէն բառերի, որոնցից կը կատարե իրանց պէտք եղած, տեղին համապատասխան բառը:

Եյս բազմաթիւ և աններելի պակասութիւններն աչքի առաջ ունենալով հանդերձ, եթէ մի խօսք կամենայինք ասել յօդուա պ. Հեղինակին՝ պէտք է ջատագովինք միայն նորա ջանասիրութիւնը և բարի ցանկութիւնը:—Ut desint vires, tamen est laudanda voluntas.

На горахъ Ааратскихъ. Изъ поездки студенческой экспедиціи по Закавказью.—Е. П. Ковалевскій и Е. С. Марковъ. Съ рисунками художника С. Иванова. 316 стр. 8°. Москва 1889.

Ըրարտեան լեռներում: Աւսանողական ճանապարհորդութիւնից գէպի Անգրկովկաս: Եւ. Կովայիվակի և Եւ. Մարկով: Իշխանովի նկարներով: Մոսկուայ. 1889. 316 էրես. 8°.

Եյս դրբի հեղինակները իրենց յառաջաբանի մէջ յայտնում են, որ նոցա այս աշխատութիւնը գրականական—գիտական արժէք ունեցող մի երկասիրութիւն չէ, այլ նորա մէջ միայն նշանակուած են այն ամենը, ինչ որ ճանապարհորդութեան ժամանակ տեսել և լսել են նոքա: Աարդարով այս գիրքը, յիրաւի կարելի է համոզուել, որ հեղինակների այս յայտարարութիւնը բոլորվին ճշմարիտ է և նոցա կարծիքն իրենց զրբին վերայ պէտք չէ համարել համեստութիւն. իսկ եթէ մի բան այդտեղ ձիշտ չէ, դա այն է, որ նոքա հաղորդում են ոչ միայն իրենց տեսած ու լսածները, այլ և շատ յաճախ հանդիսանում են քննադատներ, դատաւորներ. և այս բոլորովին ի զուր, որովհետեւ նոքա այս գէպքում ապացուցում են իրենց ծանծաղամտութիւնը և անպատճաստականութիւնը:

Եյնտեղ, ուր հեղինակները ներկայանում են իբրև պարզ գիտողներ և գրում են իրենց տեսածն ու կրածը՝ գիրքը աւելի հետաքրքրական է և փոքր ի շատ է կենդանի, թէ և այս գէպքում էլ նոքա յաճախ մոցնում են իրենց անհատական (օբъективնայ) զգացմունքները: Եյսպէս, օր. եթէ հեղինակները յոդնած են, սոված են, ձիեր չեն ճարում, իր նոքա ուզում են՝ բոլորը վատ է երևում, կամ ոչինչ հետաքրքրական բան չէ դարնագում, և ընդհակառակը: Միենայնը նկատվում է և այն դատողութիւնների և կարծիքների մէջ, որոնք վերաբերում են այն ժողովուրդների սովորութիւններին, բնաւորութիւններին, որոնց նոքա հանդիպում են: Ճշմարիտ է, նոքա յաւակնութիւն էլ ցոյց չեն տալիս թէ իրենց կարծիքները և դատողութիւնները ուրոշ լինին, բայց և այնպէս այն բացարութիւնները, որոնք նոքա, հակառակ իրենց կամքին, տալիս են այս կամ այն փաստին՝ սորման մի առանձին գոյն են տալիս: Ի՞սկ

այս դէպքում ևս պէտք է զգոյշ լինէին երիտասարդ ճանապարհորդները:

Պէտք չէ մոռանալ որ ամեն մի մարդի, հետեւապէս և ճանապարհորդի համար, հարկաւոր է սէր դէպի իր ձեռնարկած գործը, սէր դէպի այն կողմերը, երկիրը և ժողովուրդը, որի մէջ ճանապարհորդում է, որովհետեւ միայն սիրով կարելի է իմանալ և թափանցել մարդի և ժողովրդի հոգեբանական գաղտնիքները, որոնք նա ուզում է ուսումնասիրել. ընդհակառակներ, որոշ ու պատրաստ կանխտիկալ կարծիքներով դուրս գալը նշանակում է կանխօրէն հրաժարուել անկողմնակալութիւնից:

Հիմնուելով հեղինակների յառաջաբանում յայանած համեստ յայտարարութեան վերայ, իսկապէս շարժէր լրջօրէն վերաբերուել դէպի այս զգացքը, բայց Երարտաեան լեռների վերայ արած ճանապարհորդութիւնը մեզ համար մասնաւորապէս չէ կարող մեծ հետաքրքրականութիւն չունենալ, և երկրորդ մեզանում ամենքը չեն կարող ծանօթանալ այս զբքի հետ, այն ինչ ցանկալի էր որ մեր ընթերցող հասարակութիւնը ծանօթանար, թէ ի՞նչպէս են վերաբերվում ճանապարհորդները դէպի մեղ:

Լացի այս, կարծում ենք, և հեղինակներին ևս հետաքրքիր է իմանալ թէ նրանց աշխատութեան վերայ գարձուած է ուշագրութիւն. հակառակ դէպքում նոքա կարող են մեզ մեղագրել անուշագրութեան մէջ:

Խօսելով այս զբքի մասին, մենք չենք մոռանում, որ երիտասարդ ճանապարհորդները կատարել են Աշխարհագրական ընկերութիւնից իրենց վերայ դրած պարտականութիւնը, որ Երարտաի վերայ բարձրանան, և այս զիրքը նոցա հարեւանցորէն զբած յիշատակարանների մի հաւաքածուն է:

Աշքի առաջ ունինք և այն, որ ինչպէս իրենք հեղինակները, գրում են, երեք տարի է, որ մի կողմն են ձգել յունական քերականութեան ուսումը (275 երես), այսինքն երեք տարի է համալսարանի ուսունող են. այսուամենայնիւ չէ կարելի ցոյց չուալ նոցա զբքում մի քանի սխալներ և պակասութիւններ և մասնաւորապէս ուշագրութիւն չգարձնել նոցա անտեղի տօնի վերայ:

Որպէս ռուսաց, այնպէս և հայոց պարբերական մամուլը և տպագրուեցին կարճառօտ տեղեկութիւններ, որոնց մէջ գովասանքով էին խօսում այս զբքի մասին։ Յիբաւի, եթէ այս զբքին վերայ նայենք թեթեօրէն, ոչ լրջութեամբ, կարող ենք դանել նորա մէջ հետաքրքրականութիւն են։ Թափլիսի հայոց մի լրագիր հէնց այս ոճը զբքի գովելի արժանաւորութիւնն էր համարել և արտայայտել, որ հեղինակները ձիշտ են նկատել հայ ժողովրդի մի քանի պակասութիւնները։

Մէնք միանգամացն համաձայն ենք, որ կարելի էր շնորհակալ լինել և վերաբերուել համակրանքով դէպի նոցա, որոնք մեզ ուսումնասիրելով ցոյց են տալիս մեր պակասութիւնները։ այս հանգամանքը, թերմս, ցոյց կտայ սէր դէպի մեզ բայց տրահամար հարկաւոր է, որ արտայայտուած դատողութիւնները հիմ ունենան, որ նոքա առաջ չկան պատահական և անձնական դիտողութիւններից, որ հէնց ընթերցողներն համոզուենին նորանում, ինչ բանում որ համոզուել են հեղինակները։ Ահա, այս խակ կողմը չկայ դժբաղդաբար երիտասարդ ճանապարհորդների զբում։

Մէնք շատ ուրախ ենք նոցա ճանապարհորդութեան։ Հաւանական է և ապագայում կ'ձեռնարկին նոքա այսպիսի ճանապարհորդութեան, շատ ուրախ ենք, բայց միենցն ժամանակ մեղ ցանկալի է, որ այս հետազննութիւնները անաչառ լինեն։

Սակայն սկսնք փոքր ինչ թերթել այս զիրքը։ «Երարատեան լիոններում զբքի հեղինակները, խօսելով ճանապարհորդների և հասկացող մարդկանց զանազան դատողութիւնների վերայ Երարատ բարձրանալու դժուարութեան մասին, ի միջի այլոց, առաջ են բերում և մի հայի կարծիք, որպէս խիստ հակասական նախընթաց կարծիքներին։

Երբոր հարցրել են հեղինակները. «Երարատ բարձրանալու ճանապարհը դժուար է արդեօք»—«ի հարկէ ոչ պատասխանում է հայը, Ա. Յակովի վանքի մօտ ամեն տարի հաւաքվում են հարիւրաւոր ուխտաւորներ և այս բանը նոքա երբէք քաջութիւն չեն համարում։ Եյնտեղ աւելացնում է նա, մինչև անդամ կառքեր են գնում։»

— «Ասոքէ՞ր, հարցրել են զարմացած ճանապարհորդները։

*

«Եյ՞ն, կառքեր, պատասխանում է հայը. բայց կառքը գեռ
ի՞նչ մեզնում քաղաքակրթութիւնը այնքան առաջ է գնաս-
ցել որ Երարատի վերայ կ'տեսնեք մինչեւ անդամ դազ ևն»:

Եւ հայի այս կարծիքը առաջ է բերվում իրը հակասող
միւս հայերի յայտնած կարծիքներին, որոնք միաձայն պատաս-
խանում են թէ «անկարելի է»:

Մենք իսկապէս պարզել չենք կարող որին վերադրել այս
կատակը, հային, որ երեխ բոլոր այս խօսակցութեան միջո-
ցին կամեցել է հանաք անել թէ գրքի հեղինակներին, որ չեն
հասկացել նորա հանաքը:

Եւ ուր է այստեղ հակասութիւն միւս հայերի յայտնած
կարծիքների գէմ, որոնք պնդում էին Երարատ նարքանալը
դժուարութիւնների նոյն իսկ անկարելութեան մասին:

Ընդհանրապէս բանի էութիւնը իսկապէս նորա մէջ է, որի
մասին հեղինակները շատ անգամ յիշատակում են—որ հայերը
կասկածում են Երարատ բարձրանալը կարելիութեան վե-
րայ, և որ այս կարծիքը պաշտպանում է հայ հոգևորակա-
նութիւնը, զանազան տեսակէտներից, զօր. այս լերան նուի-
րականութեան աւանդութիւնը պաշտպանելու համար: Եյս
հիման վերայ հեղինակները աշխատում են պացուցել որ
Երարատի վերայ բարձրանալը ոչ միայն չէ հակասում նորա
նուիրականութեանը, բայց ընդհակառակը, և օրինակներ են
բերում Երուսաղէմը, Պողոթան, ևն:

Ի հարկէ, պարսներ, բայց ի՞նչ զործ ունի այստեղ հայ
հոգևորականութիւնը իր «զանազան տեսակէտներով»: Ապա ին-
չու կողակը, ոռու զինուորը, որ հայ չէ, որի վերայ հայ հո-
գևորականութիւնը ազգեցութիւն չէ ունեցել. ի՞նչու նա ևս
չէ հաւատում Երարատ բարձրանալը կարելիութեան, ա-
սելով. «աստիճանի զառիվայր է, սառուցով ու ձիւնով ծածկուած
և շատ նմանօրինակ գժուարութիւններ ունի», և երբ ծանա-
պարհորդները առարկում են, թէ ապա ինչպէս ուրիշները
բարձրացել են, նա ժապելով հեղնօրէն պատասխանում է «ի՞նչ-
պէս թէ չէ, հաւատացէք»: (64 երես):

Բայց միթէ միայն տղէտ հայ հոգևորականները կամ
աշխարհականներն են, որ չեն և չեն հաւատում այս լետոր
բարձրանալը կարելիութեան, որ ծածկուած է մշտնջենաւոր

ձիւնով և միթէ սա միայն հայ ժողովրդի և հայ հոգեորականութեան բուն յատկանիշն է: Ձէ՞ որ հէնց իրենք ճանապարհորդները նկարագրում են այս բարձրանալու մեծամեծ դժուարութիւնները և մինչեւ անդամ՝ ժամանակ առ ժամանակ շուարում մնում են, թէ կ'հասնեն արդեօք իրենց նպատակին: Նոքա նկարագրելով Երարատի մեծափառ տեսարանը, ասում են, «զդում ես որոշած նպատակիդ հասնելու բոլոր դժուարութիւնները և անզգալաբար կասկածը մոնումէ սիրող»: «Բաւական է նայել լայնատարած, անսահման դաշտին վերայ, որի մէջ ապրում են հազարաւոր մարդիկ, որոնք իրենց բոլոր կեանքում շարունակ տեսնում են Հայաստանի երկու պահապանները՝ Երարատ և Երազած լեռները, և կայելի հինե հասկանաց թէ ի՞նչու այդ մարդիկ սրբազդութիւն են համարում Երարատի գլուխը բարձրանալու կարելիութեան միտքն անդամ» (69 իրես):

Նթէ այս բոլորը կարելի է հասկանալ ուրեմն հարկ էլ չկար ծիծաղելու տգիտութեան և հոգեորականութեան վերայ: Եւելի ևս հարկ չկար նրանց յանդիմանելու, քանի որ հէնց իրենք, բարձրանալով Երարատի վերայ, իրը ապացոյց իրենց բարձրանալուն՝ թողնում են մի ջերմաշափ, քարերի կոյտ են ժողովում, կազմում են սստիկանական արձանագրութիւն, և ի հարկէ այս բոլորն անում են ոչ թէ նորա համար, որ հայերին ապացուցեն Երարատ բարձրանալու կարելիութիւնը, բայց ուրիշ որևէիցէ մէկին, որ ոչինչ ընդհանուր կապ չունի հայ հոգեորականութեան հետ: Ուրեմն ոչեիցէ մէկին համար հարկաւոր են ապացոյցներ:

Եյժմ տեսնենք, թէ ի՞նչպէս են նոքա նկարագրում քաղաքները և տեղերը և ի՞նչպէս են վերաբերվում այն ժողովրդին, որի մէջ ճանապարհորդում են:

Պեր առնենք մի քանի օրինակներ:

Վհա պատմական Աւանայ լիճը: Ճանապարհորդները նկարագրելով Աւանայ լիճի հիանալի տեսարանը, որ ինչպէս իրենք են ասում ծովի կատարեալ նմանութիւն է բերում (յօ օբմառ հապոմինացօց մօրե), բայց և այնպէս հարեւանցօրէն հայերին մեղագրում են, թէ նոքա «միշտ պատրաստ են ծաղկեցնել և վեր հանել իրենց աղգայինը, ինչպէս էլ ո՞ր նո՞նի» այդ լիճը

ծով անուանելով առասպելական Գեղամ թաղաւորի անունով:

“Նախ, որպէս հայերի բնական յատկանից կարելի էր միանգամայն հակառակ կարծիք յայտնել (իրենը արհամարող, ատող) և այս թերեւս նոյնպէս ճշմարիտ լինէր. երկրորդ որ ծով էր դա ներկայանում՝ Գեղամի և ուրիշ կես-առասպելական նահապետների ժամանակ և թէ ինչու համար նրան ծով են կոչել—այս ի հարկէ յայտնի չէ հեղինակներին:

Սորա մասին շարժէր, ի հարկէ, և յիշել եթէ այս բանը ցոյց շատր նոցա բացասական յարաբերութիւնը դէպի հայ պատմագիրները: Ահա օրինակ, ինչպիսի խօսք են արտասանում մի ուրիշ տեղ: «Աթէ հաւատանք հայոց հին պատմագիրներին, որոնք յաճախ մտացածին բաններ են երեւակայում, բայց երբեմն ճշմարիտ տեղեկութիւններ են հազորդում...»

«Յաձախ... երբեմն կամ «երբեմն... յաձախ...» խօսքերը իրենց անորոշութեամբ ոչ մի բանի չեն պարտաւորում նոցա ասողին, որովհետեւ այսպէս կարելի է ասել բոլոր հին պատմագրութիւնների և պատմագիրների մասին. ուրեմն և ինչ տեղիք կայ այստեղ ինքնապարծութեան, ցոյց տալու իրենց գիտութիւնը հին պատմագիրների մեջ և ի՞նչու համար են ոչինչ նշանակութիւն չունեցող այս խօսքերը: Ո՞թէ այս երեխայութիւն չէ:

(Ճաղ չկարծեն մեր ընթերցողները, նոյն խոկ հեղինակները (եթէ նոքա հետաքրքրուեն այս տողելով), որ մեր նպատակն է պաշտպանել հին պատմագիրներին կամ այն ամենին, որոնց դէմ են նոքա. — ոչ մեր խօսքը միայն ճանապարհորդների յարաբերութեան մասին է դէպի այս կամ այն փաստը և երեւոյթը. մենք քննում ենք, թէ որքան հիմնաւոր կամ անհիմն են երեւում մեզ նոցա զիտողութիւնները:

Ի միջի այլոց չէ կարելի ուշագրութիւն չդարձնել և այս հանգամանքին վերայ, որ ճանապարհորդները Աւանայ վանքումը անցրած մի քանի ժամում կարողացել են շատ բան անել—ոչ միայն տեսել են բոլոր ելքերն ու մուտքերը, ոչ միայն լուսանկարել են այն հոյակապ գոներից, որոնց համար մի ժամանակ առաջարկում էին 600 ոռւրի, այլ և տեղեկութիւններ են հանել «վանքի գիւտանից (արքան), որը նոցա մի-

ջոյ է տուել մենապահն հաստատի պարագաները համառօտիւ վերականգնել:

Երիտասարդ ճանապարհորդները անցողակի, ոչ միայն քըննադատում են հին պատմագիրներին և տեղեկութիւններ են հաւաքում դիւաներից, բայց և վճռում են «Հասարակական հիտաքրթութիւն ունեցող խնդիրներ»:

Դարաշխակում (Մազկաձոր), նահանգտագետի մօտ եղած ժամանակ, որ նոյա լաւ ընդունել և անսահման համակրութիւն է ցոյց տուել համեղ ճաշից յետոյ ներկայ եղողների մէջ տաք վիճաբանութիւն է բացուել: «Ներկայ եղողներից մէկը ճանապարհորդներից խնդրեց, որ Եջմիածնում նայեն այն շքանշանները, որոնք կաթողիկոսները տալիս էին ազնուականութեան կոնդակի հետո: Միւս ներկայ եղողները տարակցու էին յայտնում այս լուրի ճշմարտութեան մասին կամ ենթադրութիւններ էին անում, որ «կարելի է կաթողիկոսները ուռուաց տիրապետութեան առաջին տարին այս իրաւունքները սեպհականացրել էին իրենց, կարծելով թէ դուցէ ուռմները այս բանը չեն իմանայ, որով և այս իրաւունքը իրենց-կաթողիկոսներին—կ' վերապահուի»: «Բայց շքանշաններ այնուամենայնիւ չեն տալիս» բողքեց մէկը: «Աս ինքս իմ աչքերովս տեսայ այդ շքանշանները. նոքա զրուած են թանգարանում և զարդարուած են երկզիւանի արծիւններով» պնդում էր միւսը. վերջապէս նահանգտագետը այս վիճաբանութեանը վերջ զրեց ասկելով: «Թող այս խնդիրը վճռեն երիտասարդ պարտները, թող նոքա տեղում նայեն և զննեն այն բոլորը, որ այժմ մեզ հետաքրթում է: Սա կունենայ և հասարակական նշանակութիւն» (Երես 59—60): Աւ ահա երբ երիտասարդ ճանապարհորդները Ա. Եջմիածնի թանգարանը նայում էին, պահարաններից մէկում, ուր շքանշաններ էին գտնվում, նոքա տեսան մի խաչ երկզիւանի ոսկի արծուով զարդարուած: «Սա ի՞նչ շքանշան է» հարցրին նոքա: «Սա Կիլիկից թագաւորների շքանշան է, որ տրուած է մի կաթողիկոսի»: «Իսկ կաթողիկոսները իրենք շքանշաններ չեն տալիս»: «Եշտարհական շքանշաններ ոչ նոքա իրաւունք ունեին միայն հոգեորպատուանշաններ տալու»: «Երդ հասկանալի է, բայց միենոյն ժամանակ մեզ յայտնի է, որ կաթողիկոսները ազնուականու-

թիւն էին տալիս»: «Մեր խօսակիցը սև սրածայր վեղալով ծածկուած զլուխը շարժեց և փոքր ինչ մտածելուց յետոյ ասայ. «կաթողիկոսները երեք ուղղակի ազնուականութիւն չեն տալիս. նոքա այս իրաւունքը չունէին, բայց նոքա երբեմն տիտղոսի հետամուտ անձի հօրը հոգեւորական կոչում էին տալիս, որով նորա որդին լինում էր «տէր», որ մինչեւ այսօր ոռուաց կառավարութիւնը հաւասարազօր է համարում անձնոյին ազնուականութեան. բայց սա ի հարկէ կառավարութեան բարի կամքիցն էր կախուած»: Սորանից յետոյ գալիս են բացատրութիւններ և հետազօտողների անհատական կարծիքները, թէ «մեր խօսակցիի ասածին դէմ գժուար էր վիճել որովհետեւ կառավարութիւնը յիւաւի «տէր» կրող մականունները ընդունում էր իրեւ աղնուական ծագում: Սորա համար է, որ այժմ Հայաստանում այսքան շատ են առանձնաշնորհեալ զասակարգների թեկնածուներ, (кандидаты въ привелегированное сеновие!). Ճանապարհը գէսլի այդ բաւական դիւրին է եղել»: «Եյս եղանակը եթէ ժիշտ էլ չէ, բայց այնուամենայնիւ արժանաւոր է մինչեւ իսկ Լոյսուայի աշակերտներին» (երես 128): Եւ ահա այս կերպով նենգութեամբ խօսելով սրածայր վեղար կրող մի աբեղայի հետ, նոքա վեճը չեւեցին, որ և հաստրական նշանակութիւն ունէր:

Եյստեղ փոքր ինչ կանգ առնենք Եջմիածնի, այս «Հայոց Երուսաղէմի» նկարագրութեան վերայ: «Հայ աւանդութեանը համաձայն, պատմում են Ճանապարհորդները, այն տեղում, ուր այժմ գտնվում է Ա. Եջմիածնը, առաջ երկրային գրախտն էր գտնվում...» ևն: Եւ ահա զիքցիկ հեղինակները այս աւանդութեան վերայ հետևեալ զիտողութիւններն են անում: «Պէտք է ենթաղրել թէ այս աւանդութիւնը խիստ հին ծագում ունի կամ ուղղակի հնարուած է աբեղաներից, Խաչեալ և ունչն լայ, որովհետեւ մինչեւ իսկ ամենավառ երևակայութիւնը գժուարանում է ենթաղրել որ այս աւազակոյտների վերայ երբ և իցէ գտնուեր զբախտի պարտէզների նմանութիւնն անդամ, այնքան տխուր և անպաղաքեր է Եջմիածնի գաշտը (երես 121): Եհա դարձեալ քննադատութիւն և հերքում: Եյսպիսի թեթեւ վերաբերութիւնը ամենեին չէ ապացուցանում, թէ հեղինակները հասկանում են աւանդութիւն-

ների նշանակութիւնը առհասարակ և թէ իրենք լուրջ կերպով վերաբերուէին հէնց իրենց տսածին:

Եթէ ներկայ դիրքը ինչպէս հեղինակները ասում են, լուրջ զրուածք կոչուելու յաւակնութիւն չունի, այլ պարզ մի հաւաքածու է նոցա «տեսածին» և լսածին՝ ուրեմն պէտք էր հետեւ այս որոշ ուղղութեան և խոյս տալ հեղինակական մեծամիտ ոճից:

Երբ ճանապարհորդները սպասում էին թանգարանի վերակացու և պիտի ուղուածուի գալուն, «որի ետեւից մի աբեղայ էին ուղարկել խնդրելով որ բարեհաջի իրենց մօտ դալ՝» նոքա խօսակցութեան մտան տեղական ոստիկանապետի (արտաքի) հետ, որից լսեցին, թէ «ինանքը այստեղ այնքան խիստ չէ և բարեքերը բարելաւելու շատ պէտք ունին: (125 երես): Ահա մի կարծիք և նորա հիմքը, որը հասարակ կարգացողների ուղղը մանեկով գառնում է ընդհանուր համոզմունք: Եւ մեր երիտասարդ ճանապարհորդների բոլոր կարծիքները և բոլոր հիմքերը այսպէս են:

Տայյելով ոստիկանապետի հետ ունեցած այս խօսակցութեան, որից տեղեկութիւններ էին հաւաքում և հարկաւ նշանակում իրենց յիշատակարանում, որի հետեւանքը եղաւ աբեղացների բարքի մասին նոցա հրապարակած կարծիքը, չնայելով որ մէկ ուրիշ պարոնի հետ էլ խօսակցութիւն ունէին, նոքա նկատեցին, որ պարտաւորուած են սպասել եպիսկոպոսի գալուն, որի մօտ պահվում էին թանգարանի բանալիները: Այս սպասելու պատճառը այն է եղել, որ «երեք եպիսկոպոսները, որոնց հսկողութեանը յանձնուած էր թանգարանը՝ քնած էին, չնայելով որ ցերեկուայ ժամի 3—եր» (եր. 127):

Յիրաւի, ի՞նչ բարբարոսական սովորութիւն, ժամի 3-ին քնիլ. մեզանում Պետերբուրգում ծառացողները այս ժամին հէնց նոր են գնում գէպարտամենտները ծառայելու, իսկ այստեղ՝ քնում են. և այս տախական կոսպիտ սովորութեան պատճառով, արիադնած ես վերում սպասելու...:

Ենոյ Եշմիածնի Ճեմարանի գրատունը նայելիս, երիտասարդ ճանապարհորդները տեսել են մոմաշէն մի պատկեր, որը «Պատոր Հայաստանն» է ներկայացնում: Եյտեղ հեղինակները Երազայի զրքից համառօտապէս պատմելով Հայաստանի պատմու-

թիւնը, կամենում են ցցյ տալ որ «Հայաստանը երբէք անկախ չէ եղել հայերը պինդ հաւատով, լիզուով ու ծագումով միմեանց հետ կապուած լինելով, մի ցեղը ժողովուրդ էին կաղմում և այս կապը նպաստել է նոցա մաքառելու օտար ազիւցութեանց դէմ, բայց նոքա ազգութիւն երբէք չին կաղմել: Սորա համար է, որ հայերը չունեն ազգային արուեստ, բառի բուն նշանակութեամբ, չունեն ճարտարապետութիւն և զբականութիւն: Նոցա ամբողջ պատմութիւնը ծայրէծայր հպատակութիւն է, փիղլքական հպատակութիւնը առաջ է բերել և բարոյական ստորացում: Վհա, ի՞նչ տեսակէտով, ասում են մեր ճանապարհորդները տեղի կարող է ունենալ «Ազաւոր Հայաստանի» խումբը, որը զարդարում է Ճեմարանի զբատունը»: (Եր. 134). Մենք սորա հետ չենք կարող չհամաձայնել թէ խնդրին վերայ «խիստ» աչքով նայենք: Բայց բանը սորանում չէ: «Նոքա զորա առիթով արտայայտում են այսպիսի գատողութիւն: «Բայց Հայաստանը ներկայացնող կինը պէտք է արտասուեր իր ծանր անցեալի վերայ, և ոչ անկախութեան, որը գեռ ձ. զարու վերջերում Աատարինէ կայսրուհին ուզում էր տալ Հայաստանին:... Ներկայումն Հայաստանը պէտք է արախանայ, որովհետեւ Ոուսաստանի հետ միանալուց յետոյ սկսած է նորա անդորր ժամանակը և զիտութեան, արդիւնագործութեան ևն բարգաւաճումը»:

Ե՞նչ բանից են հետևեցնում կրիտասարդ ճանապարհորդները, թէ Հայաստանն այժմ չէ ուրախանում կամ թէ նորա արտասուել ներկային է վերաբերում:

Ըոհասարակ վերայիշեալ խօսքերը մեղ շատ տգեղ երևեցան և բնաւ պատիւ չեն բերում զարդացած երիտասարդութեան: Ոստիկանատպետից հօ ըվարակուեցին այս տեսակ հայեացք կազմելու այս խօսքերը զրելու համար, որոնք զրպարտութեան և բամբասանքի շատ նմանութիւն ունին: Մենք առանց որևէ մի կասկածի կարծիք տանելու սորանից տեսնում ենք, թէ ի՞նչ կարող է առաջ բերել նոցա ցանկութիւնը անպատճառ որ և է մի կարծիք յայտնելու բոլոր տեսած և լսածի մասին, առանց զանազանելու ճշմարիտը ստից:

Գրքի նոյն այս զիլսում բաւական լաւ նկարագրուած է այն հոգեկան անձուկը, որ մարդ զգում է, երբ մօտենում է մի

պատմական հնութեան, որ ազգային կամ պատմական նշանակութիւն ունի, և անհամբեր սպասում է նրան տեսնելու վայրինին, և հիասթափման այն ծանր տապաւորութիւնը, որը նոքա զգացելին Եջմիածնի վանքին հետ մօտիկ ծանօթանուց յետոյ:

Ի՞սկ այտեղ էլ տեղ նկատվում է անձնական ծաշակ և կամսյական քննադատութիւն, որոնք փչացնում են աչքի զարնող ճիշտ նկարագրութիւնը՝ «Նկարագրելով, օրինակի համար, Եջմիածնի վանքը, հեղինակները ասում են «կտուրը նոյն պէս ծածկուած է քարերով, բայց ով զարմանք, կտուրը և նորա հետ և զանկագատունը, սիւներն ու խոյակները ներկուած են կարմիր իւղաներկով»:

Այս գոյնը, դատում են երիտասարդ հեղինակները, «այնքան է յարմարվում հազարտմեայ պատերին, որքան ուրախ ժպիտը մեռելի երկոխն կամ գունաւոր կարկատանը վարդապետի սե վերարկուին. այս գոյնը աչք է ծակում և անընդհատ յիշեցնում վանքի նորոգողի ծաշակից միանգամայն զուրկ լինելը» (երես 123).

Համաձայնենք ճանապարհորդների ծաշակին հետ թէ Եջմիածնի վանքի կտուրը պէտք չէր կարմիր գոյնով ներկել, որովհետեւ դա Ձեզ հաճար գեղեցիկ չէ. բայց միթէ նորոգողի «ծաշակի» վերայ պէտք էր հիմնուել կամ ճանապարհորդներին վերայ թողած տապաւորութիւնը նշանակութիւն ունի այսպիսի հարցում։ Կարելի է այդ արել են մի որեւիցէ նպատակով։ Աշա սորա մասին իսկ չեն մտածել երիտասարդ ճանապարհորդները։ Մինչդեռ նոքա իրենք նկարագրելով Հայաստանի հին մայրաքաղաք Վնին ասսում են որ «կարմիր քարը, որը Վնիի քնակիները գործ էին ածում պատերի արտաքին կողմը շարելու համար, հաւանացնեն, այն ժամանակ շատ գոշծածական էր նոյս մէջ» (եր. 236). Ի՞սկ սա զիքի ունել երեսումէ զրուած։

Մինք դեռ չենք էլ խօսում այն բանի մասին, որ Եջմիածնի կտուրը ներկուած չէ, այլ որքան մեղ յայտնի է, շորուած է կարմիր քարից։

Հաւականանանք այս քան օրինակներով. այժմ՝ անցնենք միւս կտորներին։

Մինք վերել յիշեցինք, որ երբ երիտասարդ ճանապար-

Հորդները կուշտ են և լաւ տրամադրութեան մէջ, այն ժամանակ նոցա համար ամեն ինչ լաւ է, և ընդհակառակը: Եհաօրինակ, «Դիլիժանու ձորը, յիլաւի, թէև պատած էր մառախուղով, բայց և այնպէս առանձնապէս ոչինչ չէ ներկայացնում, չ'այցելով որ «մի քանիսի կարծիքով» սա Կովկասի ամենագեղեցիկ տեղն է»: Հեռուից Միմեօնովկայ գիւղը տեսնելով, նոքա ուրախանում են, որ շուտով թէյ, ընթրիք պիտի վայելն: Նթէ հորիզոնը մառախուղով էր ծածկուած ուստի և ոչինչ չտեսան, ուրեմն ի՞նչպէս կարող էին ասել թէ դա ոչինչ չէ ներկայացնում, և հերքէին ուրիշների կարծիքը: Գիտէք ինչու... որովհետև պէտք է հերթել ամեն ինչ առաւելապէս երբ արդէն թէյի և ընթրիքի ժամանակ է: Երտահանը ամենատխուր տպաւորութիւն է թողել, որովհետև այնտեղ ձիերի պատճառով անբաւականութիւն են ունեցել են: բայց ահա որտեղ նոցա հիւրասիրել են լաւ ընթրիքով կամ ճաշով, զուռնայով և անխուսափելի պարերգութիւնով և ասխակոն քէֆի այլ ուրախութիւններով, այնտեղ նոքա լաւ տրամադրութեան մէջ են լինում և յիրաւի լաւ են նկարագրում թէ զուռնայի ելեկջերը, թէ նորան լսող անձանց թէ պարը և թէ գիշերը, որը յիշեցնում է «վալ'պուրդիկան գիշերը»: Նթէ այսպիսի օրինակների վերայ աւելի երկար կանդ առնեխնք՝ շատ տեղ կրնէր. հետաքրքիր կարգացողները իրենք կհամոզւին մեր ասածին՝ կարգալով այդ գիլքը:

«Նութեան նկարագիրների առիթով պէտք է դիտենք, որ հեղինակները, մեր կարծիքով, ի զուր չարն են զործ զնում բազմաթիւ համեմատութիւններ, թէ այս ինչ տեղը յիշեցնում է կամ հարաւային Պրանսիան կամ Միջերկրական ծովը կամ Նապոլիի ծոցը կամ Եպիկան լեռները այս կամ այն կողմից, կամ Սախարան ևն: Կարծես թէ կարգացողները բոլոր այդ տեղերին ծանօթ պէտք է լինեն: Նըրեմն նոցա նկարագրութիւններից, որ լիքն են հակասութիւններով՝ ոչինչ չէ կարելի հասկանալ զօր. Նըրեանի նկարագրութեան մէջ:

Նըրեանի մասին առաջին իսկ խօսքերից, մենք կարգում ենք: «Նթէ հաւատանք այն ընհանրացած ավորիզմին, թէ մոլութիւնը հեռուից գեղեցիկ է երեսում, գայթակղեցուցիչ է և շոյում է մարդուս հայեացքը, իսկ զզուելի է միայն իր

բունում, ելր աւելի խորն ես նայում, այս ժամանակ չէ կարելի չ'խոստովանել որ Երևանը շատ նմանութիւն ունի մոլութեան: «Ճարկաւոր է միայն, շարունակում են մեր ճանապարհորդները, անցնել Երևանի փողոցներով, որ մարդ, եթէ հաւատապատճեն վնի բոլոր գյառ-որ աղբէ-ընթէն», որոնք խօսում են Երևանի մասին իսկցին գայ այս հանողներին, թէ ինչպէս քաղաքը, այնպէս և կեանքի պայմանները այստեղ զգուելի են: Ահա ձեզ լօգիկայ: Խօսքը գրաւոր աղբիւրներին հաւատալուն վերայ է թէ ճանապարհորդների սեփական դիտողութիւնների: Թէ մէկի և թէ միւսի կարծիքով Երևանը ներկայացնում է սարսափելի ցեխ և գարշահոսութիւն. նա մի աղքանոց է և նորա օդը, վարակիչ և թունալից է և փողոցները հոտած ցեխի ճաշիճներ են ներկայացնում: մի խօսքով 13 գար նորա մէջ ժողովուել է ցեխ և ամեն տեսակ աղտոտութիւն: Կարդալով այս, իսկապէս սարսափում ես և զարմանում, թէ ինչպէս է, որ ոչ միայն Երևանի, այլ և շրջակայքի բնակիչները չեն մեռել ոչ թէ 13 երկար գարերի ընթացքում, այլ նոյն իսկ 13 օրում: Ուստի չէ կարելի համաձայնել ճանապարհորդների հետ, որ պէտք է հոգալ քաղաքը հիմնաւորապէս առողջացներու և ձեռնարկելու նորա մաքրութեան, ինչպէս այդ լինում է Պետերբուրգում: (Sic!).

Սակայն, միևնոյն է, սորանով էլ ոչինչ չես անի, որովհետեւ, ինչպէս հեղինակները են ասում, հիւսիսային քամիները, որոնք փչում են ձիւնալից բարձունքից, քաղաքի փոշին և ուրիշ այլ պայմաններ աւելացնում են բնակիչների հիւանդութիւնը, որի պատճառով, նոցա կարծիքով, լաւ կ'լինէր թողնել Երևանը և Պարսի նահանդին հետ միացնելով և Եղեռսանդրովը գարճնել նահանդական քաղաք:

Եյսպիսի փոփոխութիւնը, հեղինակները, կունենար և այս օդուտը, որ գիմնալիսաների աշակերաններին դիւրութիւն կ'լինէր, որովհետեւ մի նահանդ պակաս անզիր կանէին և ի դէպս տեղական ծառայողները սահմուած չէն լինի Երևանից ամարանոց գնալ Պարաշիչակ և նոցա կահկարասիք քիչ փորձանքի կ'գային: Ուստի՞ղ է այստեղ ստոյգը և որտեղ կատակ:

Եյս բոլոր սարսափներից յետոյ, որոնք նկարագրում են

Հեղինակները օտարների խօսքերից և տեղ ահղ իրենց գիտողութիւններից խառն, վերջ ի վերջոյ դուրս է գալիս, որ նոքա Նրեանում խմել են լաւ ջուր, որ ջերմով չեն բռնուել, որ շոքը նոցա չէ նեղել, որ մոծակները նրանց չեն կծել որ փոշին նոցա աչքերը չէ լցուել և բորբոքում չէ պատճառել: Այս դեռ ոչինչ նոքա Նրեանից գուրս են եկել «ամենագեղեցիկ» և կենցաղուրախ տպաւորութեան տակ:

Դնթերցողը ի՞նչպէս պիտի հասկանայ այս հակասութիւնները:

Ո՞ի քանի խօսք ևս զանազան ժողովրդների բնաւորութեան մասին, որոնց հետ նոքա հանդիպած են:

Խօսելով մահմետականութեան ողու և նոցա մողեռանդ նախապաշարմանց, ծուլութեան և գանտաղութեան մասին, որոնք թագաւորում են մահմետականների մէջ և զիտութեան և եւրոպական կեսանքի կենդանացուցիչ աղդեցութեանը չեն ենթարկվում, հեղինակները պատմում են մի մահմետական օրիորդի մասին, որը իր ուսումը աւարտել է ինստիտուտում և վերադառնալով Նրեան ամծւանացել է: Չնայելով սորան հետեւ է գարձեալ իր ծնողների ասիական սովորութիւններին: Այս առիթով ծանապարհորդները մեղակրում են մահմետական մատաղահաս կնօջը, թէ նա կրթութիւնը ստացել է և զարգացրել իր խելքը, ոչ թէ նորա համար, որ պաշտպան է հին, փթած նախապաշարութենքը: Այսպիսի մեղադրանքի արժանանում են և մահմետական երիտասարդները, որոնք աւարտելով իրենց ուսումը, ծառայութեան են մանում նախարարութիւնների մէջ կամ թիվնապահ զօրքերի գնդերում, զեղեցիկ յօյսեր են տալիս, աղատամիտ մաքեր են յայանում և այլն և այլն, բայց նոցանից շատ քչելն են մնում այս վիճակի մէջ. սուն վերադառնալով, նոքա բոլորովին անսպասելի կերպիւ, փոխանակ մտածելու բարձրացնել իրենց շըջանի մարդկանց և իրենց մօտեցնել իրենք ընդհակառակն մերժում են իրենցից եւրոպականութիւնը ևն:

Եւաղ, միենոյնը կարելի է ասել և բոլոր երիտասարդների մասին, որոնք աւարտում են իրենց ուսման ընթացքը համալսարաններում և այս ոչ մի աղջի առանձնայտակութիւնը չէ կազմում:

Վերոյիշեալ հայրական խրատից և ցաւակցութիւնից յետոյ, նոքա ասում են. «աակայն պէտք է յուսալ որ իրենք կանչըք (որոնց մէջ սակաւ չեն այնպիսիքը, ինչպէս վերև յիշուած կրթուած մահմետականուհին) մի կողմէ կձգեն գերութեան ամօթալի լուծը... և սկիզբը արդէն զրուած է. խաների տիկնանց այցելութիւնները (բազում) տեղացի ուրիշ կանանց՝ արդէն սովորութիւն են դարձել: Այս գեռ ոչինչ նոցա, մանաւանդ գեղեցիկներին, տեսնել կարելի է և ոչ միայն տեսնել երեսը, բայց և նոցա լայն հոլանի կուրծքերը և ձեռները»: «Նշանակում է, եւրոպական քաղաքակրթութիւնը արդէն մուտքորժել. ուրեմն էլ ի՞նչ տեղեք կայ նոցա մեղադրելու!»

Բայց ահա նկարագրելով Իշխափիսէի հայ վանքը և լսելով իրենց ուղեկցող վարդապետի խօսքերից որ փոքր ինչ առաջ ամի օրիորդ ցանկացելէր զրել իր ազգանունը պատի վերայ, ուստի և ուրիշների ներկայութեամբ փայտեայ սանդուխոտվ բարձրացելէ և ներքեւից մի քանի արշնի բարձրութեան վերայ զրել իր ազգանունը, այս առիթով երիտասարդ և ազատամիտ ճանապարհորդները նկատում են «պէտք է համաձայնել, որ համարձակ օրիորդ է եղել և միենայն ժամանակ հաւանօքէն հին ժամանակների օրիորդների ամօթիածութիւնից զուրկի»: Մի խօսքով ամեն մի որ իցէ զէպքում կամայական դատողութիւններ, հեղնութիւն ու կատակ:

Մի օրինակ ևս

Շաղիվանում, որտեղ նոքա եղել էին, նոցա ներկայանում են մի քանի տաճիկ գիւղի աղնուականներից (արքունիք): Այցա մէջ էին գիւղի տաճուտէրը (շաքանա), դատաւորը և այլ պատուաւոր հիւրեր: Ինթրիք է պատրաստվում բավմաթիւ կերակուրներից: «Ինթրիքի ժամանակ ճանապարհորդներից մէկը սեղանի վերայ է դնում մի քանի գեղձ և տանձ տաճուտիրօջ և գատաւորի մէջ տեղը, կարծելով որ նոքա եղբայրաբար կ'բաժանեն: Սակայն տաճուտէրը, որին աւելի մօտ էին զրուած միրգերը, առանց քաշուելու վեր է առնում բոլորը, զնումէ ծնկերին վերայ և սկսումէ ուտել մեծ բաւականութեամբ. իսկ նորա հարեւաննը լուռ ու մունջ նստած մնումէ իր տեղում: Երբոր նկատելով նորա կարծես թէ նեղացած տեսքը, հարցնում են թէ ի՞նչու տանձ չ ուտում,

նա պատասխանումէ, որ իրեն չեն առաջարկել ուստի և նա իրաւունք չէ համարում վերցնել:

Պատմելով այս գեղքը, Երողացի Ճանապարհորդները նկատում են, «Եւ նա այսպէս կ'ստէր ամբողջ երեկոյ սորա համար միայն, որ նորան առանձին չեն հրամեցրել բուն ասիական տրամաբանութիւն»: 276 եր.

Ծատ լաւ, բայց մի՞թէ Երողական տրամաբանութիւնը ասումէ, որ մարդ հիւր եղած ժամանակ վեր առնէ այն ամենը, ինչ որ ուզումէ, մինչեւ անգամ երբ տան տէրը չէ առաջարկում: Ո՞րի դասողութիւն աւելի տարօրինակ է, գժուար չէ հասկանալ:

Եյսքանը բաւական է: Կնչպէս մենք ասացինք գլքի մէջ պատահում են և ուզեղ և հետաքրքրական նկարագրութիւններ, գլխաւորապէս երբ երիտասարդ Ճանապարհորդները փիլիսոփայութիւն չեն անում և իրենց եւրոպացի ցոյց պաշտով բարձրից չեն նայում «ասիացիներին վերայ, այլ համեստ նկարագրում են իրենց զգացածը: Եվանովի նկարները լաւ և հետաքրքրական են: Գիւքը հրատարակուած է մաքուլ:

L'Arménie chretienne et sa litterature. F. Nève, Louvain, 1886.

Բարեկամ

Զեր ինդրանաց համեմատ թղթատեցի և կարգացի, բել գիւցի Փելքս Նէվի (Nève) գաղղիներէն հրատարակութիւնը հայոց քրիստոնէական զրականութեան վրայ, որոյ մակադիրն է L'Arménie chretienne et sa litterature, հրատարակեալ ի Լուվան (Louvain) 1886 թուին, և կը փութամ համառօտ կերպով յայտնել կարծիքս նոյն հրատարակութեան վրայ:

Մեր ազգին պակասութիւններէն մին է նուազ ճանչ ցուած լինել եւրոպացւոց մէջ, ուստի որ և է փոքր և ընչին աշխատութիւն մը որ օտար լեզուով մը մեր վրայ հրատարակուի, զմեղ շատ կ'ուրախացնէ, և նշանաւոր և օգտակար գործի կարգ կ'անցնի: Մեր պակասութեան խիզճն է, որ զմեղ յերախտագիտութիւն կը գրդէ: Եյդ խղճի մի վկայութիւն էր և Զեր փափազը, որով յորդորուեցաք Զեր հանդէսով

ծանօթացնել **Փելքս** “Նէվը և իւր երկասիրութիւնը, և ինձմէ ալ համառօտ տեսութիւն մը խնդրեցիք վերցյիշեալ երկասիրութեան վրայ:” Նոյն զգացմամբ և ևս կարգացի գործք:

Հեղինակը բոլորովին նոր և միապազաղ աշխատութիւն մը յօրինած չէ, այլ զանազան առիթներու մէջ պատրաստած կամ հրատարակած մատենագրական յօդուածները ի մի հաւաքած և նոր յառաջարանով մը նոր հատոր մը կազմած է: Բովանդակը վեշտասանածալ և 400 երեսով զիրք մը եղած է:

Յառաջաբանը կը հանի մինչև 45 երեսը, յորս կը խօսի Հայոց լեզուին և գրոյն, և հին և նոր մատենագրութեանց վրայ:

Մասնաւոր մատենագրութեանց անձնելով, նախ յառաջ կը բերէ շարականները, թարգմաննելով և մեկնաբաննելով դլիստոր տօներու շարականները: Յառաջ բերուածներն են.

1. Կանոն Եյլակերպութեան.
2. Կանոն Հոգեգալաբան.
3. Կանոն Ա. Յովհաննու Կարապետի.
4. Կանոն Ա. առաքելոց Պետրոսի և Պօղոսի.
5. Կանոն Ա. Թէհոգոսի թագաւորի.
6. Կանոն Ա. Հոփիսիմեանց.
7. Կանոն Ա. Վարդանանց.
8. Կանոն ննջեցելոց:

Եյդ կանոններէն թարգմանուած են նշանաւոր մասերը, տօներուն վրայ համառօտ տեսութիւններ աւելցուած են և ուրիշ եկեղեցիներու ծէսերուն հետ բազգատուած, և շարականներուն մթին իմաստներուն բացատրութիւններ ևս տրուած են: Եյդ մասը կը հանի մինչև 247 երեսը. որ է ըսել թէ գործոյն կէսը շարականներուն է նուիլուած:

Նրբորդ մասին մէջ Հեղինակը ուղած է Հայոց սուրբ Հայութիւն մատենագրութեանց վրայ խօսել սակայն երկքին վրայ միայն խօսած է. որք են.

1. Ա. Գրիգոր Լուսաւորիչ:
2. Ա. Գրիգոր Նարեկացի.
3. Ա. Ներսէս Շնորհալի.

Լուսաւորչ Յաճախապատումին միայն զլիսակարգութիւններն են յիշուած, Նարեկացին երկու աղօթք թարգմանուած, և Շնորհալիի Խդիսիոյ ողբէն մէկ երկու մանր հատուածներ

յառաջ բերուած: Եւ այդ ամենը կը հասնի մինչև 287 երեսը:

Զորբորդ մասին մէջ խօսուած է պատմաբաներուն վրայ. այլ ոչ ամենուն. զի միայն երեք հատ են յիշուածները, որոց վրայ մատենազբական տեղեկութիւններ կան, և են.

1. Եղեշէ վարդապետ.

2. Յովհաննէս կաթողիկոս.

3. Մատթէոս Եղեսացի.

Եյդ մասը, որ կը հասնի մինչև 375 երեսը, գործոյն վերջինը կարող է համարուել զի մնացեալ 25 երեսներուն մէջ կարի համառօտ ծանօթութիւններ տրուած են Մոնղոլներու վրայ խօսող հայ պատմաբաններու և ասորի Գրիգորեան Բարեբեկոս պատմաբանի վրայ: Եյս է գործոյն պարունակութեան ամփոփումը:

Հեղինակին տեսութիւնները երկու մասերու կարող ենք բաժնել մատենազբական և կրօնագիտական:

Մատենագիտական տեսութիւնները քաղուած են ամբողջ զովին, Վճնեալոց Մխիթարեան միաբաններէն՝ Աօմալեան, Սւետիքեան և Օարքանալեան հայրերուն գործերէն: Հեղինակը իւր ուսումնասիրութիւնը սահմանափակած է արդէն կատարուած ուսումնասիրութիւններով, և չնիք զիսեր թէ չէ կամեցած կամ թէ չէ կարողացած իւր սեփական տեսութիւնները կամ զնոտութիւնները ունենալ: Համառօտ ըսկով հեղինակին նպատակը եղած է, Հայոց մատենազրութիւնները և մատենազբական տեսութիւնները Եւրոպացւոց հաղորդել և ոչ թէ Եւրոպացի գիտնականի մը դատաստանը ներկայել Հայոց:

Ակայն հեղինակին տեսութեանց մէջ զօրաւոր և ընդարձակ կողմը կրօնագիտականն է, յորս կը յայտնուի իւր ամեն սպառազնութեամբ հռովմէական աստուածաբանութեան ուսուցչի մը կերպարանը: Հեղինակը մտադիր է զլիաւորապէս ապացուցանել թէ Հայտաստանեայց եկեղեցւոյ բուն հաւատքը՝ Հոռվմէական հաւատքն է. ուստի ամեն ջանք ի գործ կը գնէ որ մեր շաբականներուն մէջէն քաղէ այնպիսի բացատրութիւններ և մեկնաբանութիւններ, որոնցմով հաստատուին երկուց բնութեանց, և յՈրդւոյ բղխման, Պետրոսի զլիաւորութեան, պապական իշխանութեան, քաւարանի գլուխան:

և այլ սոցին նման հռովմէադաւան վարդապեառութիւնները:
Եյդ է զլիաւոր պատճառը որուն համար յարուած է հե-
ղինակը Միիթարեան Հարց բռնազրօսիկ մեկնութեանց, և
այս է պատճառը որուն համար Շահնազարեան վարդապեա-
թի և պարոն Խմբնի մատենազրական տեսութիւնները նուազյարդ
ունին հեղինակին աչքին: “Նա չքաշուիր պարզապէս հերձուա-
ծող և հերետիկոս անուանել Հայաստանեայց ուղղափառ
սուրբ Խկեղեցին, Հայոց ազգին անկման պատճառ դնել Հոռով-
մայ եկեղեցիէն բաժնուելնին, Հայոց ազգին մէջ ոչնչ բարիք
չճանչնալ եթէ ոչ հռովմէականութեան հովանոյն ներքեւ, գո-
վել և պաշտպանել հռովմէականաց ձեռք կատարուած շա-
րականներու յանդուգն սրբազրութիւնը, առասպել կոչել Ա.
Հռիփսիմեանց վկայութիւնը, և այլ այս տեսակ կարծիքներ
յայտնել որք ոչ թէ անցաւոր կերպով միայն կը գանուին
երբեմն արտայայտեալ, այլ որք կը կազմեն նոյն իսկ գործոյն
նպատակը:

Հայքս սովոր եմք, ինչպէս ըսի, երախտազիտական զգացում-
ներ ընծայել առատօրէն ամեն Խւրոպացւոյ որ Հայոց վրայ
խօսել բարեհամի: Եւ այդ տեսակէտով նաև Փելքս Խէվի
սոյն աշխատութիւնը շատերէն իբր երախտազարտութեան
առարկայ ձանչցուած է, և ևս իսկ չեմ հակառակիր, գիտնա-
նալով Խւրոպայ առջեւ նուազ ձանչցուած լինենիս:

Եյլ միւս կողմանէ ծանր խնդիր մընէ և մեծ ի մտազրու-
թեան արժանի, թէ պէտք է արգեօք մե՞ր հաւատքին և եկե-
ղեցւոյն և ազգին խօսուած անարդանքները հանդարա սրտով
ընդունել, և մե՞ր վրայ խօսուած և զրուած բաներուն կՃե-
պին փայլովը ուրախանալ երբ միջուկը փտած է:

Իբր գարման այդ գժբաղդ գրից հարկ է որ մերազնեայ
կարող գրիներ յառաջ անցնին զմել մեր ճշգրիտ և ուղիղ
տեսութեան ներքեւ ծանօթացնել աշխարհի, որ երբ մեր զրա-
կան և մատենազրական արդիւնքը իւր արժանի գովեստը
կընդունի, մեր հաւատքին ու եկեղեցին, մեր ուղղափառու-
թիւնն ու առաքելականութիւնը ուաքի տակ չկոխուին:

Համառօսիւ իրաց իսկութիւնը յայտնելէն յետոյ, ընթեր-
ցողաց կը թողումք իրենց դաստաստանը կազմել Փելքս Խէվի
երկասիրութեան վրայ:

Տեսայ

*

ՄԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԻՊԵՐ



ՈՒԽԱԳԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ԴԱՊՐՈՑԻ Մարձրագոյն դաստիանի աշակերտուհիները:



ԱԶԳԱՅԻՆ ՑԻԵԱՏԱԿԱՐԱՆ

Եյստեղ մենք ապագրում ենք դադարեալ «Հիւսիսա-
փայլ ամսագլի» գործունեայ աշխատակցի, այժմ հանգուցեալ
Մ. Նալբանդեանցի յոյժ կարեւոր և հետաքրքրական նամակը,
որը ուղղուած է եղել Պետերուրդ, հանգուցեալ Ոիմէօն
Սուլթան-Շահին, որը կենդանութեան ժամանակ մայրաքա-
զաքիս հասարակութեան մէջ իր բարձրաստիճան պաշտօնովը
հանդերձ յայտնի դեր է Խաղացել թէ իր բարի գործերովն և
և թէ իր ազգեցութեամբ:

Գ. Երապետութեան Հայրենական,

Ոիմէօն Կրիդորեան,

Վ. բ գ ո յ բ ա ր ե կ ա մ :

Եռաջին նամակը, որ գրում եմ ձեզ մանաւանդ առաջին ան-
դամ ծանօթանալուց յետոյ, պարունակում է իւր մէջ մի խնդիր,
որ կարելի էր միայն գործել երկար և շատ ծանօթութենից յետոյ:
Չնայելով այս անյարմարութեան վերայ, ես բաց սրտով գրում
եմ Ձեզ այս նամակը, առանց սուտ քաղաքավարութիւնների, որ
մինչեւ այժմ ևս չեն ամաչում ոմանք գործ դնել:

Երկար ժամանակ է, որ ես և պարոն Կաղարեանցն ցանկա-
նում էինք դուրս տալ մի Հայկական օրագիր, աշխարհաբառ լե-
զուով հասարակութեան հասկանալի, երկար ժամանակ այս խոր-
հուրդը մնացել էր մեր սրտումը բոլորովին անգործ, պատճառ որ
զանազան հանգամանք արգելք էին լինում այս ազգասիրական
գործին: Այժմ տեսանելով այդ արգելառիթ հանգամանքների
փոփոխութիւնը, տեսանելով մանաւանդ, որ Չուխօնները մինչեւ
անգամ հրաման ստացան Առուսաստանի մէջ օրագիր տպելու, կրկին
անգամ զօրացաւ մեր սրտի ցանկութիւնը, և սկսեցինք հետեւ
այս գործին, որ մեզ ևս թոյլտութիւն լինի տէրութիւնից տպել
ամենայն ամիս Հայկական օրագիր Առուսաստանի հայերի համար:
Այս Խորհրդով պարոն Կաղարեանցն ամսոյս 19ից խնդիր գրեց
Եզրային լուսաւորութեան նախարարին, որի հետ միասին ուղար-
կեց և տպելի օրագրի պայմանքը, որի համառօտ պարունակու-

թիւնը այս է. առաջինը՝ որ այդ (Օրագիրը պիտի գուրս տայ պարոն Կազարեանցը ամենայն ամիս ուժածալն ուժն թերթ. (իմ անուամբ խնդրել չեր կարելի պատճառ որ ես Համալսարանում լինելով և բժշկութեամբ պարագելով, չունիմ իրաւունք յայտնի կերպով այսպէս բանի, թէպէտե առանձին գործակից եմ օրագրին, ըստ որում մի մարդի անկարելի է այդ գործը կատարել): Երկրորդ՝ (Օրագիրը բաղկանում է չորս մասնից, այսինքն ուսումնական, պատմական և բնական հասուածներից, որոնք համաձայն յօդուածների պարունակութեանը պիտոյ է զարդարվեն գեղեցիկ պատկերներով և օրինակներով): Երրորդ՝ (Օրագիրը պիտոյ է անուանվել «Հիւսիսային փայլողութիւն») (Ըներթու սիանի) և ամենայն ամսական տետրակի վերայ պիտոյ է տպիկի որպէս անունը, նոյնպէս այս փայլողութեան պատկերը: Յոյս ունինք, որ տէրութիւնը հրամայէ, եթէ միայն մի արգելքը որ կայ, մի կերպով վերանայ, այսինքն Առոկվայի մէջ Հայոց լեզուի ցենզօր չ'լինելը:

Այս մասին խնդիրի մէջ ասված է, որ անդամ ընդունին Առոկվայի ցենզուրինի կոմիտետին, Հայ, գուբերնսկի սեկրետար Գեորգ Կարապետեան Առուբէնեանցը, մա աւարտել է իւր ուսումը Լազարեանց Ճ'եմարանում, Լիցէական արտօնութեամբ, արժանացելէ 12 երրորդ աստիճանին, գիտէ որպէս հայոց նոյնպէս և այլ արևելեան լեզուները և այժմ վարժապետ է նոյն Ճ'եմարանի մէջ: Գիտելով որ տէրութիւնը յանձնառու չի լինել հայ ցենզօրի համար ջոկ ոռոճիկ նշանակել, յօժարել ենք, ինքներս նորան տարեկան բաւականութիւն տալ և խնդիրի մէջ գրել ենք, թէ նա առանց վարձի պատրաստ է ծառայել, որպէս զի Տերութիւնը չ'հանդիպի գժուարութեան, և թոյլ տայ:

Լաւ գիտեմ, որ թէ այդտեղ մի հօգաբարձու մարդ չունենանք այս բանին, մեր խնդիրը չի ընդունվելու, մանաւանդ որ պատճառը պատրաստ է. վասն որոյ ովին կարողէի զիմել այս խնդիրովս եթէ ոչ ձեզ իբրև հայրենակցի և Ազգի օգտին ցանկացողի: Ոճէպէտ և այս բանը Ձեր ծառայութեան պաշտօնից դուրս է, այսուամենայնիւ դուք շատ բարեկամներ ունենալով, որոնց առաջ և հաւաստի գիտեմ, որ յարգելի էր ձեր միջնորդութիւնը, կարող էիք օգնել մեզ այս ազգային գործի մէջ, որով ոչ թէ միայն մեզ կ'պարտաւորէիք, այլ և բոլոր հայոց ազգը, որ չունի ոչինչ լուսաւորութեան հնար:

Վայս հիման վերայ ես ինդրում եմ Ձեզանից չ'խայել Ձեր
աշխատութիւնը, որ նախարարութիւնը յետ չ'դարձուցանէ մեր
առաջարկութիւնը, և թոյլ տայ սկսանել մեր գործը: Պարոն Կա-
զարեանցը նոյնպէս մի պրօֆեսոր Առուխլինսկից ինդրել է, որ
նա ևս աշխատի: Ուրիշ մարդերից չէր կարելի ինդրել պատճառ
որ հայելը դժբաղուածար այնպէս չէ զարմանալի հոգայ գըր Են
դարձած, որ ենէ Նկարուանան իմ Նկամենան մի բանի օդնունիւն
առաջ վնասելու և առաջելու մեջ պատրաստ են *), ի հարկէ այս ոչ
այլ ինչ է, բայց եթէ ապացոյ նորա բարոյականութեան հիւան-
դութեանը:

Վիտեմ, որ մեր օրագիր տպելը քանի մի հնամու մարդերի
ընդդէմ պիտի թուի, պատճառ որ դոքա հին և մեռեալ լեզուի
քամակից գնալով կարծում են թէ կարող են մի մոգական դաւա-
զանով յետ դարձնել հայերի համար հինգերորդ դարը. բայց այդ
պարոնները փորձով կ'տեսանին և աստուծով առաջին անգամ մեր
օրագրի վերայ, թէ ժողովուրդը փոքր ի շատ է ձանաչել և ժա-
մանակի իրաւունքը: Կտեսանին, թէ հայը եթէ մի գիր չի առ-
նում ձեռըլոր պատճառը այն չէ, որ չէ կամենում կարգալբան հաս-
կանալ, այլ մանաւանդ այն է, որ կարդացածը չէ հասկանում, և
մինչեւ այժմ հայերի համար գրվել են միմիայն սխօլաստիկական
կրօնական չնչին վէճերու վերայ, որոնք ժողովրդի համար եղած
թէ չեղած միևնոյն է:

Այեր ցանկութիւնը այն է, որ կարողանանք ժողովրդին մօ-
տեցնել փոքր ինչ գորութեան հետ, նիւթ և սնունդ գնել հայ-
կական չոր ու ցամաք գպրութեան մէջ, և ինչպէս մի կողմից
լեզուն, միւս կողմից և նոյն ինքեան գպրութեան հոգին և ուղ-
ղութիւնը որքան կարելի է շինենք ժողովրդական, ազատելով
աբեղայականութենից, որի մէջ մնացած է այժմ անտէր անտերունջ:

Շատ յոյս ունիմ, որ Ձեր աշխատութիւնը կպսակէ մեր
սրտի ցանկութիւնը և դա յաւիտենական արձան կ'լինի մեր ան
կեղծ բարեկամութեանը:

Աղջ եղիք և ուրախ, Ձեր բոլոր գերդաստանով.

Ձեր գերազնուութեան

Արդոյ Բարեկամ...

Դ 21 մարտի 1856 Մոսկվա:

Այդայիշ Ասլիքանդրեան

*) Խօսղագիրը մերն է, Ի՞մք.

**Միացեալ Ըսկերութեանց դպրոցների ներկայ և անցեալ ձեմարանական
տարուայ պաշտօնական համեմատական ցուցակը:**

Գ Ա Խ Ա Ռ Ո Բ		Թիւ արա- կան վար- ժարանաց;	Թիւ իգա- րան վար- ժարանաց;	Համագու- մար վար- ժարանաց;	Թիւ պաշ- տօնէից.	Թիւ աշա- կերտու- աց.	Թիւ աշա- կերտու- աց.	Համագում- աշակերտաց և աշակեր- տացնեաց:							
		87/88	88/89	87/88	88/89	87/88	88/89	87/88	88/89	87/88	88/89	1887/88	1888/89		
1	ՏՈՒՐԻԲԵՐԵԱՆ: Մուշ (ար.): Մուշ (իգ.): Դատուան: Ար- չէն: Աշարոնք: Օղնուան: Սղերդ (ար.): Սղերդ (իգ.): Սղերդ ¹⁾ (Քաղկոյ): Պարինչ: Ճալաւագան: Անդգան: Տէշ: Հազօ: Մալափան:	12	13	2	2	14	15	42	54	613	577	197	198	810	775
2	ԽԱՐԱԿՈՆԻՑ: Կէմ: Խարակոնից:	2	2	—	—	2	2	5	6	145	109	—	—	145	109
3	ՏԱՐՈՒՇ: Քղի (ար.): Քղի (իգ.): Խուփս (ար.): Խուփս (իգ.): Բերբի (ար.): Բերբի (իգ.):	4	3	3	3	7	6	32	30	643	435	286	214	929	649
4	ԲԱԴՐԻՄԱՆՆ: Ալաշկերոս (ար.): Ալաշկերոս (իգ.): Պայտան: Պարա-Քլիխէ: Խոսուոր:	4	4	—	1	4	5	12	16	250	246	—	50	250	296
5	ՄԱԼԱԹԻՑ: Կէռէկու:	1	1	—	—	1	1	1	1	16	18	—	—	16	18
6	ԵԿԵՂԵՑ: Խնձորէք:	2	1	—	—	2	1	17	3	270	42	—	—	270	42
7	ԿԲԱԿԻԱ: Զէժմուն (Յ Ճաղկոյ): Զէժմուն (ար.): Զէժ- մուն (իգ.): Միխալ Հաճըն (ար.): Հաճըն (իգ.): Միխա- լ (ար.): Միխալ (իգ.): Թարսուս (ար.): Թարսուս (իգ.):	4	8	2	4	6	12	20	41	313	443	162	265	475	7 08
ԳՈՒՄԱՐ		29	32	7	10	36	42	129	151 ²⁾	2,250	1,870	645	727	2,895	2,597

¹⁾ Ցիւ տառերով տպուած տեղերում դպրոցները բացուած են ներկայ ձեմարանական տարում: Նոյն ձեմարանական տարում փակուած են դպրոցները: Զիյարեթում (Տուրութերան), Զմշկածագում (Տաւրոս) Երիզայում (Եկեղեց) և Սսում (Կիլիկիա):

²⁾ Այս թուոյն մէջ չեն տեսչական մարմինը և կենդրոնի պաշտօնեացք:



ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Խնչպէս անցեալ տարուայ «Արաքսի» Ռ. գրքում յայտնել էինք՝ Պետերբուրգի հայ հասարակութիւնը կամենումէր Մեծ. Մկրտիչ Աանասարեանցին ներկայացնել մի ուղերձ նորա ծննդեան եօթանասնամեայ տարեգարձի առիթով: Որովհետև ուղերձի և նորա գեղարուեստական պահարանի պատրաստութիւնը բաւական ժամանակ էին պահանջում՝ ուստի կարելի չեղաւ այն ներկայացնել անցեալ տարի յօրելեանի օրը, այլ տեղի ունեցաւ ներկայ տարւոյս մայիսի 10-ին մեծ հանդիսով: Ուղերձը, որին ստորագրել է տեղւոյս հասարակութեան գրեթէ բոլոր ընտիր մասը և մօտ յիսուն ուսանողներ՝ Մեծ. յօրելեարին ներկայացրեց վեց հոգուց բաղկացած պատգամաւորութիւն, Պարոն Ամ: Առւբաշիի առաջնորդութեամբ: Ուղերձը կարգաց Պ. Խ. Յուսիկեանը: Յետոյ Պ. Խ. Օաքարեան, որ ուսանողների կողմից ներկայացել էր շնորհաւորելու Մեծ. յօրելեարին՝ կարգաց մի համակրական ձառ, որի մէջ գեղեցիկ կերպով նկարագրեց Մկրտիչ Աանասարեանցի բաղմաժամանակեայ արդիւնաւոր գործունէութիւնը յօդուս ազգային կրթութեան: Այս պատգամաւորների հետ ներկայացան և մօտաւորապէս 20 անձինք—տեղւոյս հասարակութիւնից:

Այս ուղերձի և նորա պահարանի իսկական պատկերները դնում ենք «Արաքսի» այս գրքում, իրեւ յաւելուած: Դոքաբոլորը արծաթից են, ոսկեայ հիւսուածքներով և գրերով: Պահարանի առաջին երեսի մեջ տեղում փորագրուած է Մեծ. յօրելեարի արծաթեայ կիսարձանը, որի երկու կողմերում կան հայերէն թուանշաններ ԱՊՃԱ և ԱՊՁԻ (Յօրելեարի ծննդեան և եօթանաօնամեայ տարեգարձի տարիները): Կիսարձանի վերև ձախ կողմում նկարուած է Խջմիածին, աջ անկիւնում Պետերբուրգի հայոց եկեղեցին. սոցա մէջ տեղում հիւսուած են և LXX թուանշանները. (յօրելեարի եօթանաօնամեայ հասակը). Ներքեում ձախ անկիւնում Մասիս լեառը, իսկ աջ անկիւնում թվիլիս—յօրելեարի ծննդեան քաղաքը. սոցա մէջ տեղում Աանասարեան վարժարանը: Կիսարձանի վերևում և ներքեում գրուած են ոսկի տառերով «Մեծ ազգասէր և բարերար Մկրտիչ Աանասարեանին Ա. Պետերբուրգի հայ հասարակութիւնից»: Պահարանի երկրորդ երեսին վերայ հիւսուած են Ա և Մ գրերը, Մեծ. յօրելեարի անուան և մականուան սկըզբնատառերը:

Արծաթեայ թիթեղի նկարը կանխօրէն պատրաստուած լինելով՝ նորա մէջ չմտան 30 ստորագրութիւններ ծխականների և ուսանողների, որոնք այնուհետև փորագրուած են թիթեղին վերայ:

Տաճկահայ անուանի գրագէտ, Պ. Մարկոս Աղաբեկեան, որը յայտնի է ոռւսահայերին դեռ վաթսունական թուականներից, երբ նա ի միջի այլոց խմբագրում էր «Առունկ» ամսագիրը, ութ, ինչ ամիսներէ ի վեր զբաղուած է Հայոց պատմութեան ուսումնասիրութիւնովը: Այս պատմական կարևոր երկասիրութիւնը, որ «Ուսումնայոց պատմութեան» վերնագիրն է ունենալու, չորս մասի է բաժանուած: Ա. Հեթանոս Հայաստան, Բ. Վրիստոնեայ Հայաստան, Գ. Աւերակ Հայաստան, Դ. Հայք իրենց հայրենիքն գուրս: Առաջին երեք մասն արդէն աւարտած է Պ. Աղաբեկեան, այժմ չորրորդ մասն է գործմ: Ամբովէ գերքը բաղկանալու է 3000 ութածալ երեսից: Այս գրքի հրատարակութեան իրաւունքը պատկանում է Միացեալ Ընկերութեանց:

Մենք մեծ հաւատ ունենք Պ. Մարկոս Աղաբեկեանի գրչի վերայ, հետեւապէս «Ուսումնայոց պատմութեան» աշխատութիւնը կարևոր տեղ կ'րոնէ մեր պատմական գրականութեան մէջ և երկար ժամանակներէ ի վեր զգացուած այս կենսական կարիքը կ'լցնէ:

Տեղեկանում ենք, որ Պետերբուրգի համալսարանի համեմատական լեզուագիտութեան մագիստրոս Աղեքսանդր Տոմսոն, որ 1887 թ. տպագրել էր «Ахалցыхскій говоръ» վերնագրով մի լեզուաբանական հետազօտութիւն, ներկայում ձեռնարկել է մի նոր լեզուաբանական հետազօտութեան հայերէն մի ուրիշ բարբառէ մասին, որի վերայ իր ժամանակին տեղեկութիւն կտանք:

Սուրբ Եջմիածնի նուիրական վանքի վերաշինութեան առիթով, որ ձեռնարկած է Մակար Ա. վեհափառ և սրբալշնագոյն կաթողիկոսը, բարեպատեհ համարեցինք ներկայացնել մեր ընթերցողներին Մայր Եթոռի այժմեան ձիշտ նկարը, որը պատրաստուած է ամենայն նրբութեամբ:

Տեղեկանում ենք, որ այս օրերս գնդապետ Սարգսի Եւղբաշեանցը, որը մի քանի տարիներէ ի վեր ապլումէ Պետերբուրգում, Երեանու թեմական դպրանոցի թանգարանին իր նուիրած մօտ 1,500 կտոր զբքերի հաւաքածուն ճոխոցը լիլ է ուղարկելով գարձեալ վաթսուն կտոր գիլք:

Պետերբուրգի բարձրագոյն մասնագիտական ուսումնարաններում, որտեղ դանվում են հարիւրից աւելի հայ ուսանողներ՝ այս տարի աւարտեցին իրենց ուսման ընթացքը 18 հոգի:

Արուեստաբանական Շեմարանում չորս երիտաստրդներ. Ա. Թաղիանոսեանց, վաղարշապատցի, Ե. Պարոնեանց—շուշեցի, Լ. Եղիազարեանց—թիֆլիսեցի, Բ. Շէքնազար Եւղբաշեանց—ջրաբերդցի: Ենոնային Շեմարանում. Ե. Վաշեանց, մեղուցի, Գ. Կարախանեանց, շուշեցի, Լ. Եւղբաշեանց, Ելիսանեանց, թիֆլիսեցի, Բաստամեանց, թիֆլիսեցի:

Անտառային Շեմարանում Ա. Սերեբրեականց, շամախեցի, Խ. Մարդուլեան, շամախեցի, Ե. Գուլեանց, շուշեցի:

Բժշկական Շեմարանում. Թ. Օտքարեանց, շամախեցի, Աւտանգելեան, աստրախանցի:

Ուսուցչական Շեմարանում. Յարութիւն Պարակիօղեանց, աղեքասանդրուցիցի, Եջմիածնի նախլին սեմինարիսկան ընթացքը աւարտող սաներից: Պ. Պարակիօղեանցին իր ուսման շրջանում Պետերբուրգի մէջ նիւթապէս նպաստած է զլսաւորապէս Թիֆլիսի Բարեկրօն Ներսէս աւագ քահանայ Տէր Բարսեղեանց:

Համալսարանի մատէմատիկական ճիւղում. Ա. Ռատուրեանց, շամախեցի:

Օհնուորական երկրաչափական կոնդուկտորսկի ուսումնարանում— Եփրեմ Ավշարեանց—շուշեցի:

Իսկ անցեալ տարուայ վերջերում համալսարանի Երևելեան լեզուների բաժինն աւարտեց Ստ. Մալիտասեանց:

Խմբագրութեանս մէջ ստացուած են հետևեալ գրքերը, որոնց մի քանիսի մասին կաշխատենք Խօսել «Արաքսի» յաջորդ գրքում:

«Ա արժապետին աղջկեր», Պոլսական բարքեր. գրեց Տիգրան Կամսարական. Պոլիս. 1888: «Հիսնամեակ» Հայոց հոգեսոր թեմական դպրանոցի Երևանայ: Տիլիսի. 1888: Ա էպիկ և պատկերներ: Գ. Չուրար: Հայ ժողովրդական հէքիաթներ. ժողովածու Տիգրանայ Կաւասարդեանց. Չորդիրք. Ծիֆլիս: Դրամական հաշիւ. Իագուայ Մարդասիրական ընկերութեան, վասն 1888 ամի: «Սփոփանք ռամկին» Մ. Յովհաննէսեանի, Պոլիս: Բժիշկ Ա. Վարդանեանցի «Օ Стерилизированіи воздуха путемъ его электролиза», և բժշկակետ Մ. Շոստամեանցի «Случай Leptothrincosis vesicae urinariae», «Къ вопросу о происхождении тифозной пневмонии», «Къ вопросу происхождени и клинической бактериологии крупознаго воспаленія легкихъ» և Къ вопросу о морфології и біології Leptothrix-а.



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՀԱՅԱՍՏԱՆ» հայ-ֆրանսերէն թերթը հրատարակվում է լոնդոնում երկու շաբաթը մի անգամ։ Տարեկան բաժանորդագինն է 5 ռուբլի։ Հասցէն։ 9. Sutherland Place, Bayswater, W. London. Redaction du journal «Le Haïasdan»։

«ԱՐԵՒԵԼՔ» քաղաքական և ազգային օրագիր տարեկան բաժանորդագինն է 56 ֆրանք. վեցամսեայ 28 ֆրանք. Հասցէն. Constantinople. Direction du journal «A revélik» Noradunghian Han, Galata.

Ա. Շեկոպիրի, «Լիր թագաւոր», ողբ. հինգ արարուածով, թարգմ. Ամ. Մալխասեանց Պետերբուրգ 1888. Գինն է 1-ր 2, 50 ֆր. Դիմել Խմբի կենդրոնական գրավաճառանոց։

Գերմանական ազգային առակներ եղբարց Գրիմմայ. Ծարդմանութիւն Եւայ Տէր Գրիգորեանցի. Ա. Պետերբուրգ. 1864թ. գինն է իւրաքանչիւր գրքի 30 կոպէկ։ Դիմել Պետերբուրգ. Христофору Гусикову. Васильевский Островъ, 8 линія, д. № 21, кв. № 9.

Փես-ի յայտնի գրավաճառանոցում, որ գտնվում է տեղիս Հայոց եկեղեցու տան մէջ, «Աբովի պողոտայի վերայ, ծախվում են Հայերէն գրքեր, ի միջի այլոց, Խորիմեան Հայրիկի գրքերից և «Արօտարք Հայոց» Փիրդամելեանց Պանդ Վարդապետի։

«ԱՐԵԼՔ» մէջ գրուած պատկերները առանձին ծախվում են. իւրաքանչիւրի գինն է 20 կոպ. Ճանապարհածախսով Հանդերձ։

ФОТОГРАФІЯ Вестли-сынъ снимаетъ фотографические портреты, карточки, группы и всевозможныя работы по умѣренной цѣнѣ. Въ фотографіи продаются виды армянскихъ древностей, между прочимъ, апійскихъ и джульфинскихъ въ большомъ размѣрѣ, по одному рублю. Адресъ: Владимирскій просп., д. № 6, кв. № 15.

Պետերբուրգում հրատարակուած «Մանկավարժանոց» ամսագրի մարտ գրքովկը ծախվում է «Արաքսի» խմբագրատանը։ Գինն է 40 կոպէկ. Ծովանդակութիւնն է։ Պազրոցի ոգին, Հնդկաստանի և Հիրմանիոյ Հայեր, Լազիստանի Հայեր, Տրապիզոնի կրթական վիճակի առթիւ, Օտարակրօն Հաստատութիւններ Կիլիկիայում. Խոտերքիոյ և առանձինն Պոլսոյ Հայ ժողովրդեան արդին վիճակը. «Ազգաբար» անդրանիկ Հայ ամսագիրը և Նրա Խմբագիր Յարութիւն քահանայ Համառնեան. Հայաստանի աշխարհագրական և ժողովրդագրական մատենագրութիւն։

